

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԳՈՆՑ**

**ԵՐԿԵՐ**

**Է**

**ՆԱՍԱԿԱՆԻ**

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2014

ՀՏԴ-93/94:80

ԳՄԴ-63.3+80

Ա 205

Հատորը հրատարակության պատրաստեց

**Պ. Հ. Հովհաննիսյանը**

Աղոնց Ն. Գ.

Ա 205 Երկեր/Ն. Աղոնց, խմբ. Պ. Հ. Հովհաննիսյան, -Եր.: ԵՊՀ հրատ., 2014, Հատոր Է: Նամականի, 288 էջ + 5 ներդիր:

Հատորն ընդգրկում է հայ ականավոր պատմաբանի նամականին (135 նամակ): Աղոնցյան նամակները լուսաբանում են գրողի գործունեությունը, նրա ապրած ժամանակաշրջանի հայ պատմագիտությանն ու բանասիրությանը, ազգային կյանքին վերաբերող շատ հարցեր ու խնդիրներ: Նամակների հասցեատերերի թվում են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հ. Թումանյանը, Գ. Հովսեփյանը, Ն. Մառը, Կ. Եզյանը, Ա. Չոպանյանը, Գ. Խալաթյանը և ուրիշներ: Նամակների զգալի մասը տպագրվում է առաջին անգամ: Հասցեագրվում է հայագետներին և ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 93/94:80

ԳՄԴ 63.3+80

ISBN 978-5-8084-2021-2

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Հովհաննիսյան Պ. Հ., 2014



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

*Գիրքը լույս է տեսնում «Գալուստ Գյուլբենկյան»  
հիմնադրամի աջակցությամբ:*



## ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԳՈՆՑԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցն իր 40-ամյա գիտական գործունեության ընթացքում ընթերցողի սեղանին է դրել մեծ թվով բազմաբնույթ ու բարձրարժեք երկասիրություններ, որոնք հարստացրել են հայ պատմագիտական միտքը՝ նրան հաղորդելով նոր շունչ ու բովանդակություն: Ադոնցի գիտական վաստակն ունի միջազգային լայն ճանաչում. նա իրավամբ համարվում է XX դարի համաշխարհային բյուզանդագիտության ամենանշանավոր դեմքերից մեկը:

Բնականաբար, նման ճանաչում ունեցող պատմաբանը պետք է ունենար նաև գիտական լայն կապեր, ընդարձակ նամակագրություն: Ադոնցի ինչպես գիտական, մանկավարժական, ազգային-հասարակական բուռն գործունեությունը, այնպես էլ այն մտավոր միջավայրը, որտեղ ապրել և ստեղծագործել է նա (Ս. Պետերբուրգ, Մոսկվա, Վիեննա, Վենետիկ, Լոնդոն, Փարիզ, Մյունխեն, Բրյուսել և այլուր), ենթադրելի են դարձնում նրա նամակագրական լայն կապեր ունենալու անկասկած իրողությունը: Եվ իրոք, Ադոնցը նամակներ է սկսել գրել դեռևս XIX դարի վերջերից, երբ ուսանում էր Ս. Պետերբուրգի համալսարանում և կատարելագործում ուսումնառությունը եվրոպական նշանավոր համալսարաններում ու գիտական կենտրոններում: Հետագա տարիներին, երբ գիտական բուռն գործունեություն էր ծավալել ու դասավանդում էր Ս. Պետերբուրգի համալսարանում (1904-1920), ապրում ազգային կյանքը փոթորկող քաղաքական իրադարձությունների բովում ու գործուն մասնակցություն ունենում դրանցից շատերին, Ադոնցը, ինքնըստինքյան, պետք է նամակագրություն ունենար հայ, ռուս և օտարերկրացի գիտնականների ու քաղաքական գործիչների հետ, մույնը՝ նաև լոնդոնյան (1920-1931) ու փարիզյան (1921-1923) տարագրության տարիներին և Բրյուսելի համալսարանում դասավանդելիս (1931-1940):

Ն. Ադոնցի նամակների հասցեատերերն են եղել ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի, գիտության, եկեղեցու ամենաերևելի դեմքերը, ինչպես օրինակ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսներ Գևորգ Ե Սուրենյանցն ու Խորեն Ա Մուրադբեգյանը, ինչպես նաև Գարեգին արքեպ. Հովսեփյանը, Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանը, Մեսրոպ արքեպ. Տեր-Մովսիսյանը, Եղիշե արքեպ. Դուրյանը, Թորգոմ արքեպ. Գուշակյանը, Համագասպ վրդ. Ոսկյանը, Ներսես վրդ. Ալիմյանը, Գալուստ Տեր-Սկրտչյանը (Միաբան), Կարապետ Եզյանը, Գրիգոր Խալաթյանցը, Նիկողայոս Մառը, Կարապետ Կոստանյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Արշակ Չոպանյանը, Գարբիել Նորատունկյանը, Կոստան Չարյանը, Սիմոն Վրացյանը, Գարեգին Լևոնյանը, Արտաշես Չիլինկիրյանը (Ռուբեն Դարբինյան) և շատ ուրիշներ, ինչպես նաև նշանավոր ամսագրերի և օրաթերթերի խմբագրություններ («Հանդես ամսօրեայ», «Բազմավեպ», «Միոն», «Վեմ», «Անահիտ», «Հայրենիք», «Զվարթնոց», «Մասիս», «Յառաջ» և այլն)<sup>1</sup>:

Իր հերթին պատմաբանը նամակներ է ստացել ժամանակի երևելի մտավորականներից ու ազգային գործիչներից՝ Արտաշես Աբեղյան, Հայկ Գարագաշ, Կոստան Չարյան, Արշակ Չոպանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Մալեգյան, Լևոն Մելիքսեթ-Բեկ, Հայկ Պերպերյան, Գարեգին արքեպ. Հովսեփյան, Թորգոմ արքեպ. Գուշակյան, Եղիշե արքեպ. Դուրյան, Հայկ Պերպերյան, Առաքել Սարուխան, Արշակ Սաֆրաստյան, Մարտիրոս Տեր-Պետերյան, Գարեգին արքեպ. Խաչատուրյան, Արտավազդ արքեպ. Սյուրմեյան, Գրիգորիս եպ. Պալաքյան, Բառնաբաս վրդ. Պիլեգիկճյան, Մովսես Աճեմյան, Ռուբեն Դարբինյան, Ալեքսանդր Խատիսյան, Սիմոն Վրաց-

---

<sup>1</sup> Ցավոք, այս մեծ ու հարուստ ժառանգությունից քիչ բան է հրատարակվել: Բացառություն են Ա. Ադամյանի («Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1966, № 3), Պ. Հ. Հակոբյանի («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1975, № 11), Պ. Հ. Հովհաննիսյանի («Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1988, № 3) հրատարակումները և այլ ուսումնասիրություններ:

յան, Վահան Նավասարդյան, Գաբրիել Նորատունկյան, ինչպես նաև մեծահամբավ օտար պատմաբաններից ու բանասերներից՝ Վաղդեմար Բեք, Ֆրիդրիխ Բրաուն, Կիրիլ Թումանով, Մորիս Լևի, Ֆրեդերիկ Կոռնվալիս Կոնիբեր, Հենրի Արչիբալդ Սեյս, Նիկոլայ Օկունն և ուրիշներից: Հիրավի, հսկայական ընդգրկում ունեցող մեծ ու չափազանց հարուստ մամականի<sup>1</sup>:

Ցավոք, չնայած մեր բոլոր ջանքերին, հնարավոր չեղավ ձեռք բերել Նիկոլայոս Ադոնցի ամբողջական մամականին: Այնուհանդերձ, հնարավոր եղավ Համազգայինի Բեյրութի գրական պահոցում, ՀՀ ազգային և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվներում, Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում, Վիեննայի Մխիթարյանների, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դիվաններում գտնել Ադոնցի գրչին պատկանող բազմաթիվ մամակներ: Մեր տրամադրության ներքո էին նաև արդեն տպագրված զգալի թվով մամակային միավորներ, որոնք վերցրել ենք պարբերականներից, տարեգրքերից, գրական ու պատմագրական ժողովածուներից («Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայրենիք», «Էջմիածին» և այլն):

Նշվածներից թերևս ուշագրավը Վիեննայի Մխիթարյան միաբանության դիվանում պահվող Ն. Ադոնցի թվով 42 մամակների հավաքածուն է, որը տարիներ առաջ դիվանի պատասխանատու Հ. Վահան Հովակիմյանը տրամադրել էր ամերիկահայ ճանաչված պատմաբան, մեր բարեկամ պրոֆ. Ռուբեն Ադալյանին, իսկ վերջինս էլ սիրահոժար փոխանցել է մեզ:

---

<sup>1</sup> Տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆեսոր Նիկոլայոս Ադոնցի թողոն, պահարան Ե/Ա-8: Այս պատկառելի հավաքածուից ցայսօր լույս են տեսել միայն Գարեգին արքեպ. Հովսեփյանի (տե՛ս «Հասկ», հայագիտական տարեգիրք, նոր շրջան, № 6, Անթիլիաս, 1994) և Թորգոմ արքեպ. Գուշակյանի (տե՛ս նույն տեղում, № 7-8, Անթիլիաս, 1995-1996) մեր հրատարակած մամակներն առ Նիկոլայոս Ադոնց:

Այսպիսով՝ տարիների երկարատև ու շատ ջանքեր պահանջող աշխատանքի ընթացքում կարողացանք ի մի բերել, խմբել և ծանոթագրել Ադոնցի միայն 135 նամակ, որն այժմ ներկայացվում է գիտական և ընթերցող հանրությանը:

Նամականիմ նաև պատմագրական ժանր է, գրողի ստեղծագործական ժառանգության անբաժան բնագավառը, նույնը՝ Ադոնցի նամականու պարագայում: Ադոնցի նամակները բովանդակում են պատմագիտական, գրականագիտական, լեզվաբանական, հասարակագիտական բազմաթիվ հարցեր և լուսաբանություններ, որոնք այսօր էլ նույնքան հետաքրքրական և արժեքավոր են իրենց բարձրացրած խնդիրներով ու վերլուծություններով: Միաժամանակ ադոնցյան նամակները առատ նյութ են մատակարարում պատմաբանի գիտական նախասիրությունների ու որդեգրած սկզբունքների, ժամանակի ու ժամանակակիցների վերաբերյալ: Իսկ առանձին նամակներ դուրս են գալիս «նամակ» հասկացության բովանդակությունից և վերածվում պատմագիտական ու բանասիրական փոքրածավալ ուսումնասիրությունների:

Ադոնցյան նամակները հետաքրքրական նոր փաստեր են ի հայտ բերում պատմաբանի ստեղծագործական ծրագրերի, ընթացիկ պարապմունքների, իսկ առանձին դեպքերում՝ նաև ներանձնական կյանքի վերաբերյալ: Դեռևս 1902 թվականին 30-ամյա Ադոնցը, Ն. Մառին ուղղված նամակում մանրամասն նկարագրելով արտասահմանյան համալսարաններում իր պարապմունքները, խոստովանում է, որ իր երազանքն է գիտական վերլուծության ենթարկել բյուզանդական սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները՝ կայսրությունում ցրված հայերի վերաբերյալ, մատնանշել նրանց տեղն ու դերը այդ հասարակությունում: Ենթադրվում էր, որ աշխատանքը կամփոփվի «Հայերի ճակատագիրը Բյուզանդիայում» ուսումնասիրությունում: Համաձայն ծրագրի՝ Ադոնցն այդ տարիներին և հետագայում հետևողականորեն ուսումնասիրել է հիմնախնդիրը և թղթին հանձնել առանձին հատվածներ («Հուստինիանոսի ժամանակա-



շրջանի նշանավոր հայերը», «Հայոց վերջին Արշակունիների ճակատագիրը Բյուզանդիայում», «Հայ-մակեդոնական թագավորական հարստության պատմությունը», «Լևոն V Հայկազն» և այլն)<sup>1</sup>: Այս առումով հատկապես հետաքրքրական է մահվանից առաջ՝ 1940 թվականին ապրիլի 15-ին Գարեգին արքեպ. Հովսեփյանին հղված նամակը. «Ինչ վերաբերում է աշխատանքներին, պատրաստել եմ Հայոց պատմության Ուրարտական շրջանը (Ֆրանսերեն, մոտ 200 էջ): Մեքոնյան [հրատարակչական] կոմիտեն ցանկություն հայտնեց «Հայրենիք» [ամսագրի] մեջ երևցած պատմական հոդվածները վերահրատարակելու: Առանձին տրամադրություն չունեի վերստին նայել, ուղղել սխալաշատ գրություններ, բայց ստիպված եմ անել: Առանձին հատորներ կկազմեն՝

1. Հայ-բյուզանդական դեմքեր, պատմականը,
2. Հայոց պատմության վերաբերյալ հոդվածներ,
3. Բանասիրականը»<sup>2</sup>:

Թեև իրերի բերումով պատմաբանը չկարողացավ, չհասցրեց ի կատար ածել իր փայփայած երազանքը, սակայն նշված խոսքերը կարծես յուրահատուկ կտակ էին, որ նա պատգամեց սերունդներին<sup>3</sup>:

Անվանի պատմաբանի նամակները շոշափում և լուսաբանում են իր ժամանակների ազգային կյանքին, մասնավորապես Հայկական

---

<sup>1</sup> Բոլորն էլ՝ անտիպ, ռուսերեն (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Նիկողայոս Արունցի թողոն):

<sup>2</sup> Տե՛ս նամակ № 134:

<sup>3</sup> Արդեն 1946 թվականին մերձավորագույն բարեկամների՝ Աբրահամ Ղուկասյանի, Արշակ Չոպանյանի, Հովհաննես Զավրյանի անդով ջանքերի շնորհիվ Փարիզում լույս տեսավ «Հայաստանի պատմություն» ֆրանսերեն հատորը (446 էջ), երկու տարի անց՝ 1948 թվականին՝ դարձյալ Փարիզում մանրամասլավ մեմագրական ուսումնասիրություններն ամփոփող ժողովածուն (538 էջ)՝ Արշան Խոնդկարյանի աշխատասիրությամբ, 1965 թվականին՝ հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված, ֆրանսերենով գրված հոդվածների ժողովածուն, որը խնամքով իրականացրել էր Ժերար Գարիտը (Լիսաբոն, 440 էջ), և վերջապես մեր աշխատասիրությամբ լույս տեսած «Հայկական հարց» (Երևան, «Հայագիտակ», 1996, 244 էջ), «Հայաստանի ոսկեհամբը. Փոքրածավալ ուսումնասիրություններ» (Երևան, «Հայագիտակ», 2006, 160 էջ) ժողովածուները և Երկերի վեցհատորյակը (Երևան, 2006-2012):

հարցին առնչվող բազմաթիվ խնդիրներ<sup>1</sup>: Ադոնցը անհուն սիրով ու պատկառանքով է գրում «ազգային մեծ ու միակ հաստատության»՝ Հայոց եկեղեցու դերի և նշանակության մասին: Հրապարակվող նամակներում և այլուր հոգեմաշ էր լինում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծայրահեղ անմխիթար վիճակով, առանձնապես մտահոգվում էր Սփյուռքի ներեկեղեցական կյանքում պառակտման ախտանշանների ի հայտ գալու հարցով, դատապարտում էր բոլոր նրանց, ովքեր ջատագով էին Հայոց եկեղեցու միասնությունը քանդելու, այն երկկենտրոնացնելու գաղափարին:

Հայրենիքից հեռու, սակայն հայրենիքի նկատմամբ մշտնջենական ու անդավաճան սիրով տոգորված հայրենասեր հայագետի մտորումների, ամենօրյա խորհրդածությունների կիզակետում միշտ էլ եղել է հայրենի եզերքը: Ադոնցին հուզել են իր երկրի և ժողովրդի ներկան, ինչպես նաև խաղաղ ու բարեկեցիկ ապագան: Հուսադրող ու միաժամանակ խրախուսությամբ են հնչում նրա հետևյալ խոսքերը. «Որքան և ծանր լինի հայ ժողովրդի դրությունը այդտեղ [Հայաստանում], դարձյալ հայրենիքն է, ուր իր էությանը լցնում է շատ պակաս ու ամենից առաջ կորուստը, որին ենթարկված են հայրենիքից դուրս հաճող սհազին բազմությունները: [Այստեղ] հերոսական միջոցներ են հարկավոր՝ վերահաս ձուլումից և փչանալուց նրանց փրկելու...»<sup>2</sup>: Խստորեն քննադատում է, դատում, հորդորում բոլոր նրանց, ովքեր արտասահմանյան իրենց տաքուկ անկյուններից անպատշաճ, վարկաբեկիչ հարձակումներ են կատարում հայրենի իրականության նկատմամբ: 1940 թվականի ապրիլի 15-ին Արտաշես Չիլինկիրյանին հղված նամակում գրում է. «Վատ չէր լինի, եթե սակավ մի պայքարող եռանդդ խնայեիր, մտրակդ ձգեիր և ավելի հաշտ և սրտացավ աչքով նայեիր մեր աղքատիկ հայրենի հողին, մեր խեղճ սոխակեր հայրենիքին: Խոհեմություն չէ աննպատակ քննադատություններով սառեցնել տարաշխարհիկ հայությունը հույսի միակ

<sup>1</sup> Մասնավորապես տե՛ս №№ 49, 50, 53, 66, 122 և այլ նամակներ:

<sup>2</sup> Տե՛ս նամակ № 87:

աղոտ ճրագեն, նրա ապագայի միակ երաշխիքեն»<sup>1</sup>: Իր մյուս մեծ ու նվիրական երազանքն էր երբևիցե հայկական համալսարանում հայ ուսանողներին դասավանդելը, որը ևս չպետք է իրականանար. «Ռուսական համալսարանից հետո ընկա ահա ֆրանսիականը: Երկուսն էլ օտար: Չեղավ, չհաջողվեց մնալ հայ լեզվի շրջանում», - դառնացած գրում է նա<sup>2</sup>:

Այս է Նիկողայոս Արմենի նամականու համառոտ նկարագիրը: Նամականին, անշուշտ, լրացնում, ամբողջականացնում է մեծանուն հայագետի ստեղծագործական դիմանկարը, դրան ներարկում նոր, թարմ լիցքեր ու մանրամասներ:

\*

\*                   \*

Ստորև ներկայացվող նամակները դասավորված են ժամանակագրական կարգով (1893-1940): Բնագրերը հրատարակվում են նույնությամբ՝ առանց կրճատումների, կատարվել են միայն ուղղագրական և կետադրական անհրաժեշտ փոփոխություններ: Ուղղանկյուն փակագծերի [ ] մեջ են առնված հրատարակիչների կամ մեր կողմից վերականգնված և առաջարկված ուղղումները: Այն բառերի և նախադասությունների փոխարեն, որոնք հնարավոր չի եղել վերծանել և կամ ջնջված են եղել, դրվել են բազմակետեր:

Մեր գոհունակությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր սիրով օժանդակեցին այս հատորի ստեղծման աշխատանքներին՝ տրամադրելով կամ նպաստելով աղոնցյան նամակագրական առանձին միավորներ ձեռք բերելուն: Խորին շնորհակալություն ենք հայտնում Հրաչ Տասնապետյանին և Արփի Էթիեմեզյանին (երկուսն էլ այժմ հանգուցյալ), Երվանդ Փամպուկյանին, Ամատունի Վիրաբյանին,

---

<sup>1</sup> Տես նամակ № 135:

<sup>2</sup> Տես նամակ № 107:

Վիզեն արքեպ. Այբագյանին, Արշավիր Գարունյանին, Ռեմ Ղազանչյանին, Ավագ Հարությունյանին: Առանձնակի շնորհակալություն բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Հովհաննիսյանին, ով արժեքավոր դիտողություններով և առաջարկություններով իր նպաստը բերեց հատորի հրատարակությանը:

Երախտագիտությամբ ենք շեշտում, որ Ն. Ադունցի երկերի սույն՝ յոթերորդ հատորի հրատարակությունը հնարավոր դարձավ միայն «Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան» (Լիսաբոն) հայկական բաժնի նախաձեռնությամբ և Երևանի պետական համալսարանի հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանի հետևողական նախանձախնդրության շնորհիվ: Առանց այդ աջակցության՝ Ադունցի նամականու հրատարակության ուղղությամբ մեր գործադրած ջանքերը հաջողությամբ չէին պսակվի:

**ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# 1. «ԱՐՉԱԳԱՆՔ» [ԼՐԱԳՐԻ] ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Պարոն Խ. Հովհաննիսյանի (1) «Մյուլերի հետազոտությունները» հոդվածում (2), որ զետեղված էր «Արձագանքիդ» վերջին համարներից մեկում (3), ասված է, ի միջի այլոց, որ «գերեզման» բառի ստուգաբանությունն անվերածելի է մնում մինչև այժմ: Ավելորդ չենք համարում առաջ բերել մի կարծիք այս մասին, որ պատկանում է Շուշվա թեմական դպրոցի ուսուցիչ պ[արոն] Գյուլզադյանին (4): Արգո պարոնի կարծիքով՝ «գերեզման» բառը կազմված է հետևյալ երեք բառից.

գահ  
նշանակում է «բարձր տեղ», օրինակ՝ գահավիժել,

րեզ կամ բոյզ,  
որ պահպանել է հայոց լեզուն մաս «ասպարեզ» բառի մեջ: Համազոր է «արձակել», «ձգել» բայերին (ասպարեզ-ձիարձակ): Այս բառի հայկական տառադարձությունն է իսկապես «լույծ-լուծանել=բանդել, արձակել»:

Իսկ վերջին լծորդը՝

ման  
= է մարդ, ման-ուկ:

Այսպիսով՝ «գերեզման» կամ «գահրեզման» նշանակում է «բարձրից ձգել մարդուն», կամ «տեղ, ուր ձգում են բարձրից մարդուն»: Այս բացատրությունը պարոնը հաստատում է և մի արիական սովորությամբ, որով մեռելներին աշտարակներից ձգում էին ցած՝ փոսի մեջ...

Հարգելի ուսուցիչը ոչ միայն շատ հմուտ է հայոց, պարսից և արաբական լեզուներին, այլև քաջ ծանոթ է նոցա պատմության, հին

ավանդություններին, սովորություններին, Նազի միջնադարյան ժողովրդական բանաստեղծության, մի հանգամանք, որն այնքան կարևոր է մեր հին մատենագրության ուսումնասիրության համար: Այս է պատճառը, որ պ[արոն] Գյուլգադյանը երբեմն շատ հետաքրքիր և հավանական վերլուծություններ է առաջարկում մեր հին անգիր բանահյուսությունից մնացած այն կտորներին, որոնք Խորենացու «Հայոց պատմության» միջոցով հասել են մեզ: Սակայն զարմանալին այն է, որ լրագիրներում խոսք է բացվում այդ մասին մինչ այն աստիճան, որ ուրիշները ստիպված են լինում հայտարար լինել նորա կարծիքներին այս կամ այն ձևով (5):

**Նիկողայոս Ադոնց (6)**

## **2. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ**

Մեծարգի՛ պ. Եզյան (1),

Ձեր բարյացակամությունը վստահություն է տալիս կարծելու, որ անհանգստություն չեք համարի, եթե երբեմնակի գրությամբ հաղորդեմ պարապմունքներիս մասին՝ Ձեր խորհուրդներից օգուտ քաղելու նպատակով:

Պարապմունքներս մի որոշ ընթացք են ստացել (2). ես անցնում եմ Ռեդկինի «Самоучитель немецкого языка, по методу Тусена и Лангенштейна» ձեռնարկով, իսկ հարկավոր դեպքերում դիմում եմ համալսարանի պրոֆեսոր, լեզվագետ Մազինգին (3), որի հետ ես հայերեն պետք է պարապեմ շաբաթը մի քե երկու ժամ: Պարոնը հետաքրքրված է հայոց լեզվի հնչյունաբանությամբ. առաջ պարապելիս է եղել պ. Մովսիսյանի (4), այս տարի՝ Օհանջանյան ազգանունով մի ուսանողի (5) հետ, որին այժմ ես պետք է փոխարինեմ հետևյալ շաբաթից:

Պարոն պրոֆեսորի խորհուրդով և ցուցմամբ վերցրել են մի գրքույկ մանկական ընթերցանության համար, որ ամեն օր մի քանի թերթ կարդամ իմ տանտիկնոջ հետ միասին:

Ինչ վերաբերում է նյութական մասին, այս ամիս, շնորհիվ ուղե-  
ծախսիս մնացորդի, բավարար է, իսկ այնուհետև, եթե շարունակեմ  
այս ընտանիքում մնալ, չի բավականանա, ուստի մտադիր եմ  
հետևյալ ամսից տեղափոխվել այլ ընտանիք: Ուսումը շուտով կվեր-  
ջանա, բռնած բնակարանները կդատարկվին. այն ժամանակ,  
կարծյոք, կարելի կլինի ավելի աժան տեղ գտնել: Թերևս հաճիք որևէ  
խորհուրդ տալ, ահա՛ հասցես՝

Techelfersche-Strasse, № 12:

Խորին հարգանքով՝  
**Նիկողայոս Ադոնց**

*1895 թ., 20 մայիսի  
Յուրև*

### **3. «ՀԱՆԴԷՍ [ԱՄՍՕՐԵԱՅ]»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

Ուղարկում եմ Ձեզ (1) բաժանորդագիրը՝ խնդրելով հղել ինձ  
առաջիկա տարվա «Հանդես [ամսօրեայ]» հետևյալ հասցեով՝

С.-Петербург

Студенту Им[ператорского] университета Николаю Адонцу (2).

Вознесенский проспект, д. 27, кв. 27

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*1896 թ., դեկտեմբերի 22-ին (3)*

*Ս. Պետերբուրգ*

#### 4. «ՀԱՆԳԷՍ [ԱՄՍՕՐԵԱՅ]»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Գրեցի 27.II.97 թ.

Հունվար ամսի 2-ին ուղարկել եմ Ձեզ բաժանորդագին «Հանդես [ամսօրեայ]»-ի համար, բայց մինչ այժմ (1) ոչ մի համար չեմ ստացել: Շատ զարմանալի է: Միգուցե հասցես մոռացել կամ կորցրել եք:

Հարգանքներով՝ **Ն. Ադոնց**

Հասցես՝  
С.-Петербург  
Студенту университета  
**Николаю Адонцу**  
Вознесенский проспект  
д. 27, кв. 27

#### 5. «ՀԱՆԳԷՍ [ԱՄՍՕՐԵԱՅ]»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ձերդ (1) գրության համաձայն՝ ստուգեցի փոստում, ուր պատասխանեցին, որ իմ անունով թերթ չեմ ստացել: Չարմանալի է, որ վերջին ամսույս՝ ապրիլի համարն էլ չեմ ստացել, թեև հայտնել եմ ինչպես խմբագրությանդ, նույնպես և տեղվույս փոստին: Սպասելով հանելուկի մեկնության՝ մնամ հարգանքով:

**Ն. Ադոնց**

8 ապրիլի,  
1897 թ.



## 6. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԴ. ՊԻԼԵՁԻԿՃՅԱՆԻՆ

Արժանապատիվ Հայր [Բառնաբաս] (1),

Խոստացա Ձեզ գրելու «Հանդես»-ի պակաս համարների համար, բայց մինչև այժմ չկարողացա: Գլուխս շատ խառնվել է: Շարադրության (2) ժամանակը մոտենում է, մինչդեռ ոչինչ դեռ չեմ պատրաստել: Գրքերս սահմանագլխում (3) առավ ձեռքիցս մի հիմար զինվորական, որի հետ և կռվեցա: Այնտեղից փոստով դրկել եմ գրաքննական առյան, որտեղից վերջապես ստացա:

Հանդեսից պակաս եմ մարտի և մայիսի համարները, ուստի կխնդրեի, եթե հնարավորություն ունեք դրկելու և՛ պակաս, և՛ հուլիսից սկսած համարները:

Ողջույն բոլոր ծանոթներին:

Համբույրներ աջույդ՝ **Ն. Ադոնց**

*1898, հոկտեմբերի 13*

Հասցես՝

Студенту университета

**Николаю Адонцу**

Դուք տպած ունեք հասցես:

Փոխ[ել] ներքևի փողոցի համարն այսպես՝ В[асильевский] О[стров], 6 линия, д. 39, кв. 12:

## 7. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԴ. ՊԻԼԵՁԻԿՃՅԱՆԻՆ

Պատվական Հայր [Բառնաբաս],

Ուրախությամբ ստացա Ձեր նամակը, բայց «Հանդես»-ի համարները մինչև այժմ չեմ ստացած:

Երևի կստանամ այս քանի օրերս:

Ընդունեցեք շնորհակալությունս և հետևյալ խնդիրս: Եթե չեմ սխալվում, Հունգարիայի հայերի մի մասը կաթոլիկ եմ, մյուս մասը՝

ազգային եկեղեցու հետևորդներ: Այժմ ինձ շատ հետաքրքրում է վերջիններիս եկեղեցական Տոնացույցը, այսինքն՝ տոների սրբերը: Nilles-ի (1) «Kalendarium manu ole» գրքի մեջ կա նոցա Տոնացույցը: Մասամբ վստահելի չէ և մասամբ անբավարար: Կուզեի իմանալ՝ արդյո՞ք միաբանության մեջ չունեիք այդ Տոնացույցը: Եթե ունեք, բարի չէի՞ք լինիլ արտագրել ինձ համար և հղել: Ինձ թվում է, որ Տոնացույցը հենց այն է, որ և եղել է մեր եկեղեցում նախքան Վկայասեր (2): Եթե ունեք որևէ տեղեկություն պատմական վանքումդ, թե ամենահին գաղթականությունը որ դարումն է եղած, խոնարհաբար կխնդրեի այդ ևս գրել: Ընդհանրապես համարվում է հետ Բագրատունյաց թագավորության անկման, բայց ցանկալի էր ճիշտն իմանալ: Արդյո՞ք հին արձանագրություններ չկան Հունգարիայում և եթե կան, ո՞ր դարու են: Խիստ կպարտավորեցնեիք, եթե Հայր Այտընյանից (3) կամ Հայր Տաշյանից (4) հարցնեիք այդ մասին և հաղորդեիք ինձ:

Այժմ զբաղված եմ իմ աշխատությամբ (5), որը պետք է ներկայացնեմ դեկտեմբերի 15-ին, ուստի բոլորովին ժամանակ չունեմ Դաղբաշյանի գրքով (6) զբաղվելու, երկրորդ կիսամյակում՝ փետրվարի 8-ից հետո (7), թերևս կարողանամ: Եթե բան գրելու լինեմ, անշուշտ, Ձեզ կուղարկեմ: «Նոր-Դարում» (8) լավ կոկել էին մեր աստվածաբան քննադատին: Ողջույն Հ[այր] Վարդանին (9) և մյուսներին:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*8 նոյեմբերի, [1898] (10)*

*Ս. Պ.*

## **8. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԴ. ՊԻԼԵԶԻԿՆՅԱՆԻՆ**

Պատվական Հայր [Բառնաբաս],

Ստացա նամակներդ, մեծապես շնորհակալ եմ: Եթե իմանայի, որ խնդիրս այդչափ նեղություն պիտի պատճառեր Ձեզ, հարկավ չէի դիմի:

Ուստի և՛ ներեցեք, և՛ ընդունեցեք գոհությունս: Պ<արոն> Nilles օգուտ է քաղել միաբանությանդ, եթե չեմ սխալվում՝ Հ<այր> Այտընյանի ցուցմունքից: Նրա գրքում անհամեմատաբար ավելի բան կա, քան Տեր հոր նամակում:

Ինչևիցե, վերստին շնորհակալություն: Վաղը պիտի ներկայացնեմ գրածս շարադրության առաջին մասը (1):

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*14 դեկ[տեմբերի], [1898] (2)*

## 9. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Давно мне хотелось иметь удовольствие писать Вам о ходе моих занятий. Они вначале шли очень недурно, и я был так доволен, что не раз задавал себе вопрос, что можно было бы писать на заданную тему, без тех рукописных материалов, которые я ныне имею. Просмотрел рукописей до 10 (из них более важные описаны у меня очень подробно), и уже собирался писать Вам кое о чем, но вдруг наткнулся на одну очень интересную рукопись; я в ней узнал ту самую рукопись, с которой сделано издание Пролога 1834 г. под именем Тер-Израела (1). Она интересна в том отношении, что во-первых совсем не редакция Тер-Израела и Григория Анаварзечи (2), и во-вторых она потерпела некоторую немаловажную метаморфозу в названном издании.

Но что важнее всего, там рядом с армянским ставятся и греческие и латинские святые, т.е., вернее, святые по греческому и латинскому календарю, что дает возможность сличить их. Ну вот я ждал покончить с этой громадной по величине рукописью и затем писать Вам, но не удостоился этого, прямо, счастья в данном случае, я, к

большому сожалению, не мог кончить благополучно. На половине работы захватила меня опять проклятая болезнь – малярия, и вот уже 20-й день не в состоянии ничего делать. Слаб до невозможности, хожу как на ходулях, ноги сгибаются, и затем по временам, особенно в тех случаях, когда с размаху встаю с постели, т.е. выпрямляюсь, чернеет в глазах так, что в один миг ничего не вижу кругом. Никакого расположения духа нет; мне досадно, просто до слез досадно, что так наказала меня судьба. Главное, нет надежды поправиться настолько, чтобы иметь возможность хотя бы округлить сделанное. Надо было кое-что списать, просмотреть **Календарь** 1284 г. (*Smbiugniyg*) (рукописный, разумеется), который имеется здесь в библиотеке, наконец, есть и *бузнг* – служебные минеи до Григория Мартирофила (3) и т.д. Раза два ездил в монастырь в таком состоянии заниматься, но окончательно убедился, что невозможно; пот льется ручьем. Святые отцы в общем мало интересны за исключением Алишана и Зарбанаяна (4); Саргисяна (5) не было здесь, только что вернулся из Рима, еще не представился. Простите, дальше не могу вопреки желанию, будьте снисходительны за неряшливость и передайте поклон *Shhlnz* (6) и *ψηρηή* (7).

Ваш **Ник. Адонц**

1898 г., 10 авг[уста]  
Венеция

## 10. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Я еще не пристроился по душе и не приступил к предполагаемым занятиям. Не видался даже с Крумбахером (1), который теперь, должно быть, уже вернулся с конгресса. Я жду «металла» и книг. Я написал Самуэляну (2) взять у хозяйки книги мои и выслать немедленно, но, к сожалению, он оказался настолько невежливым, что до сей поры ничего не ответил. По получении ожидаемого, я примусь за правильные занятия. Пока изучаю немецкий язык.

Невозможная скука давит душу. Я не полюбил немцев; да признаться, и все остальное мне не так нравится. Слишком много воображаем о загранице, больше чем нужно. Впрочем, я еще не свыкся с местными условиями, успокаиваю себя тем, что, может быть, я – «варвар» – еще [не] понимаю прелести немецкой, а пойму. Единственное утешение – я нашел наконец Манандяна (3). Узнав, что он в Лозанне, выписал сюда в Мюнхен. Пробыл несколько дней у меня и поехал в Дрезден, проездом в Эчмиадзин. Много болтали о всякой всячине. Я находил, что он слишком увлекся немцами и бог весть в каком свете представлял Германию в бытность свою в Петербурге. Оказалось, что Манандян совсем не друг немцев в настоящее время. Страшно нападает на все немецкое. Дух негодования охватил его после того, как он познакомился с культурами других стран, главным образом с французской. Он буквально офранцузился. Слово «Esprit» не сходит с языка его, то и дело хвалит французов и возносит до небес. В них ценит он именно «Esprit» (4), которым они-де так резко выделяются среди других национальностей. Я ему откровенно сказал, что «ты человек-Laune» (5). Пробыв года два в Эчмиадзине с таким же воодушевлением будешь восхвалять армянскую культуру. И я прав. Я написал ректору Карапету вардапету (6) о желании Манандяна получить место при Академии. Надеюсь, что удастся.

Скучаю по Петербургу более чем по родине, как ни совестно признаться. Надеюсь, Вы не лишите меня удовольствия слышать от Вас разные новости не только о специальности, а просто об университете и новых слушателях.

Прошу передать поклон Александре Алексеевне и Юрию: точно также и Сергею Феодоровичу (7).

С почтением, **Н. Адонц**

*6 ноября, 99 г.*

*Мюнхен*

**P. S.** Герасим Артемьевич (8), не знаю, вернулся или нет. Я еще ничего не писал ему.

Адрес мой: *München. Schwanthaler St. 13.II. (9)*

## 11. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Надеюсь, будете снисходительны за мое молчание. Не то что лень, а нечего писать. Я работаю в Семинарии Крумбахера, единственное утешение. Очень симпатичное учреждение – хотя официальные занятия профессора не по душе, но возможность располагать вольно библиотекой при Семинарии приятна. Крумбахер читает в Семинарии о греческой метрике и по субботам в императорской библиотеке, в отделении рукописей занимается палеографией. Ни то, ни другое особенного интереса не представляют, хотя аккуратно посещаю его лекции. Сам читаю историков византийских, начиная с Прокопия (1). Чувствуется на каждом шагу необходимость познакомиться еще с древними историками. Настрочил статейку давно; жду своих книг, для кое-каких справок. Скоро пошлю Вам ее (2).

Плохи наши армянские дела вообще. Слежу за литературой здешней, т.е. заграничной, как и за делами наших деятелей-спасителей, все удручает страшно. От Мананда (3) имею письмо; устроился в Эчмиадзине; получил 11 уроков (9 по греческому, 2 по русской литературе ?) с жалованием 1100 руб. Оставил за собою право, при новом распределении уроков в будущем году, брать более подходящие уроки.

Поздравляю с Новым годом как Вас, так и Александру Алексеевну и Юрия.

Всего лучшего, с почтением,  
Преданный Вам **Н. Адонц**

*8 января, [1900], Мюнхен*

## 12. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Сегодня я отправил статью об Анониме (1); высказал все, что давило меня. Прошу Вас быть любезным, присмотреть, очистить от логических и стилистических неровностей и поместить в «Византийском временнике» или где заблагорассудите. Прошу также прочесть равнодушно и не смущаясь. Изложением наверно будете не довольны. Что же делать? Мало практики было, я сам не доволен. Хотя «սինն ինն լիվազիւն» (2), но надеюсь не обругаете меня за ненаучность.

По прочтении доставьте удовольствие напишите, как Вы находите ее? Я жду с нетерпением. Статья сразу разрослась вопреки начальному плану. Вот уже несколько месяцев тема эта меня мучает, не давала спать; можете себе представить, что всю хронологию у Себеоса и у Хоренского наизусть знаю. Книг своих по сию пору не

получил. В библиотеке взял Хоренского на армянском и Фауста на немецком, и наводил нужные справки. Но кое-что осталось, надеюсь при чтении пропущенные ссылки отметите. Об статье поговорим еще позже, когда Вы изволите прочесть ее.

Что нового в университете и вообще? Прочел только недавно о кавказском землетрясении. Не везет нашему народу! Видно, мы осуждены судьбою на окончательную гибель. Физические силы тоже против нас. Все страдавшие селения оказывается армянские. Также недавно узнал, что «Новое обозрение» закрыто... Я никогда не верил, чтобы правительством такие рассчитанные меры были! Циш Դ Եղեցիւն: Неужели Сергей Феодорович теперь не в университете, что же он делает? Новый ректор каков? К 8 февраля ничего не готовится? Здесь в одной немецкой газете месяц назад читал, что в университете будто бы начались беспорядки. Удивился, потому что товарищи ничего не писали.

Как идут занятия у слушателей? Вы задавайте письменные работы (?). В самом процессе писания очень много интересного. Признаюсь, что многие из моих изложенных соображений пришли в голову в то время, когда писал.

Прошу принять и передать поклон Александре Алексеевне и Юрочке.

Преданный Вам **Н. Адонц**

*23 янв[аря], 1900 г.*

Письма *poste restante*, после 1 февраля, да вообще, пока не пришлю адрес. Никак не могу устроиться.



### 13. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Странно, что до сих пор не получили статью. Должно быть, теперь уже читали. Прошу ссылку на Gutschmidt «Iransgeschichte» по поводу Санатрука сына Соема заменить или Justi «Narnensbuch», или Гарагашян. Я о нем знал и пометил у себя по Гарагашяну (1) еще в Петербурге, но думая, что наверное из Гутшмидта (2), так указал, между тем у последнего как раз он пропущен. Далее «Гибришцпр-цшшшї ршқшпрпїрїшшї» у Хоренского сравн. с Географией ему приписываемой (3). Очень жалею, что нужных книг тогда не было при себе и допущены поэтому пробелы.

Представьте себе, Николай Яковлевич, что по высылке статьи заболел и лег в постель и вышел только третьего дня. Это второй раз заболевание. Опять лихорадка-проклятая малярия-мучила так что последние недели по вечерам повышался жар до 40, 6<sup>0</sup>, а по утрам сразу падал до 37. Благодаря очень хорошему уходу хозяев у которых теперь я живу, сравнительно скоро оправился, но очень слаб, и доктор не советует пока заниматься. Прописал замысловатую диету. Нашел у меня нервное расстройство и сообразно с этим рекомендует гимнастику и целую массу разных средств. Я сомневаюсь, чтобы болезнь моя была малярия. Чуть было не думал, что чахотка, ибо все признаки были налицо, какие обнаружили у Канаянца (4). У него при сильном жаре селезенка была нормальная. У меня тоже, несмотря что жар, как я сказал, доходил до 40,6<sup>0</sup> и более, селезенка не расширилась. Но доктор уверяет, что ничего нет, хотя и Канаяна целых два месяца уверяли тоже. Словом, настроение духа не веселое; занятия прерваны. Финансы тоже расстроились. Жизнь порядочно таки дорога. За пансион плачу теперь 110 м. без топлива и освещения, а первое ужасно дорого, так, чтобы погреть комнату 14<sup>0</sup> приходится уплатить марку одну. Мой меценат (5) назначил мне

80 руб., и теперь я в долгах также, как и раньше. Не везет, видимо, как созданы, так и останемся. Впрочем, благословенна судьба!

Поклон Александре Алексеевне и Юрию.

С почтением **Н. Адонц**

Адрес: *Leopoldstr. 59, o.*

[P. S.] Николай Яковлевич, в статье армянских текстов мало, их можно даже пропускать в случае если не найдете возможным заменить русским переводом.

**Н. А.**

#### 14. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

С удовольствием прочел Ваше письмо, за что благодарю сердечно. Я ничуть не сомневался в том, что статья моя страдает недостатками, особенно значительными в мелочах. Мне гораздо интереснее было узнать Ваше мнение об общей постановке вопроса и решении его у меня. Видимо, Вы не одобряете, раз говорите, что «общая точка зрения Вами не разделяется». Что касается замечаний, набросанных Вами мимоходом по поводу *շի* и *իկ* (1), то думаю приговор слишком строгий. Вы говорите, я не привожу **ни одного** объективного основания в пользу твердого убеждения в сходстве этих чисел. Странно, мое убеждение тут покоится на предыдущем рассуждении о взаимной связи двух списков, а не на коньктуре. О последней я говорю в примечаниях и то очень осторожно; Вы позволите мне не согласиться с Вами, что инициальные *Շ* и *Ն* нельзя смешивать. Ведь *շ* пишется как *Շ*, а *ի-Ն*; да я вовсе не говорю о **случайном** смешении. Утверждая, что *շ* **смахивает** на *ի*, предполагаю, что писец имел некоторое основание при выборе из

двух букв **меньшей**, ввиду того, что он не чувствовал больше связи этого списка с предшествующим, потому число *Ϸ* могло казаться слишком большим для всего навсего 10-11 царей. Выражение, что «пределы конъектуры у Себеоса не определены», кажется Вами не верно понято. Ввиду испорченности рукописи, в которой дошла до нас история Себеоса, я позволил себе это выражение, будучи далеко от мысли конъектуру сделать козлом отпущения. Конъектура, на мой взгляд, имеет лишь вспомогательное значение. Вряд ли заслуживало упрека в злоупотреблении его. Что может установить наши условия достоверности конъектуры вообще? И возможно-ли? Конечно, нет. Она в каждом отдельном случае нуждается в разных основаниях. Даже возможность чисто графическая – еще не основание для конъектуры. Вы видите, что в конъектурах, я вовсе не исхожу из того, что данная буква похожа ли на предполагаемую или нет? У меня всегда другие соображения, которые и заставляют сблизить известные буквы. Прав я или нет, есть ли сходство или нет – безразлично для меня. Мало ли из чего могло произойти смешение букв. Могу перечислить десятки оснований.

Далее, вы находите, что я часто замалчиваю историю затронутых вопросов, «чем заслоняю у читателя перспективу **в истории освещения вопроса**». Да ведь, Николай Яковлевич, я и задавался целью рассматривать вопрос в связи с историей его. Если я взялся за такую задачу, («чтобы не суживать горизонт читающего статью субъекта»), то мне пришлось бы небольшую статью развернуть в целую книгу, т.е. написать брошюру, может быть вдвое больше, чем у Малхасяна (2). Я почему-то думал, что Вам как раз понравится то, что я избегаю экскурса и справок по истории вопроса, которые лишь осложняют изложение и являются лишним балластом. Те, которые удостоятся чтения статьи, прекрасно знают историю вопроса, и замалчивание ее нисколько не может сузить их горизонт наблюдения. Неужели Вы не находите, что Малхасяну тоже следовало бы написать

статью приблизительно такого же размера, как у меня, а не сочинять целую книгу, благодаря которой Вы до сих пор не читали ее.

Последняя заметка в конце статьи вызвана у меня душевным разладом, существующим **и до сей поры** во мне, именно: доводы, выставленные критикой – доказывают мне позднее происхождение «Истории Армении», а **мое настроение** (не патриотическое, разумеется), настроение, сложившееся чисто литературный путем, и прежде всего на основании слов самого Хоренского, резко протестует против этого. Легко ли сказать. История – апокриф, один, написал и навязал другому, или он лжет, когда выдает за ученика просветителей. Мои рассуждения, чисто объективно изложенные в статье, понуждали меня склонить голову и признать доводы критиков и чтобы объяснить, если и не подавить внутренний голос, вопиющий против этого, который особенно усиливается при каждом раскрытии самого труда Хоренского, **долго думал** и нашел чисто психологическое толкование. **Убеждения** о позднем происхождении Хоренского, в настоящем смысле слова, т.е. как категорической уверенности чисто, и до сих пор у меня нет, для этого нужно времени. Почему же Вам не нравится? Может быть не согласны со мною в том, что действительно громадная разница между **доказательством и убеждением** (3).

Когда и говорю, «Начальная история не **апокриф** по существу», то имею в виду Халатовское разумение (4). По Халатову, какой-то грамотей сплел, «из своего духа и из книг». Я же утверждаю, что памятник имеет чисто историческое основание; эти сказания вращались когда-то в народе, затем были записаны. Не без удивления читал в Вашем письме, будто находку надписи в Низибине я принимал за действительность. Неужели из очерка предполагаемой истории «Начальной истории» не видно ясно, как я объяснил само сказание об Агафангеловой надписи. В двух местах в статье я говорил об этом и в разных целях. В конце, когда затрагиваю Фауста, совершен-

но ясно представляя происхождение легенды о надписи. Те черты, которые Вы считаете апокрифическими, по моему не апокрифические в том смысле, что они – не продукт сознательного **измышления** человека, заведомо убежденного в ложности их. Легенда сложилась в Мцбине в школе Марабы с течением времени, вследствие некоторых (?) недоразумений. Автор легенды надписи сам был убежден в том, что она нашлась в Низибине и что она – дело Агафангела. А это – вовсе не апокрифический признак. Под апокрифом я понимаю преимущественно тенденциозно, сознательно вымышленный памятник, хотя бы и в основе исторический в той или другой мере.

Все это я счел нужным возражать, разумеется, не для того, чтобы ограничить Ваши права распоряжаться статьей по полному своему усмотрению, а лишь для устранения недоразумений. Если Вы меня не совсем поняли, то вообразите, как другие. Еще раз выражаю признательность за любезное письмо и ставлю статью под Ваше расположение как ныне, так и впредь.

Очень жаль, что Вы тоже болеете. Я не знаю, что со мной. Желудок тоже совсем не годен, как доктор сказал. Если я стану слушать врачей и исполнять их предписания, то придется сложить книги и ухаживать за собою. Глупое положение! Не могу заниматься, хотя упорно стараюсь преодолеть трудности. Хозяйка моя на днях представила счет за две недели болезни в 92 марки, вне пансиона. В финансовом отношении в стесненном положении, и, главное, не знаю, что делать. Следующее жалованье должен получить в апреле, а до апреля у меня ни копейки, что называется.

Сию дома, хозяйка все дает знать о том, что надо уплатить. Жду погоды на берегу житейского моря.

Поклон Александре Алексеевне и Юрочке.

С уважением, преданный Вам **Н. Адонц**

*20 фев[аля], 1900*

*Leopoldstr. 59, o.*

## 15. НИКОЛАЮ МАРРУ

Многоуважаемый Николай Яковлевич!

Сердечно благодарю за Вашу заботливость обо мне, простирающуюся не только на сферу «духа», но и «материи». Долгов у меня пропасть много. После последнего письма моего к Вам, я принужден был сообщить в контору мецената (1) о моем положении и получил extra 80 руб. К сожалению, эта сумма далеко не погашает дефицит.

Я заказал себе костюмье-сюртук и др. на 150 марок с условием уплатить в несколько месяцев. Немцы, не исключая профессоров и студентов, большие педанты относительно туалета. В прошлом семестре я бросался в глаза с своим философски или византийски непретенциозным *saco-Anzug*'ом (2). Далее приобрел очень нужные книги, также с условием уплачивать в рассрочку. Наконец, признаться, я не могу распоряжаться получаемыми мною 80 рублями в нужном довольствии. Г[ерасим] Артемьевич тогда же советовал обратиться к меценату и просить увеличить до 100, как у Манандяна (3), но я стеснялся. Придется мне, быть может, через Г[ерасима] А[ртемьевича] устроить дело. Дело в том, что Г[ерасим] А[ртемьевич] не показывал мне письма мецената летом, а сказал, что он согласен продолжать поддержку и за границей на **неопределенное время**, т.е. сколько мне нужно будет, т.е. 2-3 года. Между тем, когда я выехал из Тифлиса, он в конторе при мне сделал распоряжение г. Пондоеву (4) присылать **ежемесячно 80 руб. с октября до октября 1900 года**. Я, разумеется, замолчал. Ныне не знаю, что делать. **Ей богу**, такая скучная история возиться с этим, волноваться, стесняться, что каждый раз, когда припомнятся известные лица, жутко становится. Если Вы будете так любезны сами поговорите с Г[ерасимом] А[ртемьевичем] так [h ūhʁh шjɪng, то я очень благодарен буду. Мне Dr. [...]redaver советует поехать на несколько

месяцев во ближайшие курорты. Я не намерен сделать это, но с удовольствием путешествовал бы, поехал бы в Швейцарию и изучил бы французский язык, чтоб окончательно избавиться от неведения новых языков. Я брал несколько уроков практических у одной француженки, но принужден был прекратить. По-моему, Николай Яковлевич, я должен поставить себе задачей в бытность свою за границей изучение новых языков главным образом (не говоря о греческом и сирийском, для изучения каковых за граница не при чем). Я теперь занимаюсь специальными работами (1. Прокопий, 2. Корюн и 3. Сукасиевы), в каждом шагу чувствую, что в Петербурге несравненно лучше разрабатывал эти вопросы. Иной раз и думаешь, стоило ли для этого сидеть в Мюнхене. Словом, Н[иколай] Яковлевич, если Вам не трудно и если охота, то попытайтесь поговорить с старцем (5) обо всем. Он сам устроил. Я тоже кое-что напишу. Наверное, Г[ерасим] А[ртемьевич] найдет возможность 80 превратить в 100. Ввиду того, что из конторы прислали 80 руб. было бы стеснительно второй раз обратиться, между тем дефицит в 250 марок налицо.

Поклон Александре Алексеевне и Юрочке.

С почтением, Н. Адонц

*17 марта, [1900]*

*Leopoldstr. 59, o.*

## 16. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ

Մեծարգի՛ պ. Եզյան,

Սույն նամակիս հետ ուղարկում եմ Մանթաշյանին հասանելիք գրություն: Խոստովանում եմ՝ մեծ դժվարությամբ գրեցի այն. մանրամասն բացատրել ամեն ինչ անպատշաճ թվաց ինձ, սակայն այն,

ինչ որ նորան գրել ավելորդ համարեցի, Ձեզ հաղորդել հարկավոր են դատում: Երկյուղ են կրում, որ պ. Մանթաշյանը շատ համարի խնդրածս գումարը, այնինչ այն հազիվ ծածկե անհրաժեշտ պիտույքներս: Ինձ ուղարկում են 3 ամսվա թոշակը միանգամից՝ 240 ռ., և երևակայեցեք, որ այժմ ոչինչ չունիմ վճարելու մայիս և հունիս ամիսներին: Չգարմանաք, եթե ասեմ, որ Մյունխենում 80 ռուբլի ստացած գրեթե նույնն է, ինչ որ Պետերբուրգ 30-35: Չմեռվա ամիսներին պանսիոնը նստում էր ինձ ավելի քան 150 մարկ, այժմ՝ մոտ 125, ավելի աժան պանսիոն չկարողացա գտնել, թեև 3 անգամ փոխել են բնակարանս: Այսպես են վճարում և այստեղի մյուս հայերը, որոնք պանսիոնում են ապրում: Մտադիր են այսուհետև դուրս գալ պանսիոնից և առանձին ապրել, թերևս ավելի աժան նստի:

Ացանկանայի մասնագիտությանս համար անհրաժեշտ գրքեր ձեռք բերել: 100 մարկից ավելի տվել են գրքերի (ինչպես՝ «Grundriss der iranische Philologie», Müller's Handbuch, K. Krumbacher-ի «Բյուզանդական գրականության պատմությունը» և այլն): Սոքա միշտ հարկավոր են գալիս պարսպելուս և ոչ մի տեղից չի կարելի վերցնել. մասնավոր գրադարաններում չկան, իսկ համալսարանի [գրադարանում] և հասարակականում վերցրած են: Բավականին գումար տվել են բժշկության: Ջերմախտի ժամանակ կասկած ընկավ սիրտս, որ թոքախտի նշաններ լինեն: Գնացի այս և այն բժիշկների մոտ. ամեն մեկը մի բան էր ասում, և ամեն անգամ 10 մարկ էի տալիս. Յիմսսենին միայն 40 մարկ են տվել 2 այցելությանս համար: Այնուհետև նույն 80 ռուբլուց տված են և ունկնդրության վարձ, որն ավելի թանկ է, քան ռուսական համալսարաններում, թեև ընդամենը 8-10 դասախոսություն են լսում: Մոտ մի ամիս գործնական դասեր են առել մի ֆրանսուհուց, որ ստիպված եղա ընդհատել, դժբախտաբար: Յանկություն ունեի նաև մի հույն ուսանողից, որ Krumbacher-ի մոտ պարապում է, հունարեն խոսել սովորել քիչ հույսով, որ այս կօգներ շատ թեթև հասկանալ հին բնագրերը:



170 մարկ տվել են միայն հագուստի [սերտյուկի և այլ]: Այստեղ նոր հիմնված է Akademisch-Orientalische Verein, ուր մասնակցում են արևելագետ պրոֆեսորներ և ուսանողներ: Ես էլ հրավեր են ստացել և հաճախում են նիստերը և զեկուցումները: Ուրիշ հրավերներից խույս են տվել մինչև այժմ լոկ պատշաճավոր հագուստ չունենալու պատճառով, բայց այս հրավերը չէի կարող և չէի ուզեմ մերժել: Ահա՛ որպիսի ծախսերով պարտքի մեջ են ընկել, այնպես որ թեև ապրիլ, մայիս և հունիս ամիսների համար արդեն ստացել են 240 ռ., բայց այժմ ոչինչ չունին: Եթե պ. Մանթաշյանը համաձայնի ուղարկել 250 ռուբլի, կերթամ անմիջապես բուժարան (1), գոնե 40 օր կմնամ և հետո խաղաղված կշարունակեմ գործս: Ի վերջո կխնդրեմ ներողամտություն, եթե այս նամակս, իր խիստ մասնավոր բնավորությամբ բոլորովին մնան չլինելով Ձեր ստացած սովորական նամակներից, խորթ թվա և անախորժություն հարուցանե: Գրում եմ այս բոլորովին ստիպված: Եթե բարեհաճեք Մանթաշյանին գրել այս առթիվ, կխնդրեի մաս հիշել, որ կցանկանայի մի տարի ևս մնալ այստեղ: Թիֆլիս Մանթաշյանի խոսքերից այնպես երևաց, որ կարծես նա մի տարով է ինձ դրկում: Ես, հարկավ, լռեցի, թեև գիտեի Ձեզ ուղղած նամակից, որ նա այն ժամանակ այդպիսի սահմանափակում չէր արել:

Երանի՛ թե այս վերջին գրությունս լիներ այս բովանդակությամբ:

Ձեզ միշտ անձնվեր՝

**Ն. Ադոնց**

*12 մայիսի, [1900]*

*Մյունխեն*

## 17. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԿՈՎԼԵՎԻՇ

Многоуважаемый Николай Яковлевич!

Не удивитесь, если мой голос слышится из Парижа. Я оставил Мюнхен и Крумбахеревский семинар и ныне занимаюсь здесь пока французским языком. Через некоторое время примусь вновь за прерванные специальные занятия в Национальной библиотеке, о которых я напишу после, по их возобновлении.

Я выехал из Мюнхена в конце октября; остановился в Страсбурге, желая повидаться с проф. Гюбшманом. Но, к сожалению, не удалось, т. к. два раза был у него и не мог добиться аудиенции-«он спал».

Здесь на каждом шагу наталкиваюсь на старых, давным давно забытых знакомых. Я не думал, что в Париже столько армян. Из литерат[ор]ов утвердился здесь С. Ахумян, собирающийся издавать армянский журнал (1). Был и на выставке пресловутой. За исключением художественного отдела – все остальное нельзя смотреть без отчаянной скуки. Искал всюду – в русских, персидских и турецких отделениях, армянского – но почти ничего нет. В русском отделении петербургский Ходжаев торговал кавказскими мелочами, а в персидском – два-три армянина продавали ковры. В турецком павильоне армян не было. Один молодой купец мне рассказывал, что его дядя – султанский золотых дел мастер, взял место в турецком павильоне за 12.000 франков, но при виде балаганного характера этого павильона, считал для себя недостойным оставаться там и немедленно уехал в Константинополь. Действительно, самый отвратительный павильон это турецкий и, вообще, восточные отделения. То, что европейцы называли всемирным праздником – они превратили это в своего рода храмовые праздники. Вы должно быть видели на Кавказе такие празднества. Турецкий, алжирский и, вообще, вся так называемая **колониальная** часть, носила такой характер – зурна, безобразные пляски (носившие почему-то имя **Харун-ар-Рашида**),

зазывания (?) – крик и шум, противно было проходить мимо. У турок плясали какие-то женщины и выкидывали постыдные штуки. А торговцы проходу не давали публике, прямо за руку таскали к себе...

[Говорят, что Иенский Гельцер готовит труд о армянском вопросе и собирается восхвалять турок (2). Не знаю, насколько верно, но мне жаль, что его ввели в такое заблуждение].

В некоторых лавках у армян я видел древние монеты армянских царей – Тиграна и Рубенидов. Я боялся мистификации и потому не приобрел их. Но они видимо честные люди и уверяли меня в подлинности их. Как Вы советуете, стоит их купить? Я взял их адрес и могу при надобности приобрести эти монеты.

В русском отделении было выставлено, не знаю почему, московское знаменитое Евангелие армянское (3). Не позволили мне осмотреть его. Представьте, этим ограничивается армянский элемент на всемирной выставке. Меня брала так зависть, что малые народности Балканского полуострова имели свои чудные павильоны очень недурно поставленные. В результате, выставка вызвала во мне скорее неприятные ощущения и много печальных мыслей.

Теперь с Вашего разрешения, Н[иколай] Яковлевич, хочу сообщить Вам кое-что из моих первых впечатлений о Париже. Они находятся в полном разладе с наслышанными из многих уст похвалами о славном городе. Меня преследует особенно тень Григ. Евангулова (4). Я нахожу очень мало удобств для студента, начиная от квартиры, питания вплоть до студенческой среды. В начале остановился в гостинице и целых 15 дней бродил по городу искать подходящей комнаты. У меня на этот счет удивительно скромные требования. Но невзирая на это, лишь на третьей неделе по моему приезду удалось приютиться в приличном уголке. Осмотрел более 40-50 комнат. Они все странного характера. Прежде всего громадная кровать по середине, составляющая эссенцию жилья и туалетные

принадлежности. Вот еще искал стола для занятий. На мой вопрос, есть-ли *table*, хозяйки отвечали утвердительно. Но потом оказывалось, -что под *table* они разумеют небольшой круглый столик для чаепития, что-ж, поздно догадался, что письменный стол у них называется *bureau*; а такого *bureau* в конце концов не нашел. В семействах комнат принципиально не отдается; и студенты живут исключительно или в меблированных номерах в подозрительных соседствах, или в так называемом *appartens de garçon* в 6 этаже. Можете ли себе представить, что в комнатах печек нет, везде каминь. Ламп нет, а свечи; желающие сидят подольше у себя в комнате и нуждающиеся в лампе должны сами приобрести таковые. При всем этом, цены невозможные. Комнаты приличной величины 40-50-60 фр. Вы помните мою последнюю комнату на 6 линии, за такую комнату рад бы 70 платить. Что касается питания, то оно также неважно. Здесь принято есть два раза в день от 12-1 и от 7, у нас обед из трех блюд развернут в 4-5 бл. За супом следует мясо без *Veilage* (5), а это выделено в особое блюдо под названием *legom*. Мне не удалось поступить куда-нибудь в пансион вследствие дороговизны, и столюсь в одном ресторане. Мюнхенское мое лечение имело результатом поправление желудка, за судьбу которого я боюсь ныне...

Я еще не знаком со студентством. Но живя в их квартале, постоянно вижу их проделки на улицах и ресторанах. Упомянутый доктор утверждал, что чисто детские шалости и то, что я называю безобразием – «лучшие» признаки здорового состояния организма. Такое веселие мне и, вообще, азиатцу не может быть понятным.

Я до сих пор чувствовал себя очень плохо. Особенно первые две недели; в своем номере нельзя было проводить вечер, ибо пол состоял из кирпича и веял сыростью. От досады чуть не плакал иной раз, что не мог найти комнаты и принужден был сидеть в *café* и читать газеты. Ныне устроился, хотя не совсем, и внимание мое

обращено покуда на изучение языка. Общества нет для практики, и не удивительно, что студенты, живущие здесь уже 2 года, страшно плохо изъясняются по-французски. Раз зашел в Bibliothèque National ознакомиться с порядками. Для ежедневного посещения надо иметь, оказывается, разрешение от посольства. Библиотека и зал занятия мне очень понравились. Все справочные книги под рукой; постоянно занимающийся имеет свое определенное место. Особенное удовольствие доставляет то, что Боннское изд[ание] византийских историков находится там же в зале, в ряду справочных книг.

Город по внешности великолепен и действительно красив. Чудны особенно площади, украшенные восхитительными памятниками. Всю французскую историю можно изучить, бродя по садам и площадям, ничуть не хуже того, что знаешь из гимназии. Но розовый сад приятен и мил для соловья, а что делать там ворону? Я слишком свыкся с Петербургом и с товарищами, чтобы забыть их. Одного Щеголева не променял бы на весь Латинский квартал. Я буду бесконечно счастлив, если судьба закинет меня вновь в Петербург.

Насчет телесного здоровья могу сообщить только приятное. Последнее время в Мюнхене я как-то охрип. По настоянию товарищей я обратился к проф. Шейку (?); он нашел у меня катар в горле и лечил дней 10, и дал мне рекомендательное <письмо> к здешнему проф. специалисту Гукенгейму для дальнейшего лечения. Но я оставил, не зашел даже к нему и не думаю...

С поклоном Ал[ексandre] Алексеевне и Юрочке.

Остаюсь *цширцшиц*

Ваш Н. Адонц

**P. S.** Не будете ли любезны, Н[иколай] Яков[левич], сообщить о судьбе моей статьи. Что случилось с ней. Напечаталась или нет? У меня почти готова небольшая статья о достоверности заговора против Юстиниана в 548 г., приписываемого Прокопием исключите-

льно армянам – Аршакидам Артавану и Аршаку. Я доказываю, на основании самого Прокопия, сообщество плем[янина] императора Германа, которого Прокопий всячески старается очистить от клевет. Сначала думал поместить в «Byzantinische Zeitschrift», но потом раздумал и не хочу пока печатать (6). О Фаусте также имею кое-что; но недостаточно. Постараюсь пользоваться случаем и сличать «Տոմարային» с рукописью, сохр[анившейся] в Bibliothèque National-e, переписать работу и прислать Вам.

Ах, с каким удовольствием читал бы Ваше письмо «обо всем» – от соб<ственных> теперешних занятий вплоть до судьбы академика Сергея Феодоровича (7), которому прошу передать мой поклон.

**Idem**

*18 ноября, [1900]*

*Paris, Rue des Ecoles 4-ter*

## **18. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ**

Մեծարգի՛ պ. Եզյան,

Ահա մտա մի ամիս է, որ բողի Մյունխենը և այժմ Փարիզ են, ուր առայժմ աշխատում են ֆրանսերեն լեզուն յուրացնել: Շուտով սկսելու են հաճախել Diehl-ի (1) դասախոսությունները, որ քաջ բյուզանդագետ է և կարդում է «Բյուզանդիայի պատմությունը (VI դ.)»: Մյունխենում բավականին նյութեր են հավաքել մեր պատմության համար Պրոկոպիոսից և Հուստինիանոսի օրենսգրքից, Դիլը հենց այս աղբյուրների հիման վերա գրել է Բյուզանդական Աֆրիկայի պատմությունը Հուստինիանոսի ժամանակ: Շատ օգտակար է նորա հետ մոտիկ ծանոթանալ: Կրումբախերը չի պարապում պատմությանը և ներկայումս նվիրված է եկեղեցական գրականության (VIII-IX դդ.), առավելապես նոր հունարեն լեզվի և գրականության պատմության: Իմ զբաղմունքներս շատ հեռավոր կապ ունին Կրումբա-

խերի հետ և մոտիկ առնչություն Դիլի դասախոսություններին: Հուսով եմ, որ սորա ղեկավարությամբ աշխատությունս ավելի արագ կերթա: Բյուզանդական պատմությունը այնպես ուսումնասիրված և պարզաբանված չէ, ինչպես կարելի է կարծել: Ես գոնե ենթադրում էի, որ հեղինակները և այլ աղբյուրներն այնքան հետախուզված կլինին, որ ինձ բավական կլինեին միմիայն կարդալ և քաղել հարկավոր նյութերը: Մինչդեռ ամեն քայլափոխում ստիպված եմ կանգ առնել և ուղղակի բյուզանդական բանասիրությամբ զբաղվել: Կան հակասություններ, օրինակ՝ Պրոկոպիոսի և Հուստինիանոսի օրենսգրքերի ցուցումների մեջ, որոնք պարզված չեն բյուզանդագիտության մեջ, իսկ այսպիսի խնդիրներ վճռելու համար անհրաժեշտ է ծանոթ լինել և կարդալ Հուստինիանոսի ո՛չ միայն այն գրությունները, որոնք վերաբերում են մեզ՝ հայերիս, այլև մյուս պաշտոնագրերը: Հարցը բարդվում է սորանով և հայագիտության հողից անցնում բյուզանդագիտությանը: Հասկանալի է, թե ինչո՞ւ եվրոպացի գիտնականների կողմից և ո՛չ մի փորձ չեղավ պատասխանելու Լազարյան ճեմարանի առաջարկած թեմային:

Մյուս ուրիշ դժվարությունն էլ այն է, որ նյութերը խիստ ցրիվ և զանազանատեսակ են, այնպես որ դժվար է նոցա միացնել, հերյուրել մի ընդհանուր պատմական թելով: Ա՛յլ են Հայաստանի վերաբերյալ տեղեկությունները, ա՛յլ՝ հայերին, որոնք սփռված ամբողջ պետության մեջ և գործում են իբրև քաղաքական և զինվորական պաշտոնյաներ:

Մտադիր եմ լսելու նաև Մեյեի մոտ համեմատական լեզվագիտություն և Կարիերի՝ ասորերեն:

Ցանկությունս՝ մնալ այստեղ մինչև առաջիկա աշունը, հետո անցնել Անգլիա, քանի մի ամիս մնալ այնտեղ անգլերենի համար և վերադառնալով Պետերբուրգ՝ գարնանը ներկայացնել համալսարան աշխատությունս՝ մագիստրոսության: Արդյո՞ք կհաջողվի ինձ մնալ այսքան ժամանակ, չգիտեմ. անցյալներն ինձ հաղորդել էին Մանթաշյանի գրասենյակից, որ թոշակի ժամանակամիջոցը լրացած է համարվում. այս մասին գրեցի պ. Մանթաշյանին և խնդրեցի հետա-

ձգել մինչև ո՛չ այս, այլ հաջորդ գարուն, երբ կարող կլինին ի կատար հանել սկսած աշխատությունս և ձեռք բերել հարկավոր լեզուների գիտությունը: Սպասում եմ պատասխանի. երևում է՝ անցյալ տարի Ձեր միջոցով ուղարկած նամակիս իմաստը ճիշտ չէ ըմբռնված:

Այստեղի հայերից ոչինչ կարևոր բան չգիտեմ. միակ տեղը օտար երկրներում, ուր մարդ հայ է տեսնում, եկեղեցին է, բայց, դժբախտաբար, Փարիզի եկեղեցին կամ ճիշտ՝ մատուռը, այնպիսի անշուք և աննախանձ դրության մեջ է, որ ո՛չ մարդ կարող է գրավել և ո՛չ էլ տեղավորել: Մի անգամ գնացի, միմիայն քանի մը պառավ կին և ուսանողներ տեսա: Երգեցողությունը, ընդհանրապես ժամասացությունը, անտանելի է խիստ:

Մի ուրախալի նորություն կարող եմ հայտնել. անցյալ ամսի 25-ին լույս տեսավ ֆրանսերեն լեզվով հրատարակելի թերթի առաջին համարը, որի նպատակն է պաշտպանել Հայոց դատը: Թերթը կոչվում է «Pro Armenia». հրատարակվելու է խմբագրությամբ մի մասնաժողովի՝ բաղկացած երեք հոգուց՝ P. Quillard, G. Clemanceau և Jaurés (2): Այս պատկառելի անունները, որ շատ անգամ են հայոց մասին գրել, գրավական են, որ ձեռնարկությունը և՛ լուրջ, և՛ հարատև պիտի լինի: Սույն համարից երևում է, որ Հայաստանը պաշտպանվելու է իր ամբողջ ծավալով. օգնության կարոտ են համարվում ոչ միայն նորա բեկված և ջարդված մասերը, այլև վիրավոր և դեռևս անտեսանելի տառապանքների ենթակա բաժինը: Ուզում էի մի համար Ձեզ դրկել, բայց չվստահացա, քանի որ հակառուսական հողված կար: Չգիտեմ՝ կարող եմ այդ մասերը կտրտել և հետո դրկել, թեև ցանկալի կլիներ, հարկավ, որ Ձեր գրադարանում նորա ամբողջ և անթերի համարները լինեին: Գուցե մոտիկ ապագայում ցանկություն կունենաք շարունակել Ձեր վերջին աշխատությունը և գրել «Հայոց հարցի» պատմությունը մինչև մեր օրերը: «Pro Armenia»-ն, երևում է, հարուստ նյութեր է մատակարարելու՝ հարտաքս հանելով դեսպանագիտական գաղտնի մեքենայությունները: Դուրս է գալու թերթը յուրաքանչյուր ամսի 10-ին և 25-ին: Ասում են, որ նախաձեռնությունը պատկանում է մեր հայ հեղափոխականներին, թե որքան



ծիշտ է, չեմ կարող ասել: Հողվածները, թեև փոքր, բայց շատ տար և լուրջ են: Եթե երբևիցե «խոսքից» փրկություն հուսալ կարելի է, այն ժամանակ ներելի է և այս խոսքից, որ անպայման գորեղ խոսք է, մի բան սպասել:

Ս. Հախումյան անունով գրագետ, որ այժմ այստեղ է, ցանկություն ունի հետևյալ տարրուց մի ամսաթերթ հրատարակել Փարիզում (3):

Անձուկով Չեզ միշտ անձնվեր՝

**Ն. Ադոնց**

*1900, 5 դեկտեմբերի, Փարիզ*

*4. Rue des Ecoles*

## 19. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ

Մեծարգի՛ պ. Եզյան,

Նոր տարին ինձ նոր ցավ է բերում: Այսօր ստացա պ. Մանթաշյանի գրասենյակից այսպիսի մի գրություն. «По просьбе и поручению А. И. Манташева, сем извещаю Вас, что присылаемые при сем 100 руб. высылаются Вам **в последний раз**»:

Անցյալները ես խնդրել էի պ. Մանթաշյանին շարունակել իր օգնությունը մի տարի ևս, մինչև ոչ այս, այլ հաջորդ գարուն: Հույս ունեի, որ սույն ժամանակամիջոցում և՛ ձեռնարկած աշխատությունս կավարտեի, և՛ ֆրանսերենի, և՛ անգլերենի հարկավոր գիտությունը ձեռք կբերեի: Մանթաշյանի մերժումը միայն նորանով կարելի է բացատրել, որ նամակս դրկված է եղել ո՛չ Ձեր միջոցով: Երևի կարծել է, որ այդ առանց Ձեր հավանության է: Սակայն իմ խնդիրը նոր խնդիր չէր. արտասահման գալուս Մանթաշյանի համաձայնությունը առնված էր Ձեր միջնորդությամբ ո՛չ թե մի տարվա համար, այլ, ինչպես իմ խնդրի մեջ ասված էր՝ «քանի մը»: Ի նկատի առնելով, որ գործը Ձեր շնորհիվ է եղել, Մանթաշյանը Ձեր անունով է ուղարկել իր պատասխանը այն ժամանակ, թերևս անհարմար չեք համարիլ այս անգամ ևս միջամտել: Համենայն դեպս ահա՛ հղում եմ Ձեզ նորան ուղղած մի գրություն. եթե հարկավոր կդատեք, անցեք և

այս բաժակս: Հակառակ դիպվածում գուցե Ս. Պետերբուրգի եկեղեցին հավաներ նպաստել ինձ միառժամանակ: Եթե Խորհուրդը համաձայներ 700-800 ռուբլի տալու, ես կմնայի այս կողմերը մինչև առաջիկա աշունը և կգործադրեի այդ ժամանակամիջոցը նոր լեզուների ուսումնասիրության, իսկ մասնագիտական զբաղմունքս դադարեցնելով՝ կթողնեի ուրիշ ժամանակի: Թեև այդ մեծ ցավ կլիներ, որովհետև ուրիշ ե՞րբ կարող եմ Diehl-ից օգտվիլ, կամ ո՞ր այն աղբյուրներն ունենալ, որ այժմ ձեռիս տակ են: Եթե հուտո ամենաթույլ նշույլ շողար ինձ, որ Պետերբուրգ որևէ պաշտոն կարող եմ գտնել, հավատացե՛ք՝ անվերջ հաճույքով կթողնեի այսօրինակ գրությունները և խնդիրները ու դառնալով՝ կպարապեի սկսած աշխատությանս:

Այս բուպեիս հուզմունքս սահման չունի. ինքս խարխափում եմ մտածմունքներու մթության մեջ և բարեհաջող ելք չեմ գտնում: Թողնում եմ ամեն բան Չեզ վերա և անհամբերությամբ սպասում Չեր խորհրդին և որոշման (1):

Խորին հարգանքով՝ Չեզ միշտ անձնվեր  
**Ն. Ադոնց**

*31 դեկտեմբերի, [1900]  
Պարիս, Rue des Ecoles 4*

## **20. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ**

*Paris. Rue du Faubourg-Poissonnière, 159*

Многоуважаемый Николай Яковлевич!

Давно я жду от Вас письма. Не знаю, чем объяснить Ваше молчание.

Крайне рад сообщить Вам, что мой инцидент окончился весьма благополучно. Я имел возможность поговорить здесь, в Париже с Манташевым. Он принял меня очень любезно. Расспрашивал кое о

чем и под конец согласился продолжать поддержку еще на год. Послал телеграмму в Тифлис, и на днях получил деньги. Кроме того, мне повезло еще в моих поисках за подходящей семьей: нашел очень хорошее семейство, где я поселился с 15 числа; хотя немножко далеко от Quaitier latin (1), но и это обстоятельство имеет свою выгодную сторону в том отношении, что я выручился от армянских и русских кружков.

При всей моей привязанности к соотечественникам, я чувствую, что они скорее мне вредили и вредят, чем оказывают какую-нибудь пользу. То один является, что какой-то нанес ему обиду, и просит заступиться за него, то другой сообщает таинственно, что у него какие-то затеи, но не знает, как осуществить и т. подобное. Недавно студенты пристали ко мне с просьбою примирить враждебные партии русских и турецких армян-студентов и организовать кружок наподобие общества русских студентов. Но я отказался наотрез не видя никакого толка в этом, кроме траты времени.

Русские профессора, т.н. эмигранты, организовали какое-то общество под названием «Группы интернациональной школы», имеющее целью, между прочим, учредить кафедры для русс<ких> профессоров при заграничных университетах. Говорят, в Брюсселе, например, Исаев (2) читает лекции на русском, разумеется и для русских студентов. Недавно, Гамбаров (3) на одной публичной лекции довольно туманно и неопределенно объяснял цели этого общества. Сам Гамбаров страшно плохой лектор; говорит медленно и очень *իրրիւ*, но это неважно для нас.

Говорят, что армяне-гузы, проживающие в настоящее время в Париже, затеяли мысль учредить какое-то армянское общество в обширных мерах и с широкою программой. Зачинщиками являются Тамамшев и Экизлер (4). Когда мне сообщили об этом, я невольно помнил Вас по поводу обещаний, которые сделал Вам этот же Тамамшев в Тифлисе, но до сих пор не осуществил. К сожалению, я

не знаком с ним и не знаю, что за субъект: говорят, он интересуется армянскими древностями и чуть не занимается ими.

Других новостей нет, по крайней мере, я не знаю. Череза (5) я видел недавно в качестве председателя на конферансе одного из местных учащихся армян на тему: «Հայ երիտասարդությունը և արև-աշխարհը». Через, так же как и «Пропаганда», произвели очень жалкое впечатление.

Надеюсь, что Вы теперь свободны от университетских занятий и корректуры. Когда же выйдет пресловутая статья моя? Пришлите, если возможно, пожалуйста, Ваши работы, и будьте любезны сообщить новости литературные. Я вовсе не *au courant*. Почти никаких специальных журналов армянских не читаю. Если Вы получили какие-нибудь небольшие работы и не имеете охоты рецензировать, прошу прислать мне.

Читали ли Вы статьи Тер-Погосяна в «*Հանդես ամսօրեայ*» и как Вы находите их (6). Не знаю, чем кончились «размышления» Абеяна о Хоренском в «Арапате» (7), а Месроп вардапет защищает диссертацию (8). В «*Քրոնիկոն*»-е, не помню хорошо, или в «*Արևիկ*»-е кто-то писал очень возвышенным слогом о «удивительных познаниях» Месропа, «*մինչև իսկ գնդերեն և ամսկրիտերեն տեղ գիտե և բազ բնությունն մը սկեր է*»:

Примите сердечный привет и будьте любезны передать его также Александре Алексеевне, Юрию и Владимиру (9).

В ожидании письма и в тоске по Вас вечно Вам преданный

**Н. Адонц**

*18 марта, [1901]*

Мой адрес: Paris. Rue du Faubourg-Poissonnière, 159

## 21. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

[7 հունվարի, 1902] (1)

Շնորհավոր Նոր տարի: Ցանկամ նույնպիսի արգասավոր գործունեություն, որպիսին մինչև այժմ: Բարև արգո տիկնոջ և մանկանց: Արդյո՞ք կարող եք մի օրինակ «Հովհաննես պատմագիր» (2) ինձ հասցնել կամ որտե՞ղ դիմել: Եթե չեմ սխալվում, Դուք Ձեր ունկնդիրների համար բերել տվեցիք: Խիստ կպարտավորեցնեք:

Ձերդ Ն. Ադոնց

Russia

Nicholas Marr Esq., Николаю Яковлевичу г-ну *Marry*,  
профессору при СПб. университете.

St. Petersbourg. *Петербург*, В. О., 4 л., д. 7, кв. 3

## 22. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

[1902, I] (1)

London S. E. 91. Anerley R<sup>d</sup> Anerley

Многоуважаемый Николай Яковлевич,

Я получил Ваше письмо, чему душевно рад. Жалею, что Вы изволили придать моей, быть может, не совсем ловкой фразе, уж совершенно неловкий смысл. Вполне понятно было мое смущение по поводу того, что так долго Вы ничего не писали мне в ответ на мои письма. Невольно я припомнил, и то неоднократно: «Ո՞վքնրի յարգեսցի գրությունն» (2), если Н[иколай] Я[ковлевич] отворачивается. Но оказывается Вы писали, и Ваши письма не доходили до меня. В Париже почтою правят собственно concierge-ку (3), известные своею бесшабашной наглостью. Недавно получено мною заказное письмо с чеком на 84 р. из книж[ного] маг[азина] Риккера в качестве гонорара за мою статью. Посланы ли при этом и отдельные

оттиски, я не знаю; только они не доставлены мне. Я надеялся получить оттиски от Вас; между тем, оказывается, Вы ждали и ждете получить «хотя бы в одном экземпляре». Видимо, суждено никому не получать оттиск.

Относительно моих работ и Вашего предложения – представить их на Московскую премию – я могу сказать следующее. Это обстоятельство служило мне лишним поводом размышления, касающимся судьбы моего труда, очевидно, в смысле «werden», а не «sein». О том, что он представляет из себя в настоящее время, я писал Вам много раз.

Я поставил себе задачу, проследить историю **Армении** и **армян** по данным византийских авторов. Первоначально моей целью было – приступить к делу с Прокопия и дойти до Феофана, иначе говоря, ограничиться периодом от VI-до IX в., до Багратидов. Но в то время, когда я читал Прокопия, я походил на путника, оглядывавшегося постоянно назад, как будто что-то забыто. В Париже я решил начать с IV в., и принялся за Аммиана Марцеллиана, с одной стороны, и Фауста Визант[ийского], с другой. Затем перешел к ораторам Themistus, Idatus, Claudian, Pacatus, Orosius и другим источникам: Prosper Aquit., Marcel. Comes и другие. Далее, церковным писателям и, наконец, настоящим визант[ийским] авторам. Руководящей нитью служили мне армянские писатели. «Держа око» в них я искал материала у внешних авторов, чтобы удостовериться насколько возможно в степени достоверности «армянских легенд». Таким образом, накопленный у меня материал идет, годится одновременно для двух целей: для историко-литературных исследований, **Фауста**, [Парпского-Елисея], **Себеоса**, **Гевонда**, далее будет для **Иоанна Католикоса** и **Асогика**, что намерен исполнить здесь, в Лондоне. После подлинной критики возможно будет говорить и об «Армянской Истории». Так как критика, исследование армянских историков ведется не на армянской почве, а на основании внешних, византийских

авторов, то и выходит, что предполагаемая мною работа, т.е. «История Армении и армян», составляется так сказать из научно рассмотренного, очищенного материала. Хотите, назовите ее по Византийским авторам. **Отдельный этюд** об армянах в Византийской империи, вне родины, этюд весьма интересный, будет, разумеется, исключительно из византийских источников. У меня порядочный материал для этого. Мне удастся подтвердить, что Исаврск[ая] династия – чисто армянская, и что иконоборство – армянство, вернее продукт Востока, перенесенный в Византию армянами, или людьми армянского происхождения. **Церковные** вопросы так же в высшей степени интересны. К сожалению, пока лишь отмечаю касающийся сюда материал, но не списываю, и не занимаюсь им. Яснее будет сообщить Вам прямо **Заглавия** или темы работ примерно.

- |   |   |  |
|---|---|--|
| <p>1) <b>О Фаусте</b> (Материал готов).<br/>         2) <b>Лазарь – Елисей.</b><br/>         3) <b>Себеос</b> (готов).<br/>         4) <b>Гевонд</b> (готов).<br/>         5) <b>Иоанн Католикос</b> (предполагается).<br/>         6) <b>Асогик.</b></p> | } | <p>Исследования на почве внутренней критики; мало нужды в извне взятых данных. Кое-что нужно, и это есть у меня. Главным образом, касательно персидских царей. О самом ядре рассказа ценное сведение в Prosper. Aquit.</p> |
|---|---|--|

[7] Моисей Каланкатвази, на почве внутренней критики, гл. «Չիրք արքոց»]

8) Об Агафангеле также имею кое-что. Ценна особенно запись, найденная мною в Парижской рукописи Агафангела. Венец[ианское] издание сделано с этой рукописи, как значится на рукописи, и удивляюсь, как «ученые издатели» не обратили внимания на нее. Несколько смутна она, правда, и неясна, но [?] в высшей степени интересна.

Эти этюды не трудные, и время, нужное для них, зависит [?] от того, в каком духе они будут исполнены, с изложением истории вопроса или прямо, без всяких предисловий.

9) После этого пойдет **История Армении** и **История армян**, подразум[еваются] под послед[ней] судьбы армян в Византии. Смысла нет озаглавить работу или начать ее «состав[лена] по византийским источникам», ибо если то, что рассказывают визан[тийские историки], находится и у армянских историков в том или в другом виде, то как не цитовать это. В таком случае от чего назвать труд «состав[лен] по византийским источникам»? **Другое дело «Судьба армян в Византии»**. Это почти что исключительно черпает из виз[антийских] источников.

Теперь можете спрашивать, какие же размышления у меня насчет работ, и что разумею под этим размышлением. Глядя на собранный материал, и часто перелистывая его, я люблюсь им, как скупой рыцарь своим золотом – я восклицаю, «что будет с тобой, с вами, мертвые тетрадки, удостоили вас оживить, принять образ, или останетесь всегда так бездушными». На мой взгляд, я только «*հ սիգրսիւի կրկուց*». Несмотря на этот невероятный труд, тщательно, с большим усилием и энергией собранный материал, я нахожу все же, что я сделал лишь первый шаг. Мне нужно еще переработать, рассматривать весь материал в совокупности. Он представляется мне пока как мертвые кости, рассыпанные на поле; надо их приблизить и, что главное, воплотить. Для этого мне предстоит еще познакомиться солидно с Византийским государственным строем, по касающимся сюда капитальным трудам. Надо перенести трудности, которые ныне избегают быть может от моего внимания, но которые всплывают во время исполнения работы. Если допустить, что такое же расстояние будет между моими нынешними проектами, и будущей готовой работой, какое оказалось между данной Вам работой о Церенце и представленном мною трудом (4), – то это дос-



таточно вполне, чтобы терять мужество. Вопрос не в том, что я боюсь трудностей, нет, а в том, что дрожу пред препятствиями. Будут ли иметь возможность в будущем переработать этот материал. По моим расчетам, мне нужно больше года, [пожалуй, два года времени], чтобы успеть осуществить намеченные проекты, при самых благоприятных условиях.

Через несколько месяцев мне придется вернуться в Россию. По всей вероятности, попаду в Эчмиадзин; но я боюсь, более чем уверен, что там в той атмосфере решительно ничего нельзя делать. Я же ведь знаю всех этих людей – они мои товарищи по Академии же – знаю и ванкскую атмосферу; все в нем решительно неутешительно. Кроме того, там можно заниматься армянской филологией в тесном смысле слова, т.е. только на армянской почве, пользуясь библиотекой. Для предпринятых мной работ никаких удобств, пособий там нет; и надо быть только легкомысленным, предполагать, что в Эчмиадзине возможно заниматься византийской филологией. Не знаю, почему-то даже армянская филология там не льет. Ведь трудно сомневаться в добросовестности, трудолюбии Галуста (5). Что же он делал, говоря *pro domo* в течение 15 лет: он работает с 1886/7 года. Не говорю уже о Костяняне (6), Карамяне (7) и других, даже о нашем Мананде (8). Мне кажется, я говорю об аксиоме.

Соображая все это, я прихожу к заключению, что мне нужно пристроиться где-нибудь в России, или в Петербурге, или в Москве хотя бы на 1-2 года. Мне приятнее всего, разумеется, Петербург, рядом с Вами. Прекрасно, как же пристроиться? Я имел намерение и имею еще держать экзамен на магистранта и представить предпринятую работу по окончании ее на магистра. Мне решительно все равно, в каком учреждении и какую должность иметь, лишь бы в Петербурге и, разумеется, с условиями благоприятными для моих целей – занятий. Я ведь знаете, к моему величайшему сожалению, махнул рукой давно на более чем нуждающуюся во мне семью. У

меня другого исхода не было; надо было жертвовать либо арменоведением, либо родными. Одно сделано, благодаря чему и я на счету блудного сына. Я это говорю не для доблести, о нет, мне даже печально вспоминать – говорить об этих материях, а лишь с той целью, что мне особенно многого не нужно, разве только не умереть с голоду. Вы как-то нашептали мне в ухо, что в Археологическом институте что-то есть. В то время я не интересовался этим, но теперь это очень важно. Что это было? Затем, что стало с Оноприенко. Могу ли в сентябре держать экзамен у Вас на факультете, и если выдержу, есть ли возможность заменить Оноприенко, занять «оставленную им пустоту» хотя бы на некоторое время, как раз подобно ему. Простите, если я заговорил даже о Оноприенко и о его функции, – не имея на то права: утопающий за все хватается... Наконец, в Азиатском Музее, или в Публичной Библиотеке, как вы думаете, нет подходящего места и занятий. Если в Петербурге невозможно устроиться, быть может есть надежда в Москве, в Лазаревском Институте. Я помню, там находили занятия еще недавно, как Левон Саркисян (9), – что же, институт ведь богат, что стоит им держать лишнего лектора. Я представлю работу на их тему, если будут позволять обстоятельства. Я ничего не имею против даже отказаться от премий, в случае успеха, лишь бы они дали мне возможность исполнить работу. Не имея знакомства с этим учреждением, не знаю, насколько мои соображения реальны. По сему я обращаюсь к Вам, с просьбой принять участие, и если есть возможность, устроить. Быть может, Вы предложите другое средство. Словом, я нуждаюсь в данном случае в Ваших советах и решениях. Более чем уверен, что мое это желание – пробывать в Петерб[урге] или в Москве, в худшем случае, некоторое время будет понято Вами исключительно в том духе, как объяснено здесь: именно, что побудительною причиною тому являются лишь выясненные выше интересы моих работ. Если только появится у Вас маленькое сомнение,

что оно – это желание – носит неблагоприятный – скажем – евангуловский характер, т.е. метить (?) ввысь, то этим самым Вы меня убьете нравственно раз навсегда. После нравственной смерти – все остальное также умирает, погаснет быть может тогда и пыл к занятиям. В этом случае нечего и говорить и о затронутом здесь вопросе. Проблема предрешится этим.

При благоприятных условиях, заниматься два года над переработкой материала в Пет[ербурге] или в Москве, очень много значит для меня. Я приобрету за это время такой навык, и легкость оперировать над материалом; знать, что где нужно искать и как, что после того мне довольно безразлично будет, – где продолжать дальнейшее исследование. Ведь у меня материал накопится на этот раз для периода до Багратидов, или быть может, до 1000 г. (Асогик). Но я думаю продолжать в будущем разыскания в том же духе, и дойти если не до наших дней, – то по крайней мере до падения Рубенидов. Это одновременно и исторические, и литературные исследования, и, надеюсь, Вы не сомневаетесь, что это же самое верное средство выпутаться, наконец, из заколдованного круга и приобрести прочные опоры для детальных, более обстоятельных изысканий и решений частных вопросов. За неимением места я должен поставить точку. Мне хотелось бы поговорить кое о чем, но письмо получило слишком деловой и серьезный характер, и надеюсь, найдет отклик в Вас. До лета есть время думать, обдумывать вопрос.

Поклон Александре Алексеевне и детям.

Ваш Н. Адонц

**P. S.** Прочли мою заметку о Кассии в «*Հանդես ամսօրհայ*»? Знаю, что вышла она, но в каком номере, не ведаю, ибо не прислали даже (10).

Н. Адонц

Если отписки с моей статьей возвращены в редакцию, то прошу Вас распол[аг]ать (?) ими, и прислать мне несколько экземпляров вместе с Вашими работами.

### 23. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

Дорогой Николай Яковлевич!

Жаль, что накануне Вашей последней карты я уже написал Гер[асиму] Арт[емьевичу]. Предпоследняя Ваша карта не была получена мною в свое время, только сегодня утром прислали ее по моему требованию, из Anerley вместе с другими письмами.

Я сильно беспокоился, что Вы не откликнулись на мою просьбу; и принужден был обратиться к Г[ерасиму] А[ртемяевичу]. Я сообщил ему обо всем написанном Вам, высказывал удивление, что Вы ничего не отвечаете, и просил его известить меня, находит ли он резонным мое желание и основания оставаться в Петербурге, и если да, что он может советовать мне.

Вы будете иметь случай увидеть его, должно быть, он сам первым заговорит с Вами обо мне. Будьте любезны со своей стороны разъяснить ему, если кое-что из моего письма нуждается в этом.

Я в плохом настроении и духе; вследствие ли беспокойства или не знаю чего, стал еще более нервным и раздражаться, несмотря на то, что предмет моих занятий в настоящее время – один из наиболее интересных периодов (– Лев Армянин и преемник) (1), но работа идет вяло. Я вижу, что направленная мною к Вам просьба и разрешение ее имеет прямо физическое значение, помимо нравственного. Не успокоюсь, пока не услышу категорического слова.

Я получил отписки (2), большое спасибо за все те труды и беспокойства, которые Вы так любезно приняли на себя, и буду весьма рад, если и в будущем смогу иметь это удовольствие. Две грубых

ошибки в армянском շիշ (10 стр.) вм. շիբ и ճեմբուի (27 стр.) вм. ճեմբուի. Не забудьте исправить, впрочем, sapientes поймут.

Если не трудно будет, пришлите мне еще несколько экземпляров, для рассылки в наши специальные журналы («Բազմալէզ», «Հանդէս ամսօրեայ», «Արարար», «Zeitschrift für armenische [Philologie]») и некоторым друзьям).

В «Византийском временнике» читал рецензию на «Kassia» Крумбахера, где автор – рецензент находит вероятным и историчным то, что я считал баснею. У меня новые основания для подкрепления того, что я высказал в «Հանդէս ամսօրեայ», просто так, руководясь моим нюхом. Феодора Пафлагонская, соперница Кассии, называется **армянка**. Это видно из дальнейшего рассказа Continuatus Theophanes, где родственники ее носят чисто армянские имена (Վարձափ и др.). Этим обстоятельством очень много выясняется в новом свете. Я думаю вернуться к тому вопросу и послать [?] Крумбахеру.

Отчего не прислали Ваши докторские работы? Если можете, пожалуйста, пришлите. Напишите также о предстоящем Вашем путешествии.

Поклон Александре Алексеевне и ребятам.

С истинным почтением, **Н. Адонц**

18 февраля, 1902]

## 24. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ

London W.

12 Parchesier gardens

Մեծարգի՛ Տեր,  
ազնի՛վ բարեկամ,

Ստացա Ձեր գրութիւնը, որի համար հայտնում եմ արտազին շնորհակալիքս՝ նկատելով այն իբրև մի նոր նշան Ձեր առ իս ունեցած ուշադրութեան:

Հարուցած խնդիրս ինձ այնքան պարզ էր թվում, որ զարմացմամբ և ցավով կարդացի Ձեր այն տողերը, որ շնչում էին մի տեսակ սրբամտությամբ. կարծես, իրոք, առաջարկս «ազգի օգտի և սեփական պատվի» ընդդեմ մի գեղծում լիներ:

Ես արժան չէի համարիլ ինձ բնավ այն բարյացակամության, որ ինձ համար թանկ է, և որի անունով խոսում եք ինձ հետ, եթե գեթ մի թեթև կասկած ունիք, որ ես ունակ եմ պարտքերիս մեջ թերանալու: Ավելի հակամետ եմ վերագրելու մեղադրությունը այն բանին, որ ես լավ չեմ բացատրել թերևս իմ միտքս:

Ձեր հաճությունը գրում է, որ իմ գործելու տեղս Ս. Էջմիածինն է, և որ այնտեղ առժամանակ մնալուց հետո, այլ է, եթե կամենամ քննությանց կամ այլ նպատակի համար առժամանակյա կերպիվ այդտեղ գալ: Էական խնդիրը հենց այս է. ես շատ որոշակի գրել եմ պ. Մառին, որ իմ ցանկությունն է հունիսին գալ Պետերբուրգ, ինչ-ինչ պատրաստությունից հետո սեպտեմբերին քննություն տալ մագիստրանտի, այնուհետև նվիրվել ձեռնարկած աշխատությանս, պատրաստել այն իբրև մագիստրոսության աշխատանք: Իմ հաշվով և ենթադրությամբ՝ ցանկացածս ծավալով և հաջողությամբ այդպիսի մի աշխատություն պատրաստելու համար հարկավոր է գոնե 2 տարի, և այդ երկու տարին ուզում էի անցնել Պետերբուրգում՝ իբրև իմ նպատակի համար ամենանպաստավոր մի վայրում (1): Հույս ունեի, որ այդ ժամանակի ընթացքում, ինչպես գրել եմ պ. Մառին, այնքան փորձ և հմտություն ձեռք կբերեի նյութերիս մշակման եղանակի մեջ, որ այնուհետև դժվար չէր լինի շարունակել նույն գործը նույն ուղղությամբ որևէ մի ուրիշ տեղ: Ն. Մառից ես նամակ ստացա Ձեզ ուղղած գրությանս հաջորդ օրը, ուր հայտնում է իր կատարյալ համաձայնությունը ինձ հետ և գտնում արդարացի իմ միտումները: Արդ, եթե Ձեր հաճությունն ու հավանությունն էլ առնելու բախտ ունենայի, անշուշտ, ապագան ինձ կժպտար: Իսկ եթե դուք բնավին ընդդեմ եք, այդ այլ խնդիր է:

Հայտնում եմ վերստին շնորհակալությունս և խնդրում հավաստի լինել, որ ուրիշ բան չունիմ աչքիս առաջ, եթե ոչ կոչմանս գիտակ-

ցությունն ու հավատարմությունը: Լիահույս եմ, որ պարտքերս կատարելու գործում Ձեր աջակցությունն ու քաղցրահայեցողությունը պիտի լինի ինձ գորեղ կռվան, որի համար կմնամ Ձեզ երախտագետ և միշտ անձնվեր:

**Ն. Ադունց**

*1902, 8 մարտի*

Լոնդոն

## **25. «ՀԱՆԳԷՍ [ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

Այսօր ուղարկեցի միաբանությանդ իշխան Արդությանի (1) հանձնարարությունը՝ երկու ծրարով գրքեր՝ Լինչի աշխատությունը (2), լուսանկարներ և տեղվույս եկեղեցական խորհրդի կանոնադրությունը (3):

Ի դեպ, կխնդրեմ խմբագրությանդ «Հանդեսի» համարները այս հունվարից սկսյալ դրկել ինձ և նմանապես «Ռուսինյանի կյանքը», որ կարծյոք պիտի արտատպված լիներ «Հանդես»-ից (4): Արժեքը և բաժնեգինը անմիջապես կդրվի:

Հասցես՝

W. O., 15 line, № 2, log. 2

Հարգանքով՝ **Ն. Ադունց**

*[1903 p.]*

## **26. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պ. Հովհաննես Թումանյան,

Թիֆլիսից հեռանալիս (1) հնարավորություն չունեցա Ձեզ անձամբ տեսնել և խնդրել քանի մը բանաստեղծություններ դրկել հաջորդ, այսինքն՝ Բ համարի համար (2):

Ձեր դրկած ոտանավորներից առաջինը գրաքննիչը բռնեց (արգելեց-Պ. Հ.), երբ արդեն տպած պատրաստ էր, իսկ երկրորդի (3) հոնորարը պատվիրել էմ Լևոն Քալանթարյանին (4) Ձեզ հանձնել: Եթե չեք ստացել, նեղություն կրեցեք Շանթի (5) միջոցով հիշեցնել նորան:

Շատ ուրախ կլինեմ, եթե շտապեք մինչև ամսիս վերջերը մի քանի ոտանավորներ ինձ ուղարկել:

Շանթին, եթե տեսնեք, խնդրում եմ՝ հանդիմանեցեք իմ կողմից, որ, հակառակ խոստման, մինչև այժմ չէ ուղարկել «Ամնաբուր խիղճեր» դրաման, և հայտնեցեք նորան, որ սպասում եմ: Ի դեպ հիշեցրեք նաև պ. Շիրվանզադեին (6) և Վ. Փափագյանին (7), ինչպես և Ահարոնյանին (8), որ նրանք մասնավորապես անփույթ չգտնվեն իրենց խոստումը կատարել կամ վաղօրոք հայտնեն, եթե անկարող են մինչև նոյեմբերի վերջը մի բան հասցնել:

Հարգանքով՝  
**Ն. Ադոնց**

Հասցես՝

Кирпичный пер. 3, кв. 23

**Н. Адонц**

*14 նոյեմբերի, [1903]*

## 27. «ՀԱՆՂԷՍ [ԱՄՍՕՐԵԱՅ]»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Կխնդրեմ «Հանղես»-ի արգո խմբագրությանը Կարստի աշխատությունը (1), որ այսօր հղեցի Ձեզ, հասցնել իշխան Արղությանին (2):

Շնորհակալությամբ ստացա «Հանղես»-ի համարները, անշուշտ, կներեք, եթե քիչ կուշացնեմ Ձեզ դրկելիք բաժնեգինը:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*[1903 թ.](3)*



## 28. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՉԻԿՃՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հայր Բառնաբաս,

Խնդրեմ բարի լինեք ինձ փութով ուղարկել Հ[այր] Մխիթար արքայի՝ Չեր գրատան յուղանկարի լուսատիպ պատճենը, նաև Հ[այր] Այտընյանի: Յանկալի է յուղանկարի պատճեն, իսկ եթե չունեք, ուղարկեցեք լուսանկարը: Նոքա զեւտեղվելու են «Բանբեր» հանդեսում: Հղեցեք նմանապես, խնդրեմ, Հ[այր] Մենևիշյանի կազմած կենսագրությունը Հ[այր] Այտընյանի (1): Չեզ կարծյոք փոքրիկ տալիք ունեմ (S[եր-] Պողոսյանի գրքի համար), միասին կուղարկեմ (2):

Համբույրներ աջույդ՝

**Ն. Ադոնց**

Մեր հասցեն՝ Rue de Gogole 16, log. 14

[1904 թ.]

## 29. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԻՆ

2 մարտի, 1904 թ.

Սանկր Պետերբուրգ

Առաջադրելով հարգելի Խորհրդիդ ուսանող Ատոմ Յարճանյանի խնդրագիրը՝ կարևոր եմ համարում մի քանի խոսք ասել նրա մասին՝ ի գիտություն անդամներիդ: Պ[արոն] Յարճանյան թյուրքահայ է և ուսանում է Պարիս՝ Սորբոնում (1): Գրեթե պատանի՝ 22-23 տարեկան (2), օժտված բնատուր շնորհքով, նա պարասպում է միևնույն ժամանակ և գրականությամբ ու արդեն հայտնի է խոր և սրտառուչ բանաստեղծություններով (3): Նյութական դառն պայմաններն ու պես-պես գրկանքները հյուծել և քայքայել են նրա առողջությունը, և վերջերս երևան են եկել թոքախտի նշաններ (4): Խեղճ տղային վե-

րահաս վտանգից ազատելու համար նրա ընկերները և հարգողները (5), մի քեթև գումար հավաքելով, դրկել են նրան Շվեյցարիա՝ բժշկվելու (6): Քանի որ Խորհուրդը սկզբունքով և գործով նպաստում է ուսանող երիտասարդության, ցանկալի կլիներ, որ նա հաճեր հարգելու պ[արոն] Յարճանյանի խնդիրը: Նա միանգամայն արժանի է Ձեր ոգնության, որովհետև ուսանող է, գրող և վերջապես հիվանդ: Նրա ապագան կապված է հայ գրականության հետ, և նրա կորուստը կորուստ է հայ գրականության համար (7):

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

### **30. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ**

Ազնի՛վ բարեկամ,

Յավում եմ, որ միայն այժմ կգամ արձագանք տալու Ձեր վերջին կարտերին: Աններելի էր լռությունս, մանավանդ պ. Սղեբոցյանի խնդրի համար: Դժբախտաբար, որոշակի չեմ կարող ասել, թե Խորհուրդը (1) հնարավոր կգտնի օգնության հասնելու հիշյալ երիտասարդին, որի համար բարեխոսելու ներություն Դուք ևս հանձն եք առած: Ավելորդ չեմ համարում քանի մը խոսք գրելու Ձեզ այս առթիվ, Եկեղեցական խորհրդիս ուսանողներին օգնելու խնդրին նկատմամբ ընդհանրապես:

Տեղվույս Եկ[եղեցական] խորհուրդը ամեն տարի ավելի քան 17.000 ռուբլի կցրե ուսանողության: Մինչև այժմ նպաստներ և թոշակներ տրվել են առանց որևէ առաջնորդող սկզբունքների, այս կամ այն անձնավորությանց անխտիր՝ ուշ դարձնելով միմիայն լականության կամ ճշմարիտ կարիքին: Խորհրդիս ներկա կազմը մինչև այժմ հետամուտ էր ինչ-ինչ սկզբունքներ մշակելու, թե՛ թոշակները բաշխելու և թե՛ եկեղեցական դրամները ավելի նպատակահարմար գործ դնելու վերաբերությամբ. նորերս միայն որոշ եզրակացության եկանք, և մշակված կանոնադրությունը պետք է առաջնորդ լինի մեզ

մեր գործունեության: Գուցե հետո Ձեզ մի օրինակ դրկելու հարկավորություն զգանք, որից մանրամասն կտեղեկանաք նոր ծրագրիս: Այսբանս ասել կբավականանամ, որ նոր խորհրդի հայեցողությամբ չքավորությունը բավարար հիմք չէ, որ ուսանողին օգնելու հարկավորությունը պարտավոր համարե խորհուրդը: Ազգային մեծ հաստատություն լինելով (ներկա հանգամանքներում գրեթե միակը)՝ [եկեղեցին] մեծ պատասխանատվություն ունի հասարակության առջև և պարտավոր է դրամները տնօրինելու այնպես, որ արդյունքը հասարակական բնավորություն կրե: Հայ եկեղեցուց օգնություն հայցելու իրավունք ունենալու են միմիայն այն անձինք, որ վստահ են, որ ապագայում պիտանի են լինելու այս կամ այն մտքով հայ ազգին՝ նրա մերձավոր կարիքները դարձանելով: Հունվարից կսկսվի նոր ծրագրի գործադրությունը: Պ[արոն] Սղերդցյանցին ճանաչելու հաճույքը չունեմ, բայց նրա տոկունությունը գովական է: Եթե անձամբ կերաշխավորեք, որ իրոք արժան է հասարակական օգնության պ. Սղերդցյանը, այն ժամանակ խորհուրդ տվեք խնդիր ուղարկելու խորհրդի անունով և կից Ձեր հանձնարարական նամակը խորհրդին ներկայացնելու: Հուսով եմ, որ կհաջողվի նրան թոշակավոր ընդունել մինչև ուսումն ավարտելը՝ պատասխանատվությունը որոշ մտքով Ձեզ վրա թողնելով: Ինչպես կդատեն խորհրդի մյուս անդամները, չգիտեմ, բայց ես կաշխատեմ այս ուղղությամբ:

Հարգանքով՝  
**Ն. Ադունց**

**Ք. Տ.** «Բանբեր»-ի վիճակը դժբախտաբար անորոշ է և տարտամ, ինչ կլինի, չգիտեմ: Այս տարի թերևս չհաջողվի հրատարակելու, որովհետև աջակից չունեմ, իսկ ինքս ամբողջապես նվիրվել չեմ կարող՝ զբաղված լինելով այլ գործով, որը հուսով եմ՝ կվերջանա առաջիկա աշնան, այնուհետև հաստատ հիմքերի վրա կդնեմ «Բանբեր»-ը (2):

*18 դեկտեմբերի, [1904]*

**31. «ԲԱՆՔԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ»  
ՀԱՆԳԵՍԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ**

Տպելով պ. Գ. Արիստակեսյանի (1) նամակը՝ հրապարակավ հայտնում ենք մեր շնորհակալիքը նրա բարեսեր առաջարկի համար: Այսպիսի մի ինքնաբեր պատրաստակամություն՝ օգնելու հայ գրականության, խիստ հուզական է և անապասելի մանավանդ մեր օրերում, երբ հռչակված «ազգասերները» ազգասիրությունը լավ բան են համարում միմիայն ուրիշների համար, բայց ո՛չ իրենց և ամեն կերպ աշխատում են իրենց մերձավորներին հեռու պահել «անօգուտ» ասպարեզից...

Պարոն Արիստակեսյանի շնորհիվ «Բանքերը» միանգամայն ապահովված կարելի է համարել: Պիտի խոստովանենք, որ հանդես կանոնավոր և ժամանակին ելնելու համար պակասում են դեռևս մի քանի պայմաններ: Հուսով ենք, որ նրանք էլ շուտով կլրացվեն: Ամեն ինչ կարգավորելուց հետո առանձին հայտարարությամբ կհաղորդենք, թե երբ կարող է լույս տեսնել հետևյալ գիրքը:

Հայտնում ենք նաև մեր ընթերցողներին, որ հանդեսիս գեղարվեստական բաժինը այսուհետև կխմբագրի մեր հայտնի նկարիչ պ. Վարդգես Սուրենյանցը (2): Շնորհակալություն նրան՝ մեր խնդիրը հարգելու համար:

**Ն. Ադոնց**  
[1904]

Գրություններն ուղղեք մեզ  
առայժմ՝  
СПб., ул. Гоголя, 16  
Rue de Gogole, 16

### 32. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Մեծարգո՛ւ պ. Խալաթյանց,

Այսօր ուսանող Մելիքյանի ձեռքով ուղարկեցի Ձեզ խնդրածդ բանաստեղծությունները, ինչ որ մոտս կար: Ունեի նաև Թերզյանի (1) գրությունները, բայց չգտա: Ինչպես կտեսնեք, այդ գրվածները մեծ մասամբ գրական արժեք չունեն և դժվար թե պիտանի լինեն Ձեր ձեռնարկի համար: Թերևս կարելի լիներ որոշ ընտրություն անել ամեն մի գրողից և մի տեսքով միասին հրատարակել փոքրիշատե համ ունեցող քերթվածները:

Ինչ վերաբերում է Ձեր սիրալիր առաջարկին՝ դրկել ցուցակ Ձեր այն հրատարակությունների, որոնք ես չունեմ, ահա՛, ստորև նշանակում եմ: Չգիտեմ՝ հնարավոր կգտնեք բոլորը դրկել, թե չէ, որովհետև շատ բան չունեմ: Վաղօրոք հայտնում եմ խորին շնորհակալությունս այս առթիվ:

1. Էմինի աշխատություններից՝ 2, 3, 4 выпуски (2),
2. Ազգագրական ժողովածուից՝ 1-5 выпуски (3),
3. Ձեր աշխատություններից՝
  - ա. «Армянские Аршакиды»,
  - բ. «Գիրք մնացորդաց»,
  - գ. «Խորենացին և Գր[իգոր] Նազիանզացին»,
  - դ. «Ղազար Փարպեցի և գործք նորին» (4),
4. «Ավետարան», 887 թ. (5):

Շնորհակալությամբ և խորին հարգանքով՝

**Ն. Ադոնց**

[Տարեթիվը և տեղը նշված չեն] (6)

### 33. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Մեծապատի՛վ պ. Խալաթյանց,

Ձեր վերջին երկու աշխատություններից («Арм. эпос» (1) և «Арм. Аршакиды») մի-մի օրինակ խնդրում եմ ինձ դրկել Վիեննա: Տեղ-վույս խանութներում չգտա, ուստի խնդրում եմ, եթե նեղություն չէ, պատվիրեք դրկել Վիեննա՝ Մխիթարյանների հասցեով՝ Հայր Բառնաբաս Պիլեգիկճյանին (2)՝ հանձնելու իշխան Բ. Արղության-Երկայնաբազուկին: Վիեննայից արժեք ստանալուն պես կուղարկեմ Ձեզ: Լիահույս եմ, որ չեք մոռանալ շուտով տնօրինելու խնդիրս:

Այս խառն ժամանակները ինչո՞ւ չեք գալիս այս կողմերը: Խոսելու և խորհրդածելու շատ բան կա:

Խորին հարգանքով՝ **Ն. Աղոնց**

[Տարեթիվը և տեղը նշված չեն] (3)

### 34. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Հարգելի՛ և ազնի՛վ բարեկամ Գ. Խալաթյանց,

Վաղուց ի վեր ցանկություն ունեի խնդրելու Ձեզ, եթե հնար է, դրկել ինձ ճեմարանիդ հրատարակությունները, գոնե Ստ[եփանոս] Օրբելյանի և Ս[ովսես] Կաղանկատվացու Պատմ[ությունների]՝ Էմինի հրատ[արակությունները] (1), որով ինձ մեծապես կպարտավորեք:

Եթե այլ կերպ կարելի է ստանալ, խնդրեմ դրկեք վերադիր վճարով: Արդյո՞ք «Dulaurier-ի Chronol[ogie] armén[ienne]» երկը (2) կա դեռևս, և չի՞ կարելի մի օրինակ ստանալ (3):

Որքան ուզում եմ Մոսկվա գալ մի քանի օրով, չեմ կարողանում: Համալսարանում 4 ժամ դասախոսություն ունեմ միայն, և թեև բավականին ազատ ժամանակ է մնում պարապելու աշխատությանս (4)

հատորի շուտավույթ հրատարակության, բայց, դժբախտաբար, հարկավոր տրամադրություն չկա, որն հիմ է ամեն աշխատության:

Ընդունեցե՞ք, խնդրեմ, հարգանքներս և ողջույններս:

Ձերդ անձնվեր՝ **Ն. Ադոնց**

*Ս. Պլեյերբուրգ], 31 հունվ[արի], [1906] (5)*

Екатеринский кан. 27, кв. 14

### **35. ՄԵՍՐՈՊ ՎՐԳ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ**

*12 հունիսի, 1906 թ.*

Սիրելի՛ Հայր Սուրբ,

Ես հեռագրել եմ «не могу» և ոչ «могу» և շատ հասկանալի պատճառով: Ցավում եմ, որ ձեռագիրս աղճատված է Ձեզ հասել և իզուր սպասել է տվել Ձեզ: Չնայելով ձախող արտաքին և ներքին, ընդհանուր և մասնավոր անթիվ պայմաններին՝ ամեն կերպ աշխատում եմ հավարտ ածել գեթ այս տարի ձեռնարկս (1), որից հետո միայն կարող եմ այս կամ այն վճիռ ընդունել: Ներիր բաց մամակիս (2), եթե ժամանակի ների, գրիր Էջմիածնի շփոթ կյանքից:

Ձեզ անձնվեր՝

**Ն. Ադոնց**

В.О. 15 линия, д. 2, кв. 2

### **36. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵԶԻԿՆՅԱՆԻՆ**

Արժանապատի՛վ Հայր Բառնաբաս,

Մի կարևոր գործով Ձեզ եմ դիմում, որ այժմ էլ [եք] Դուք տպարանական վարչության գլուխը: Գիտությանց ճեմարանի (1) տպարանի համար հարկավոր է այս բուպեին ձեռք բերել Ձեր տպարանից երկու ձևի տառեր:

1) Այն տառերը, որով տպված է «Հանդէս»-ի դեկտեմբերի (2) համարում զետեղված Ձեր ծանոթությունը «Հանդէս»-ի բաժնեգնի վերաբերյալ՝ էջ 384՝ «Քանի մը ամիս ետքը «Հանդէս»-ը...» և այլն:

2) Նույն տառերի մանր տեսակը, որով տպված է «Հանդէս»-ի բովանդակությունը նույն 384-րդ էջում՝ «Ուսուցչապետ պր. Պավղոս Ֆետտեր» և այլն, կամ որ այն է, որով ձեռագրերի նկարագրությունն է տպված՝ էջ 379, «Հանդէս», դեկտեմբեր (3):

Կարծոյք այս տառերը Դուք Այտընյան կանվանեք (4): Ինչևիցե, խնդրեմ՝ անհապաղ իմացնեք, եթե կարելի է նույնիսկ հեռագրով:

1) Որքա՞ն կարժենան հիշյալ տառերը այն քանակով, որ հարկավոր կլինի ամեն մեկից 4 սյունակ կամ երկու երես՝ «Հանդէս ամսօրեայ» շարելու համար: Ուրեմն **չորս սյունակ** (ըստ «Հանդէս»-ի) **մեծ տառերից և նույնիսկ մանրերից:**

Արդ խնդրեմ՝ անմիջապես հեռագրով իմաց տաք ինձ այս հասցեով:

S. Petersbourg, Eglise Armenienne

**Nicolas Adontz**

Ճեմարանը մտադրություն ունի մոտիկ ապագայում գնել Ձեզնից նաև հետևյալ և այլ տառերի մայրեր: Այս անում է իմ հանձնարարությամբ, և բարի ցանկությունս է, որ այս խնդիրքս փութով կատարեք, որովհետև սորանից է կախված և մայրերի ձեռք բերելը: Համաձայն Ձեր հեռագրին և արժողության՝ անմիջապես հեռագրով կպատվիրե ճեմարանի տպարանի վարչությունը առաքումը:

Խորին հարգանքով՝

**Ն. Ադոնց**

**P. S.** Հա՛յր Բառնարաս,

Անշուշտ, ստացել եք Մառի այն աշխատությունը, որի մասին խնդրած էիք ինձ (5): Մառն ինքը հայտնեց, որ նա իր սրբազան պարտքն է համարում իր աշխատությունները միշտ Մխիթարյան հայրերին որկել, և եթե այս աշխատության առաքումը ուշացել է,



պատճառն այն է, որ սպասում է երկրորդ աշխատության ավարտելուն, որ մամուլի տակ էր, որպեսզի միասին դրկի:

Ինչ վերաբերում է գրախոսական նկատողությանց, ինչպես և Ջավախովի, դժբախտաբար, վերջինս քանի ամիս ի վեր Թիֆլիս է: Գալուց հետո անմիջապես կորկեմ իմ և նորա գրախոսականները միասին (6):

**Ն. Ա.**

Իմ բնակության հասցեն՝

W. O., 15, Ligne, № 2

Ըստ այսմ՝ խնդրեմ շարունակեք դրկել «Հանդէս»-ը: Թե՛ անցյալ և թե՛ առաջիկա տարվա բաժնեգինը միասին կորկեմ մոտ օրերս:

[1907 թ.] (7)

### **37. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՉԻԿՃՅԱՆԻՆ**

Սիրելի՛ Հայր Բառնարաս,

Լիահույս եմ, որ տառերը արդեն պատրաստ և թերևս ճանապարհի գցած կլինեք մինչև նամակս Ձեզ հասնելը: Խնդրեմ՝ շտապեցնեք:

Չէի՞ք կարող արդյոք միջնորդել, որ «Արևելք»-ի (1) և կամ «Բյուզանդիոն»-ի (2) խմբագրություններից, որոնց հետ ծանոթություն չունեմ, մի հավատարմաթուղթ դրկեին՝ Պոլստ հայ թերթերի ներկայացուցիչ և թղթակից լինելու և այդ անվամբ այստեղ Պետական դրամայի (3)՝ մեր պառլամենտի նիստերին հաճախելու իրավունք ձեռք բերելու: Եթե կարող եք, խնդրեմ՝ գրեք հիշյալ խմբագրություններին, որ հեռագրով լիագորություն տան ինձ (4):

Ձերդ՝ **Ն. Աղոնց**

[1907 թ.] (5)

### 38. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՉԻԿՃՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հ[այր] Բառնաբաս,

Ի պատասխան և բացատրություն տպարանական վարչությանդ վերջին գրության՝ մի երկտող էի դրկած Ձեզ՝ որոշ տնօրինություն ակնկալելու:

Արդյո՞ք ստացած եք, և ինչպես մեկնել Ձեր լրությունը: Խնդրեմ՝ անգամ ևս բարի լինեք պատասխանելու շուտափույթ, որ կարողանամ անելիքս անել: Տառեր ապապրելու անհաջող մտքին հղանալով՝ երբեք չէի սպասել, որ այս ելք պիտի ունենա, և գործը պիտի այսքա՛ն հետաձգվեր (1):

Հարգանքով՝ **Ն. Ադունց**

*6 սպրիլի, [1907 թ.] (2)*

### 39. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆՅԱՆԻՆ

*3 դեկտեմբերի, 1907*

*Պետերբուրգ*

Գերապատի՛վ Սրբազան Հայր,

Ի վաղուց հետե մի իղձ ունեմ, որի համար կհամարձակվիմ Սրբազանությանդ նեղություն պատճառել, որովհետև մասնագիտությունս Հայերենագիտությունն է տեղվույս համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում, անհրաժեշտ պետք ունեմ Պոլսի «Երեսփոխանական ընդհանուր ժողովո ատենագրությանց» (1), որ իր ժամանակին պարբերաբար հրատարակվում էր: Արդ անվերջ պիտի պարտավորեցնեք ինձ, եթե այդ «Ատենագրությունից» մի օրինակ ինձ հայթայթել կարենաք, ինչ գնով լինի: Թերևս Պատրիարքարանում, գրավաճառների և կամ եկեղեցյաց դիվաններում գտնվին: Քանիցս անգամ դիմել եմ Պոլիս նույն խնդրով, բայց որոշ արդյունքի չեմ հասել: Այս անգամ ստիպված եմ դիմել Բարձր Սրբազանու-

թյանդ հայրական աշակցություն հաջողեցնել ինձ հիշյալ հրատարակություններից մի օրինակ ձեռք բերել, որի համար կհայտնեմ իմ խորին շնորհակալիքս:

Համբուրելով աջդ մնամ՝  
**Նիկողայոս Ադունց**

Հասցես՝ տեղվույս Եկեղեցական խորհուրդ

#### **40. ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**

*18 նոյեմբերի, [1908 թ.]*

*Ս. Պ[ետրերբուրգ]*

Արժանապատի՛վ Հ[այր] Գալուստ,

Ստացա դրկածդ աշխատությունը Տիմոթեոս Կուզի հակաճառության վերաբերյալ (1), որի համար հայտնում եմ խորին շնորհակալությունս: Բովանդակությանն առաջուց ծանոթ էի: Առաջին անգամից Ձեր եզրակացությունը ինձ շփոթեց, բայց շուտով ինձ համար միանգամայն պարզվեց, որ մի թեթև ձեռագրական գոհ եք եղել: Կարդալով Ձեր այն տողերը, ուր քննում եք Դիոսկորոսի (2) մահվան տարին՝ 454 թ., այն է՝ «452-455 քառամյակին Նավասարդի մեկը հանդիպում էր օգոստոսի 5-ին, ուրեմն սեպտեմբերի 2[-ը] ընկնում էր Նավասարդի 29-ին, մինչդեռ Հռոմի 6-ը հանդիպում էր սեպտեմբերի 9-ին, ուրեմն անհնարին է սեպ. 2 = Հռոմի 6»: Կարդալով այս տողերը՝ կրկնում եմ, ակամայից գոչեցի. «Հե՛ր օրհնած, կնշանակե ձեռագրի սեպտ. 2 պետք է կարդալ 9» (սեպ. Բ, փոխ[անակ] Թ). զարմանալին այն է, որ Դուք ե[ք] բարձրացնում Հռոմի 6 ընթերցման անաղարտության վերաբերյալ, բայց նույն հարցը չեք տալիս սեպտ. 2[-ի] նկատմամբ: Այլապես հարցը Ձեզ համար կպարզվեր, և այնպիսի շփոթ չէիք առաջացնի բոլոր մասնագետների մտքերի մեջ: Մառը բոլորովին հուզված էր երևում, թեև համամիտ չէր, և երբ հայտնեցի նրան իմ բացատրությունս, շատ գոհ մնաց:

Շատ ուրախ եմ, որ այդպես կենտրոնացած եք տոմարի ուսումնասիրության վրա, մի ժամանակ ես էլ խիստ հետաքրքրված էի և մեծ կարևորություն էի տալիս, բայց մի հանգամանք ինձ հիասթափեցրեց, որի մասին կգրեմ մի այլ անգամ՝ սպասելով, թե ինչ հետևանքի կհասնիք:

Մտռից իմացա, որ ծաթ (3) ազգի ծագման մասին նյութեր եք գտել իբրև թե հայ աղբյուրներից (4), նույն խնդրի վերաբերյալ ես դեռևս անցյալ տարի որոշ և անհերքելի բացատրություն ունեմ օտար աղբյուրների տված տեղեկության հիման վրա: Այս մասին մի զեկուցում եմ պատրաստում, և եթե շուտով տպվի, կուղարկեմ Ձեզ (5):

Մագ[իստրոսական] աշխատությունս պատրաստ է և երևի մինչև հունվար լույս կտեսնի. քիչ ձգձգվում է քարտեզը:

Ողջույն Ձերդ՝ **Ն. Ադոնց**

[Հ. Գ.] Եթե Կուզի հրատարակիչները հաճեին մի օրինակ ինձ դրկել, շատ շնորհակալ կլինեի:

#### **41. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ**

Մեծարգո՝ բարեկամ Գրիգոր Խալաթյանց,

Շնորհակալ եմ մեծապես Ձեր հայտնած բարի ցանկությանց համար (1): Շատ ուրախ կլինեմ, եթե կարողանայիք ներկա լինել ապրիլի 5-ին, քանի որ Դուք ևս զբաղված եք եղել նույն խնդրով, ինչպես գրում եք (2): Ինձ համար առանձին նշանակություն ունի Ձեր անձնական կարծիքը: Ձեզ հայտնի է, որ Մառը այդպիսի հարցերով պարապելը վաղաժամ է համարում, և գովեստներ նրանից սպասել չէ կարելի (3):

Ողջույն,  
հարգանքով՝  
**Ն. Ադոնց**

[1909]

## 42. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Մեծարգո՛ բարեկամ,

Հուսով եմ, որ արդեն ստացած կլինեք աշխատությունս (1), որ մի քանի օր առաջ ուղարկեցի Ձեզ: Ներփակ ուղարկում [եմ] պաշտպանելի գրությունները: Դիսպուտը նշանակված է ապրիլի 5-ին՝ կիրակի օրը (2): Շատ ուրախ կլինեի, եթե ներկա լինելու հնարավորություն ունենայիք:

Շնորհավոր տոներ:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*28 մարտի, [1909]*

*Ս. Պ[ետերբուրգ]*

## 43. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հայր Ներսես,

Սրտի ցավով պետք է հայտնեմ, որ հիվանդ [եմ], աշխատությունս դեռևս լույս չէ տեսած, և մտադիր եմ առաջիկա աշնանը մամուլին հանձնել (1):

Ինչ վերաբերում է մյուս խնդրիդ՝ հոբելյանական ժողովածուի (2) մասնակցելու վերաբերյալ, ուրախությամբ կկատարեմ՝ միշտ հարգող լինելով միաբանությանդ «Հանդես»-ի արգասավոր գործունեությունը և մանավանդ Ձեր հայրության աշխատությանց: Այս ամառ հուսով եմ, որ կայցելեմ Ձեզ՝ անցնելով Վիեննայից Վենետիկ, և անձամբ կընձեռեմ հողվածս (3), եթե անապասելի պարագաներ արգելք չհանդիսանան:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

Ողջույն մյուս միաբանակից եղբայրներիդ:

*[1909 թ.]*

#### 44. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատիվ Հայր Ներսես,

Ներողություն եմ խնդրում, որ խոստացածս հողվածի առաքումը մինչև այժմ ուշացրի (1): Դժբախտաբար, քիչ տկարություն ունենալով՝ անկարող եղա իր ժամանակին հասցնել գրությունս, մանավանդ որ տարվա սկիզբը ավելի զբաղմունքներ են լինում, քան այլ ժամանակ: Բայց և այնպես հողվածս գրեթե պատրաստ է և շուտով կուղարկեմ: Գրությունս մեծ չէ. ճիշտ այնչափ, որչափ խնդրած էիք, և կկոչվի՝ «Տորք աստված հին Հայոց»:

Բարև միաբանակից եղբայրներուդ:

Հարգանքով՝ **Ն. Աղոնց**

Հասցես՝

Екатеринский кан. 27, кв. 14

[1910] (2)

#### 45. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատիվ Հ[այր] Ակինյան,

Կներե՛ս «Հանդես»-ի խմբագրությունը, որ ամառը (1) այստեղից հեռանալով՝ մոռացմամբ անփույթ գտնվեցա տնօրինել, որ թերթիդ ստացումը չընդհատվի:

Հասցես է՝

Екатеринский канал 27, кв. 14

(ասել է՝ Ekaterininsky can. 27, log 14)

Շնորհակալությամբ և ողջույններով՝

**Ն. Աղոնց**

20 հոկ[տեմբերի], [1910 թ.]

## 46. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատիվ Հ[այր] Ներսես,

Շատ և շատ խնդրում եմ, որ նեղություն հանձն առնեք պ. Լիսիցյանի (1) հղած ձեռագրի (2) մասին որոշակի տեղեկություն տալ ինձ, որքան հնարավոր է շուտով: Առանձնապես կպարտավորեք, եթե ամբողջովին արտագրել տայիք և դրկեիք:

Նոր եմ ժամանել քաղաքս և առանձին գրելիք չունեմ, թերևս մոտիկ ապագայում:

Նախապես շնորհակալություն և ողջույն պատվական միաբանակից եղբայրներիդ:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

Հասցես՝

Екатеринский кан. 27, кв. 14 (3)

Ս. Պ.

[1910 թ.]

## 47. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատիվ Հ[այր] Ներսես,

Մինչ ապաստում էի օր օրի վերա ստանալ Ձեզանից Եսայի «Քերականության» ընդօրինակությունը (1)՝ համաձայն Հ[այր] Վարդանյան Արիստակ[եսի] (2) մամակի, հանկարծակիի բերեց ինձ, ինչպես ասում եք, Ձեր գրությունը: Այսու մի անգամ ևս կրկնում եմ խնդիրս, եթե հնար է, օրինակել տվեք ինձ համար, իսկ եթե իրոք անհնար է, ներեցեք անհանգիստ անելու համար (3):

Հարգանքներով՝ **Ն. Ադոնց**

18 նոյեմբ[երի], [1912]

## 48. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հ[այր] Ներսես,

Ինչպես տեսնում եմ, միանգամայն մոռացած եք երևում ամառվա խնդիրս (1): Թույլ տվեք հիշեցնելու, որ խնդրել էի ինձ համար օրինակել տաք Եսայի քերականությունը (թիվ 336): Երկար սպասելուց հետո ստիպված եմ վերստին հայտնելու Ձեզ, որ, եթե հնարավոր է, շուտավույթ ընդօրինակել տաք և դրկեք ինձ (2):

Հայտնեցեք նաև՝ արդյոք «Յուշարձան»-ը արդեն լույս է տեսել, և մի օրինակ ուղարկելու հաճույքը կունենաք, թե չէ:

Ողջույններով միաբանությանը և  
հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*21 մարտի, [1912 թ.]*

Ս. Պ.

## 49. ԲԱԳՐԱՏ ՎՐԳ. ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆԻՆ

### Ի ԴԻՎԱՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Արժանապատի՛վ Հ[այր] Դիվանապետ (1),

Ինչպես Ձեզ արդեն հայտնի է, մայրաքաղաքիս հայ հասարակության բանիբուն անդամների մասնակցությամբ քանի ժամանակից ի վեր առանձին խորհրդակցական գումարումներ են տեղի ունենում պարբերաբար Հայոց խնդրի առթիվ (2): Անցյալները նույն խորհրդակցների նախաձեռնությամբ երկու անձն ուղարկվեցին Կ. Պոլիս՝ ինչ-ինչ հանձնարարությամբ, որոնք, և վերադառնալով, թե՛ բանավոր և թե՛ գրավոր ներկայացրին մանրամասն զեկուցումն իրենց երթի հետ կապված խնդիրների վերաբերյալ (3): Ներկա գրու-



թյանս հետ միաժամանակ դրկվում է դիվանիդ նրանց հաշվետվության պատճենից երկու օրինակ՝ ի պետս Նորին Վեհափառության բարձր ուշադրության (4):

Այլև հարկ և պարտք են համարում հայտնել Ձերդ արժանապատվության, որ հիշյալ խորհրդակցության կից կազմված է տնօրեն մարմին հետևյալ չորս անձերից՝ [Պետական] Դումայի պատգամավոր Մ. Պապաջանյան (5), Պ. Դուկասյան (6), Գ. Տիգրանյան (7) և Ն. Ադոնց, որին և դիմելու է հարկավոր դեպքում՝ անհրաժեշտ և գործի համար օգտակար հարաբերությունը պահպանելու համար:

Խնդրելով հայրությանդ օրհնությունը՝  
մնամ խոնարհ՝  
**Ն. Ադոնց**

**P.S.** Գրություններդ կարելի է ուղարկել իմ անվան՝  
[Ս. Պետերբուրգի] Եկեղեցական խորհրդի հասցեով:

[1913], 15 մարտի, Ս. Պ[ետերբուրգ] (8)

## 50. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Ազնի՛վ բարեկամ

Պ[արոն] Չոպանյան,

Այսօր (1) հեռագրով հաղորդեցինք Ձեզ երեկվա մեր խորհրդակցության (2) արդյունքը այն հարցի վերաբերյալ, որ հարուցել էիք վերջին գրությամբդ: Յանկացածդ կամ առաջարկածդ մասնախումբը՝ հայասեր ռուս գործիչներից բաղկացած, տակավին գոյություն չունի, և, դժբախտաբար, նույնիսկ հայտնի չէ, թե կհաջողվի մոտիկ ապագայում կազմակերպել այդպիսի մի մարմին:

Առայժմ ստիպված ենք կանգ առնել առանձին-առանձին անհատների վրա: Մեր խորհրդակցական ժողովի կարծիքով՝ քանի մի

անձինք միայն կարող են հանձնարարվել վստահորեն հիշածոյ նպատակի համար՝ պ. պ. հայտնի պրոֆ. Մաքսիմ Կովալսկին (3), Ալեքսանդր Գուչկով (4)՝ նախորդ Դումայի ականավոր պատգամավորը և երբեմն նախագահը, այլև նույնպես քաջահայտ պարոն Սիլյուկովը (5): Ի նկատ առնելով, որ վերջինս՝ իբր գործիչ և Դումայի անդամ, ձախակողմյան հոսանքների ներկայացուցիչ է, և ուրեմն կառավարչական շրջանակներում և հասարակական հարակից ազդեցիկ խավերում ոչ բնավ վստահելի անձ, խորհրդակցությունս նախամեծար համարեց առաջին երկու անունները և առավելապես Մաքսիմ Կովալսկուն:

Պ[արոն] Մ. Կովալսկին ևս աջակողմյաններին չէ պատկանում, բայց նա իր գիտական և հասարակական գործունեությամբ առանձին և բավականին հեղինակավոր դիրք է ստեղծել պայքարող կուսակցություններից մեկուսի և որոշ համբավ ունի նաև արտասահմանում, մասնավորապես այն մարդկանց շրջանում, որոնցից մեր ենթադրությամբ պիտի կազմվի Լոնդոն գումարելի ժողովը (6): Ահա՛ այս նկատումով ժողովս միաձայն որոշեց դիմել նորան հիշյալ խնդրով, բայց երևաց, որ նախօրեին մեկնել է Փարիզ (շտապեցինք հեռագրել Ձեզ) պ[արոն] Լորիս-Մելիքյանի (7) հետ, որ նրա անձնական բարեկամությունն է վայելում, հանձնառու լինիք խոսիլ պ[արոն] Կովալսկու հետ և հայտնել նորան մեր խնդիրը: Լիահույս ենք, որ ամեն ճիգ գործ կդնեք՝ դիմումը հաջողությամբ պսակելու:

Շատ կփափագեինք, որ չդժվարանայիք կայանալի գումարման մասին ավելի որոշ տեղեկություններ հայտնել մեզ թե՛ ժողովի կազմի, թե՛ մերձավոր նպատակի և թե՛ հաշվի առած ակնկալությունների, եթե ոչ գործնական արդյունքի վերաբերյալ: Մեծապես կխնդրեինք նաև պարզել մեզ մասնախմբիդ իրական առնչությունը կաթողիկոսական պատգամավորության (8) հետ, որպեսզի կարողանայինք վերահասու լինել՝ արդյո՞ք բոլոր գրություններս ու հարաբերություններս պետք է մասնախմբիդ ուղղել, թե որոշ դեպքերում դիմելու նաև անմիջապես պատգամավորության նախագահին (9):

Ավելորդ չենք համարում հիշել, ինչ որ արդեն գրած էինք Վսեմապատիվ փաշային ուղղած գրության մեջ: Մայրաքաղաքումս տեղի են ունենում պարբերաբար խորհրդակցական նիստեր տեղիս հասարակության ընտիր և բանիմաց անդամների մասնակցությամբ: Վերջերս ժողովս ընտրել է տնօրեն մարմին՝ չորս հոգուց բաղկացած՝ պ. պ. Միքայել Պապաջանյան՝ Դումայի պատգամավոր, Պողոս Ղուկասյան, Գրիգոր Տիգրանյան և Նիկողայոս Ադոնց:

Հարգալից ողջույններով ի դիմաց տնօրեն մարմնի՝  
Ձերդ **Ն. Ադոնց**

Հասցեն՝ Conseil de l'Eglise Arménienne.

Կա՛մ Գրիգոր Տիգրանյանի և կա՛մ իմ անունով:

*9 ապրիլի, [1913 թ.]*

*Ս. Պ[ետերբուրգ]*

**P.S.** [Գրիգոր] Տիգրանյանի մասնավոր հասցեն՝

Фонтанка 64

Казанская ул. 8, кв. 85

## **51. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ**

Պատվակա՛ն Լևոնյան,

Ես կանգ եմ առել Կարլսբադում (1) գրեթե ակամայիցս: Դանապարհին վազոնում վատ օրեր տեսա. արյան պակասությունից գլուխս պտտվում էր, այնպես որ չէի կարողանում նստել և տեղ հասա պառկած: Այստեղ մի քանի օր կմնամ:

Մի լեհացի բժիշկ սրսկումներ է անում մկնդեղի:

Եթե սպասելիքն ստացել եք, բարի եղեք ինձ հասցնելու, [իսկ] ինչ որ պետքն է, վանքին (2) տայիք: Թեև ինչպես տեսնում եմ, այդ էլ բավական չէ, որ կարողանամ ողջ տեղ հասնել:

Բարև ևս պ. Տ. Մարությանին (3) և վարդապետներին (4) կամ, ինչպես իրենք են ասում, քահանաներին:

Հասցես ընդօժված է (5):

Հարգանքով՝ Չերդ **Ն. Աղոնց**

*2 սեպտեմբերի, [1913]*

[P.S.] Մխավեցի բժշկի մոտ գնացի, [նա] այնքան հիվանդություն գտավ, որքան որ [ես] ձեռագիրներ տնտղեցի, մինչև իսկ թոքերի վտանգում:

## 52. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Միրելի՛ պ. Չոպանյան,

Այս անգամ դիմում եմ Ձեզ մի մասնավոր խնդրով և հուսամ, որ չեք զլանա կատարելու: Փարիզի գրադարանում (1), ի միջի այլ հայ ձեռագրերի, կա Դիոնիսիոս Թրակացու քերականության (2) մի օրինակ, որ Մակլերի (3) ցուցակում (4) նշանակված է թիվ 270, իսկ հին համարով (5)՝ 127: Այդ ձեռագրի մոտավորապես 18-20-րդ թերթերում զետեղված է «Բառք քերականութեան» վերնագրով բառերի ցանկ: Մեծապես կիսնդրեի Ձեզանից, եթե հնարավոր է, ցանկի վերջին մասը՝ սկսած «Մականուն» որ ի ւվ<ե>ր <այ> անվանն միուս ևս այլ անուն ունի» մինչև վերջ արտագրել հաճիք և որքան կարելի է շուտով դրկեք ինձ: Ուշադրություններիդ կհրավիրեմ մասնավորապես այս կետի վրա՝ արդյո՞ք ցույց տվածս մասում «**բաղձաձական՝ ժողովական կամ շրջաբերական**» բառից հետո կարդացվում է կամ նշանակված կան - «[**բաղաձայնապէս, բաղաձայնաբար, քողախնդրի, քննի և քին և**] *հա՛մբոյր՝ գո՛յգ*» բառերը:

Դարձյալ ցանկի վերջին հետևյալ բառերը՝

սոնք, ստուար,

տրամախտի, ճշմարտախտի և այլն,

փեռեկումն,  
ենթակա,  
նիութակայումն,  
հակակա,  
տարորոշ,  
տրամադրեալ,  
ենթանկեալ,  
տրամատեսեալ,  
տրամատել:

Արդյո՞ք սույն բառերը կան հիշյալ ձեռագրում, թե՞ ցանկը վերջանում է «տնք» բառով: Մեծապես կպարտավորեք, եթե խնդիրս կատարելու հաճությունն ունենաք, որքան կարելի է շուտափույթ, որովհետև աշխատությունս (6), որ տպագրվում է, կանգ է առած՝ շնորհիվ այս պարագայի: Շահան Ջրպետը (7), ճիշտ է, հրատարակել է սույն ձեռագրից Դիոնիս[իոս]ի քերականությունը (8), բայց թվում է, որ հարագատորեն չի վերաբերվել ձեռագրերին: Կանխավ շնորհակալությամբ:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

**P.S.** Ամառը բացակա էի քաղաքիցս և ամեն ինչ թողած էի Ս. Տիգրանյանին (9): Դրկածդ բրոշյուրը (10) նորերս ցրեցիմք, ամառը խուլ ժամանակ համարելով՝ պահեցիմք մինչև այժմ: Եթե փաշայի (11) և Սազանովի (12) տեսակցության մասին (13) բան գիտեք, կամ նոր տեղեկություն կա, խնդրեմ ևս հայտնեք: Հասարակությանս անդամները տակավին չեն ժողովված: Քանի մը ռուս գործիչներ ցանկություն են հայտնում մասնաժողով կազմակերպելու ռուսներից և հայերից՝ Հայոց հարցը վերստին արծարծելու համար (14): Այս շաբաթ պիտի գումարեն:

*30 սեպտեմբերի, Ս. Պ[ետերբուրգ], [1913]*

Հասցես՝ Казанская 8/Kazanskaja 8

### 53. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ բարեկամ Ա. Չոպանյան,

Ներեցեք, որ այսքան ուշ եմ պատասխանում վերջին նամակիդ, պատճառը, հարկավ, անփութությունը չէր, այլ այն, որ սպասում էի տեղիս խորհրդակցական մարմնի (1) գումարման, որպեսզի կարող լինեի Ձեզ հետաքրքրող քանի մը խնդիրների մասին որոշ բան գրել, մասնավորապես գրքիդ թարգմանության (2) կամ տարածման վերաբերյալ: Բայց տեսնում եմ, որ գումարումն օրեցօր հետաձգվում է, ուստի գոնե պարտքս կատարելու հաճույքից չզրկվելու համար ուղղում եմ Ձեզ այս տողերը՝ սրտագին շնորհակալություն հայտնելու խնդրիս կատարման համար (3): Պատվական «Երազներդ» (4) ստացա, բայց նույն օրն և իսկ ինձնից վերցրին կարդալու համար և մինչև այժմ չեն դարձրած: Ռուսաց թերթերի լռությունը գրքիդ մասին զարմանալու չէ, որովհետև օրաթերթերը գրեթե չեն հետաքրքրվում ընթացիկ գրականությամբ, իսկ ամսաթերթերից միայն նրանք են ուշադիր, որոնք նոր ուղղության գրողների ձեռքին են: Այդ թերթերից մեկում շուտով կտավի Ռ. Ջարդարյանի (5) վեպերից մինը: Նրա խմբագիրներից մեկը անձնական բարեկամս է, նորերս հարցրի Ձեր գրքի մասին, նա ոչինչ տեղեկություն չուներ. անշուշտ, խմբագրությունը չի ստացել:

Մեր հարցի (6) մասին ոչինչ չեմ կարող ասել, քանի որ ինչպես ասացի, դեռ ժողով չենք ունեցած և սպասում ենք գումարման մոտիկ օրերումս:

Մի շարք կորուստներ ունեցանք Քալանթարի (7), Խատիսյանի (8) և Ջավարյանի (9) մահվամբ, այսօր իմացա, որ Ադանայում մեռել է ևս Առանձարը (10), ավստ՛ս տղա, շնորհքով գրող էր:

Բարեկամական ողջույններով՝  
Ձերդ **Ն. Ադոնց**

*5 նոյեմբ[երի], [1913]*

*Ս. Պետերբուրգ*

## 54. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻՆ

Վեհափառ Տեր,

Համբուրելով օծյալ աջո՞ղ դիմում ենք Ձեզ հետևյալ խոնարհ խնդրով: Վերջերս թերթերում տարածված լուրերը պ[արոն] Մառի վերաբերյալ մեծապես խոցեցին մեր սիրտը: Ցավալի է, որ անարդար լուրերը շոշափում են մի մարդու անուն, որին լավ ճանաչում ենք, և որն արժանի չէ բնավ այդպիսի վերաբերման: Տա՛ Աստված, որ ամեն մի հայ այդքան սրտացավ լինի մեզ համար, որքան պ[արոն] Մառ: Չէինք ուզում ծանրանալ խնդրի վերա ըստ էության: Այդ թողնում ենք ուրիշ անգամվա: Ամեն ինչ մեզ հայտնի է, և կարող ենք վստահեցնել Վեհափառությանդ, որ ոչ մի վտանգ չէ սպառնում Անիին ոչ որի կողմից. իրերի դրությունը կմնա այնպես, ինչպես եղել է մինչև այժմ: Մեզ համար այս հարցում ամենից անախորժն այն է, որ անհիմն գրույցները կապվում են **Մայր Աթոռի և նորա Բարձր Տիրոջ անվան հետ**: Շատերիս, [նաև] Մառի համար և՛ վիրավորականը, և՛ ցավալին այն չէ, որ անհեթեթություններ են գրում նորա մասին, այլ այն, որ տարածելով այն լուրը, որ Վեհափառությանդ ընդունելի է Հ[այր] Սիբայելի (1) գանգատը, գործն այնպես են ձևացնում, որ Հայրապետդ նշանակություն է տվել գանգատին: Անախորժ և մեզ համար անպատվաբեր լուրերի առաջն առնելու է օր առաջ, մանավանդ որ, ինչպես մեզ հայտնի է, նորանոր անհաճությանց պատճառ կարող է լինել: Մեր սեպուհ և քաղցր պարտավորությունն ենք համարում մեր սեփական կարծիքն հայտնել Ձերո՞ղ Վեհության բարձր տրամադրության և բարի հայեցողության: Անհրաժեշտ է, որ Դիվանդ նախաձեռն լինի՝ երկտող հայտարարությամբ ցրելու տարածված լուրերը մոտավորապես այն մտքով, որ ճշմարիտ է՝ Հ[այր] Սիբայելը դիմել էր Վեհափառին գանգատով, բայց Նորին Վեհափառությունը, թյուրիմացության արդյունք համարելով, անհետևանք է թողել՝ քաջ ճանաչելով պ[արոն] Մառին և մեծապես գնահատելով նորա գործունեությունը Անիում:

Կրկնում ենք, որ միայն ծանր պարտք կատարելու գիտակցությամբ և պահանջն է, որ ստիպում է մեզ գրությամբ դիմել Ձերո՞վ Վեհոթյանը:

Համբուրելով Հայրապետիդ աջը  
և ցանկանալով արևշատություն  
և հաջողություն բոլոր ձեռնարկներիդ:  
Մնանք՝ **Վ. Վարդանյան (2)**  
**Ն. Ադոնց**

*16 նոյեմբերի, 1913 թ.*  
Ս. Պետերբուրգ

### **55. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

Արժանապատի՛վ Հ[այր] Ակինյան,

Կատարիմե կայսրուհու (1) ուկազն դրկած են Ձեր խնդրանք Անտոնյան (2) վարդապետներից մեկին, որի անունը մոռացել են: Տարաբախտաբար նորա նամակը... (3): ... «Վիեննայի վարդապետներից մեկի խնդրանքով է դիմում ինձ», ուստի բարվոք համարեցի անմիջապես Ձեզ հասցնել: Անտոնյան միաբանության մեջ կա՞՞ Սրապիոն վարդապետ (4), թերևս նա էր ինձ դիմողը: Արդ կխնդրեմ՞ ներդրություն քաշեք իմանալու՝ ո՞ւմ է պետք այդ ընդօրինակությունը, և ըստ այնմ՝ տնօրինել, թերևս դրկել Անտոնյանց:

Ուզածդ գրքերդ կդրկեմ, իսկ մյուս խնդրի վերաբերմամբ դեռևս գրույց չեմ ունեցած:

Քանի մը օրերս հետո կդրկեմ:

Հարգանքներով՝ **Ն. Ադոնց**

*16 նոյեմբ[երի], [1913 թ. 7] (5)*



## 56. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Մեծապատի՛վ և սիրելի՛ բարեկամ  
այ. Կոստանյան,

Քանի մը գրքերի պետք ունեմ և ոչ մի տեղից գտնել չեմ կարողանում. ո՛չ համալսարանի և ո՛չ էլ գիտության ճեմարանի գրադարաններում չկան՝ Սրվանձտյանի «Հնոց և նորոց» (1) և Սիմեոն Ջուղայեցու «Տրամաբանությունը»՝ 1728-ին Կ. Պոլսում] հրատարակված (2): Արդյո՞ք բարի չէիք լինել կամ Ձեր անձնական գրադարանից, կամ ճեմարանի (3) դրկել ինձ հիշյալ գրքերը մի քանի շաբաթով: Գուցե հնարավոր գտնեք շնորհել ինձ նաև մի օրինակ հանգուցյալ Խալաթյանցի վերջին աշխատությունից («Հայոց պատմություն») (4), որ հեղինակը խոստացել էր դրկել, բայց չստացա:

Մեծապես կպարտավորեցնեիք: Ընդունեցեք շնորհակալությունս և ողջույնս, և նույնը վկայեցեք հարգելի տիկնոջդ:

Հարգանքով՝ Ձերդ **Ն. Ադոնց**

Հասցես՝ Казанская ул. 8, кв. 85  
[1913 թ.] (5)

## 57. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԳ. ՎԱՐԳԱՆՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հ[այր] Արիստակես,

Պիտի ներքե, անշուշտ, որ ժամանակին չկարողացա շնորհակալությունս հայտնել այն սիրալիք ուշադրության համար, որով դրկեցիք ինձ խնդրածս քերականի ընդօրինակությունը (1): Դեպքն այնպես բերեց, որ ծննդյան տոներին Պոլիս գնացի (2): Հուսով էի, որ Վիեննայով կվերադառնայի տեղս, բայց անկարող եղա: Գուցե թե ամառը տեսնվինք: Հայր Ներսեսին (3) ասած էի այդտեղ եղածս ժամանակ և թե Էջմիածին, որ ցանկացածդ հրատարակությունները ստանալու արգելք չկա, միայն պետք է պաշտոնական թղթով դիմեք

թե՛ տեղվույս գիտությանց ճեմարանին և թե՛ Հնագիտական ընկերության (4)՝ առաջարկելով հրատարակությանց փոխանակումը: Այս մասին արդեն խոսած են և հաջողությունը նախապատրաստած:

Առայժմ այսքան: Առիթից օգտվում են ուրախությունս հայտնելու գեղեցիկ և միշտ ուշագրավ գրությունների համար, որ հաճույքով կկարդացվին (5):

Շնորհակալությունս հայտնեք Հ[այր] Աղեքսանդրին իր գրքույկին համար (6): Հաջող առիթով մատենախոսական պետք է գրեմ և ցույց տամ, որ իմ «Անանունս» ուշադրությամբ չէ կարդացած և աչքաթող է արել շատ կարևոր հարցեր և կնճիռներ, որ կապված են սույն խնդրի հետ (7): Թեև անուրանալի է, որ նրա գլխավոր թեզը Փավստոսի վերաբերյալ վիճաբանությունից դուրս է: Բայց այս չէ կնճիռը...

Ողջույններս միաբանակից

եղբայրներուն:

Հարգանքով՝ **Ն. Աղոնց**

Հասցես՝

Казанская ул. 8, кв. 85

(Կարծեմ մարկաներ էիք ուզած):

<1913 թ.> (8)

## 58. ԽՈՐԵՆ ԵՊ. ՄՈՒՐԱԳԲԵԳՅԱՆԻՆ

Խորհուրդ

*13 հոկտեմբերի, 1914 թ.*

Ս. Պետերբուրգի

Հայոց եկեղեցական կալվածքների  
կառավարության

**ՆՈՐԻՆ**

**ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ**

**ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԵՐԵՎԱՆԻ**

**ԹԵՄԻ [Խորեն եպ.**

**Մուրադբեգյանին]**

№ 584

Ս. Պետերբուրգ

Ընթացիկ տարվա ապրիլի 18-ին համար 134 գրությամբ խորհուրդս ուղարկել էր Սրբազանությանդ մի հարյուր ռուբլի՝ ի նպաստ թեմիդ Ղուշչի գյուղի (1) եկեղեցու նորոգության՝ խնդրելով հասցնել սույն գումարը ըստ պատկանելության:

Այժմ Հին Նախիջևանի հոգևոր կառավարության միջոցով հիշյալ գյուղի քահանան՝ Գարեգին Աբրահամյանը, վերստին դիմելով մեզ, խնդրում է նպաստ, ինչպես երևում է, տակավին անտեղյակ արդեն հատկացրած օգնության:

Խնդրում ենք Սրբազանությանդ հաղորդել այս մասին հիշյալ քահանային և նրան հասցնել գումարը, եթե դեռ ուղարկված չէ:

Նախագահող՝ **Ն. Ադունց**

## 59. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ւ և սիրելի՛ բարեկամ,  
Հաճելի պարտք եմ համարում վերստին շնորհակալություն հայտ-  
նել «Հնոց և նորոց»-ի համար (1), որն արդեն ստացած պիտի լինեք:  
Ողջույն Ձեզ և արգո Տիկնոջդ:

Միշտ անձնվեր՝ **Ն. Ադոնց**

*13 հոկտր[եմբերի]  
1914 թ., Ս. Պ[ետերբուրգ]*

## 60. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո՛ւ և սիրելի՛ բարեկամ,  
Ներեցեք, որ աղետի և վիատության օրերում (1) Ձեզ եմ դիմում  
հետևյալ փոքր խնդրով:

Արդյո՞ք ճեմարանիդ հին հրատարակություններից կան այժմ՝  
«Собрание актов» (2) և այլն ու «Պատմություն կաթողիկոսաց Էջ-  
միածնի» Մսերյանի (3) գործերը: Եթե հնարավոր կգտնե՞ք տնօրինել  
և մի օրինակ ինձ դրկել: Դեռ հանգուցյալ Գ. Խալաթյանը խոստա-  
ցել էր խնդիրս կատարելու, բայց խոստումը մնաց խոստում:  
Կխնդրեի նաև Աճառյանի վերջին երկը՝ բառարանը (4): Մեծապես  
կպարտավորացնեք, եթե որևէ կերպ գոհացնեք ինձ կա՛մ վերադիր  
վճարով, կա՛մ հաշվեգրով:

Ողջույն և հարգանքներ՝  
**Ն. Ադոնց**

*30 մարտի, [1915]  
Ս. Պետերբուրգ*

## 61. ՏԻՐԱՅՐ ՎՐԳ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

19 նոյեմբերի, 1916 թ.

Պեր[րոգրաղ]

(Խնդրեմ՝ դրկե՛ք դպրոցական ծրագիրը (1), որ նոր հրատարակել էք):

Միրելի՛ Հայր Տիրայր (2),

Վերստին հիշեցնում եմ Տարասովի (3) աղջկա՝ Գևորգյանի ամուսնալուծության խնդիրը և հուսով եմ, որ Հ[այր] Գևորգի (4) հետ միասին ամեն ջանք և ճիգ կգործադրեք, որ հաջող ելքի հանգի: Չավրյանը (5) հարկավոր թուղթը՝ իր մեկնությամբ՝ հիմնված «Դատաստանագրքի» վրա, արդեն դրկել է Մինոդ: Հայերեն թարգմանությունը քիչ անհաջող է, ուստի քո անվամբ, իմ խորհրդով դրկել է նաև ռուսերեն բնագիրը:

Քեզ երկիցս դիմելս երկու հիմն ունի, մեկը, որ կուզենայի Չավրյանին լավություն արած լինել, երկրորդ, որ ավելի կարևոր է, և որի մասին այժմ հարմար եմ համարում գոնե քեզ հետ խոսել, հետևյալն է: Տիկնոջ հայրն օրերս վախճանվել է և Էջմիածնի տրամադրության թողել մոտ 60.000 [ռուբլի] գումար, այս մասին կտակ չկա, այլ նորա բանավոր ցանկությունն է, որ ժառանգներն ուզում են հարգել: Հասկանալի է, որ իմ կողմից աշխատանք է թափվում, որ գումարը հատկացվի Էջմիածնի ճեմարանին մասնավորապես, եթե ոչ ամբողջովին, գոնե 50 հազարը: Մնացած տասն հազարով մտադիր են Լազարյան ճեմարանում թոշակավոր պահելու: Չավրյանի հետ համաձայնության եմ եկել, որ նա ևս աշխատի մույն նպատակի համար, և գործը գրեթե շտկված է: Երկյուղ եմ կրում, որ մարդուն հատուկ թուլությամբ, ի դեպ ամուսնալուծության մերժմամբ, հրաժարվին կամ ուրիշ բանի հատկացնեն: Չավրյանի թուղթը կարդացի և գտա ավելի իմաստալից, քան որևէ պատճառաբանությունս նույնատեսակ հարցերի վերաբերյալ, որ կատարվում է Մինոդում: Ուրեմն ունենալով

argumentum eſ silentio՝ խուլ և համր փաստ՝ աշխատի՛ր հապահովու-  
թյուն ճեմարանին:

Հարկավոր են համարում նաև ասել, որ թեև խորհրդի անդամ չեմ, բայց անձամբ նիստին գնացի և նամակիդ հիման վրա միջնորդեցի, որ ճեմարանին օգնության հասնին: Ի միջի այլ հիմքերի՝ [պետք է] հիշեցվի, որ խորհուրդը հոբելյանի առթիվ վճիռ էր կայացրել դպրոցական ֆոնդին տարեկան 10 հազար ռուբլի նվիրաբերել: Քանի տարի է, որ խորհուրդը լուռ է և, որովհետև Էջմիածնից էլ չեն պահանջում, իր պարտքը չէ համարում խոստումն կատարել: Ես առաջարկում էի, որ երեք տարուց, թե որքան ժամանակի, կարծիքս մոտ 25.000 ռուբլի ապառիկը որկեն Էջմիածին՝ դպրոցական ֆոնդին հարելով, սակայն, գրությամբ, որ խորհուրդը ընդդեմ չէ: Եթե Վեհափառի տնօրենությամբ հիշյալ գումարը հատկացվի ճեմարանին, ինչպես մի դպրոցական հաստատություն, որ էապես մտնում է այն կրթարանների թվի մեջ, որոց օժանդակելու է կոչված դպրոցական ֆոնդը: Դժբախտաբար, մոտս չկա ճեմարանի ել և մուտքը գոնե հին տարիների, որ անդամների հետաքրքրության բավականություն տայի, որպեսի դեպքում վճիռն կայացրած և գումարն արդեն որկված կլիներ Ձեզ: Կխնդրեի, որ շտապեիր կամ Հ[այր] Գարեգինին (6) շտապեցնեիր՝ շուտով որկելու ինձ ճեմարանի այս տարվա ել ու մուտքը մանրամասնորեն: Թող հոգ տանի և խորհրդի թոշակավորների ցուցակը պատշաճ բացատրությամբ որկի խորհրդին. միշտ տրտունջ կա, որ ճեմարանի վարչությունը անփույթ է այս նկատմամբ և մեր համեմատումին Լազարյան ճեմարանի հետ՝ ի վնաս Ձեզ: Հաշվետվությունը և ճշտապահությունը միակ նեցուկներն են, որ կարող են ներկա ղեկավարները և՛ պահել ու պահպանել, և՛ համակրություն ու պաշտպանություն ապահովել հասարակության մեջ: Հիշեցե՛ք այս միշտ: Ընդունի՛ր ողջույնս և բաժին հանիր Հ[այր] Գարեգին, Գեորգ և մյուս միաբանակից եղբայրներուն:

**Քո՝ Ն. Ադունց**

**Հ. Գ.** Չմոռնան հիշել, որ Չավրյանը պատրաստ է նույնիսկ այդտեղ գալ հարկավոր բացատրության համար, եթե Սինոդի պետք և հարկավորություն գգա նրա գալստյան:

Իհարկե, Հայրապետիդ մեր որդիական ողջույնը և օրհնաբանվելու հայցը:

## **62. ՏԻՐԱՅՐ ՎՐԳ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

Պատվական Հայր,

Չավրյանի գործի առթիվ գրած նամակիս (1) պատասխանը չստացա: Բանից երևում է, որ նա ևս քանիցս հեռագրել է և նույնպես պատասխանի չի արժանացել: Գործը հետաձգվում է, բայց մինչ ե՞րբ: Խնդրում եմ շուտով մի որոշ բան գրել գործի դրության մասին, քանի որ Չավրյանը ամեն անգամ տեսնելիս հիշեցնում է և ցավ հայտնում, որ հետաձգումը միայն այն տխուր հետևանքն կունենա, որ իրենք այլ կերպ կվերջացնեն, և Սինոդիդ որոշումը տարադեպ դուրս կգա:

Շնորհավոր տոնդ: Շնորհակալություն օրացույցի համար: Հուսով եմ, որ շուտով Ֆրիկդ (2) կուղարկես: Բարև Հ[այր] Գարեգինին (3), թող որ շարունակի իր գործը:

Բարևներով՝ **Ն. Ադոնց**

*6 հունիսի, [1917]*

*Պեկրոզրադ*

### 63. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Միրելի՛ և մեծարգո՛ բարեկամ,

Այս րոպեիս ստացա Ձեր նամակը և շտապում եմ պատասխանելու, որ, դժբախտաբար, Ձեր հիշյալ գրությունները ինձ չեն հասած: Օգոստոսի գրված նամակը, թերևս, հասկանալի է, որ կորած է, որովհետև այդ ամսին ես քաղաքումս չէի, այլ գնացել էի դեպ հայրենի երկիր (1), իսկ որ հոկտեմբերի նամակն է անհայտացած, այդ ինձ ևս զարմացնում է: Հին հասցեիս դրկված փոստը ստանալիս եմ եղել, ինչպես ինձ էր թվում՝ կանոնավոր: Շատ ցավում եմ, որ անհաջող դեպքը զրկել է ինձ հաճույքից՝ միանգամայն ևս ցույց տալու Ձեզ և՛ հարգանքս, և՛ մշտական պատրաստակամությունս Ձերդ կամակատարության:

Խորին հարգանքներով և ողջույններով՝  
Ձերդ **Ն. Աղոնց**

*28 սպրիլի, [1917]*

### 64. ՀԵՌԱԳԻՐ

#### ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ (1)

*Պետրոգրադ, 14 հունվարի, 1918 թ.*

Պետրոգրադի Հայկական կոմիտեեն ստացված է հետևյալ հեռագիրը.

Այսօր հետևյալ պաշտոնական հրովարտակը հրատարակված է. «Ժողովրդական կոմիսարներու խորհուրդը կհայտնե հայ ժողովրդին, թե Ռուսաստանի գործավարների կառավարությունը կպաշտպանե Ռուսաստանի կողմե ռազմակալված «Տաճկահայաստան» կոմիտեի հետևյալ պահանջները:



տանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն...» (2):

[Ն. Ադոնց] (3)

## 65. ՀԵՌԱԳԻՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

**Գերմանիայի արտաքին գործոց նախարարության հեռագիրը**

**Կ. Պոլսում դեսպանին**

*Բեռլին, 14 ապրիլի, 1918 թ.*

Մոսկվայից (1) ստացվել է հետևյալ ռադիոհաղորդագրությունը. «Ելնելով ստեղծված դժոխային ու անտանելի վիճակից՝ Հայոց ազգային խորհուրդը (2)՝ որպես հայ ժողովրդի կամքի դրսևորման բարձրագույն մարմին, դիմում է Ձեզ:

Հայաստանը, որն արնաշաղախ հազիվ էր ազատվել դարավոր ճնշման վիճակից, դարձյալ նետվեց նոր տառապանքների գիրկը: Օգտվելով ռուսական բանակի նահանջից՝ թուրքական զորքերն անմիջապես ներխուժեցին անպաշտպան երկիրը, ընդ որում՝ նրանք բնաջնջեցին ոչ միայն թուրքահայերին, այլև բոլոր ռուսահայերին: Հակադրվելով խաղաղության պայմաններին, որոնցով ճանաչվում էր ամբողջ Կովկասի ինքնորոշման իրավունքը, թուրքական զորքը շարժվեց դեպի Կարս ու Արդահան՝ ամայացնելով երկիրը և ոչնչացնելով քրիստոնյա բնակչությանը (3):

Հայերի հետագա ճակատագրի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, քանզի նրա պնդելով էր, որ ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական տարածաշրջաններից: Այժմս էլ Գերմանիայից է կախված թուրքական զորքերին հերթական անկարգություններից հետ պահելը, որոնց հիմքում ընկած են վրեժն ու կատաղությունը:

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ այնպիսի մի քաղաքակիրթ պետություն, ինչպիսին Գերմանիան է, որը հնարավորություն ունի ազդելու իր դաշնակից Թուրքիայի վրա, թույլ կտա, որ Բրեստի հաշտության պայմանագիրը հայ ժողովրդի համար, որը հակառակ իր կամքի էր ներգրավվել համաշխարհային այս պատերազմի մեջ, ծառայի անթիվ տառապանքների աղբյուր: Այդ պատճառով Ազգային խորհուրդը հավատացած է, որ Դուք անհրաժեշտ և Չեզ տրված հնարավոր բոլոր միջոցները ձեռք կառնեք թուրքական իշխանությունների վրա ազդելու, հայ ժողովրդին նոր սարսափներից պաշտպանելու համար:

Որպես Ազգային խորհրդի լիագոր՝

**Նիկոլայ Ադոնց** (Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր)  
**Հովհաննես Չավրիև** (երդվյալ հավատարմատար) (4)

## **66. ԼՈՆԴՈՆԻ «ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ**

Ազնվամեծա՛ր խմբագիր,

Ձեր լրագրի (1) բարյացակամ վերաբերմունքը՝ հանդեպ հայ ժողովրդի և նրա քաղաքական դատի, ինձ հիմք է տալիս կարծելու, որ չեք մերժի մի համեստ անկյուն հատկացնել իմ նոթին (2):

Ձեր երկիրն այժմ տոնում է խաղաղության հանդիսությունը (3), իսկ իմ հայրենիքը շնչահեղձ է լինում արյան մեջ: Ձեր իսկ թղթակցի հաղորդագրության համաձայն՝ թուրքերը, բուլղարները, քրդերը՝ այդ նոր մարգարեները, գառամյալ աշխարհի վերանորոգիչները, գաղափարական միասնությամբ բոլոր կողմերից վրա են տալիս Հայաստանի Հանրապետությանը:

Պատասխանատու տերություններն անտարբեր դիտում են այդ արյունալի տեսարանը: Նրանց քաղաքագետները զբաղված են պատերազմի դադարի, խաղաղության հաստատման տարելիցի առթիվ հանդիսություններով:

Այո՛, թնդանոթները լռեցին Եվրոպայում, բայց նրանք դեռ թնդում են հայկական բարձունքներում, այնտեղ հեղվում է և՛ զինվորների, և՛ անզեն մարդկանց, և՛ կանանց ու երեխաների արյունը: Գլխավոր գազանը (4) սանձված է, բայց նրա ձագուկները դեռ շարունակում են վայրագությունները՝ անատամ գայլույթը թափելով մի փոքրիկ ժողովրդի վրա, որի մեղքն այն է համարվում, որ նա այնքան նվիրված է դաշնակիցներին: Բայց դաշնակիցներն ընդունո՞ւմ են արդյոք, որ հայերն այժմ, հիրավի, տառապում են նրանց համար: Հարստագույն Թիֆլիս քաղաքը՝ ամբողջ երկրամասի բուրժուազիայի կենտրոնը, որ համեղ պատառ է բոլշևիկյան ախորժակի համար, դուրս է մնում կոմունիստների գայլույթի սահմաններից (5): Հենց միայն այդ պարագան բավական է, որպեսզի կույրերը տեսնեն, թե ում անտեսանելի ձեռքն է կուլիսների հետևում ուղղություն տալիս թուրք-թաթարական և բոլշևիկյան հրոսակների շարժանը:

Հայ ժողովուրդը վստահել է իր ճակատագիրը դաշնակիցներին, նա հանգուցել է իր նավակը նրանց հզոր նավերին: Հավատալով նրանց խոսքերին՝ նա գոհարեբեց մարդկային բյուրավոր կյանքեր: Եվ առ այսօր էլ զուր սպասում է փոխհատուցման:

Դաշնակիցների խոսքերը, հավաստիացումները, խոստումները հավասարագոր են համաձայնագրի այն ակտին, որի սրբության մասին անդադրում պնդում էին նրանք և վստահեցնում, որ իրենք զենք են վերցրել հանուն այդ սրբության, և որ իբր դրա խախտումն է առաջ բերել մեծ արյունահեղությունը:

Քաղաքակիրթ աշխարհն իրավունք ունի սպասելու, որպեսզի դաշնակիցները կատարեն իրենց հանձնառությունը հայ ժողովրդի հանդեպ: Տխուր է գիտակցել, որ երկամյա զինադադարի ընթացքում նրանք չեն կատարել և ոչ մի հաստատուն քայլ այդ ոգով: Այն, ինչ այժմ վերապրում է Հայաստանը, տրամաբանական արդյունքն է այն քաղաքականության, որին հետապնդում էին դաշնակիցները զինադադարը կնքելիս և նրանից հետո: Հայաստանը պարզապես մոռացվեց և թողնվեց ճակատագրի քմահաճույքին: Դաշնակիցներն իրենց զորաբանակները թողեցին Միջագետքում և Սիրիայում, իսկ Հայաս-

տանում թողնվեց թուրքականը: Նրանք ծպտուն իսկ չհանեցին Հայաստանից թուրքական բանակը դուրս բերելու կամ զինաթափելու մասին, որպեսզի դրանով հնարավորություն ընձեռեն դժբախտ փախստականներին վերադառնալու իրենց հայրենի օջախները: Սա արդեն յոթերորդ տարին է, ինչ վտարված իրենց բնակավայրերից՝ նրանք թափառում են և մի հանգիստ անկյուն չեն գտնում այս ստոր աշխարհում:

Դաշնակցային նախարարների սպառնալիքները հայկական կոտորածների և տեղահանության մեղավորների հասցեին, որոնք այնպես իշխանաբար հնչում էին պատերազմի ժամանակ, մնացին դատարկ խոսքեր: Մեծագույն եղեռնագործները և հանցագործները ման են գալիս ազատության մեջ և անպատժելիությունից խրախուսված՝ հանդգնում են ոգեշնչել և կազմակերպել նոր ելույթներ՝ ընդդեմ հայերի (6): Վերջապես երկու տարվա հոգնեցուցիչ սպասումներից հետո դաշնակցային դիվանագիտությունը Սևրում հայերին մատուցեց ինչ-որ անորոշ մի բան, կարծես թե ճիշտ այն բանի համար, որպեսզի առաջ բերի թուրքերի կատաղությունը: Մի խոսքով՝ հաշտության սկզբից իսկ դաշնակիցներն այնպիսի վարքագիծ էին որդեգրել, որ միայն մեկ բան կարող էր ներշնչել թուրքերին. վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ լուրջ չէ, և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը մտացածին բան է:

Ամոթ է նշել, որ որոշ...<sup>1</sup> անտարբերությունը տվեց բացահայտ անբարյացակամություն:

Դեռևս երեկ Ֆրանսիան, հեղձախեղոլ լինելով թնդանոթների ծխի մեջ, դիմում էր մարդկային լավագույն զգացմունքներին, իսկ այժմ նրա խրոխտ գեներալները հտպտում են, սեփենթում թուրքական ավազակների հետ Կիլիկիայում ապաստանած մի բուռ հայերի դիակների վրա:

---

<sup>1</sup> Ռուսերեն բնագրում մի բառ անընթեռնելի է (Պ. Հ.):

Իտալիան, հակառակ բանականությանը, մարդկային ըմբռնողությանը, անհասկանալի դրոշապատճառներով այդ նույն թուրք ավազակներին զենք է մատակարարում:

Անգլիան՝ առավել պատասխանատուն, լուռ ու մունջ դիրքով, ինչպես միշտ սպասում է իրադարձությունների զարգացմանը:

Հայաստանն իրենց պաշտպանության տակ վերցրած դաշնակից տերությունների հոգսը չէ, թե պատերազմի ժամանակի ամայացումից փրկված նրա տարածքի մի ծվենը այժմ վերջնականապես կհուշոտվի, բնակչության վերապրուկը կկործանվի միմյանց արժանի գինակիցների՝ թուրք-թաթարների և բուլշևիկների զազանություններից:

Մի քանի հարյուր անգլիացի գերիների պատճառով Անգլիան հնարավոր համարեց իջնել իր բարձրությունից անարժան մարդկանց հետ բանակցությունների, որոնց մասին նա որոշակի կարծիք ուներ: Մեծ տերությունը, մեծ ժողովուրդը դադարում է այդպիսին լինելուց, երբ նա, թանկ գնահատելով իր մարդկանց կյանքը, անտարբեր դիտում է օտարների անմեղ թափվող արյունը:

Հայկական արյունը իրավունք ունի Անգլիայի ուշադրությանը, առավել ևս, որ Հայաստանն էլ հնարավորություն ուներ դեռ երկու տարի առաջ ընդունելու նոր Ռուսաստանի տիրակալների խաղաղ առաջարկությունը և ապահովագրելու իրեն ներկայիս դժբախտություններից: Բայց նա արիաբար դիմադրեց գայթակղությանը՝ ցանկանալով հավատարիմ մնալ իր դաշնակցային պարտավորություններին և այդ բռուն ձգտման մեջ խրախուսվեց դաշնակիցներից:

Հայկական հարցը ծանր քարի պես ընկած է տերությունների խղճի վրա: Կես դար է՝ հայերը պարտասում են կեղծիքի ու դավաճանության ճնշման տակ: Այժմ, երբ կատարվել է գրեթե անհնարինը, և նրանց մեջքին է իջել ռուսական կոմունիզմը այս անգամ արդեն թուրքական բարբարոսության հետ: Այդ ամենը դաշնակիցների պատճառով է: Այս ճակատագրական պահին հայերը դաշնակիցներից սպասում են բաց սիրտ և վճռական խոսք, որպեսզի վերջապես դուրս գան մոլորությունների լաբիրինթոսից: Գուցե այնժամ նրանք մեկընդմիջտ կշրջվեն Եվրոպայից տառապալից համոզմամբ, որ

մարդկային արժանիքներից լավագույնը՝ խիղճը, այնտեղ անհույս խլացել է:

**Նիկոլայ Ադոնց**  
Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր

*[1920 թ., նոյեմբեր] (7)*

### **67. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

*Hotel Russell  
London*

Սիրելի՛ Հայր Ակինյան,

Լայպցիգից անցյալները գրված նամակ առա պ. Մառից (1): Նամակը գրված է նոյեմբերի 14-ին, իսկ ես ստացա դեկտեմբերի 2-ին: Հեռագրեցի նորան, և մինչև այժմ պատասխան չկա:

Նամակում ասված է, որ դեկտեմբերի սկզբներին պիտի Վիեննա գա, ուստի հավանորեն կ'ան Չեզ մոտ է արդեն, կ'ան պետք է շուտով ժամանի (2): Եթե նրա ուր լինելը գիտեք, խնդրեմ՝ երկտողով հայտնեք ինձ:

Ուրախ եմ, որ ողջ եք և շարունակում եք Ձեր խաղաղ աշխատությունը: Մեր Հայրենիքի գլխին վերստին դիզվեցին ամպեր, և ո՞վ գիտե, դեռ ինչ հուսախաբություն է սպասում մեզ (3):

Ողջույն միաբանակիցներիդ:

Հուսով եմ, որ տեսնվելու առիթ պիտի ունենանք:

Սիրով՝ Ձերդ **Ն. Ադոնց**

*6 դեկտեմբերի, [1920 թ.] (4)*

## 68. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ (1)

Պատվակա՛ն Հայր,

Երեկ ուղարկեցի «Հանդէս»-իդ համար մի փոքր հոդված (2): Ներեցե՛ք՝ ծուլացա արտագրելու: «Յուլա՛ տարեք»: Ձեզ կկամենայի մի թեթև խնդրով թերևս ներդրում պատճառել: Եթե Տեր-Պողոսյանի հոդվածները Փավստոսի մասին վերջացած են (3) և առանձին գրքով հրատարակված (4), խնդրեմ՝ մի օրինակ որկեք ինձ: Վաղուց է՝ «Հանդէս» չեմ կարդացել: Շնորհիվ անկայուն և անհաստատ դրությամ՝ անկարող եմ առայժմ (5) կանոնավոր ստանալ «Հանդէս»-ի համարները:

Միրալիր կլինեք, եթե միևնույն ժամանակ հայտնեիք՝ պատվելի Հ. Տաշյանից հարցնելով, եթե ինքներդ չեք հիշում՝ ո՞ր հանդէսում էին զետեղված Marquart-ի (6) և Gelzer-ի (7) հետազոտությունները նույն Փավստոսի մասին (8):

.....(9):

Մնամ համբույրով աջույդ:

Ողջույններ մյուս ծանոթ[ներին]՝ Հ. Հ. Տաշյանին, Վարդանյանին:  
Հարգանքներով՝ **Ն. Աղունց**

Paris, Rue de t 6  
Poissonnière, 159  
[1921] (10)

## 69. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ (1)

Պատվակա՛ն Հայր,

Ցավոք սրտի, պիտի հայտնեն, որ մինչև այժմ չեմ ստացած պ. Գրիգոր Տեր-Պողոսյանի խոստացյալ աշխատությունը (2): Եթե

առանձին արգելիք չկա, և միայն մոռացությանն է վերագրելու, վերստին կխնդրեմ հաճել կատարելու խնդիրս:

Սիրալիր ողջույններով՝  
Չերդ՝ **Նիկ. Ադոնց**

Հասցես՝ Paris, B. Montmartre (3)  
[1921]

### **70. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆԻՆ**

*Hotel Regina  
Place Rivoli  
Paris*

Առ նախագահին  
Ազգային պատվիրակության (1)

Ազնի՛վ Տիար,

Ի պատասխան գրությանդ 3 դեկտեմբերի (2)՝ սեպուհ պարտքս կհամարեմ վկայելու Չերդ գերագանցության հարգանացս հետ իմ պատրաստակամությունս՝ պիտանի լինել հիշածդ աշխատությանց Չերդ տնօրինությանը և իմս կարողության չափով (3):

Խնդրեմ՝ ընդունեք հարգանացս հավաստիքը:  
**Ն. Ադոնց**

*3 դեկտեմբերի, 1921*



## 71. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Պատվելի՛ Հայր,

Այսօր ստացա Ձեր դրկած Գաթրըճյանի «Պատմությունը» (1), որի համար հայտնում եմ խորին շնորհակալություն: Լիահույս եմ, որ ապագայում էլ չեք գրկի ինձ նույն հաճույքից, եթե այլևս նման դեպք պատահի:

Ողջուն միաբանակիցներիդ:

Հարգանքով՝ **Ն. Ադունց**

Պարիս, rue Colonel,

Renarol 4

*17 ապրիլի, [1922 թ.]*

## 72. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Հ[այր] Ակինյան,

Տեղիս պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանը (1) երեկ ճանապարհվեց Վիեննա, անշուշտ, կայցելե Ձեզ: Մեծապես շնորհակալ կլինեի Ձեզ, եթե քանի մը գրքեր՝ ստորև նշանակված, գտնել կարողանայիք, նորա միջոցով դրկեք ինձ: Վիեննայում է հրատարակված V. Erchert-ի «Die Sprachen des Kavkasischen» (1895) գիրքը: Արդյո՞ք կարող եք մի օրինակ գտնել: Անշուշտ, տեղվույդ գրավաճառանոցներում կարելի է, թերևս, գտնել նաև... (2)

Եթե բարի լինեիք Քոչարյանին ցույց տալու, որտեղ կարելի է ձեռք բերել այս երկու գիրքը, և միաբանությանդ վերջին հրատարակությունների հետ գուցե և Էջմիածնի, թե Երևանի «Գիտական բանբերի» (3) ավելորդ օրինակ ևս դրկելու կամ վաճառելու հաճությունը ունենայիք, մեծապես կպարտավորեցնեք:

Ողջուններ միաբանությանդ:

Հարգանքով՝ **Ն. Ադունց**

*[1922] (4)*

### 73. ԱՐՇԱԿ ԱՆՖՐԱՍՏՅԱՆԻՆ

1923 թ.

Վենետիկ

Սիրելի՛ Սաֆրաստյան (1),

Չզարմանաք, որ Ձեզ հետ կխոսիմ Վենետիկեն, ուրկե ջերմ ողջույնս կդրկեմ Ձերդ հայրենասեր հոգուն:

Իր ժամանակին իմացա, որ Ամերիկա գացիք առաքելությամբ մը: Արդ բարեհաջող դարձեր եք հետ, խնդրեմ քանի մը տողով գիս ալ իրագեկ ընեք քաղաքական անցքերուն մեր հարցին շուրջը: Արդյո՞ք բան մը կընեն... (2), հունական զենքի հաջողութենեն մեզ ևս մաս մը կհանե՞ն, թե՞ ընդհակառակը, այս անգամ ևս հողն ու ջուրը մեր գլխուն պիտի թափվի: Բարեկամներիցս մեկը Փարիզ հրատարակվող ռուս թերթի համարներից մինը հղած էր ինձ, ուր կհաղորդվի, որ իբր դաշնակցական Չանգեզուրը նորից ոտքի է կանգնել. Քաջագնունու և Օհանջանյանցի առաջնորդությամբ Կարմիր բանակը ջարդել է և այլն, և այլն, խնդրեմ՝ հայտնեք, թե որքան ստույգ է այդ լուրը (3):

Եթե կրնաք Ձեր թերթի, ինչպես և Պոլսի թերթերից ավելորդ համարներ ինձ դրկել, շատ շնորհակալ պիտի լինիմ:

Կհուսամ, որ անմիջապես ինձ կպատասխանեք Ձեզ հատուկ ձեռնհասությամբ, և ան ատեն իմ ասելիքն ալ կլսեք:

Ողջույն բոլոր բարեկամներուն:

Առայժմ:

Ձերդ՝ **Ն. Ադոնց**

## 74. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԳ. ՎԱՐԳԱՆՅԱՆԻՆ

Պատվակա՛ն Հայր Արիստակես,

Ի՞նչ եղավ հողվածս (1): «Հ[անդէս]-ի թվերը ելա՞ն, թե՞ կանգնած են (2): Ցավում եմ, որ ոչ մի լուր չստացա: Եթե այսքան ուշանալու էր, կրնայիր թերթի փորձերն ինձ դրկել՝ աչքի անցնելու:

Ողջույն միաբանակից եղբայրներիդ:

Հարգանքով՝ **Ն. Աղոնց**

*20 մարտի, [1925] (3)*

## 75. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՈՍԿՅԱՆԻՆ

Արժանապատի՛վ Հ[այր] Համազասպ (1),

Խնդրեմ բարեհաճեք դրկել տպարանիդ հայ տառերի նմուշներ: Մի պարոն ուզում է գնել իր տպարանի համար: Չմոռանաք և արժուողութունը նշանակել:

Բասմաջյանին (2) եկեղեցու բակում տեսա: Ասաց, որ «Հ[անդէս] ա[մսօրեայ]»-ի համարը արդեն լույս է տեսած: Բայց ինձ դրկել չե՞ք ուզում, թե՞ մոռացել եք:

Հենց որ հողվածս վերջացնեք (3), պիտի կարենամ դրկել Եզնիկի վերաբերյալ մի հետաքրքրական հիշատակարան (4):

Ողջույն միաբանակիցներիդ:

Հարգանքներով՝ **Ն. Աղոնց**

*12 հունիսի, [1925 թ.] (5)*

## 76. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Չոպանյան,

Խնդրեմ, եթե կարող եք, երեքշաբթի ժամը 4-ի մոտերքը հանդիպենք Café de deuf Չեզ արդեն հայտնի խնդրի առթիվ գրուցելու:

Ձերդ՝ **Ն. Ադունց**

*26 հոկտեմբերի, 1925 թ.*

Հասցե՝ 15 Rue, Henri Martin

## 77. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

*Փարիզ, 7 հունիսի, [1926 թ.]*

Սիրելի՛ Արտաշես (1),

Եթե չես մոռացել, անցյալ տարի խոսք եղավ «Հայրենիք»-ում հրատարակելու քանի մը լայն ընթերցանության մատչելի ուսումնասիրություններ: Նրանք այն ժամանակ պատրաստ չէին տպագրության, այլ իբր հրապարակային դասախոսության նյութ ուրվագծած էին թերթիկների վրայ: Այնպես էլ մնում են ցայժմ:

Քանի մը հանգամանքներ ստիպում են ինձ մշակել այդ նյութերը և դրկել քեզ: Հետաքրքրությանդ համար ասեմ, թե որոնք են առայժմ՝ «Հին հայոց աշխարհայացքն իր վերապրումների մեջ» (2) և «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» (3), քիչ հետո թերև՝ «Բյուզանդական ժողովրդական վեպը և հայերը», որ ֆրանսերեն և ռուսերեն է գրված (4):

Ճմարիտ է՝ այս հոդվածներս մատչելի են հասարակության և նեղ բանասիրական հետազոտության բնույթ չունին, բայց էլի առանց բանասիրական ապարատի չեն: Կան կոչումներ հին լեզուներից, որ գուցե դժվարացնեն գործը: Կարելի է կոչումների թարգմանությունը

տալ հողվածում, իսկ բնագիրը մյուս ծանոթությունների հետ վերապահել և կցել արտատպության:

Մյուս հետազոտություններս, որ ինձ և գիտության համար շատ ավելի կարևոր են, վիճակված են [անտիպ] մնալու տակավին:

Արդ, բարեկանս, նախքան տրամադրությանդ տակ դնելը, ավելի կասեմ, նախքան ձեռնարկել մշակելը հիշածս հողվածները, կուզեի իմանալ հետևյալը:

Նախ՝ արդյոք հարմա՞ր են նրանք հանդեսիդ (այսինքն՝ «Հայրենիք» ամսագրին-Պ. Հ.): Ընթերցողներիդ շրջանը և նրանց պահանջը նույնքան կարևոր են խմբագրիդ համար, որքան գրությանց արժեքը:

Երկրորդ՝ եթե ընդունելի են, հարմարությո՞ւն կա տպագրական տեսակետից պատմական-բանասիրական հետազոտություններն տպելու՝ իրենց գիտական թարմատարներով հանդերձ (5):

Երրորդ՝ ի՞նչ պայմաններով ես լույս ընծայում, գուցե դու ևս «Հանդես ամսօրեայ»-ի և «Բազմավեպ»-ի նման դեռևս բաժնեզին պահանջես հրատարակությանդ համար, և կամ, ինչպես այստեղի հրատարակիչներն են առաջարկում, տպես, վաճառես ու մուտքից մի բան, մի մասը բաժին հանես:

Ես ծանոթ չեմ թերթիդ ներքին դրության և հարկավոր համարեցի քեզ հարցնել, մանավանդ որ հանդեսդ, կուսակցական բնավորություն ունենալով (6), նախապես պետք կա իմանալ, ձայնդ լսել: Բացի դրանից՝ ներկա պայմաններում բնական պիտի համարես այս հարցադրությունը:

Մերձավոր առիթը գրությանս Հայկի (7) նամակն է, որ գրում է, թե հիվանդ պառկած է Յարսկոսելսկի հիվանդանոցում և չի կարող օգնել պառավ մոր (8) և ազգականներին, որ տառապում են Բաբու (9): Հայագետի բա՞նն է ուրիշներին օգնել: Չար ոգին երբեմն շճնջում է վերադառնալու միտքը: Դրությունս հետզհետե այնպիսի ձև է ստանում, որ գուցե մի օր դարձյալ դեպի Պետերբուրգ նայենք:

Խնդրեմ՝ պարզ գրիր ինձ ամեն բան:

Մոռացա ուրախությունս և գովքս հայտնեմ գործիդ ավելի քան հաջող վարումի և ընթացքի առթիվ: Ողջույնս տիկնոջդ: Փորձված մարդ ես և պիտի զգուշացնեիր մեզ հեռու մնալ ամուսնական ծանր լծից:

Սիրով և բարևով՝ **Ն. Ադունց**

### **78. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՈՍԿՅԱՆԻՆ**

Սիրելի՛ Հայր Համագասայ,

Հուսով եմ, որ տակավին Գուք եք «Հ[անդէս] ա[մսօրեայ]»-ի տնօրենը (1): Ուղարկում եմ կցյալ հողվածս «Հանդէսիդ» համար (2): Խնդրեմ՝ ի տրիտուր հաճեք դրկելու ինձ «Հ[անդէս] ա[մսօրեայ]» առաջիկա տարին՝ սկսած հունվարից:

Գաղթականներիս դրությունը վաղուց արդեն աննախանձ է դարձել և քիչ է մնում բեռնակրությունը գերադասել համարվի անպտուղ բանասիրությունից: Անցյալ տարի խնդրեցի դրկել «Հ[անդէս] ա[մսօրեայ]», բայց անուշադիր եղաք, կարծյո՞ք մոռացությամբ: Եթե սովորություն ունեք, գուցե հետ տպագրության քանի մը օրինակ հանված դրկեք ինձ:

Թույլ տվեք շնորհավորելու մոտալուտ տարին և տոները Ձեր և արգո միաբանությանդ՝ ցանկալով հաջողություն և ատոք գործունեություն վանքիդ և «Հ[անդէս] ա[մսօրեայ]»-ին:

Ողջույն եղբայրակիցներուդ:

Հարգանքով՝ Ձերդ **Ն. Ադունց**

*25 դեկ[տեմբերի], [1926 թ.]*

15 Rue, Henri Martin, 15

Paris 16-e (3)

## 79. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ հայրենակից,

Ընդառաջ գնալով վաղուց և բազմիցս արտահայտված ցանկություններին՝ իրագործելու հայ մտքի անդաստանի մշակների միություն, ստորագրողներս խնդրում ենք Ձեզ շնորհ բերել մասնակցելու այս առթիվ տեղի ունենալիք առաջիկա խորհրդակցության (1):

Ժողովը տեղի կունենա պրոֆ. Ադոնցի բնակարանում՝ 15 Rue, Henri Martin (Métro Passy), հունվարի 9-ին՝ երեկոյան ժամը 8 և կեսին:

**Ն. Ադոնց**  
**Ա. Ահարոնյան**  
**Կ. Զարյան**

*[30 դեկտեմբերի, 1926 թ.]*

## 80. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՈՍԿՅԱՆԻՆ

Միրելի՛ Հ[այր] Համազասպ,

Եթե Մաշտոցը առանձին գրքով արդեն լույս է տեսել, խնդրեմ՝ չմոռանաք մի քանի օրինակ դրկել ինձ (1):

Ողջույն և հարգանք բոլորիդ  
Ձերդ՝ **Ն. Ադոնց** (2)

*[1926 թ.]*

## 81. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

7 հունվարի, 1927 թ.

Փարիզ

Միրելի՛ Սրբազան,

Շնորհավոր Նոր տարիդ:

Հագիվ սկսել էինք խոսել երկարատև լռությունից հետո, երբ վերստին ընդհատվեցին մեր գրույցները: Շատ սպասեցի խոստացած գրությանդ: Մինչև այժմ լուր չունիմ: Ով գիտե, եթե հիշյալ ուսումնասիրությունդ դրկած լինելիք, գուցեև իմ ձեռնարկությանս սայլը չխրվեր ցելսի մեջ: Դժմարիտն ասած՝ ո՛չ նպատակ և ո՛չ ախորժակ ունիմ և ունեի պարբերական սովորական հրատարակությունների: Փափագս ավելի մասնագիտական, բանասիրական հոդվածների մի վայելուչ ժողովածուի կողմն էր: Բայց հենց որ լուրը տարածվեց, ամեն տեսակ ձայներ ներս խուժեցին և գործին վնասեցին: Հրատարակիչն (1) էլ է հակված ավելի ընդհանուր բնավորության հանդեսի՝ նվիրած գրական-հասարակական և նման խնդիրների:

Մի անգամ ևս հիշեցնում եմ. խորհի՛ր այս մասին: Երևակայի՛ր, որ ինքդ ուզում ես «Շողակաթի» (2) նման մի ձեռնարկություն գլուխ բերել, **հավաքի՛ր** շուրջդ աշխատող բանասերների եղած նյութերը և ուղարկի՛ր ինձ: Հայագիտությունը ևս ճգնաժամի մեջ է: Բոլոր կենտրոնները՝ տկարացած: Եթե տարին երկու խոշոր հատոր հաջողեցնել կարենանք, մեծ բան է: Լսում եմ, որ շատերը այդտեղ գտնված ուժերից ձգտում են հրատարակելու իրենց աշխատությունները և հնարավորություն չունեն: Չկարծես, որ այստեղ այդպիսի հնարավորությունների շտեմարան կա: Ո՛չ, նույնչափ դժվար է և այս միջավայրում, բայց կարելի է գլուխ բերել, եթե մի շարք ուսումնասիրություններ անմիջապես սեղանի վրա դրվեն:

Ես ինքս ստիպված եմ Ամերիկայի «Հայրենիքում» տպելու մի քանի ուսումնասիրություններս: Իմաստ չունի առաձին գրքով հրա-



տարակել: Որքան մտածում եմ՝ հավաք հրատարակություններն են միակ նպատակահարմարը:

Տեղիս եպիսկոպոս Վռամշապուհի (3) մի քանի քայլերից տեսա, որ վանքիդ դրսից խոստացած օգնությունը չի հասցված: Քանիցս անգամ հարցրել եմ, ուր հարկն է, և միշտ ասել են, որ օգնությունն դրկվում է: Այս մասին էլ քանի մը խոսք գրի՛ր:

«Կաթողիկոսական պատվիրակի» տիտղոսը առաջնորդական ընտրությունից հետո պահելը բացարձակ անտեղիություն է, և առիթից օգտվելով, որ մի անգամ ընդմիշտ ետ առնե՞ք այդ շնորհը և ավելորդ նորաձևությամբ չվնասե՞ք և՛ եկեղեցուն, և՛ նրա պետի դիրքին:

Լսեցի, որ գալիս ես այս կողմերը: Սկզբում լուրեր էին տարածել, որ Ռ-ումինիա ես, հետո պարզվեց, որ այն ուրիշ Գարեգին եպիսկոպոս է եղել:

Մանրանկարներիդ վիճակի մասին ևս գրիր:

Դառնալով վերստին նույն հարցին՝ ասեմ, որ սկզբունքով ընդդեմ չեմ, որ ենթադրելի «Հանդեսը» ընդհանուր բնավորության լինի, ինչպես ցանկանում է Աբրահամ [Ղուկասյանը], բայց ես կարող եմ մասնակցել և կամ դեկավարել միայն այն դեպքում, եթե հայագիտականը իր պատվավոր տեղն կունենա: Այլապես պիտի հրաժարվիմ: Տարաբախտաբար ուրիշներին էլ չի վստահում: Ես նրա օձիքից եմ բռնել հայագիտական թաթերովս, իսկ նա ինձ չէ մերժում, բայց պայման է դնում, որ ընդհանուր բնավորություն լինի: Մնում է հուշել երկու ցանկությունները:

Ողջույն բոլոր ծանոթներին:

**Քո՝ Ն. Աղունց**

**[Հ. Գ.]** Գրադարանս մնաց իր տեղը (4), և թվում է, թե անհետացավ: Ոչ մի գիրք ստանալ չեմ կարողանում: Այստեղ հայագիտական գրքերի սով է: Պետերբ[ուրգ], Էջմիածին, ռուսակ[ան] հրատարակություններ չկան [°]: Խնդրեմ, թե կարող ես (գուցե վանքում գտնես)

վերջին հրատ[արակության] Խորենացի, Ագաթանգեղոս և Ղազար Փարպեցի մի-մի օրինակ դրկի ինձ, եթե Սերեոս, Ասողիկ, Ղևոնդ Վարդապետ էլ միացնես, շատ շնորհակալ կլինեմ, փոխարենը քեզ կուղարկեմ նոր գրքեր գործիդ վերաբերյալ:

**Ն. Ադունց**

**82. ՀԱԿՈՒՔ ՄԱՆԱՆԳՅԱՆԻՆ**

**ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (1)**

Մեծարելի՛ նախագահին (2),

Որպես պատասխան պատվական Հանձնաժողովիդ դիմումի՝ պատիվ ունեմ դրկելու Ձեզ կից համեստ նպաստս ուղղագրական և տառերի վայելչության խնդրին: Ցանկամ հաջողություն:

Ընդունեցե՛ք հարգալից ողջույններս:

**Ն. ԱԳՈՆՑ**

*18 սարիլի, 1927, Փարիզ*  
15 Rue, Henri Martin 15, Paris 16-e

**ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

Ստացա աղյուսակդ: Այս առթիվ պարտք եմ համարում ասել հետևյալը: Խորթ, նորալուր ուղղագրությունը, որ քննելու է կոչված Հանձնաժողովդ, խորշելի է ամենեն առաջ նորանով, որ մի մեծ և անտեղի խրամատ է բաց անում, հին և նոր գրական ճյուղը կտրում է

իր բնից և վտանգում նրա գոյությունը: Ուղղագրությունը մեկեն ավելի պահանջներ ունի իր առաջ, որոնց բոլորին պարտավոր է գոհացնել: Բացի հնչական հավատարմությունը, որ պահանջում է լեզվագիտությունը, բացի միակերպությունը, որ կարևոր է մանկավարժական տեսակետից, կա և այլ հանգամանք, որ հաճախ մոռացվում է վերանորոգիչների կողմից, այն է՝ լեզվապատմական պահանջ, որի հիմամբ գիրը պետք է պատկերացնի լեզվի ամբողջությունը գեթ այն չավով, որքան արգելք չեն հարուցանում մյուս հիշյալ պահանջները:

Նոր գրական լեզուն կապված է սերտորեն գրաբարի և աշխարհաբար բարբառների հետ: Երկու դայակներից մեկը գրեթե զոհ գնաց քաղաքական ձախողանքի, և կենդանի բարբառների մնացորդները այսօր անտուն, անտեր թափառում են կորստյան և աղավաղման ճանապարհների վերա:

Մնում է հին լեզուն որպես մայր ու սնուցիչ նորի: Մոտիկ անցյալի վեճերը գրական լեզվի զարգացման շավիղների շուրջը չարդարացրին նրանց հեղինակների գուշակությունները: Գրական լեզուն, պահելով հանդերձ իր ինքնուրույնությունը, բնավ պետք չտեսավ հրաժարվելու իր պատմական ժառանգությունից և լայնարձակ շահավետեց հին լեզուն: Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձավ, և հին շտեմարանը դեռ սպառված չէ նոր գրականի համար:

Այս նկատումով խոսելի է այն ամենը, ինչ որ խտրոց է ծառայում հնի և նորի մեջ:

Եթե աշխարհաբարը սեփական ուղղագրություն մշակե, որպիսին է այժմյան պաշտոնական նորաձև ուղղագրությունը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատվի իր մորից, պիտի դժվարացնե հնի ուսուցումը, որով ամենից առաջ և մեծապես վնասելու է աշխարհաբարի շահերին:

Ահա ինչու համար չի կարելի բարեկամ լինել այն ուղղագրական հեղաշրջումների, որոնք այլ բան չեն, եթե ոչ լեզվական բռնություն:

Ինչ և լինին հայ գրի թերիքները, ամեն դեպքում նա այն սակավաթիվ օրինակներից է իր հասակակիցների թվում, որ կարիք չունին

արմատական փոփոխության: Քաղաքակիրթ լեզուների գրեթե բոլորի մեջ վաղուց բացված է անանցանելի խորխորատ գրի և հնչյունի միջև: Թեպետ դյուրության մասին սրտացավները պակաս չեն, քան մեզանում, դարձյալ չեն նկրտում ուղղագրական բուռն խիզախումների, պահում են հին, շատ դեպքերում գրեթե գաղափարագիր դարձած գրությունը, որպեսզի չեղծեն լեզվի պատմական պատկերը և մոռացության շտան այդ լեզվով ամբարված դարավոր հարստությունը, անցյալի ճոխ գրականությունը՝ վնասելով նրա մատչելիության:

Եթե գորավոր լեզուներն այսքան զգույշ են և սիրում են մնալ կառչած իրենց անցյալին, որքան ավելի իրավունք ունի մեր տկար և անպաշտպան լեզուն նույնն անելու, մանավանդ որ իր գոյության համար ուրիշ ավելի գորեղ և վստահելի խարխախ չունի, քան իր անցյալը:

Կասկած չունիմ և ուրախ եմ, որ ճիշտ այս տեսակետն ունի և պատվական Հանձնաժողովը, որի հետևանքով և վերաքննության գործը դրված է պատմական և ավանդական հողի վերա: Հանձնաժողովը ջանացել է և հաջողել վերականգնել Մետրոպոլիտան ուղղագրությունն ընդդեմ նորամուլ ոտնձգությունների, ինչպես կարելի է տեսնել Համադրական աղյուսակից: Սակայն այստեղ՝ այս խնամքով մշակված գործի մեջ, կան սայթաքումներ, որոնք, թվում է, թե մի տեսակ զիջումն են նոր ուղղագրության, և չէի կամենալ դրանք անձամբ թողնել առանց ուշադրության: Խոցելի են համարում ամենից առաջ 14-րդ և 15-րդ կետերը:

14-րդ կետը առավելություն է տալիս **վ** (վևին) ընդդեմ **ւ** (ւյունի) և **ու**-ի:

Միանգամայն ապօրինի են համարում այս աչառու վկասիրությունը: Երեք գրերի գործածությունը հին և նոր գրական լեզուներում այնքան պարզ և որոշ է, որ թյուրիմացության տեղիք չէ տալիս: Հյունի **ւ** հնչյունը նույնքան հին է, որքան և վևի: Այն հանգամանքը, որ հյունը կազմում է **ու** ձայնավորը և **ի** երկբարբառը, բնավ **հիմ** չէ, որ նա գրկե իր հինավուրց **ւ** ձայնից: Այս որոշումը զարմանալի է,

մանավանդ որ Հանձնաժողովը հնարավոր է գտնում **ու-ն** և **իւ-ը** փոխարինել միատառով՝ ըստ 23-րդ կետի:

Ասել է, թե հյուներ վտարվում է հայ այբբենարանից: Անարդար հալածանք: Վևի գործածությունը շատ սահմանափակ է: Մի քանի տասնյակ բառեր, այն էլ մեծ մասամբ իրանական փոխառություններ, որոնք ունին սկզբում **վ-**, հետո **-ով** վանկը կազմում են սույն տառի ամբողջ հաշվեկշիռը: Մինչդեռ հազարավոր բառեր կան **ւ-**ով: Թողնենք այլ նկատումները, առնենք միայն թվական պարագան. ի՞նչ կարիք կա այլայլելու հիմնովին մեր գրության պատկերը՝ բազմաթիվ **ւ-**երը վեր ածելով **վ-**ի, այսինքն՝ մեծամասնությունը գոհելով փոքրամասնության: Արդարամիտ դատաստան չէ և ոչ հաշվետես քաղաքականություն:

Ոչ միայն հյուներ, այլ անգամ **ու-**ի **v** հնչյունը՝ ձայնավորի նախադաս, փոխել վևի անընդունելի է:

Անցյալներում ուրիշների թվում ես ևս կարելի էի գտնում ձայնավորից նախադաս **ու-**ն սղել **ւ-**ի:

Անգամ այս բեթև նորաձևությունը, որ գեթ տնտեսական արժեք ուներ, ժողովրդականություն չգտավ, և նախկին **ու-**ն պահեց իր դիրքը: Հանրության հոտառությունը մաս ուղղագրական խնդիրներում անտես առնելու չէ: **Ու-**երի սղումը **ւ-**երի կարծես խճողում է լեզուն նոր բաղաձայնով և վնասում նվազայնության: Մեր լեզվի թերություններից մեկը հենց բաղաձայնների կուտակումն է, և նրանց թիվը նորեն զորացնել ցանկալի չէ: Թվում է, թե մի երանգ կա *հայրված* կամ *հայրած* և *հայրուած* արտասանության մեջ. մեկը ակամայից պիտի հնչվի *հայրված*, *հայր-ւած*, *հա-յրը-ված* կամ *հա-յրը-ւած*, մյուսը՝ *հա-յրուած*, *սա-յրուած*, այսինքն *т'во* ռուսերեն՝ *тво* և ոչ *т-ը-во*, ինչպես արտասանում են հայերից շատերը:

Համենայն դեպս *հայրած* գերադասելի է, քան *հայրված*, եթե միայն ստիպված ենք թողնել պապենական *հայրուածը*:

Վերջապես մոռանալու չէ մանավանդ Հանձնաժողովը, որ շահագրգռված է մաս տառերի վայելչության խնդրով, որ ամփոփի հյուներ

անհամեմատ ավելի հարազատ է հայ գրերի ոճին, քան երկարաձիգ վեր:

Այսպես **v** հնչյունի եռակի գրությունը՝ **վ**՝ բառերի սկզբում և *ով* վանկում, **ու**՝ բաղաձայնի և ձայնավորի մեջ (*լեզուի, հայրուած*) և **ւ**՝ մյուս դեպքերում, մանավանդ ձայնավորների մեջ (*հրատիր*=*hra vaeba*, *Արշաիր*=*vira*), ահա մեկուկես հազար տարի է, որ ոչ մի անպատեհություն չեն հարուցել, խաղաղ ապրել են իրար կից, և այժմ էլ լեզուն բողոք չունի նրանց դեմ: Ձեռնդ այբուբենը նույն երեք գիրն ունի՝ **,=u, ու, ,=v, ւ, ʰ=վ**, որ է նույն կրկնակի **,+պոչ՝ Կ**: Տառերի բարեփոխության ժամանակ կարելի է վկի գծագրությունը մոտեցնել կրկնակի **ւ**՝ կարճելով նրա ոտները, և նրա դեմ հալածանքը կմեղմանա:

(Իսկ եթե բռուն բաղձանք կա տառերի թիվը կրճատելու, գոհը պիտի լինի վեր, որովհետև ամենեմ քիչ գործածությունն ունի: Այն ատեն բառասկզբում *և* գրելու է, իսկ ո-ից՝ հետո **ւ**, ինչպես ֆր, *ai* և *ai*:

Սակայն դժվար թե ստիպողական պետք այս տնտեսության):

15-րդ կետը մնանապես խոտելի են համարում, ուր առաջարկվում է **ոյ** երկձայնը ընդլայնել **ույ**:

Հայտնի է, որ աշխարհիկ բարբառներից և ոչ մին չէ խնայել հին երկձայնները՝ **այ, եա, իւ և ոյ**: Սրանց փոխարեն ունի պարզ ձայնավորներ՝ **է, ե, ի, ու** (կամ **ւ** – ֆրանս. *u*):

Գրական լեզուն, հետևելով գրաբարին, վերակենդանացրել է հին երկբարբառները և յուրացրել հին **լոյս**=*loys* հնչյունը փոխանակ աշխարհիկ *լիս* կամ *լուս*, *լու* ձևերին: Արդ ի՞նչ բանավոր հիմք կա հին *լոյսը* փոխել *լույսի*, և ինչ առավելություն: Եթե առաջարկվեր վերականգնել աշխարհաբարի իրավունքը, և ամենուրեք հին երկբարբառը դարձնել *ու* պարզ ձայնավոր և գրել՝ *լուս, ճկութ, երևութ, բութ* (փոխանակ՝ *լոյս, ճկոյթ, երևոյթ, բոյթ*), այս հասկանալի կլիներ, գուցե և հավանելի: Բայց պահել հին հնչյունը և փոխել նրա սրբագործված գիրը, նշանակում է ավելորդ շփոթ հարուցանել և զատել միմյանցից հին և նոր գրական լեզուները: Ենթադրյալ դյուրությունն էլ կասկա-

ծելի է և մանավանդ պարզությունը: Դժվար է համոզել, որ երեք տառ *ոյ* հաճելի է, քան երկտառ *ոյ*:

Այս հեղաշրջումը, անշուշտ, այն նպատակն ունի, որ *ոյ*-ին վերապահի *օյ* հնչյունը: Բայց արդյո՞ք պետք կա այս հնչման: Ամբողջ հայ բառարանում մի հատ բառ կա *օյ* հնչյունով՝ *խոյ*, գուցե և կասկածելի *կոյ* (փոխանակ կու-ի): Մի բառի համար հեղեղել հին ուղղագրությունը նշանակում է դարձյալ նույն սխալն անել, ինչ որ *ւ*-ի և *վ*-ի նկատմամբ, այսինքն՝ մեծամասնության շահերը զոհել: Սա շինարարական գործ չէ:

Հայ լեզուն հնուց խուսափում է **ոյ** գրությունից, այսպես՝ գրաբարի անցյալ անկատարի երրորդ դեմքը (*հեղոյ, զենոյ* և նման բայերի դեպքում) գրվում է *զենոյր* (*զենուի, զենուիր, զենոյր*), երբեք *զենույր*: Այստեղից երևում է նաև, որ հին *-ոյ* շատոնց հնչվում էր *օյ*. պահել այժմ էլ հին գրությունը և արտասանությունը ոչ մի անպատեհություն չի ներկայացնում: Նոր հունարենը պահում է հին՝ **ւ, ս, սւ, ալ** գրությունը, թեև արտասանում է միակերպ **ի** հնչյունով: Խոսքը և գիրը շատ հին ու համերաշխ դաշնակիցներ են, և ոչ միայն ականջը, այլև աչքն իր իրավունքներն ունի գրության մեջ և ուզում է այն պահել և այնտեղ ավելի բան տեսնել, քան ականջն է լսում:

10-րդ և 18-րդ կետերը առաջարկում են զեղչել բառերի վերջում *-յ* գիրը, ուրեմն գրել՝ ***վկս, Սաքո***:

19-րդ կետում նախատեսվում է նաև հապավել *-յա* և *ի* ձայնավորների միջև: Միայն ոչինչ չէ ասված՝ արդյո՞ք *ո* և *ի* ձայնավորների մեջ *-յ-* ևս զեղչելու է՝ ***վկս, վկսի***, իսկ ***Սաքո, Սաքոի***, թե՞ ***Սաքոյի***: Ենթադրվում է, որ *ս* և *ո*, *ս* և *ու*, *ս* և *է* ձայնավորների միջև *-յ-* պահվում է: Այս առաջարկով գրելու է՝ ***վկս, վկսի***, հավանորեն և՛ ***Սաքո, Սաքոի***, բայց՝ ***վկսյով, վկսյում, վկսյէ, Սաքոյով, Սաքոյում, Սաքոյէ***:

Այս կանոնը հետևողական չէ և ոչ էլ համաձայն հայ հնչաբանության, որ չէ հանդուրժում ձայնական հորանձ (hiatus) ընդհանրապես: Բացառական հոլովի երկու ձևերից մեկը գրել առանց *-յ*-ի, մյուսը՝ *յ*-ով՝ ***վկսից*** և ***վկսյէն***, չի նշանակում դյուրացնել ուղղագրությունը:

Ինչպես ասացի, հայը չէ կարող արտասանել երկու կից ձայնավորը առանց միջնորդ *յ*-ի կամ *ւ*-ի՝ նայելով երկրորդ ձայնավորին: Ծիշտ այնպես, ինչպես անընդունակ է երկու կից բաղաձայն հնչել առանց միջանկյալ *ը*-ի: Այս հիմնական օրենքը հայ հնչաբանության հարկադրում է հրաժարել 19-րդ կետից և գրել՝ *վկայի, վկայով, վկայէն, Սաքոյի, Սաքոյէն* կամ *ազգային* և այլն:

Ընդունելի է *յ*-ի հապավումը լոկ ուղղականում եզակի և հոգնակի՝ *վկա, վկաներ, Սաքո, Սաքոներ*:

Այս խնդրի հետ կապ ունի իսկապես 3-րդ կետը, որը հանձնարարում է վերջահանգ *օ* հնչյունը գրել է: Պետք է հուսալ, որ հետևողականության աղազավ է առաջարկվեր գրել վերջին *օ* ոչ թե *է*, ինչպես ընդունված է գրաբարում, այլ *ե*՝ զեղչելով *է* (=ե+յ)-ի *յ* որպես *վկա, Սաքո*, փոխան՝ հին *վկայ*, Սաքոյ=հաճոյ: Հետևապես պետք էր գրել՝ *բազե, նանե, մարգարե*: Հետևությամբ *վկա, վկայի, Սաքո, Սաքոյի* թեք հոլովներում գրելու էր *բազեյի, բազեյով*, որ է *բազեի, բազեով* (է=եյ): Այս դեպքում մնում է ուղղականում ևս գրել *բազէ* և ոչ *բազե*՝ հանուն միօրինակության:

Եթե անգամ ընդունելու լինենք, որ *ե* չէ խուսափում hiatus-ից, և ուրեմն ներելի է գրել՝ *բազեի, մարգարեով, մարգարեսկան* (համաձայն գրաբարի *սիրեի, սիրեիր, սիրեսք, սիրեիք* հին գրության), այն ժամանակ ե՛ն (=են), ե՛ա (=եա) հնչյունները պիտի շփոթի տեղիք տային, քանի որ եա=ya՝ ըստ 21-րդ կետի և եո=yo՝ ըստ 22-րդի:

Միակ լուծումն է հաշտվել ավանդական ուղղագրության հետ՝ համաձայն 2-րդ և 3-րդ կետերի:

5-րդ կետը, հակառակ 4-րդ կետի, պաշտպանում է *է*-երը բայերի *էր, էք* վանկերում: Գրաբարի *-էր* և *-էք* ստուգաբանական հիմն ունին՝ *սիր-էր* <*սիրե* -\*t-ro, *աղայր* <\*a-t-ro: Աշխարհաբարն ունի՝ *աղամ, աղաս, աղար* և ոչ *աղայր*. հետևապես և *սիրեմ, սիրես, սիրեր* և ոչ *սիրեյր* = *սիրէր*: Նմանապես *աղայր, սիրէք* փոխված է աշխարհաբարում՝ *աղաք*, ուրեմն՝ *սիրեք*: Ասել է թե՛ աշխարհաբարը *յ* զեղչում է, որով և *սիրեր, աղար, սիրեք, աղաք* գրություն արդարաց-



վում է ստուգաբանորեն: Եթե հներին հետևելով՝ թույլ տայինք hiatus եջի վերաբերյալ, կունենայինք նրանց նման՝ *սիրեհի, սիրեհիր* և (փոխանակ *սիրեիր* ձևի) *սիրեիր, սիրեհիր* և այլն: Ներկայումս ևս՝ *սիրեմ, սիրես, սիրե, սիրենք, սիրեք*, որպես՝ *աղաս, աղաս, աղա, աղանք, աղասք*: Որոշ չէ՝ արդյոք *աղա* գրությունը առանց *յ-ի* մտնում է 18-րդ կանոնի մեջ, թե *յ* թողնվում է գրել ըստ հին ուղղագրության: Եթե հանձարարվում է գրել *աղա*, ապա պետք է գրել և *սիրե* (փոխան *սիրե*) հակառակ 3-րդ կետի:

Է-երի խնդիրը, մանավանդ վերջահանգ է-երի, պետք ունի վերաքննության:

4-րդ կետի տրամադրությունը միայն ընդունելի է, որ որքան հնար է կրճատել է-երի գործածությունը, բայց ոչ այնպես կտրուկ, ինչպես ձևակերպված է կանոնը այն աստիճան, որ շփոթե *սեիր* և *սէիր*, *գէիր* և *գեիր* և նման բառեր: Մի շարք բառեր կան, որ բարվոք է *ե*-ով գրել, ինչպես *երբեք, մեկ (<միակ>), հեք, աղեիր, քերես* բառերի մեջ և այլն:

11-րդ կետը ծանր վճիռ է կայացնում խեղճ և մի հատիկ *ուլ* դերանվան հանդեպ, բաժանում է նրան իր գուգորդ *ո*-ից և գոհում օտար բառերի հաճույքին, որպիսին է *օվրեսարէա*: Քանի որ *ուլ* բացարձակ եզակի է, նրա գրության փոփոխությամբ հայ ուղղագրությունը ոչինչ չէ շահում, այլ միայն հրաժարվում է հին անմեղ ավանդից: Օտար բառերի մասին ստորև:

23-րդ կետի նախազօծված միատառ գրերը *ու, իւ, էս* հնչյունների համար ավելորդ են գտնում, ինչպես և բնավ ցանկալի չէ *և* փակագրի գործածությունը՝ ըստ 14-րդ կետի ծանոթության: Տպագրության մեջ լավ կլինի *և* փոխարինել *էւ*-ի: Գրաշարի գրոցների թիվը շատացնել ավելորդ փակագիր տառով նշանակում է ծանրացնել շարելու գործը: Հայ այբուբենը առանց էն էլ բազմատառ է:

Գրեթե բոլոր կետերին, գլխավոր կանոններին անդրադարձա: Իմ հայացքները չեն տանում դեպի արմատական փոփոխությունների կողմը: Ոչ թե նրա համար, որ բնական խորշանք կամ նախապաշարում ունին նորամուտի հանդիման: Ո՛չ գուտ լեզվագիտական, ո՛չ

մանկավարժական և ո՛չ անգամ գործնական որևէ լուրջ հիմ չեն տեսնում շեղվելու ավանդական ուղղագրության սկզբունքներից: Եթե արդի մանուկ լեզվի շահը պահանջեր, կանցնեի առանց տատանվելու բոլոր հիշյալ կամուրջները: Սակայն հենց այդ շահի գիտակցությունն է, որ հակառակն է թելադրում: Պահել, պահպանել ամեն կարգի կապեր մայր լեզվի, հին գրական լեզվի հետ աշխարհիկ լեզվի կենսական շահերից էականն է: Նոր գրականում չկա ոչ մի հնչական տարր, որ անձանոթ լինի գրաբարին: Այս մի հաստատուն *հիմ* է ուղղագրական համերաշխության: Անգամ կրավորական բայերը, որ թվում է, թե հատուկ են միմիայն աշխարհաբարին, ունեն իրենց նախատիպը գրաբարի՝ *հայրուած, յողուած* և նման ձևերում: Իսկ գրաբարի՝ *հոգոյ, գինոյ* գրությունը արդարացնում է աշխարհաբարի՝ *հանվում եմ, ասվում* է ուղղագրությունը: Իմ եզրակացությունն այն է, որ արդի ուղղագրության մեջ ներելի են այնպիսի սրբագրություններ և գուցե հարկավոր, որոնք ընդունելի են նաև գրաբարի տեսակետից, այնպիսի սրբագրություններ, այնպիսի մասնակի ուղղումներ, որոնք չեն խախտում, չեն կտրում նորը հնի հետ կապող օղակները: Միայն ծայրահեղ, ստիպողական հարկը կարող է արդարացնել այս սկզբունքի խաթարումը:

Ինչպես ամեն լեզվում, մանավանդ գառամյալ լեզուներում, գրաբարի մեջ ևս կան անհարթություններ, շեղումներ, ուղղագրական կանոններից: Նրանցից շատերն են անցել աշխարհաբարին: Չգտել կուկել ամեն մի անհարթություն, որն իր պատմական նստվածքն ունի, վտարել այն, ինչ որ խոչընդոտ է թվում, նշանակում է կենդանի լեզուն հասցնել արհեստական վոլապյուկի (3) տափակության: Ցանկալի է միակերպությունը, բայց արհամարհելի չէ բնավ և պեսպետությունը: Ամեն բան իր չափն ունի, և միօրինակությունն էլ պետք է ազատ պահել տարտամ շաբլոններից: Յ-երի գեղջը կամ փոխարինումը հ-ով, որ նախատեսում են 16-րդ և 17-րդ կետերը, ինչպես *սեթր* և *սէր*, *հոյր* և *հոյր* և նման համանունների հավասարեցումը, համաձայն 4-րդ և 9-րդ կետերի, սրանք թելադրանք են այն շեշտակի շաբ-

լոնականության, որ իմաստն անգամ զոհվում է ձևին: Եվ ցավալին այն է, որ շաբլոնը ձևակերպված է թվում երբեմն օտար բառերի ազդեցության տակ:

### **ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մտադիր չեմ եկամուտ բառերին տալ այն պատիվը, որին արժանացրել է Հանձնաժողովը ծայրահեղ ներողամտությամբ: Ուղղագրական ցուցակի մեջ օտար բառերը վայելում են համաքաղաքացիական հավասար իրավունք և հարգի տեղ են բռնում հայրենի աթոռների վերա: Հարազատ *ույ* դերանունը նստած է այնտեղ, որ անձանոթ *օվրեսարը*, *էգ* բառը ընկեր է *էքսպերտ* և *էդիտոն* անուններին, *ոյ* երկբարբառը դառնում է *ույ* օտար *օյ*-ի դրոմամբ: Հայ բառերն են, որ խոնարհվում են եկվորների առաջ, որ նրանց հաճույքով միևնույն գիրն ստանան:

Հաճելի չեն ցուցակի վերնագիրները՝ «Եվրոպական» այս կամ այն հնչյունը, որ կարող է կարծել տալ իբր թե վերաքննությունը նպատակ ունի համակերպել, հարմարացնել հայ այբուբենը եվրոպական հնչյուններին:

Մինչդեռ կուզեմ հուսալ, որ հարցը լատին տառերով արտահայտված հնչյունների մասին է, և քննելի նյութը եվրոպական հնչյունները չեն, այլ հայ հնչյունների և դրանց գրերի փոխհարաբերությունը:

Յուրաքանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ սիստեմ կարող է մշակել միայն իր սեփական բառամթերքի հնչական շրջանում, որովհետև սրանք, միևնույն պատմական ճանապարհն անցած լինելով, ենթարկվեն համերաշխ օրենքներին: Օտարամուտ բառերը եթե միջամտեն ուղղագրական կանոններ մշակելիս, առաջ կբերեն շփոթ, քանի որ ծագում են լեզվական և հնչական ուրիշ մթնոլորտից և իրենց հատկությամբ կարող են հաճախ անմարսելի լինել հյուրընկալող լեզվի համար:

Ուրիշ ազգեր բնավ հոգս չեն անում օտար բառերը ճշգրտորեն արտասանելու, այլ հնչում են այնպես, որպես ներում է իրենց սեփական լեզվի կարողությունը:

Մեզանում ևս փոխառյալ բառերը, եթե միայն պատահական անցորդներ չեն, այլ ընդունվում են որպես մնայուն բնակիչներ մեր լեզվի շենքի մեջ, պետք է համակերպվեն և ենթարկվեն մեր լեզվի օրենքներին, այսինքն՝ հայանան: Երբ որ օտար բառը ժողովրդի բերանից է անցնում գրական լեզու, նա, իրոք, նախապես տաշվում է և հայտնվում, ինչպես *եկեղեցի*, հույն *έχχλησία* բառը, որ դասական օրինակ է օտարի հայացման: Բայց եթե միջնորդը գրականությունն է, օտարը մնում է անձեռնմխելի իր տարազի մեջ: Շատ անգամ արդեն հայացած բառը նորեն օտարանում է գրականի գրչի տակ կամ բերանում. *Գրիգորը* դառնում է *Գրիգորիս*, *Գրիգորիս*, նույնիսկ *Արիարակը՝ Արիարակես*: Կարծում եմ՝ այսօրինակ բծախնդրությունը բոլորովին խորշելի է: Ֆրանսիացին կարող է արտասանել ռուս-հայ չ, ց տառը, բայց գերադասում է ներություն չտալ իր լեզվի կապանքներին և *Черноеу* արտասանում է *Շերնովիչ*: Բայց մենք ուզում ենք, որ ռուսերեն Горький հայն արտասանե *Գորկիյ՝* ծամածռելով իր լեզուն, մինչդեռ եվրոպացիք բավականանում են *Gorki* ձևով, որ և հարմար է մեր լեզվին:

Ինձ թվում է, որ օտար բառերը ուղղագրության մեջ առանձին գրուխ պիտի կազմեն, ուր մշակելու է տառադարձի կանոնները՝ որքան հնարավոր է հարմարեցնելով հայ հնչման և գրի ոգուն: Ուստի կուզեի գատել օտար բառերի գրության հարցը և քննել առանձին այն չափով, որքան շոշափված է Հանձնաժողովիդ աղյուսակի մեջ:

Ամենակարևորը *օ* և *е* գրերի տառադարձի խնդիրն է, որ կատարյալ քմահաճույքի նյութ է դարձել գրողների գրչի տակ: Շատերը խաբվելով օտար *օ*-ի և հայերեն *օ(=աւ)*-ի նմանությունից՝ գրում են ամեն տեղ *օ*: Ուրիշները կարծելով, որ *ե*-ի հնչյունն է *ye*, օտար *е* ամեն տեղ դարձնում են *է*:

Հանձնաժողովիդ սահմանում է գրել բառամիջում *n* և *և*՝ ըստ 4-րդ և 9-րդ կետերի, բառավերջում *n* և *է* ըստ 19-րդ և 3-րդ կետերի և բա-

ռասկզբում **o** և **է** ըստ 1-ին և 7-րդ կետերի: Այս կանոնը շատ որոշ է և ընդունակ է վերջ դնելու խառնակ գրություններին: Եթե հայ բառերի վերաբերմամբ այս կանոնը վիճելի է ինչ-ինչ կետերում, օտար բառերի համար անխոցելի է: Թեև սկզբի **h** և **n**, ինչպես և վերջի **է** կարող են առարկության նյութ լինել: Որպեսզի **է** և **o** գրերը, որ գուտ հայկական ծագում ունին, կարելի է լինի պահել սահմանափակ շրջանում՝ համաձայն Հանձնաժողովի անթարուստ տրամադրության, արդյո՞ք ներելի չէ օտար բառերում ամենուրեք **h** և **n** գրել, անգամ բառի սկզբում:

Ռուս լեզուն մի կետում նման է մեզ. սկզբի **e** արտասանվում է **ye**, մի հատիկ բառ ունի **э-ով** **это**: Ոչ միայն պավոներենում, այլև մոտիկ անցյալ ռուսերենում ընդունված էր հունական **ε** արտահայտել **e-ով**: Ցայժմ էլ պավոն լեզվի ազդեցությամբ գրում են *епархия, Евлогий, епиский, Евламый, Евграфий*, առաջները գրում էին *Ератосфен, Евклид, Епаминонид, Епикур*. այժմ եվրոպական, գլխավորապես գերմաներենի հետևությանբ փոխել են՝ *Эратосфен, Эвклид* և այլն:

Մեր նախնիք էլ գրում էին *հկեղեցի, հպարքոս, հպիսկոպոս, Եղեսուս, Եղիսե, Երեսոս, Երիքես, Ելամպիս* և այլն: Հանձնաժողովի պատվիրում է այժմ գրել *Էվրիքես, Էվլամպիոս, Էվրիպիլոս*, կամ եթե վևի տեղ **ւ** գրենք՝ *Էւրիպիլո, Էւլլիլո*:

Թվում է, թե անպատեհություն չկա բառասկզբում ևս գրել **h**՝ կանոն դնելով, որ օտար բառերում սկզբի **h** հնչվում է որպես **է**՝ առանց խորշելու, եթե ոմանք կարտասանեն **ye**: Այժմ անհարմարություն չեն գգում վերև բերած բառերի հին արտասանությունից՝ *հպիսկոպոս, փոխ. Էպիսկոպոս, Եղեսուս, փոխ. Էղեսուս*:

Չպետք է մոռանալ, որ եչի **ye** արտասանությունը գրական պատվաստ է և հատուկ է գրական լեզվին, ինչպես և **n**-ի **vo** հնչյունը: Կենդանի բարբառները ավելի ազատ են և ընդհանուր առմամբ շատ ավելի խուսափում են **ye**-ից և **vo**-ից, քան սիրում: Կան բառեր, որոնք այս կամ այն բարբառում արտասանում են **ye**, **vo**, բայց գրեթե չկա մի բառ, որ բոլոր բարբառների մեջ ունենա **ye** կամ **vo** հնչյունը

անպայման: Անգամ *ես* դերանունը Թիֆլիսի բարբառում **իս** է: *Երես, երեք, երեկ, երազ, երանի, երդում, երկաթ, երկանք* արտասանվում է՝ *էրես կամ իրես, իրեք, էրեկ, արազ, հրենակ* (=երանեակ), *օրդունմ-էրդում, արկաթ, արկանք* և այլն: Նմանապես՝ *ոսկի*, Թիֆլիսը՝ *օսկի, ողորմի, օղորմի* կամ *ղորմի*, այլև *ըղորմի, ոչխար=օջխար, որթ=հորթ, ոսպն=հոսպր, ոջիլ=հոջիլ, ոլորեմ=հոլորեմ, ոզնի=կոզնի* և այլն:

Գարոցի և գրականության շնորհիվ է, որ չարաբախտ **յե** և **vo** հնչյունները ընդհանրացել են: Կարծում են՝ հնուտ և բանիբուն ուսուցիչները վերջ պիտի տան դարոցական բռնության և թողնելու են աշակերտներին իրենց անհատական արտասանությունը:

Եթե մայրենի բառերում **ե** և **ո** կարող են հնչվել ըստ ցանկության **ե** և **օ** կամ **յե** և **vo**, կարծում են, որ օտարոտի չպիտի թվա նաև օտար բառերում սկիզբը գրել **ե** և **ո**՝ երկկերպ արտասանությունը հավասարապես ընդունելի համարելով ուրեմն *եկսպերտ, Եղմունդ, Երրուսկ, Որմիզդ, Ողիսես, Որիզեն, Որեսար* կամ *Ովրեսար, Որիոն* կամ *Ովրիոն*, ինչպես և *Որդան, ոպերաց(իս), կո-(ո)պերաց(իս)* և այլն:

Այս հանգամանքը, որի վերա պնդել չեմ ուզում, այն առավելությունն ունի, որ կրճատում է **օ** և **է** գրերի գործածությունը և նախապատրաստում նրանց վտարումը և հայերեն բառերից, որոնց քանակը մեծ չէ: Երկուսից մեկը, կա՛ն հայ գրագետը չի կարող արտասանել բառերի սկզբում հստակ **օ** և **ե**, այլ **vo** և **յե**, այն ժամանակ այդպես պիտի վարվի և օտար բառերի հետ, կա՛ն կարող է արտասանել, ապա կարիք չկա կանոն դնելու, որ **ո** և **ե** բառասկզբում դառնում են **vo** և **յե**:

Այս բացատրություններից հետո պարտքս լիովին կատարած չէի լինի Հանձնաժողովիդ հանդեպ, եթե լռությամբ անցնեի նաև այլ կարգի մի հանգամանք:

Արևմտյան հայությունը միշտ պահպանողական է եղել լեզվի խնդրում և ավանդապահ: Ներկա ցան և ցրիվ գաղութները, որ նրա բեկորներն են, պահում են իրենց նախկին տրամադրությունները:

Այնքան կորուստներից և տապալումներից հետո հայրենագուրկ հայությունը սարսուռով է նայում ամեն մի փոփոխության, որ շոշափում է լեզուն, եկեղեցին և մյուս ավանդները:

Նոր ուղղագրությունը համակրության նշույլ անգամ չգտավ սահմանից դուրս և անգամ անհատական հետևողներ չունեցավ: Կասկած չկա, որ Հանձնաժողովիդ աշխատանքը իր շեղումներով նույն բախտին է արժանանալու: Հրամաններն ու աստերը այս դեպքում անգոր են և անհետևանք:

Խորապես ցավելու է, եթե այն պահին, երբ հայրենիքն իր կառավարչական և հասարակական ուժերով ջանալու է իրեն քաշել աշխարհահաված գավակները, ուղղագրության խնդիրը նոր անջրպետ հանդիսանար և փոխանակ մերձեցնելու երկու գրական լեզուները ուղղագրական սեպով ընդլայներ եղած պատակառումը:

Հայ գրական աշխարհի երկփեղկումը ավելի մեծ աղետ է, քան ուղղագրության խոստացած բարիքը: Ուղղագրությունը ի վերջո պայմանական խնդիր է, և ամեն ուղղագրություն ընդունելի է, եթե հանրության կարծիքն ու հավանականությունը շահած է:

Հասարակական պայմանները պարտադրում են ուղղագրական հարցը հրապարակ հանել առանձին գոշությունք:

1) Նորալուր ուղղագրությունը, որի վրա ծանրանում է պետական կնիքը, ջնջելու է իսպառ և վերականգնելու ավանդականը: Այս անկասկած է:

2) Հանձնաժողովիդ վերաքննության վերջնական արդյունքը, ինչ և լինի, չպիտի ունենա ստիպողական հանգամանք: Պետությունը ևս իր հեղինակությունը անխոց պահելու համար ձեռնպահ պիտի մնա վաղաժամ միջամտությունից: Հանձնաժողովիդ աշխատանքը պետք է հայտարարվի իբրև ուսումնական գործ՝ պատրաստված հեղինակավոր մարմնի կողմից որպես հանձնարարելի սրբագրություն ավանդական ուղղագրության: Գրական աշխարհին է թողնելու վերջնական վճիռը: Ուղղագրությունը միայն մասնագետների գործ չէ, այլև համայն մտավորականության, ընթերցող և գրող հասարակու-

թյան: Սա է իսկական սպառողը մշակած նյութի: Հանրության վերաբերմունքը կորոշեն գործի ելքը և թե՛ հաջողության, թե՛ ձախողանքի չափը:

3) Որպեսզի հասարակությունը գիտակցորեն վերաբերեն Հանձնաժողովի աշխատանքին, անհրաժեշտ է հրատարակել մի ժողովածուի մեջ բոլոր այն զեկուցումները և թեր ու դեմ կարծիքները, որոնք արտահայտված են հարցի շուրջը և մանավանդ այն հիմքերը, որ բերել են Հանձնաժողովի որոշ եզրակացություն:

### **ՏԱՌԵՐԻ ՉԵՎԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ**

Կուգեի մի քանի խոսք ասել նաև այս հարցի մասին:

Տառերի վայելչության խնդիրը ինձ զբաղեցնում էր վաղուց: Հետաքրքրությունս միայն տեսական չէ եղել: Գործնական քայլեր էր արված, և փայփայած ծրագիրս մարմնանալու վրա էր, երբ **քաղաքական** հորիզոնները մթագնեցին, և իմ գործս գնաց անհայտություն:

**Ողբացյալ բարեկամս**, հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանցն էր համակիր և անձնվեր աշխատակիցս: Նոր տառերն արդեն պատրաստ էին և հանձնված մայրաքաղաքի (4) ձուլարաններից մեկին՝ մայրեր կտրելու համար: Մի բարի մարդ հանձնառու էր եղել հոգալու բոլոր ծախսերը և անմիջապես վճարել էր մոտ ութ հազար ռուբլի առհավատչեք:

Տառերի մեծագույն մասը արդեն ձուլված էր: Բոլոր ջանքերն իզուր անցան:

Ի՞նչ էր իմ հայացքը տառերի ձևափոխության մասին: Մեր գրերի գլխավոր թերությունը, եվրոպականի հետ համեմատած, այն է, որ բավականին մարմնեղ չեն. փոքր իրան ունեն և երկայն վերջավորություններ:

Հին գիրը, որ անվանում ենք երկաթագիր, այլ նկարագիր ուներ: Հույն և լատին տպագիրը շատ ավելի հարազատ է իր երկաթագրին, քան մեր բոլորգիրը (որ և մեր տպագիրն է)՝ մեր երկաթագրին: Էա-



կան զանազանությունն այն է, որ լատին և հույն գրերը՝ հին թե նոր, ընդհանուր առմամբ ամփոփվում են երկու զուգահեռ տողերի մեջ: Միայն քանի մը տառեր դուրս են գալիս տողից վեր կամ վար:

Հակառակ ոճն ունի արաբական գիրը, որ շարվում է մի տողի վերա: Հայերեն տառերը բռնում են միջին տեղը. ո՛չ գեր են ինչպես լատին և հույնը, ո՛չ նիհար և վտիտ արաբականի նման, այլ միջին իրանով և երկար ոտ ու ձեռով տառեր են: Այսպես՝

հույներ՝	ΜΑΚΡΟΒΙΩΤΑΙΟΣ	μακροβιώτατος
լատիներ՝	LIBERTAS	libertas
հայեր՝	ԲԱՐԵԿԱՄ	բարեկամ
արաբներ՝	بركعة مسلمة	բրեկե մսալ

Մեր հին բոլորգիրը շատ ավելի մարմնեղ էր և ավելի մոտ լատինական ոճին, քան հետագա դարերի գիրը: Ձեռագիրների համեմատությունն այն տպավորությունն է թողել վրաս, որ Արևելյան Հայաստանի, մասնավորապես Այրարատյան վանքերի գիրը զգալի զանազանություն ուներ Կիլիկյան գրությունից: Արևելյան տառերը **գեր** են և **խոշոր, ոլորուն** գծերով, մինչդեռ Կիլիկյան ձեռագիրները սիրում են ընդհանրապես **փոքրադիր** և **ուղղանկյուն** տառեր:

Ափսոս, որ ձեռքիս տակ չունեմ գեթ Գարեգին վարդապետի հրատարակած նմուշները (5), որ օրինակներով պարզեմ միտքս: Գուցե հետևյալ փորձը մի թեթև հասկացողություն տա շեշտած տարբերության մասին:

Արևելյան գիր՝	Վրատք հատր եւ որ- գեւոյ եւ հոգւոյն սրբոյ
Կիլիկյան՝	Վրատք հատր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ամէն

Այս մանր բոլորգրից զարգանում է հետագայում նոտրգիրը, անշուշտ, մուսուլման գրի ազդեցության տակ՝

Վառք հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ամէն.

Հայ անդրանիկ տպագիր տառերը, որ կտրվեցին Եվրոպայում, թվում է, թե ավելի մոտ էին Արևելյան բոլորգրին: Մխիթարյան տպարանները գերադասություն տվին Կիլիկյան ոճին և ժողովրդակա-նացրին:

Արդ գոնե իմ ծրագրած ձևափոխությունը մոտենում էր Արևելյան բոլորգրի ոճին, մինչ այսօրվա ընդունված տպագիրը հավատարիմ է Կիլիկյան ոճին:

Մեծացնելով տառերի իրանը՝ մեծանում է նաև նրանց ծավալը, որ ցանկալի չէ: Ամբողջ դժվարությունը կայանում է նրանում, որ տառե-րը բարեփոխել այնպես, որ այս ներհակ պահանջներին զոհացում տա խոշոր իրանով, բայց ոչ մեծ ծավալով և հավատարիմ ավանդա-կան գծագրության:

Նկարիչ Վ. Սուրենյանցին տրված էին հետևյալ հրահանգները, որոնցով պիտի առաջնորդվեր նոր տառեր գծելու համար:

1. Նախ տառերը պիտի լինեն ուղղաձիգ, մման եվրոպականին և ոչ թեք, ինչպես ընդունված է մեզանում, որ ցանկալի չէ ամենից առաջ աչքի առողջապահ տեսակետից:

2. Տառերը պետք է լինեն փորավոր, մարմնեղ, բայց կարճ պոչե-րով:

3. Գծերը՝ նուրբ և բաց, մման եվրոպական տպագրին, և ոչ սև, հաստ, ինչպես ընդունված է մեզանում:

4. Գծերը պետք է միանան ոչ ուղղանկյունով և ոչ կամարով, այլ միայն կոր անցումով:

Այսինքն ոչ՝ ա ո ե ղ

և ոչ կլոր՝ ա ո ե ղ

ալ միայն՝ ա ո ե ղ

5. Տառերի ծավալը և բռնած տեղը աշխատելու է, որ հավասար լինին, ուստի առանձին հոգ տանելու՝ վ, գ, խ, դ, պ, ա և նման լայնանիստ տառերի գծագրությունը բարեփոխելու, առանց վնասելու դրանց ավանդական պատկերին:

Այսպես՝ ե բ ր ո ո ւ  
վ ա վ տ ի

Այս պահանջներից շատերը նախատեսված են Արամյան և Այտրնյան կոչված նոր (moderne) տառերի գծագրության մեջ: Բայց սրանց թերությունն այն է, որ շղագիր բնավորություն ունին (курсив) իրենց մազային գծերով: Նաև տառերի ձևը բավականին գեղեցիկ չէ:

Հանգուցյալ Վ. Մուրենյանցը ամբողջ տարի աշխատեց այս գործի վերա, բազմաթիվ տախտակներ պատրաստեց մեծ դիրքով և հետո լուսանկարում էր ավելի փոքր և պեսպես մեծությամբ: Փորձերը քննում էինք միասին և մտցնում ուղղումներ:

Վերջապես հաջողեցինք. նորակերտ տառերը բոլոր եղած պահանջների լիակատար մարմնացումն էին: Վարդգեսի տաղանդն այն հատկությունն ուներ, որ ողողված էր անհուն սիրով և կարոտով դեպի ամեն ինչ, որ հայրենի էր: Շնորհիվ այս հանգամանքի նա, իրոք, հրաշալի գործ արեց: Ինչպես ասացի, հերթն արդեն ճուլարանին էր,

և հույս ունեինք, որ շուտով ծրագրած հրատարակչական մեծ ձեռնարկը իրագործել կսկսենք:

Պատրաստել էինք «**Հազարան բլբուլը**». բնագիրը ինչ-ինչ մշակման ենթարկել, սրբագրել լեզվի և բովանդակության կողմից՝ հարմարեցնելով մանկական ընթերցանության: Հանգուցյալը պատրաստել էր զարդանկարներ, որոնք ընդհանուր ցուցահանդեսում անգամ գովեստի արժանացան:

«Հազարան բլբուլը»՝ նորակերտ տառերով, գեղարվեստական անմնան պատկերներով, պիտի լիներ մեր հրատարակության երախայրիքը: «Բայց, ավստ՛ս, որ երազ էր»: Կա մի անողորք բան, որ ծանրանում է մեր բոլոր տենչանքների և գործերի վերա, հետապնդում և ձախողում թե՛ մեծը, թե՛ փոքրը, կարևորը, թե՛ չնչինը՝ թողնելով անփարատելի կսկիծ:

**Ն. Ադոնց**

### **83. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՈՍԿՅԱՆԻՆ**

Պատվական Հայր Համազասպ,

Բարեկամ մարդու խնդրանք կգրեմ Ձեզ իմանալու՝ արդյոք չէի՞ք կարող գտնել մի օրինակ Lukácsi «Historia Armenorum Transylvaniae», որ լույս տեսած է 1859 թվին (1): Կհուսամ, որ թերևս Ձեր գրադարանի մեջ ավելորդ օրինակ ունենաք վաճառելու և կամ փոխարենը նոր գիրք ստանալու պայմանով: Կխնդրեի նաև դրկել «Ազգային մատենա[աղարան]»-ի] 92-րդ թիվը՝ Ալիևյանի աշխատությունը (2): Արժեքը երկու գրքերի անմիջապես կորկվի Ձեզ: Իսկ եթե առաջին գրքի ծախս օրինակ չգտնվի, արդյո՞ք վանքի գրադարանը կարող է առժամանակ փոխ տալ՝ օգտվելու համար, որ և շուտով հետ կորկվի: Գերադասելի է... (3) գնել նոր օրինակ:

Ամիսներ առաջ հողված դրկեցի պատվական «Հանդէսիդ», բայց ցայժմ ո՛չ «Հ[անդէս] ա[մսօրեայ]» ստացա և ո՛չ էլ հողվածիս ինչ լինելն իմացա (4):

Բայց և այնպէս Ձեր անուշադրության փոխարեն ընդունեցեք հարգալիր բարեկամությանս հավաստիքը լրիվ չափով՝ հանդերձ ջերմ ողջունիվ նաև արգո միաբանակից եղբայրներիդ:

Միշտ անձնվեր՝  
**Ն. Ադունց**

*7 մայիսի, [1927 թ.]*  
15 Rue, Henri Martin, Paris 16-e

**84. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

*[1927], Փարիզ*  
Հասցես՝ 15 Rue, Henri Martin, Paris XVI-e

Միրելի՛ Հ[այր] Գարեգին,

Այնպիսի ժամանակներ ենք ապրում, որ լռությունն ավելի շատ բան է ասում, քան պերճախոս ճառերը: Ուստի պիտի ներողամիտ լինես, որ ոչինչ չեմ գրում, թեև հեռվեն հետևել և հետևում եմ կյանքիդ մեծ ու մանր դարձվածքներին:

Այժմ գրում եմ քեզ մի ձեռարկի առթիվ, որ մեզ բոլորիս համար միակ մխիթարականն է այժմ, և այդպէս է եղել միշտ, և որը վերաբերում է մի գրավոր օրգանի հրատարակության:

Ա. Ղուկասյանը համաձայն է և հոժար իր սեփական տպարանում հնարավորություն տալ այդպիսի ձեռնարկի իրագործման: Հարկավ ինձ և քեզ և մեզ նմաններին ցանկալի էր գուտ գիտական մի հանդես՝ մեր անտիպ գրվածները լույս աշխարհի հանելու, էլ չեմ ասում տակավին գրելիքների մասին: Բայց շատերը գտնում են, որ ավելի կենսունակ կլինի գրական-գիտական բնավորության հանդեսը: Համենայն

դեպս, հրատարակչին խրախուսելու և գործին ավելի ջերմ կաշեղու փափագով կուզեի հայագիտական-գրական և հասարակական բովանդակությամբ մի քանի համար ի լույս ածել: Այստեղ եղած ուժերի երկերը հրապարակ հանելու և նրանց գոնե այդ մխիթարությունը տալու ցանկությունս առաջնակարգ մղան է ինձ համար: Ճշմարիտ է, որ այստեղ եղածներն ևս հնարավորություն չունեն, մանավանդ գիտական աշխատությունները հրատարակելու, բայց մի հույս միշտ վառ է մնում, որ երբևիցե կարող են հրատարակել: Բայց այդպիսիների համար այդտեղ այդ հույսը չկա: Երբեմն նամակներ են գալիս այդ բովանդակությամբ, և բնական է, որ երկրի ուշն ու կարողությունն այլ կողմն է դարձած:

Արդ խնդրեմ՝ ինքդ և շուրջդ եղած բան ի բուն մարդկանց աշխատեք դրկել այստեղ՝ տպելու գոնե այն, ինչ որ չեք կարող այդտեղ տպագրելու (1):

Ցավալի է, որ հայագիտական կենտրոնները կամ չբացան և կամ, եթե մնում են, շատ թուլացել են: Վիեննացիք զանգատվում են, որ միջոց չունեն, իսկ Վենետիկ տգիտություն է: Ուր է եթե ճեմարանը կարողանայիք բաց անել և նորա շուրջը խմբել և կենդանացնել մարող ավանդությունները: Մինչ այն սկսենք այստեղ, տեղափոխվելը դժվար չի լինի աջող պարագային: Ուժերը՝ ցան և ցրիվ, կուսակցական կրքերի գերի, իզուր և աննպատակ վատնում են և հրապարակում ամեն կարգի դատարկություն՝ սկսած գրականից:

Ի՞նչ եղավ մինեստյուրներիդ ժողովածուն, արդյո՞ք հրատարակվում է: Եթե չի կորել, խնդրեմ, ուղարկիր, կարծում եմ՝ Աբրահամը կհոժարե այդպիսի մի մնայուն երկը և հավիտենական գոհարի հրատարակության պատիվը իրեն վրա առնել:

Բարևի՛ր միաբաններից մյուս անդամներին՝ սկսած Մեսրոպից (2): Հուսով եմ, որ խոստացյալ օգնությունը, որ իմ գիտենալով դրկվում է Չեզ, փոքրիշատե թեթևացնում է վանքի դրությունը:

Միբով՝ քո **Ն. Ադոնց**

## 85. «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ (1),

Երեկ պ[արոն] Բերբերյանից (2) միայն ստացա խմբագրությանդ վերջին կարտը, որ կհայտնեք, որ ստացել եք հողվածս (3) և կհարցնեք Դիոնիսիոս [Թրակացու] թարգմանության մասին (4):

Դիոնիսիոսի ռուս բնագիրը չկար հոս և պետք կար ապսպրել Պետերբուրգից: Հազիվ նորերս ստացվեց շնորհիվ Մառի: Պ[արոն] Բերբերյանը կարծեմ պ[արոն] Փաշայանի (5) հետ նախապես պիտի ուղղե թարգմանությունը, հետո գուցե պետք լինի աչքի անցնելու:

Չեմ հասկանում՝ ինչո՞ւ գրություններդ պ[արոն] Բերբերյանի միջոցով եք դրկում: Մի՞թե խնամակալի կամ միջնորդի պետք կա:

Հասցես խմբագրությանդ հայտնի է:

Հարգանքով՝ **Ն. Ադոնց**

17 Rue, Massenet 15

Paris 16-e

*12 հունվարի, [1928 թ.]*

## 86. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Միրելի՛ պ. Չոպանյան,

Առանց ամբողջ գրության ծանոթանալու և հեղինակի ոճի և լեզվին հատկությանց մտադիր լինելու (1)՝ դժվար է դրական լուծում տալ խնդրական բառիդ: Այս վերապահությամբ կառաջարկեմ Ձերդ ուշադրության մի մեկնություն, որ առաջին ընթերցման գլուխս եկավ:

Հավանական է, որ **յագարփուշտ** նախ երկու բառ է: Առաջինը թռչունի անուն է, որ այլապես կոչվում է կամ գրվում **արար** (2): Տար-

բերությունը բարբառային է՝ արևմտյան և արևելյան, կամ, թերևս, հին և նոր (ինչպես՝ **թագավոր** և **թաքավոր**, **ագի** և **արի** և այլն):

Իսկ թե ի՞նչ է **աքար** թռչունը եվրոպական լեզուներով, այս բուսական չեմ կարող ասել՝ առանց ստուգելու բառարանների միջոցով (3): Ինչ կվերաբերի **փուշտ** բառին, կարծեմ՝ Դուք մոտեցած եք ճշմարտության, միայն թե հղելու է ավելի **բուշտ**, **բշտիկ** (հավանորեն մերձ փամ-փուշտին)՝ **ուռուցք**, **ուռած** նշանակությամբ:

Նույն հարաբերությունն է հնչական, ինչ որ (յ)**ագար** և **աքար**, **բուշտ/փուշտ**՝ բարբառային կամ հին և նոր արտասանությամբ և գրությամբ:

Այս մեկնությամբ **գայլագռավը** կուշտ ուտելուց հետո պարծենում է, որ դարձել է **աքար փուշտ**՝ (հ)**ագար բուշտ**՝ «**ուռած ագար թռչուն**»։ Երևում է՝ **ագար** թե **աքար** մեծ և գեր թռչուն է (4):

Ցանկան աջողություն գրական աշխարհում:

Սիրով՝ Ձերդ **Ն. Ադոնց**

*18 հուլիսի, [թվականը նշված չէ] (5)*

15 Rue, Massenet

## **87. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

*26 նոյեմբերի, 1928 թ.*

*Փարիզ*

15 Rue

Massenet 15, Paris 16-e

Սիրելի՛ Սրբազան,

Ուրախությամբ ստացա նոր աշխատությունդ (1), որ և շնորհավորում եմ և ողջունում: Շատ շնորհակալ եմ, որ չես մոռացել ինձ մոռա-



ցության այս չար դարում: Աշնան տերևների պես թափառում ենք՝ առանց ցանկության և հաճույքի:

Աչքի անցրի աշխատությունը: Խոսք չունիմ գովելու և՛ եռանդը, և՛ մանրակրկիտ ու կարևոր աշխատությունը: Հույս ունեմ, որ մատենախոսության պես մի հաշիվ տալ կարող կլինեմ (2): Գիտես, որ այստեղ ևս և՛ ամեն տեղ, և՛ ամեն ժամանակ մեր բանասիրությունը ամենից աննախանձն է օրգանների տեսակետից ևս: Մխիթարյանների մոտ գրելու ախորժակս փակվել է: Արդյո՞ք ձեռքդ ընկավ Մաշտոցին մվիրած գործս:

Գրելու և՛ շատ բան կա, և՛ ոչինչ չկա:

Սպասում էինք, որ կգաս որպես թեմակալ: Չգիտեմ՝ ինչո՞ւ ես քաշքշում գալի: Արդեն ուշացել ես, դպրոցական կարևոր խնդիրը կար մեջտեղ: Ափսո՛ս, որ այլ վախճան ունեցավ: Եթե այստեղ լինեիր, գիտեմ, որ գործը ուրիշ կերպ պիտի վճռվեր: Բայց և այնպես աշխատիր հաջողացնել գալի: Որքան և ծանր լինի հայ ժողովրդի դրությունը այդտեղ, դարձյալ հայրենիք է, որ իր էությանը լցնում է շատ պակաս և ամենից առաջ կորուստը, որին ենթարկված են հայրենիքից դուրս հաժող ահագին բազմությունները: Հերոսական միջոցներ են հարկավոր՝ վերահաս ձուլումից և փչանալուց նրանց փրկելու...

Չգիտեմ՝ ում ես պատահում ծանոթներիցս, բարևի՛ր բոլորին: Երևանից ոչ ոք գրելու տրամադրություն չունի, ես էլ, ասենք, շատ չեմ գրում, բայց ինչ որ գրել եմ, անպատասխան է մնացել:

Մի անգամ ևս շնորհակալություն գրքիդ համար:

Միրով՝ քո **Ն. Ադունց**

## 88. ԱՐՇԱԿ ԱՆՅՐԱՍՏՅԱՆԻՆ

17 սպրիլի, 1929 թ.

Փարիզ

Մեծարգո՛ հայրենակից,

Ինչպես հավանորեն տեղեկացած եք թերթերեն և ինչպես պիտի տեսնեք ներփակ շրջաբերականեն, որոշված է առաջիկա աշնան հանդիսավորապես տոնել մեր ազգային վաստակավոր մեծ գրագետ Ավետիս Ահարոնյանի գրական գործունեության քառասնամյակը (1) և այդ առթիվ հիմնել գրական ֆոնդ մը իր անունին:

Հոբելյանական կեդրոնական հանձնաժողովի անունով և նույնին հատուկ հանձնարարությամբ ներկայումս պատիվն ունինք Ձեզ դիմելու՝ խնդրելով, որ հաճիք ընդունիլ Անգլիո մեջ կազմվելիք Հոբելյանական հանձնաժողովին:

Ձեզ հետ միասին Անգլիո հանձնաժողովը կազմելու հրավիրված են՝

Տ. Տ. Ա. Աբրահամյան, Ճ. Ամասյան, Ս. Էտկար, Ս. Թովալյան, Ն. Կյուլպենկյան, Ս. Մ. Կրեկորի, Ս. Ճըրճըրյան, Ժ. Ա. Մալքով, Կ. Միքայել, Ա. Հակոբյան, Յ. Շահինյան, Ա. Ունճյան, Ա. Պոտիկյան, Է. Պենլյան, Ա. Պեկյան, Ա. Բաֆֆի, Ա. Սաֆրաստյան, Բժ. Տինճյան, Կ. Տիլպեր, Մ. Քեշիշյան, Հ. Քեհյայան, Ն. Քըլճըք:

Ծանոթ Ձեր հայրենասիրական բարձր զգացումներուն՝ մենք վստահ ենք, որ Դուք սիրահոժար պիտի ընդունիք մեր հրավերը՝ Ձեր աջակցության թանկագին բաժինը բերելու շինարարական այս գեղեցիկ ձեռնարկին, որուն կմասնակցին ամեն հոսանքի և դավանանքի պատկանող ազգայիններ:

Այդ հույսով կխնդրենք դարձյալ, որ բարի ըլլաք՝ նախաձեռնությունն ստանձնելու ի մի բերելու վերև հիշված անձնավորությունները, որոնց յուրաքանչյուրին առանձին դիմում կատարված է արդեն մեր կողմէ՝ կազմելու համար Ավետիս Ահարոնյանի Անգլիո հանձնաժողովը:

Հեռավորության և տեղվույդ պայմաններու անգիտակցության հետևանքով, եթե մոռացումներ եղած են մեր կողմե, այդ մասին Ձեր ներողամտությունը կխնդրենք և կճանչնանք բացարձակ իրավունք Հանձնաժողովիդ պետք եղած լրացումներն ու հավելումները կատարելու իր կողմին վրա:

Սպասելով Ձեր պատասխանին՝ ընդունեցե՛ք, Մեծարգո՛ հայրենակից, մեր խորին հարգանաց հավաստիքը:

[Ավետիս Ահարոնյանի գրական քառասնամյա գործունեության  
տոնակատարության]

Վ. Հոբելյանական գործադիր մարմնի  
ատենապետ՝ **Ն. Ադոնց**

## **89. «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

### **ԽՈՍՔ ԱՊՐԻԼԻ 11(24)-Ի ՍԳԱՀԱՆԳԵՍԻՆ (1)**

Տասնչորս տարիներու շարքը անգոր էր մոռցնելու անցած օրերու հիշատակը: Համաշխարհային պատերազմի ատեն մեծ ու փոքր պետությունները երկու ճակատի բաժնված էին: Մեր արյունալի դատն ալ նժարին մեջ դրված էր:

Մենք ըրինք ամեն ինչ՝ այդ դատը շահելու համար:

Մեծ դաշնակիցներն ամեն տարի կտոնեն իրենց հաղթանակը, անոնք միշտ ծաղիկներով կգարդարեն իրենց մահատակներու գերեզմանը, իսկ մե՞նք: Մենք ամեն տարի կհավաքվինք ոչ թե մեր հաղթանակը տոնելու, այլ մեր պարտությունը սգալու:

Ես կոգեկոչեմ մեր անթաղ մեռելներու ուրվականները, որպեսզի տեսնեմ, թե ինչպես հարգալի կտոնենք իրենց հիշատակը:

Մեր գոհերը ջարդվեցան անոր համար, որ գերադասեցին ապրել իբրև Հայ և ոչ թե իբրև ստրուկ: Հերոսն այն է, որ կարհամարհի մահը հանուն որևիցե բարձր գաղափարի: Մեր ապրիլյան մահատակները

կերթան միանալու Հայոց պատմության մյուս անհամար գոհերուն, որոնք իրենց արյունը տվին՝ պահպանելու համար հայությունը և անոր քաղաքակրթությունը: Գաղութներու մեջ մեր պարտականությունն է պահպանել մեր գոյությունը: Չկա հաղթանակ՝ առանց պարտության: Երբ ծառի մը ճյուղերը կտրեն, անիկա թարմ ծիլերը կարձակե: Ձեզմե յուրաքանչյուրը պետք է կատարե իր պարտականությունը՝ հանուն ազատագրության:

**Ն. Ադունց**

*[1929, 30 ապրիլի]*

### **90. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

Սիրելի՛ Չոպանյան,

Ստացա Ձերդ պատվական հատորը (1), որի համար կհայտնեմ խորին շնորհակալությունս: Կհուսամ, որ հետևյալ հատորը կբերե մեզ հայրենների ամբողջական հավաքածուն (2):

Ողջույն, Ձերդ՝ **Ն. Ադունց**

*[1929 թ.]*

### **91. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

*9 հունիսի, 1929 թ.*

Փարիզ

Սիրելի՛ Սրբազան,

Եթե հիշում ես, Պոլիս Սաքըզ անուն պաշտոնյա կար պալատական (1), սրա որդին՝ Արմենակ Սաքըզյան (2), պարսպում է արևելյան մանրանկարչության պատմությամբ: Նորերս հրատարակեց

պարսիկ մանրանկարներին նվիրած մի խոշոր աշխատություն՝ 400 ֆ. արժողությամբ: Ասում են, որ գրեթե ցրված է ամբողջապես:

Նրան հասկացնել տվի, որ Սրբազանությանը մի օրինակ դրկել հաճելի կլիներ և խիստ պիտանի մեր նույնանման արվեստի ուսումնասիրության համար: Առ այժմ հետևանք չկա, թվում է, թե գլխավորապես այն պատճառով, որ համարները պատկանում են հրատարակչական տան: Տեսնենք՝ ինչպե՞ս կվերջանա:

Նորերս մոտս էր այս պարոնը, ցույց տվի վերջին աշխատությունը (3), պարզեցի անելիքը և այլն: Ցանկություն հայտնեց մի օրինակ ունենալ՝ պատրաստ գնելու: Լավ կլիներ, եթե կարենայիր քանի մը օրինակ դրկել հոս՝ ի վաճառահանելու, թերևս փոխարեն կարելի լինի պարսկական մանրանկարչության վերաբերյալ երկը դրկել:

Նամակս ստանալուն պես խնդրեմ գոնե մի օրինակ դրկիր հիշածս պարոնի համար:

Հասցես փոխված է՝ 8 Rue Yacques Mawas, Paris 15-e:

Կարոտով և ողջույնիվ՝ **Ն. Ադոնց**

[Հ. Գ.] Այստեղ գրական ակումբ եմ հիմնել, ուր մի հաշիվ տվի գրքիդ մասին, բայց տակավին չեմ հրատարակել (4):

*Փարիզ*

*1929 թ.*

## **92. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻՒԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ (1)**

Ա. Ահարոնյանի Հոբելյանական կեղ[րոնական] հանձնաժողովի գործադիր մարմինն այսու կհայտնե հայ հասարակության և հորելյանական հանձնաժողովներուն, որ որոշված է Ավետիս Ահարոնյանի գրական քառասնամյա գործունեության հոբելյանը հանդիսավորապես տոնել առաջիկա ապրիլի 6-ին՝ կիրակի օրը, Փարիզի մեջ (2):

Այս առիթով հոբելյանական գործադիր մարմինը կխնդրե, որ գանազան շրջաններու մեջ կազմված և կամ տակավին կազմելի տեղա-

կան հանձնաժողովները, ինչպես և այն անձնավորությունները, որոնք հոժարություն են հայտնաձ գործել անհատաբար կամ անդամակցիլ իրենց տեղվայն մասնաժողովին, հաճին փութացնել կազմակերպչական աշխատանքներս և սկսել իրենց գործունեությունը՝ հետամուտ լինելով գլուխ հանելու նվիրատվություններու ժողովման գործը:

Կհուսանք, որ այն շրջաններուն մեջ, ուր կեդրոնական հանձնաժողովը դիմում չէ կատարած մոռացությամբ կամ անգիտությամբ, առանձին անհատներ կամ տեղական մարմիններ իրենք կստանձնեն նախաձեռնությունը՝ կազմելու իրենց տեղական հանձնաժողովը:

Կասկած չունինք, որ հոբ[ելյանական] հանձնաժողովները ոչ մի ջանք չպիտի խնայեն և ամեն միջոց պիտի գործադրեն՝ ապահովելու լայն հասարակական խավերու մասնակցությունը՝ բարոյական և նյութական, որպեսզի երախտագիտական պարտքը մեծագույն չափով կատարած ըլլանք առ վաստակավոր Հոբելյարն (3) և անոր անվամբ կազմելի գրական հիմնադրամը:

Բոլոր գրություններն ուղղել նախագահ պրոֆ. Ն. Ադոնցին՝ հետևյալ հասցեով՝ Prof. **N. Adontz**, 8 Rue Yacques, Paris (15), իսկ դրամական բոլոր առաքումները ուղղել զանձապահ պ[արոն] Արմ. Համբարձումյանի (4) անունին՝ հետևյալ հասցեով՝ **Arm. Hambartzoumian**, 53 Foubourg, Montamartre, Paris (9-e):

Հոբելյանական գործադիր մարմնո ատենապետ՝  
**Ն. Ադոնց**

*2 նոյեմբերի, 1929, Փարիզ*

### 93. ԱՆՀԱՅՏ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

*Փարիզ, [1929]*

Սիրելի՛ բարեկամս (1),

...Մինչև հիմա մեր վիպական գրականությունը եղած է ավելի շատ հրապարակագրություն: Այդ, իհարկե, պայմաններու արդյունք

է: Մեր գրողները կյանքը նկարագրած են ոչ թե այնպես, ինչպես որ կա, այլ ինչպես կուզեին, որ ըլլար: Համաստեղի (2) տեղը գրականության մեջ, եթե շատ խորը մտնենք, Աբովյանի շարքին կրնանք դասել: Թե՛ Աբովյան և թե՛ Պռոշյան մը նկարագրած են մեր գյուղը: Համաստեղ առաջին անգամ է, որ կկանգնի իսկական իրական պատվանդանի վրա, ուր և պետք է կառուցել նոր շենքը (3):

**94. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԻԹԱՐՅԱՆ] ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**

Պատվական Հայր (1),  
Խնդրեմ՝ բարի լինեք ղրկելու ինձ հետևյալ գրքերը՝ իրենց հաշվով.

- |                     |   |
|---------------------|---|
| <b>Գալենքեարյան</b> | 1. Սարգիս եպս. Սարաֆյան,<br>2. Երկու հայ պատիրարք և 10 եպիս[կոպոսներ] (2),  |
| <b>Պալճյան</b>      | 3. Աթոռ Ս. Պետրոսի՝ 1853 (3),<br>4. Պատմություն Կաթողիկե վարդապետության՝ 1878 (4),  |
| <b>Ակինյան</b>      | «Ազգային Մատենադարան»՝ 59, 60, 65, 71-րդ համարները, որոնք են՝<br>5. Չաքարիա եպ[իսկոպոս] Գնունյանց (5),<br>6. Կյուրիոն կաթողիկոս (6),<br>7. Միջնադարյան ազգ[ային] տաղաչափություն և<br>8. Հովնաթան Նաղաշ (7): |

Մեծապես պիտի պարտավորեք ինձ, եթե բարի լուր տայիք Հ[այր] Ակինյանի մասին՝ հակառակ լրագրական լուրերի (8):

Ողջույնով բոլոր միաբանությանդ:

Հասցես՝ 15 Rue, Massenet, 9

Paris, 16-e

**N. Adontz**

[1929 թ.]

## 95. «ԱՊԱԳԱՅ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

### Ձույգ հարյուրամյակ (1)

Պարիսի Հայ գրական միությունը պատիվ է համարում հիշեցնել հայ հասարակության, որ հոկտեմբերի 27-ին լրանում է Միքայել Նալբանդյանի և նոյեմբերի 8-ին Գամառ Քաթիպայի (Ռ. Պատկանյան) ծննդյան հարյուրամյակը:

Հայությունը պարտաճանաչ չէր լինի, եթե մոռացության տար այդ մվիրական օրերը: Երկուսն էլ՝ Նալբանդյան և Գամառ-Քաթիպա, ոգեշունչ երգիչներ են մեր երեկվա երազների, երազներ, որ տակավին կենդանի են, [նրանք] մեր նոր և վերածնյալ կյանքի առաջատար կարապետներն են: Երկուսն էլ գաղութահայ զավակներ են՝ ծնված Նոր Նախիջևանում, անգուզական դեմքեր, որ մանավանդ ներկա պայմաններում խրախուսիչ օրինակներ են տարաշխարհիկ հայության համար, մշտավառ ջահեր՝ նրա գիտակցությունն ու գործունեությունը պահելու և առաջնորդելու հայրենի ուղիների վրա:

Հայ գրական միությունն անխաձեռնել է տոնել երկու մեծ հայրենասերների երևման հարյուրամյա տարեդարձը՝ հատուկ և հանդիսավոր երեկույթ մվիրելով նրանց կյանքին և գործերին: Եվ այսու հրավիրում է բոլոր նրանց, որոնց համար թանկ են Նալբանդյանի և Գամառ-Քաթիպայի հայրենաշունչ ավանդները՝ գալ հարգելու նրանց հիշատակը:

Երեկույթը տեղի կունենա հոկտեմբերի 31-ին՝ Sociétés Savantes-ի շենքին մեջ երեկոյան ժամը 8:30-ին:



Հայ գրական միության վարչության կողմից՝

**Ն. Ադունց**

*23 հոկտեմբերի, [1930 թ.]*

### **96. «ԱՆԱՀԻՏԻ» ԱՐԳՈ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

Սիրելի՛ պ. խմբագիր,

Ուղարկելով Ձեզ ներփակ գրությունս (1)՝ խնդրեմ մի անկյուն շնորհեք պատվական հանդեսիդ մեջ և հաճեք ներկա գտնվել Մ. Նալբանդյանի և Գամառ-Քաթիպայի հիշատակին նվիրված երեկույթին: Հարգալիր ողջույններով՝

Հայ գրական միության վարչության կողմից՝

**Ն. Ադունց**

*23 հոկտեմբերի, [1930 թ.]*

### **97. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

*Փարիզ, 17 նոյեմբերի, [1930 թ.]*

Սիրելի՛ Արտաշես,

Դրկում եմ պատասխան-գրությունս Հ[այր] Ղազիկյանի դեմ (1):

Երկար է, բայց կտեսնես, որ այլակերպ չէր կարելի: Այնքան հարցեր է շոշափում, որ թողնել անպատասխան նշանակում է խրախուսել ամբարտավանությունը: Արդեն մամուլը այնքան գովեստներ է շռայլել այդ «հայկաբան»-ին, որ փչացրել է:

Շատ ուշ իմացա Հ[այր] Ղազիկյանի հողվածի մասին (2): «Բազմավեպ»-ի այդ համարը ինձ չեն ուղարկել, երևի այլևս չպիտի ուղարկեն: Մխիթարյանները վարժ են անհաշիվ գովեստների, բայց ոչ

քննադատության: Դիպվածով Ա. Ահարոնյանից իմացա: Պատվիրակության համարը՝ «Բազմավեպ»-ի, ինձ դրկեցին, և ահա պատասխանը:

Երևի կտպես օրագրում (3): Բայց լավ կլիներ, եթե չզլանայիր մի անկյուն տալ նաև ամսագրում, որ անհետ չկորչեր: Բնագրային ուղղումներ կան: Օրագրում բոլորը չեն կարդում: Լավ կանես նաև խմբագրական ծանոթություն դնես այն իմաստով, որ ինչպես «Հայրենիք»-ը արտատպեց «Բազմավեպ»-ի հողվածը, այնպես «Բազմավեպ»-ը պարտ կհամարե նույնն անել մեր աշխատակցի ներկա պատասխանի վերաբերմամբ, այսինքն՝ կարտատպե, որպեսզի հարցը անաչառորեն պարզվի: Անպատճառ դիր այսպիսի ծանոթություն:

Ինդրեմ՝ հետևի սրբագրության:

Ողջույն քեզ և կնոջդ:

Սիրով՝ Ն. Ադոնց

## 98. «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ջարմանքով կարդացի այն անհեթեթությունները, որ վերագրվում են ինձ (1): Հողվածագիրը հիմնել է իր դատողությունները և վճիռները այն հաշվետվության վրա, որ տպված է [«Յառաջ»-ի] ուրբաթ օրվա համարի մեջ՝ Ս. Բ. ստորագրությամբ (2), և որի մեջ ճիշտ չէ արձանագրած Պեշիկթաշյանի մասին հայտնած կարծիքս (3):

Դասախոս Օ[հան] Կարոն (4) ներկայացրեց մեզ Պեշիկթաշյանին երեք կողմից՝ որպես 1) բանաստեղծ, 2) հասարակական գործիչ և 3) տոսկ մարդ: Նույն դասախոսը բնորոշեց Պեշիկթաշյանի գրական երկերը իբրև կեղծ-դասական՝ գրված գրաբարով և մասամբ ժամանակի՝ գրված աշխարհիկ լեզվով:

Իբրև հասարակական գործիչ՝ Պեշիկթաշյան, դարձյալ դասախոսի կարծիքով, հայրենասեր էր, կրոնական պատմեշից դուրս և ընդունակ խոսելու առաջին անգամ «զնդակի և վառողի մասին»: Եվ

վերջապես Պեշիկթաշլյան՝ իբրև անհատ, առաքինի էր, բարեկիրթ, համեստ՝ երկչոտության չափ, գրեթե կանացի բնավորությամբ: Այդ բանախոսության առթիվ ես նախ ցանկություն հայտնեցի, որ հայության երկու մեծ հատվածներից մեկի գրական և հասարակական կյանքի և գործիչների մասին խոսելիս չմոռանալ մյուս հատվածը և միշտ զուգընթացաբար ուսումնասիրել:

Այդ պակասը նույն օրվա դասախոսության պարտք համարեցի լրացնել մի քանի խոսքով: Պեշիկթաշլյանը մշակում էր կեղծ դասական գրականություն և մոտենում ռոմանտիզմին, երբ արևելյան հայ գրականությունը տասնյակ տարիներ առաջ տվել էր Աբովյան: Դորպատի գերման հստակ ակունքից բերել էր նա ռոմանտիզմի ջուրը, բերել էր և գիտակցորեն արտադրել «Վերք Հայաստանի» վեպը:

Այս տեսակետից իր գրականությունը հետ է արևելահայ Աբովյանի գրականությունից:

Պեշիկթաշլյան՝ որպես հասարակական գործիչ, չի կարող համեմատվել իր ժամանակակից և հասակակից արևելահայ Միք. Նալբանդյանի հետ ո՛չ հասարակագիտական պարտաստությամբ և ո՛չ անհատական խառնվածքով: Նալբանդյան պայքարող էր և իբրև այդպիսին կարող է պատիվ բերել ամեն մի ազգի:

Պեշիկթաշլյան, ասում են, մեղմ և անուշ բնավորություն ուներ, բարեկիրթ և ամաչկոտ: Այս առթիվ նկատեցի, որ այս հատկությունները մասամբ վերագրվել են թերևս Մխիթարյան դպրոցին, այսինքն՝ վանական դաստիարակության, ինչպես և իր գրականությունը կրում է Մխիթարյան դրոշմ (5):

Նաև այն միտքը հայտնեցի, որ անցյալ դեմքեր տոնելը միմիայն երախտագիտական պարտ չպիտի համարել: Գրական մարդիկ իրենց գործերով նման են պողատու ծառերի: Ժամանակ առ ժամանակ պետք է թափ տալ և տեսնել՝ ինչ է մնում ծառի վրա և ինչ թափվում, վայր ընկնում որպես հնացած անճաշակելի միրգ՝ համաձայն հարափոփոխ գրական ճաշակների և պահանջների:

Արդ եթե ներկայումս թափահարենք Պեշիկթաշլյանի ծառը, շատ բան չի մնա ծառի վրա, մի քանիսը գուցե ընդմիջտ մնան, մյուսները և խոշորագույն մասը բաժին է Լեւոս գետի (6):

Եթե ուզենք չափի տակ առնել Պեշիկթաշլյան, պիտի խոստովանենք, որ ո՛չ գրական և ո՛չ հասարակական մարգում մեծություն չէ. մեծ բանաստեղծ լինելու համար պակասում էր դեպի երկինք տանող քները և երկրի վրա մնալու հանդգնությունը. չկար փոթորկող արյուն և ավյուն, մեծ գործիչ լինելու համար ջիղ չունեք, գայրանալու և հառաջ մղելու ձայնը չունեք: Ահա ինչու միջակություն էր: Այս ճշմարտությունն ավելի հարգի է, քան սուտ և պատիր գովասանքները (7):

**Ն. Ադոնց**

*1930 թ.*

## **99. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

*Փարիզ, 1 հունվար, [1931 թ.]*

Միրելի՛ Արտաշես,

Ստացա նամակդ հանդերձ բովանդակությամբ: Շնորհակալ եմ: Միայն չհասկացա՝ այս գումարը Հ[այր] Ղազիկյանի դեմ գրած հողավածիս համա՞ր էր, թե՞ ոչ (1): Այսպիսի ժամավաճառության համար քեզնից կրկնակի դրամ է պահանջելու:

Պոլսահայ մտավորականության գլուխը այլ կերպ է կազմված ոչ միայն լեզվական, այլև գրական և հասարակական խնդիրներում: Բա՛ քեզ ի՞նչ է եղել: Այնքա՛ն համալսարաններ ես ավարտել, այնքա՛ն լեզուներ սովորել և տակավին կարծում ես, որ աշխարհումս լեզու կա, որ ենթական պահանջե հայցական հողով: Դեռ զանազան նպարավաճառ հայագետների գովասանքներն ես տպում Ղազիկյանի հասցեին, որ իր ամբարտավան տգիտությամբ խայտառակություն բերեց հայ բանասիրության և Վեներտիկի միաբանության:

Հետո ի՞նչ իմաստ ունին լեզվական վեճերը, եթե որպես խմբագիր կարծում ես, որ ձիգ էջեր նվիրելով մի երկու բառի ուղղագրության՝ հնարավոր է նորեն հարցը թողնել հին վիճակի մեջ և գրել *չէգոք, ամէն*: Մի՞թե այսքան դժվար է ճշմարտությունը զատել ստությունից: Եթե խմբագրությունը ձեռնհաս չէ ընտրություն անելու, ինչո՞ւ ապա շարունակում եք սրբագրել իմ անձնական գրությունները՝ *չէգոք, ամէն*: Տգիտությունն այնքան համատարած է, որ ինձ ասացին, թե «Յուսաբեր»-ը (2) հայտարարել է, որ պիտի հետևի Ղազիկյանի ուղղագրության: Երջանի՛կ խմբագրություն: Ղազիկյանը ի՞նչ ուղղագրություն ունի, որ չլիներ «Առձեռն» բառագրքի մեջ:

Վերջին օրերս տկար եմ: Շնորհակալ եմ բարեմադրությանդ համար: Միայն չգիտեմ, թե պիտի կարողանամ շարունակել աշխատակցությունս նույն եռանդով: Ցանկամ հաջողություն և խնդրեմ ողջունիք կնոջդ:

Միշտ սիրով՝ **Ն. Ադոնց**

## 100. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ պ. Զոպանյան,

Զգիտեմ՝ ո՞ր պատահե՞նք, որ Ձեզ հանձնեմ հանձնելին: Թերևս Մատենադարանում (1) հանդիպե՞նք երեքշաբթի օրը կամ ավելի լավ՝ անկյան սրճարանում, ուր ուրիշ անգամ նստած խոսել ենք: Ժամը երեքի մոտերքը: Թե կարող եք, տեսնվե՞նք այնտեղ:

Հարգանքներով՝ **Ն. Ադոնց**

*25 հունվարի, 1931*

Cafe-ի անունը մոռացել եմ, Delasert փողոցի վերը՝ Vlase de centrale հրապարակի անկյունը:

## 101. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ

21 հունիսի, 1931

Փարիզ

Գերապատի՛վ և Սրբազա՛ն Հայր,

Նոր ստացա Ձեր ընտրության բերկրալի լուրը և շտապում հայտնելու Ձերդ Հայրության անհուն ուրախությունն և ջերմագին շնորհավորությունն (1): Արժանավոր հաջորդ՝ արժանավոր նախորդի (2):

Հարկավ, ավելի հաճելի կլիներ տեսնել Ձեզ Լուսավորչի թափուր գահի վերա, բայց, ավստս, որ հանգամանքներն այնպիսի մի վիճակ են ստեղծել, որ գերադասելի է մնալ առայժմ տեղակալով (3): Խորապես համոզված եմ, որ Երուսաղեմ նստելով հանդերձ՝ պիտի ընդգրկեք հայությունը և գործեք Էջմիածնական լայնությամբ, մանավանդ որ պիտի մնաք ընտրյալ նվիրակ կաթողիկոսի (4):

Նորերս Բրյուսելի խնդիրը լուծվեց (5), և առաջիկա հոկտեմբերից պիտի սկսեն դասախոսությունն: Գիտեմ, որ գոհ չպիտի մնաք: Թերևս իրավունք ունիք (6): Սակայն հիշելու է, որ լավագույնը միշտ թշնամի է եղել լավի:

Խնդրելով Հայրական օրհնությունդ՝

Մնամ՝ **Ն. Ադունց**

8 Rue Jacques - Mawas,

Paris 15

## 102. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Միրելի՛ պ. Չոպանյան,

Շնորհակալ եմ բարեմաղթությանդ համար (1): Սակայն, թվում է, թե տակավին վաղաժամ է: Սարուխանյանը (2) շտապել է օդը լցնել լուրերով՝ առանց սպասելու պաշտոնական գրության (3):

Երկու շաբաթեն ի վեր տկար եմ և տանից դուրս չեմ գալիս: Ուստի ներողամիտ եղեք, որ ականաչից անճշտապահ եղա քանի մը օրով և

չկարողացա վերադարձնել պարտքս: Երկուշաբթի կելնեմ տանից և հառաջիկա շաբաթվա մեջ կկատարեմ պարտքս, եղեք անվույթ:

Ռոջույն, սիրով`

**Ն. Ադոնց**

*15 հոկտեմբերի, [1931 թ.]*

### **103. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

Սիրելի՛ բարեկամ,

Նոր դարձա Բրյուսելեն և գտա նամակդ: Ուրախ եմ հանդիպելու, եթե կուզեք:

Նոյեմբերի սկզբներին հեռանալու եմ ընդմիջտ:

Ռոջույններով`

**Ն. Ադոնց**

*22 հոկտեմբերի, [1931 թ.]*

### **104. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

*5 դեկտեմբերի, 1931*

Սիրելի՛ բարեկամ,

Նոյեմբերի 24-ին տեղի ունեցավ Արևելյան ինստիտուտի բացումը հանդիսավոր կերպով: Հանդեսը բաց արեց տեսուչը: Խոսք առավ Գրեգուարը (1) և պատմեց գործի էությունը:

Այնուհետև ես բացատրեցի հայերենի կարևորությունը ընդհանուր գիտությանց մեջ: Ինձնից հետո Պարիսից հրավիրված դր. Պլրոժ-լինսկի՝ College de France-ի անդամ, երկար դասախոսություն արեց:

Գիտեմ, որ Չեզ կհետաքրքրի խոսածս նյութը և տպավորությունը: Դատավորը ես չեմ, բայց թվում է, որ գոհ մնացին և շատերը շնորհավորեցին՝ ասելով, թե նոր բան իմացան, որ հայերենի մասին թույլ

հասկացողություն ունեին: Գրեգուարը ներկայացրեց ինձ որպես մեկը, «որ եղել է Պետերբուրգի նշանավոր պատմալեզվական դպրոցից», և որ կարծում էմ, թե «Բյուզանդիան պետք է անվանել Հայբյուզանդական պետություն» (2):

Ինչևէ:

Պ[արոն] Մալեգյանը (3) ոչինչ չարավ՝ համաձայն, թե հավատարիմ այն նկարագրին, որ գծեցինք մի անգամ:

Առայժմ ապրում եմ համալսարանական կլուբում: Բնակարանի խնդիրը բարդ է: Բավականին սուղ են, որովհետև փոքր բնակարաններ չկան, մեծ բնակարաններ են, երբեմն տներ, որ վարձու են տրրվում՝ փոքրիկ տներ, երկու-երեք հարկանի:

Խնդրեմ «Անահիտը», նաև «Ապագան» պատվիրեք դրկել այս հասցեով առայժմ:

Ողջույն բոլոր հարցնողաց, ինչպես ասում էին մեր պապերը:

Միշտ անձնվեր՝ **Ն. Ադոնց**

## 105. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Բրյուսել,

5 դեկտեմբերի, [1931 թ.]

Միրելի՛ Հ[այր] Ակինյան,

Գրում եմ Ձեզ Բրյուսելից: Արևելյան ինստիտուտը՝ տեղիս համալսարանին կից, բացվեց, և դասախոսությունները սկսվեցին: Տեսնենք՝ ինչ դուրս կգա:

Իր ժամանակին ստացել եմ շնորհակալությամբ Խորենացուն մվիրված աշխատությունդ (1): Բայց ցարդ չկարողացա անդրադառնալ: Թեև արդեն այդ մասին դասախոսություն արի Նուբարյան գրադարանում (2): Գրքերս տակավին արկղների մեջ են և սպասում են, որ բնակարան գտնեմ: Հուսով եմ, որ Եղիշե (3) ևս մի օրինակ կդրկեք: Դժբախտաբար, չկարողացա հետևել՝ գրուխս խառն լինելով:



Միաժամանակ խնդրեմ՝ պատվիրեցեք որկել ինձ մի քանի օրինակ «Մաշտոց» գրքույկիցս: Անցյալ, թե նախանցյալ տարի մի քանի գրքեր էի պատվիրել Մատենադարանիդ (4): Գրքերս բոլորն էլ պ[արոն] Չավրյանի համար էր: Կարծեմ, որ արդեն վճարած պետք է լինի: Ամեն պարագայեմ ես պարտք չունեմ: Այստեղ ևս պիտի գրադարան հիմնենք: Միաբանությանդ և հրատարակությանդ պետք ունենք: Երբ պատվիրենք, հուսամ՝ որոշ գեղչ կանեք:

Հայր Հ. Ոսկյանը Բուլղարիայից հողված էր խնդրել մի ժողովածուի համար, որկեցի, բայց պատասխան չկա (5):

Հ[այր] Վարդանյանին (6) այնպես էլ չտեսա: Չգիտեմ՝ ի՞նչ է անում և ի՞նչ կարող է անել, բայց այն, որ վերադառնա իր բույնը:

Ողջույն Հ[այր] Տաշյանին և մյուս միաբանակիցներին:

Հարգանքներով Չերո՛ւ՝  
**Ն. Ադոնց**

## 106. ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Միրելի՛ Հ[այր] Ակինյան,

Ցավում եմ, որ չկարողացա Ձեզ տեսնել վերջին անգամ: Հունվար և փետրվար ամիսները շատ ձախտող եղան ինձ համար՝ պաշարելով ինձ երկարատև տկարությամբ, սակայն, ընդմիջումով: Խոսելու շատ բան կար:

Լսեցի Հ[այր] Գովրիկյանի և Մատիկյանի կորուստը: Խնդրեմ՝ հայտնեք միաբանությանդ խորին ցավակցությունս, մանավանդ Հ[այր] Մատիկյանի մահվան առթիվ: Աբբահայրը ծեր էր, ավելի մոտ մահվան, քան տակավին երիտասարդ Մատիկյանը (1):

Հուսամ, որ արժանավոր հաջորդ կընտրեք հանգուցյալ աբբային (2):

Ողջույններով՝ **Ն. Ադոնց**

**Ք. Տ.** Հ[այր] Մեննիշյանի (3) մեկնությունը «Ամեն» բառի կարդացի: Չեմ կարող համաձայնել (4): Երևում է՝ չի կարդացել հոդվածս Հ[այր] Ղազիկյանի դեմ: Չարմանում եմ, որ գտնում է, որ վերջինս լավ պաշտպանեց «Ամեն»-ը, որով նորեն մոլորեցնում է այս մոլորյալին և ամբարտավան «Հայկաբան»-ին:

*Փարիզ, [1931 թ.] (5)*

### **107. ԱՐՏԱՇԵՄ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

*Բրյուսել, հունվարի 5, [1932 թ.] (1)*

Սիրելի՛ Արտաշես,

Գրում եմ քեզ, ինչպես տեսնում ես Բրյուսելից: Նախ՝ ցավակցությունս Չեր ընտանեկան կորուստի համար: Բողոքս էլ հոգեպես նույն գառիվայրի վերա ենք կանգնած. բավական է մի ցնցում, որ գլորվենք խորխորատ:

Ռուսական համալսարանից հետո ընկա ասիա ֆրանսիականը: Երկուսն էլ օտար: Չեղավ, չհաջողվեց մնալ հայ լեզվի շրջանում: Գիտությունը դեռ ծանր է հայերիս համար: Եթե հայագետն անգամ չի կարող ապաստան գտնել հայության անկյունում, ապա ի՞նչ պիտի լինի մյուս գիտնականների վիճակը:

Երևում է՝ պետք է համաձայնել հարուստներին, որոնք գտնում են, որ գիտությունը մեզ համար չէ. մենք պետք է փող աշխատենք, հարստանանք:

Ավա՛ղ, հարստությունը ևս չի փրկում հայերիս, այլ օտարանալու դյուրին խողովակն է դառնում: Պարիսի մթնոլորտը ծանր է. մտավորական ուժերը հազիվ շնչում են: Կարոտությունը ավելի ևս ուժ է տալիս բացասական գծերի բազմանալու:

Ամսի 24-ից սկսվում է դասախոսությունս:

Չմոռանաս հանդեսն ու օրաթերթը դրկել այսուհետև դրկածս նոր հասցեով: Առայժմ այստեղ եմ, մինչև որ բնակարան գտնեմ, որ դյուրին գործ չէ:

Հուսամ՝ այնպես չեն ծանրաբեռնի, և կարող կլինեմ շարունակել աշխատակցությունս, թեև իմ ապրանքս այնքան էլ դյուրամարս չէ ընթերցողներիդ համար: Մի քանի հավատարիմ ընթերցողներ ունեմ, որ ոչ միայն հետևում են, այլև հարցեր են ուղղում ինձ, որոնց պատասխանելը, դժբախտաբար, երկար պատմություն է, ուստի և հաճախ անտես եմ անում:

Ցանկամ հաջողություն, և դու էլ ինձ ցանկա:

Միշտ անձնվեր՝ **Ն. Ադոնց**

### **108. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ**

*Bruxelles II, 25 հունվարի, 1932*

*Rue O'Egmont*

Ամենապատիվ Հայր,

Ստացա նամակդ ամենայն շնորհակալությամբ (1): Պարոնիկյան ազգայինի մասին (2) ավելի բան չգիտեմ, քան հաղորդեցին թերթերը: Ո՛չ լավը գիտեմ և ո՛չ վատը: Միանգամայն համամիտ եմ Սրբազնությանդ, որ այսպիսի անորոշ ձեռնարկների հանդեպ պետք է միշտ ձեռնպահ մնալ: Մանավանդ միաբանությանդ նման պատկառելի հաստատությունը պիտի խուսափե կապվել որևէ կերպիվ անվստահելի երևույթներին (3):

Ինչ կվերաբերի գերմանական կրթության մասին հայտնած ցանկությանդ, եթե հաջողի ուսուցիչ ստանալ, թերևս, լավագույնն է (4): Սակայն, չեմ կարծում, որ Պարոնիկյանի ընկերությունը ընդառաջե որևէ նյութական զոհաբերություն և իր հաշվով ուսուցիչ դրկե Երուսաղեմ: Փորձը ցույց է տալիս, որ Եվրոպայում, այսպես կոչված, հայանպաստ ընկերությունները միշտ աչք են ունեցել հայերից ստանա-

լու նյութական օգնություն: Սրբազնությանդ, անշուշտ, հայտնի է, որ գերման, ֆրանս և թե անգլիական ուսումը բարեբեր է միայն այն դեպքում, երբ նա լրացնում, կատարելագործում է ազգային դաստիարակությունը: Ասել կուզեմ, որ նախքան օտար համալսարան դրկելը պետք է տղայոց տալ գուտ ազգային կրթություն: Պետք է, որ նրանք անցնեն հիմնովին ազգային միջնակարգ դպրոց: Էջմիածնի [Գևորգյան] ճեմարանից և կամ թեմական դպրոցներից Գերմանիա գնացողները վերադարձել են, իրոք, առողջ գլխով և հոծ գիտական պաշարով: Ռուսական դպրոցների հայ աշակերտները, որքան էլ արտասահմանում դեգերեն, մնում են խորթ մեր կյանքին, չեն հասկանում մեր ոգին և ներկայանում են որպես օտարականներ, թեև երբեմն տոգորված են վեհագույն ցանկություններով:

Տարաբախտաբար չգիտեմ վանական դպրոցիդ (5) ինչ լինելը: Եթե կներեք որևէ ներշնչում, կասեմ, որ միաբանությունդ աշխատելու է ամենից առաջ հիմն դնել մի կանոնավոր միջնակարգ վարժարանի: Երուսաղեմը այժմ մեր Էջմիածինն է, և քանի որ հորիզոնները մութ են, և արշալույսը հեռու, Երուսաղեմը պետք է լռելյայն, առանց թմբուկի անե այն, ինչ որ անում էր Էջմիածինը կիրթ ազգային գործիչներ պատրաստելու գործում: Մի ճեմարան Երուսաղեմում. սհա առաջին և անհետաձգելի պահանջը՝ թե՛ վանականներ և թե՛ աշխարհիկ գործիչներ սնուցանելու համար: Թող լինի փոքր ծավալով, միայն գիշերօթիկ դպրոց՝ ընտիր աշակերտներից կազմված, որոնցից լավագույնները կդրկվեն օտար համալսարաններ՝ կատարելագործվելու համար: Եղած դպրոցներից և ոչ մեկը չի կրնա կատարել այն, ինչ որ պահանջվում է: Հասկանալի են պատճառները. ոմանք միջոց չունեն ընտիր ուսուցիչներ պահելու, մյուսները կուսակցական աշխարհայացք ունեն՝ բոլորն էլ անկայուն և վստահություն չներշնչող: Հայության համար այս դառն և ծանրագին ճգնաժամ]ին, եթե մի խարխախ կա, այդ ազգային դպրոցն է: [Հռոմի] պապը լավ է հասկացել և ամամիջապես հրահանգել Մխիթարյաններին Փարիզում դպրոց հաստատել (6):

Գիտեմ, որ Սրբագնութեանդ իղձերը հանգում են ի վերջո միևնույն բանին, ինչ որ գրում են: Եթե հաջողի վանքի նյութականը կարգի բերել այնպես, որ հնարավորություն ունենաք գիշերօթիկ վարժարան պահելու, լավագույնն է, ինչ որ կարելի է անել: Դրսից թոշակառուներ ևս կունենաք: Անգլիական միջավայրը և լեզուն ամենամեծ հրապույրը կլինեն մեր ծնողների համար իրենց զավակները վստահանալ Երուսաղեմին:

Մոռանալու չէ նաև, որ դպրոցը կբերե վանք կիրթ ուսուցիչներ, որոնք պիտանի կլինեն միաբանությանդ, ինչպես Էջմիածնի [Գևորգյան ճեմարանի] ուսուցիչները, որ երկար տարիներ եղան կաթողիկոսական քաղաքականության իսկական ներշնչողները:

Լսեցի, որ Ոսկան Մարտիկյանին (7) հրավիրել եք վանքի տնտեսությունը հսկելու և վարելու համար: Ուրախ եմ և ողջունում եմ Ձեր այս քայլը: Մարտիկյանը Պոլիս եղած ժամանակ լավագույն տպավորություն թողեց վրաս (8), լիահույս եմ, որ վանքի այդ ցավոտ հարցը վերջապես կբուժվի:

Մնամ համբույրով աջույդ,  
Ձերդ՝ **Ն. Ադոնց**

**Հ. Գ.** Սրբագա՛ն Հայր, մի համեստ խնդիր ունեմ, որ թողնում եմ Ձերդ հաճության: Հայկական նորաբաց ամբիոնը (9) պետք ունի համապատասխան գրադարանի, որի հիմը դնելու է պրոֆ. Գրեգուարը, որ միևնույն ժամանակ հայասեր է, շատ է աշխատել ամբիոնի հաջողության համար: Եթե հաճեիք վանքի հրատարակություններից մի գիրք մի շնորհավորական գրությամբ ուղղել պ. Գրեգուարին, կարծեմ՝ վատ չէր լինիլ և ուշադրության մի դույզնաքյա նշան կլիներ, որը զլացան մեր հաստատությունները (10): Համենայն դեպս նշանակում եմ պարոնի հասցեն՝

Prof. Henri Greguire, president de la faculte de lettres et Philosophie de  
l'Univiersite libre de Bruxelles

45 rue Bollandistes.

Կամ համալսարանի հասցեով՝

50 Avenue des Nations.

24 մայիսի, 1932

98 rue Baron de Castro, 98

Bruxelles

## 109. ԿՈՍՏԱՆ ՉԱՐՅԱՆԻՆ

Միրելի՛ Չարյան,

Նամակդ ստացել եմ իր ժամանակին և ցավում եմ, որ քիչ ուշ եմ պատասխանում (1): Գիտես, որ մարդ տեսնել պետք եղած ժամանակ այնքան էլ դյուրին բան չէ: Վերջապես տեսա Միհրդատյանին (2), խոսեցի հետը՝ նախ իմանալու համար՝ արդյո՞ք ազատ թոշակ ունին այս տարի: Թոշակավորները մեկն ինձ ասել էր, որ անգլիական դրամի անկյունով թոշակների քանակը նվազեցրել են: Միհրդատյանը գործին շատ էլ տեղյակ չէր: Համենայն դեպս, ասաց, որ ամենից առաջ պետք է շտապես խնդիրդ, թե դիմումդ դրկել. քննություններից հետո միայն կպարզվի, թե քանի տեղ ունին: Կոմիտեի անդամներին, ֆրանսիացի անդամներին անձամբ ծանոթ եմ և վստահ եմ, որ խնդիրդ կհարգվի, եթե միայն, կրկնում եմ՝ ազատ թոշակ ունենան: Հետևապես շտապիր դրկել խնդիրդ:

Ինչ վերաբերում է լրագրային հայիոյանքներին, այո՛, ցավալի երևույթ է: Մամուլը անպատրաստ մարդկանց ձեռքին է: «Յառաջ»-ը գեռունների մի բույն է, անկիրթ և անգետ լակոտներ (3), որոնց հետ խոսել և վեճի բռնվել կնշանակե պատվել նրանց և նսեմացնել սեփական արժանապատվությունը: Բայց ի՞նչ կարելի է ասել, եթե [Ավ.] Ահարոնյանի պես մարդը իր վարմունքով ավելի խրախուսում է բերանբաց գյաղաներին, քան սանձում: Ականջ մի՛ դնիր, շարունակիր գործդ: «Յառաջ»-ը պաշտպան է կանգնել Չարբելին (4), բայց մոռա-

ցել է, որ Չոպանյանին ինքն է, որ անվանել էր «պսակավոր սողուն»:  
Ի՞նչ կարելի է անել այսպիսի մարդոց հետ:

Սիրով և ողջունիվ՝  
**Ն. Ադոնց**

### **110. «ԶՎԱՐԹՆՈՑ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ (1)**

*Փարիզ, 1932 թ.*

Խորապես ցավում եմ, որ ընթացիկ պայմաններն այնպես դասավորվեցին, որ անկարող եղա կատարել խոստումս: Տանը ծանր հիվանդ (2) ունենալով՝ ամսե ի վեր գրիչ չեմ առել ձեռս, այն ինչ կարևոր նախապատրաստական աշխատանքներ պետք է անել նախքան այստեղից հեռանալս: Խոստացած հոդվածս՝ պատմագեղարվեստական նյութ մը, օրվան պահանջ չէ և կարելի է հետաձգել: Խորհեցի մի ուրիշ հոդված տալ, բայց այս ևս պահանջում է ժամանակ:

Ցանկան հաջողություններ «Զվարթնոց»-ին:

**Ն. Ադոնց**

### **111. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ**

Ամենապատիվ և Սրբազան Հայր,

Ստացա նամակդ: Գրքերի մասին ես Ձեզ շատոնց գրած եմ և հայտնած շնորհակալությունս, գրած եմ գրքերը ստանալուց քանի մի օր հետո: Ինչ վերաբերում է Գրեգուարին, նա այնքան բազմազբաղ անձ է և մոռացկոտ, որ անփույթ է եղել գրելու: Տեսա և հարցրի նրան: Ասաց խնդալով, որ հայերեն պիտի գրե, ուստի հետաձգել է, որ մի քիչ հառաջադիմե հայերենում և ցույց տվավ հայերեն գրված քանի մը տող բավականին հաջող, երևի կստանաք (1):

Այսքան ժամանակ չկարողացա Ձեզ գրել, մանավանդ կաթողիկոսական և այլ խնդիրների մասին, որովհետև վեց ամսե ի վեր խելքս գլուխս չէ կնոջս ծանր հիվանդության հետևանքով: Գիշեր-ցերեկ հանգիստ չունեմ, բժիշկները ամեն ինչ խոստանում են, բայց ոչինչ չեն կարողանում անել: Ջբաղմունքներս խանգարված են: Չգիտեմ, ինչով պիտի վերջանա:

Ցավալի է, որ Հայրապետական ընտրությունները (2) անշուք անցան: Տարաշխարհիկ հայությունը ապիկար հանդիսացավ և հարկ եղած վերաբերումը ցույց չտվեց ընտրության՝ ազգային առաջնակարգ հարցը դրամական ուղղության գոհելով: Դաշնակցականներին վատաբանում ենք միշտ, բայց անտարակույս է, որ եթե նրանք մասնակցեին ընտրության, մեծ շարժում առաջ կգար հասարակության մեջ և համապատասխան հետաքրքրություն և արժանավայել վերաբերում: Ընտրությունների արդյունքը, կարծեմ, Ձեզ ևս հաճելի է:

Ուրախ կլինեի, եթե լրացնել կամենայիք թերթերեն քաղած պակասավոր տեղեկություններս վանքիդ գործերի մասին: Հուսով եմ, որ վանքիդ տնտեսությունը բարվոքված է շնորհիվ Ձերոջ ջանքերի: Ի՞նչ է այս վերջին խռովությունը և մի քանի անձանց հեռանալը վանքից (3):

Միրալիր ողջույնով, հայցող օրհնությանդ խոնարի ծառա՝  
**Ն. Աղոնց**

*4 դեկտեմբերի, 1932*

L'Université Libre de Bruxelles 50

Avenue des Nations 50



## 112. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՅԱՆԻՆ

12 հուլիսի, 1933 թ.

Բրյուսել

Սիրելի՛ բարեկամս,

Ժամանակով «Հայրենիք» ամսագրի երկու համարները առիթ ինձնից, որպեսզի հողվածս թարգմանաբար հրատարակեիր թերթիդ մեջ (1): Հողվածը, կարծեմ, կիսատ մնաց (2), և ամսագրի համարները մնացին մոտո: Կուզեմ հողվածներս ժողովել ի մի, որպեսզի կարելի լինի թերևս մի հատորով ի լույս ընծայել: Ուստի կխնդրեմ, եթե չեք կորցրել, անմիջապես դրկեք «Հայրենիք»-ի համարները: Մի տասն օրեն Փարիզ պիտի գնամ, եթե Դուք ևս հոն գնալու ցանկություն ունեք, կտեսնվենք:

Առայժմ ողջույն և բարեկամներին:

**Ն. Աղոնց**

## 113. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՅԱՆԻՆ

Հոկտեմբեր, 1933 թ.

Բրյուսել

Սիրելի՛ Սաֆրաստյան,

Բնակարանս փոխել եմ և կխնդրեմ «Մասիսը» դրկեք նոր հասցեովս, որպեսզի անկորուստ տեղ հասնի: Եվ եթե բարի լուրեր ունեք մեր աշխարհեն, այն ևս գրեցեք:

Ողջույնով մեր ծանոթներին

Ձերդ՝ **Ն. Աղոնց**

## 114. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ

2 հոկտեմբերի, 1933 թ.

Գերապատիվ և սիրելի՛ Սրբազան,

Ընտանեկան պայմաններս այնքան հուսահատ են և այնքան ծանր դրություն են ստեղծել ինձ համար, որ թերացա անգամ շնորհակալությունս հայտնել Ձեր սքանչելի աշխատության (1) համար, որի մի օրինակը հաճել էիք ղրկել ինձ: Մտադիր էի նաև քանի մը տող գրել թերթերում, այն ևս չկարողացա:

Տարին շատ վատ անցավ ամեն նկատումով: Ոչ միայն նոր բան չկարողացա գրել, այլ անգամ հին, վաղնջուց գրած գործերս ի վիճակի չեղա կարգի բերել: Եթե այդպես շարունակվի կնոջս հիվանդությունը, կամ ես ևս կհիվանդանամ, կամ առնվազն կկորցնեմ աշխատելու հնարավորությունս:...(2) իրենց բարձրության վրա չեն: Միջոցներս պակասում են զետեղելու որևէ ապաքինարան: Մնացել են խռոված և անճարակ: Ուրախ կլինեի, եթե հնարավոր լիներ մի ամառ գալ այդտեղ..., վաղեմի երագս է: Բայց տեսնում եմ, որ այս ևս հնարավորությունից դուրս է:

Այսպիսի պայմաններում միակ մխիթարությունն է տեսնել, որ գոմե ուրիշները կարենային նույն գործով զբաղվել, ինչ որ ես, և ամեն տարի մի-մի հատոր ելներ Սրբազնությանդ թովիչ գրչեն:

Կարոտով և բարեկամությամբ, սիրով և հարգանքով, Հայրական օրհնությանդ հայցող՝

**Ն. Աղոնց**

Bruxelles

125 rue des Atrebatés, 125

## 115. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ

25 հունվարի, 1934

125 rue des Atrebatés, 125

Գերապատիվ և սիրելի՛ Հայր,

Մեծապես շնորհակալ եմ Ձեր պատվական նվերի համար. Ե. Դուրյանի «Դիցաբանություն»-ը (1) ստացա: Եթե դժվարություն չկա, կխնդրեի որ հաճեք և նորա Մատենագիտության պատմությունը (2) որկել: Հուսով եմ Սրբազանությանդ ջանքերով լույս տեսած հրատարակությանց մասին դիտողություններ հայտնելու պատիվն ու հնարավորությունը կունենամ (3):

Վաղուց է, որ Սրբազանութենեդ տեղեկություն չունեմ: Թվում է, թե վերջին նամակս Ձեզ չի հասել:

Առոնդ սրբազանի նահատակությունը (4) խորապես վրդովեց ինձ, և այսու հայտնում եմ Ձեզ՝ որպես եկեղեցու պետի, անհուն ցավակցություն: Եկեղեցին վտանգի մեջ է: Այս առթիվ էլ ասելիք ունեմ: Բայց վիճակս շարունակում է նույնը մնալ՝ խանգարելով ոչ միայն հրապարակախոսական, այլ մինչև իսկ ընթացիկ զբաղմունքներիս համար պետք եղած տրամադրությունը:

Ընդունեցեք ջերմագին ողջույններս և համակրության ու սիրո արտահայտության հավաստիքը: Օրհնությանդ կարոտ և միշտ անձնվեր՝

**Ն. Ադունց**

## 116. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

23 մարտի, 1934 թ.

Բրյուսել

Սիրելի՛ Սրբազան,

Ստացա օրացույցը: Շնորհակալ եմ, շատ և շատ հիշատակներ և խոհեր հարուց:

Վերջին նամակս տարիներ առաջ ետ եկավ Նախիջևանից՝ մակագրված, որ հասցեատերը ծանոթ չէ քաղաքում: Հասկացա, որ բացակա ես եղել: Այսպիսով՝ մեր գրագրության թերը կտրվեց, և այժմ ուրախ եմ, որ բարի առիթ ընծայեցիր վերսկսելու, այլևս չընդհատելու հուսով:

Ինչպես գիտես, այստեղի համալսարանում (1) դասախոսում եմ, հայագիտական և հայ-բյուզանդական խնդիրների սահմաններում: Բոլորովին առանձնացած եմ, և արտաքին աշխարհի, մանավանդ ազգային աղմուկների շուրջը հազիվ է հասնում ինձ:

Դու էլ, երևում է, այժմ վարչական գործերով ես զբաղված, կիսամ, որ ժամանակ կգտնես շարունակելու գիտական աշխատություններդ: Հին ծանոթներից և բարեկամներից ոչինչ լուր չունեմ: Միայն Ղափանցյան է (2), որ երբեմն հիշում է՝ դրկելով իր ուսումնասիրությունները, որի համար մեծապես շնորհակալ եմ, և տեսնելիս հայտնի որջույններս, ինչպես և Աշխարհբեկին (3) ու Խաչիկ Սամվելյանին:

Աճառյանի բառգիրքը (4) չտեսանք: Եթե արգելք կամ դժվարություն չկա, ուրախ կլինեի ստանալու այդտեղի հայագետների ուսումնասիրությունները, որոնց մասին «Byzantion» հանդեսում կարելի էր հաշիվ տալ և եվրոպական գիտնականների ծանոթացնել:

Եթե կարող ես, Կոստանյանի հր[ատարակած] Մագիստրոսի թղթերը (5) և Խոսրովիկիդ (6) մի-մի օրինակ դրկելի, փոխարենը քեզ կուղարկեմ ուզածդ աշխատությունները:

Գրի՛ր, խնդրեմ և գրե՛լ տուր մյուսներին, որջունի՛ր միաբանությանդ բոլոր անդամներին, ի մասնավորի Մեսրոպ եպիսկոպոսին: Չոպանյանը դժգոհ էր Մեսրոպից (7):

Կարոտով և սիրով՝  
**Ն. Ադունց**

Հասցեն մշտական՝ l'Université Libre de Bruxelles  
Այժմյան հասցեն՝ 125 Bue des Atre, bates

## 117. ԹՈՐԳՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ

### Ամենապատիվ Պատրիարք Հոր Տ. Թորգոմ արքեպիսկոպոսին

Հա՛յր Սրբազան,

Ցավում եմ, որ ավելի կանուխ կատարել Ձեր հանձնարարությունը հնարավոր չեղավ, որքան և հաճելի և քաղցր պարտականություն կնկատեմ ինձ համար շուտափույթ ընդառաջել Ձեր բոլոր ձեռնարկներին: Այժմ էլ գրում եմ տողերս այնպիսի վիճակում, որ հուսամ ներողամիտ պիտի լինիք, եթե չկարենան լիովին գոհություն տալ Ձեզ (1):

Կարդացի Հ. Աճառյանի նոր գործը, և ահա՛ տպավորություններս քանի մը տողով: Զգիտեմ՝ պետք կա հայտնելու սկզբեն ևեթ, որ Սրբազնությանդ ընտրությունը միանգամայն հաջողակ է, և գործը արժանի այն վարձատրության կամ պարգևատրության, որ ի նկատի ունիք (2):

«Հայոց լեզվի պատմություն»-ը մի համադրական փորձ է, մի ամփոփումն այն գիտական հանգումների, որ հին և նոր հետազոտությունները արձանագրել են ցարդ որպես ստույգ և կամ հավանական այս կամ այն չափով: Հեղինակը կատարել է այս փորձը ամենայն ձեռնհասությամբ և հավատարիմ այն սկզբունքներին և ղեկավար մեթոդներին, որոնցով ձեռք են բերված ամփոփելի նյութերը: Շնորհիվ ներկա աշխատության ունինք այժմ մեր առջև հայ լեզվի պատմական հասակը իր զարգացման և կամ կյանքի բոլոր շրջաններում, և բնականաբար դյուրին պիտի լինի այսուհետև լրացնել պակասը կամ հապավել ավելորդը և ճոխացնել գիտությունը նորանոր բերքերով և փոփոխել փոփոխելին: Հեղինակը փույթ է ունեցել ներկայացնել լեզվի կրած փոփոխությունները քաղաքական պատմության համապատասխան շրջանակների մեջ և հանել է այն եզրակացությունները, որոնք ծառայում են ուրվագծելու և մեր քաղաքակրթության հարահոլով պատկերը:

Գործի մի խոշոր մասը նվիրված է լեզվական **բառամթերքին**: Հայ լեզվի բնիկ աստաղծը կազմում է, ըստ հեղինակի, 600 բառ: Հաջորդ շերտերն են փոխառյալ բառեր՝ իրանական՝ 750 բառ, հունական՝ 776, արաբական կամ արաբ-պարսիկ՝ 801 և այլն: Այս վիճակագրական թվերն այն տպավորությունն են թողնում, որ կարծես հեղինակը վերջնական և անվերաքննելի է համարում այն, ինչ որ ցարդ կատարված է, մինչդեռ խոհեմությունը պահանջում է ձեռնպահ մնալ թվական սահմանափակումներից (3): Ամեն մի նոր հետազոտություն կարող է խանգարել այդ ժամանակավոր հաշիվները: Մեզ թվում է, որ բացեր կան գրեթե բոլոր բառախմբերում: Առանց որևէ ջանքի՝ աչքիս ընկավ, որ բնիկ հայ բառերի թվում պակասում են՝ *աղեղն, բանք, սպորուղ*: Իրանական խմբի մեջ չգտա՝ *հրամանատար* (framatar) (ոչ հրամանատար), *խորավարան*, որպես թե նշանակում է «սպարապետական աստիճան», մինչդեռ պահլ. ar(a)varán բառն է և նշանակում է «արևմուտք»: Վիրական բաժնում պակաս է՝ *սեփծուղ*, հունական՝ *գաւռախս* «պարկերագործ» (Ստեփանոս Օրբելյան) = h. Ζωγράφος, կամ *տեղիարիս* (Ուռհայեցի), որ բուզանդ. *տրերիարիս* կամ *հետրերիարիս* = εταρειαρρχής բառի աղճատումն է, չկա նաև **էմպուիոն** (բշխ.): Ասորերեն՝ Թշրին և Իլոգի կից մոռացել է հիշել **բուլք** (Տիմ.), **իյար, փոպի, փիքոն** («Գիրք թղթոց»): Արաբերեն բաժնում չտեսա՝ **ճալար, փառալարուլա** (Թլկուրանցիի բառերը): Այլ չեմ հիշում, որ **բոկեղ** դնում է որպես թե փոխառյալ վրացերեն, մինչդեռ Βουχέλλος = «կլոր հաց», հունարեն (բյուզանդական) բառն է: *Սահմի, հոռի* ոչ մի կապ չունին վրացերեն *օրի* և *սամի*, «երկու, երեք» բառերի հետ, ինչպես ենթադրել է Զ. Պատկանյան և ընդունել Հ. Աճառյան: Իմ կարծիքով՝ հին ասոր. *Airu, Simanu* երկրորդ և երրորդ ամիսների անուններն են: Այնտեղ է ծագում իրանական և մեր տոմարը: Վրաց ամիսները հայտնի են, և այնտեղ ո՛չ օրի և ո՛չ սամի հետքեր չկան: Գալատոս «որմնադիր» բառը ևս վրացի ծագում չունի, այլ պարզապես *Գաղալարացի* է նշանակում, ինչպես երևում է, հնում հայտնի են եղել Գաղտացիք որմնաղորթյան արհեստում: Այս ավելի քան

թուցիկ օրինակները բավ են ցույց տալու համար, թե որքան հանձնարարելի չեն թվական սահմանագծումները: Քանի մը տարի առաջ առիթ ունեցա ծանոթանալու Հ. Ս. Նիբերգ պահլավագետին, որ հայտնեց ինձ, ի միջի այլոց, որ ավելի քան հազար իրանական նոր փոխառություններ է գտել հայերենում պահլավիկ մատենագրության հիշատակարանները վերծանելիս (4):

Մի ուրիշ հանգամանք: Հ. Աճառյան նպատակ ունի ներկայացնել լեզուն որպես քաղաքակրթության հայտարար: Այս դեպքում անհրաժեշտ է խստիվ պատճենել քաշել երկու կարգի օտարամուտ բառերի միջև, այն է՝ փոխառությունների (Lehnwörter) և օտար բառերի (Fremdwörter): Մեկը կազմում է լեզվի բաղկացուցիչ մասը, ձուլվում է և այս դեպքում հայանում, մյուսը մնում է իր օտարության մեջ՝ ի բնե մեռած տարր լեզվի համար և անարժեք քաղաքակրթության պատմության համար: Հ. Աճառյան, հարկավ, քաջ գիտե այս զանազանությունը և գործի ընթացքին ստիպված է եղել անջատել որևէ կերպ հիշած երկու տարրերը: Ավելի լավ կլինեք, անտարակույս, հենց սկզբից անտես անել օտար բառերը՝ ի նպաստ հարցի պարզության և առանց ավելորդ բեռն դնելու լեզվի վերա:

Հեղինակը լայնորեն է գծել իր աշխատանքը՝ բաժին հանելով ընդհանուր լեզվագիտության: Կանգ է առել միջերկրական քաղաքակրթության ազդեցության լեզվական հետքերի վրա հունականում: Բայց զարմանալի է, որ հազիվ մի քանի բառ է գրավել նրա ուշադրությունը, այն բառերը, որ հիշել է Ա. Մեյեն իր մի աշխատության մեջ: Սակայն նորագույն գործերը հաշվում են այդպիսի փոխառություններ հարյուրավոր բառերով՝ թված օրինակի համար<sup>1</sup>:

Հայ-փոյունգիական առնչության նայող վերջին հետազոտությունները անծանոթ են մնացել մեր հեղինակին<sup>2</sup>, դրանք միանգամայն նոր տեսություն առաջ բերին, որ փոյունգ. լեզուն ոչ թե **saten**, ապա **centum** լեզվախմբին է պատկանում: Այսու կարծես հայի և փոյունգ.

<sup>1</sup> G. D. Glotz, La Civilisation Égéeenne, p. 441.

<sup>2</sup> R. Meister, Ind. For. 25, p. 312, նսև՝ E. Hermann (K. Z., 50):

անջատը ավելի մեծանում է, բայց մյուս կողմից պարզվում է, որ հնչաբանական մեծ օղակով կապվում են երկու լեզուները (մանավանդ *mutaiter consonantique*, այսինքն՝ միջակների լեռկացումը): Հայերենը կապվում է նաև թուխարերենի հետ, և այս կարևոր է: Ինձ թվում է, որ այս նոր կապը մեզ հասկանալի պիտի դարձնե *Թուխարք* բերդի կոչումը Տայքում, ինչպես և **Տոս** կոչված ժողովուրդի ինքնությունը և թերևս մի նոր վարկածի դուռ պիտի բաց անե Մամիկոնյանների ծագման ավանդության:

Հ. Աճառյան շատ անգամ դուրս է եկել Հ. Հյուբշմանի գգուշավոր սահմաններից՝ ընդունելով ստուգաբանություններ, որ նա ժխտել է կամ կասկածելի է համարել: Շատ խնդիրներում աշխատել է ուրույն տեսակետ ունենալ և միշտ չէ հաջողած: Սակայն նման երևույթները չեն վնասում գործի ընդհանուր պատկերին: Մասնավորապես աչքի է ընկնում այն մեծ բաժինը, որ Աճառյան հատկացրել է վրացի և խաղաղական փոխառությանց՝ հակառակ Հյուբշմանի դրականորեն հայտնած տրամադրության: Հայ-վրացական լեզվական աղերսին հատկացրած գլուխը, կարելի է ասել, գործի տկարագույն էջերն են: Սեր հեղինակը թվում է, թե հաստատապես որդեգրել է այն համոզումը, որ բոլոր այն տարրերը, որ ո՛չ իրանական են, ո՛չ սեմական, ո՛չ գուտ հայկական, ծագում են խաղղական լեզվից: Չափազանցություն է և, ըստ էության, առանձին կարևորություն չունի, քանի որ լեզվագիտությունը ոչինչ չի շահում, անհայտը մի ուրիշ անհայտի է վերածում: Բացի սրանից՝ նախահայ բնիկների լեզուն միայն խաղղերենը չէր: Խաղղերի նման տասնյակ ցեղեր կային, որոնց փոխադարձ լեզվական կապը մնում է անհայտ: Ավելի խոհեմ կլիներ հայ բառարանի տակավին անվերծանելի մթերքը համարել մի շտեմարան, ուր առնելիք ունի և՛ գուտ հայկականը, և՛ իրանականը, և՛ անծանոթ նախաբնիկ լեզուները:

Բառամթերքի քննությունից հետո Հ. Ա[ճառյան] անցնում է գրական լեզվի ծագման և ընթերակից հարցերի: Տեղ-տեղ հեղինակի գրիչը սայթաքում է դեպի հակասություններ, որ պետք է բացատրել



անուշադիր կամ շտապ գրությամբ: Հին *pater* ձևը, հեղինակի կարծիքով, «շատ ուշ և այն V դարում է միայն եղել հայր» (էջ 32): Հագորդ էջում կարդում ենք, որ *hujus* ձևը գոյություն ունի Ք. հ. 200 թվից: Երկու վկայություններն էլ հավասարապես սխալ են: Հ. Ա[ճառյան] երկար ու բարակ քննում է, թե գրաբարը խոսակցական<sup>օ</sup> լեզու էր, թե<sup>օ</sup> արվեստական, և գալիս է այն եզրակացության, որ գրաբարը V դարում «ճշտիվ ժողովրդի խոսակցության լեզուն է» (էջ 244): Հետևյալ գլխում ոսկեդարյան հեղինակների մոտ եղած բազմաթիվ անհարթությունները և սխալները ուզում է բացատրել նրանով, որ հեղինակները գործ են ածել «արվեստական լեզու» և «ոչ ժողովրդի» բառը (էջ 268): Այս ակներև հակասությունը հասկանալի կդառնա, եթե ընդունենք, որ հեղինակը ճշգրտորեն չի արտահայտել իր միտքը: Ամեն մի լեզու, որ արձանանում է գրով, արդեն դառնում է արվեստական՝ համեմատությամբ կենդանի և շրջուն լեզվի: Բայց այս չէ նշանակում բնավ, որ գրականը այնքան է հեռանում կամ V դ. այնքան էր հեռացել իր ծննդյան տարիքեն, որ ժողովրդյան հասկանալի չէր: Հ. Ա[ճառյան], սակայն, պետք է զգացել շեշտելու չափից ավելի գրաբարի ժողովրդական լինելը, որպեսզի առաջ տանի իր մյուս կարծիքը, որ V դարում հայ լեզուն բարբառներ չուներ, և պատրաստ է ժխտելու Ստեփանոս Սյունեցու բացահայտ վկայությունը՝ աղավաղ և անհիմն մեկնաբանությամբ (5): Եթե Հ. Ա[ճառյանը] այն դրությունը պաշտպաներ, որ բարբառների բացատր մեծ չէր V դարում, ինչպես հետագայում, կարելի է համաձայնել: Բայց հիմնովին բացասել, ոչ մի բանավոր հիմք չկա: Նույնիսկ իր բերած քաղվածներում նկատվում են աշխարհաբարի հետքերը, ինչպես ստորադասականի գեղչը և ներկայի գործածությունը ստորադասականի իմաստով «(եթե **գայ** ինձ)», «ես ոչ սպանանեմ»»: Ինչպես և մեկնենք բարբառների ծագումը, պետք է ընդունինք, որ այս խնդրում առաջնակարգ դեր են ունեցել այլազեղ բնիկները: Եթե հայ զանգվածը բավական ուժ է ունեցել հարկադրելու իր լեզուն երկրի կենտրոնական մասերում, ուր հոծ մեծամասնություն է կազմել, նրա ազդեցությունը համեմատաբար տկար պետք է լիներ ծայրագավառներում,

ուր բնակչությունն ավելի խառն էր: Այս հանգամանքը արդարացնում է հիմնովին եզերական բարբառների գոյությունը: Հ. Ա[ճառյանը] հնարավորություն ունի դիտելու, թե ինչպես Երևանի բարբառը հետզհետե և գրեթե աստիճանաբար փոխվում է Ղարաբաղի (Արցախի) բարբառին՝ անցնելով Սիսիանի բարբառից դեպի Տաթև և այնտեղից դեպի Շուշի:

Նորագույն բարբառների մասին նույնպես Հ. Ա[ճառյանը] այն կարծիքն է հայտնում, որ նրանք ոչ առաջ, քան IX-XII դարեր են ծագել: Բայց, դժբախտաբար, չի բացատրում, թե որոնք էին այն նոր ազդակները, որոնք հանկարծ ծվատեցին նախկին միապաղաղ լեզվին զանազան բարբառների: IX-XII դարի համեմատաբար պայծառ շրջան է Հայոց պատմական անցյալում, երբ փոքր նախարարական տները միանում են խոշոր կենտրոններ ստեղծելու, և իրենք անհետանում են մեծ միությանց մեջ: Հ. Ա[ճառյանի] տեսակետը այս խնդրում անհատական է, գոնե մերը չէ, և այն փաստաբանությունը, որ բերում է ի նպաստ իր տեսության, ի վիճակի է որոշելու բարբառների **Terminis ad quem**, բայց ոչ **a quo**:

Բարբառների գոյությունը ժխտելուց հետո, երբ անցնում է Նորայրի տեսության ոսկեդարյան չորս կարգի հեղինակությանց վերաբերյալ և արդարացի քննության է ենթարկում և Նորայրի տեսությունը (6), նրա դիտած տարբերությունները վերածելով պարզ ոճաբանական խտրությանց՝ հանկարծ նահանջում է բռնած շավիղից և ընդունում, որ կային **Եզնիկյան** և **Կորյունյան** բարբառներ: Այս ևս մեր տեսակետը չէ:

Աշխատության այն մասը, որ նվիրված է ժամանակակից բարբառների նկարագրության և դասավորության, շատ ավելի պետք է բարձրացնեին աշխատության արժեքը, եթե ավելի մանրամասն լիներ: Հ. Աճառյան այս կալվածում կատարյալ տեր և տիրական է: Ոչ ոք չգիտե նրա նման մեր բարբառները: Որքան ցանկալի կլիներ, որ այս մասը ավելի ճոխ լիներ, ստորաբաժանումները լիովին թված հանդերձ հնչաբանական և ձևաբանական հատկություններով, քանի որ բարբառները կորստյան վտանգի առաջ են կանգնած, և հետագային անհնարին պիտի դառնա նրանց ուսումնասիրությունը:

Չերկարեն ալլա: Նկատողություններս ցույց են տալիս, որ Հ. Ա[ճառյանի] երկը իրապես կարևոր է և արժանի Չերդ Սրբազանության քաջալերության և գնահատման: Չեն կարծում, որ հայտնաձև կարծիքները օտարոտի թվին Չեզ, վստահ են, որ նույնանման տպավորություն է գործել նաև Սրբազանությանդ վերա:

Մնամ սպասավոր պատրաստական Ամենապատիվ Հայրությանդ:

Հարգալիր ողջույնիվ,

միշտ անձնվեր՝

**Ն. Ադոնց**

1934 թ.

## 118. ՌՈՒԲԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

*8 դեկտեմբերի, [1934],*

Բրյուսել

Հարգելի՛ բարեկամ (1),

Ստացա նամակդ և աշխատությունդ (2): Նախ շնորհավորում եմ ի սրտե պատվական գործդ և ցանկանում հաջող պաշտպանություն:

Ինչ վերաբերում է Չեր խնդրին (3), պետք է ասել, որ ես տեղյակ եմ Գարեգին Սրբազանի (4) առաջարկության, բայց չէի կարծում, որ անհաջող ելք պիտի ունենա: Կարծեմ՝ լավ կլինի, որ ինքներդ հարկավոր բացատրություն գրեք պատրիարքին (5), որ Դուք նախ հայկաբան եք և ապա՝ պարսկագետ: Ուրիշ ոչինչ:

Ժամանակե ի վեր ես այլ ծրագիր ունեմ Չեր նկատմամբ: Կցանկայի հաջողեցնել Չեզ Մելքոնյան դպրոցում հայերենի կամ ավելի լավ՝ գրաբարի և հին գրականության դասերը ստանձնել: Ներկայումս դպրոցի տեսուչն է Թովչյան (6), ճեմարանի սաներից [է] և իմ բարեկամը՝ որպես ժամանակակից ճեմարանական: Նրա մի խնդիրը ես կատարել եմ և հուսամ, որ չի մերժի, եթե դիմեմ նորան Չեր գործի առթիվ: Չգիտեմ միայն, թե որքան իրավասու է տնօրինել

ուսումնական մասը՝ առանց Մալեգյանի (7) մասնակցության: Այսօրևեք գրում եմ նրան և արդյունքը կհաղորդեմ Ձեզ անմիջապես: Ենթադրում եմ, որ ինքներդ ևս ավելի հարմար կդատեք Մելքոնյան դպրոցում ծառայել, քան Երուսաղեմ, մանավանդ, երբ գործը ծուռ ընթացք է ստացել:

Որքան գիտեմ՝ այժմ Փարիզի դպրոցի տեսուչը ոմն Կիրակոսյան [է]: Եթե առիթ ունենաք, ծանոթացեք, տեղեկություններ առեք՝ առանց հայտնելու գործի էությունը:

Առայժմ ընդունեցեք ողջույնս և բարի ցանկություններս:

**Ն. Ադունց**

Bruxelles, 31 av. Des Coureeses

### **119. ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

Սիրելի՛ Հայր Ներսես,

Երանի Ձեզ, որ ընտանիք չունեք: Կինս այնպի՛սի ծանր հիվանդության մեջ է: Ահա մի ամբողջ տարի է (1), որ չեմ կարողանում անգամ հետևել, թե ինչ է անցնում աշխարհումս:

Հ[այր] Տաշյանի մահվան լուրը (2) ժամանակից ուշ ստացա: Խնդրեմ հայտնեք միաբանությանդ խորին ցավակցությունս այդ անփոխարինելի կորուստի համար: Մխիթարություն է, որ գոնե հանգուցյալը արավ, ինչ որ կարող էր անել (3), մինչդեռ մեզանից շատերն այս դժնդակ պայմաններում թերևս չկարողանանք անել, ինչ որ կարող էինք:

Սիրալիք ողջույններով՝  
Ձերդ **Ն. Ադունց**

**P.S.** Խնդրեմ՝ չմոռանաք տպարանի վարչությանը հայտնել, որ հասցեիս դրկեն մի օրինակ Ձեր Աբերկիոսին նվիրված հետազոտությունը (4):

Խորենացիի և Ղևոնդի առթիվ գրածս հոդվածը տակավին կիսատ մնջում է, հուսամ քիչ ատեն վերստին ձեռք առնել և «Հայրենիք»-ին դրկել (5):

95 rue Commandawe Ponthier  
Prof. N. Adontz  
Bruxelles  
[1934]/(6)

## **120. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՅԱՆԻՆ**

[1934 թ.]  
Բրյուսել

Սիրելի՛ Սաֆրաստյան,

Շնորհակալ եմ, որ չեք մոռացել «գմեզ» և դրկել եք «Massis»-ը: Վերջին համարները չեմ ստացել: Ցավում եմ, որ չկարողացաք Հայաստան գնալ, նորանոր և ավելի հավաստի տեղեկություններ կբերիք, մանավանդ մեր բարեկամ գիտնականների և մտավորականների մասին: Չոպանյանի՝ ինձ մասնավոր մամակով հաղորդածը չբավականացրեց: Ասաց՝ ինչ որ կարող էր ասել և առանց այնտեղ գնալու (1):

Մի անգամ ասացիք ինձ, եթե չեմ սխալվում, որ Աշխարհբեկ Բալանթարյանի մի հնագիտական աշխատությունն ունիք (2): Եթե կարող եք, խնդրեմ, դրկեցեք ինձ մի քանի ժամանակով: Կվերադարձնեմ Ձեզ հանդերձ շնորհակալությամբ, և «վարձք Ձեր լիցին բազումք յերկինս»:

Այստեղ գրքերի սով է, որ շատ է դժվարացնում աշխատությունս: Ի՞նչ եղան մեր սրտակից բարեկամները՝ Մալկոլմ (3) և Տոնասպետ-

յան (4), շատ բարևներ: Այս վերջինին հիշեցրու, որ խոստացավ Լինչի քարտեզից մի օրինակ որկել, և «աչքերս ջուր կտրեցին»՝ մինչև այժմ սպասելով:

Տարաբախտաբար, կինս հիվանդ է մոտ մի տարի (5) և մեծ մտահոգություն է պատճառում ինձ և արգելք լինում պարապմունքներիս:

Բարև երկուսիս կողմից:

Չերդ՝ **Ն. Ադոնց**

Մշտական հասցես՝ 11 Rue d'Egmont

Իսկ արդի բնակարանիս հասցեն՝ 95 Rue Commandant Ponthier

## 121. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

*Բրյուսել*

*2 հունվար, [1935 թ.]*

Սիրելի՛ Արտաշես,

Վաղուց է՝ լուր չունեմ քեզնից: Շատ ծանր օրեր եմ անցնում: Տարին բոլորեցի գրեթե կոշմարի մեջ, և տակավին շարունակվում է: Կինս հիվանդ է և ջղային հազի վերա: Մենակ եմ, ամբողջ հոգսը վրաս է, որ մեծ արգելք է գրադմունքներիս: Հազիվ հաղթահարում ես մի դժվարություն, գալիս է ավելի դժոխայինը: Չգիտեմ՝ ինչո՞վ պիտի վերջանա, գուցե և իմ հիվանդության հանգի: Միջոց չունեմ, որ զետեղեմ որևէ ապաքինարան կամ խնամածու ձեռք վարձեմ: Մնացած եմ շվարած, բեկված հոգով և մոլորված գլխով:

Թույլ տուր անցողակի հիշեմ, որ բավական է հանած աղմուկը, և ժամն է դադարեցնել դրոշակի և եպիսկոպոսի խնդիրը: Քեզնից չէի սպասում, որ այդպիսի չնչին հարցի ամիսներ նվիրելիր (1): Այստեղ նման մի դեպք տեղի ունեցավ. մի abbe կարգադրել էր վերցնել իրենց ազգային դրոշակը պատերազմի ինվալիտներից մեկի թաղման: Թերթերը գրեցին, որ ցավալի երևույթ է, և կհուսանք, որ հոգևոր

«կառավարությունը պատշաճ նկատողությունը թե սաստը կանե», և որով հարցը փակվեց:

Կողմնակի դիտողի համար շատ օտարոտի է թվում մամուլի աղմուկը այնպիսի մի ժամանակ, երբ այնքան կարևոր խնդիրներ կան: Հրդեհի մեջ ես և չես նկատում: Երևի դրսից նայողի աչքում հրդեհը մի փոքրիկ կայծ է և անարժան թափած եռանդիս:

Ողջույն կնոջդ և մյուս ծանոթներին, մասնավորապես Տիրայր եպիսկոպոսին (2):

Միշտ անձնվեր՝ **Ն. Ադոնց**

## 122. ԱՐՏԱՇԵՄ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

*Բրյուսել,*

*12 փետրվար, [1935 թ.]*

Միրելի՛ Արտաշես,

Շատերը շնորհավորեցին «Հայրենիք»-ին (ամսագրի-Պ. Հ.) տասնամյակը (1): Ոչ ոք խոսք չասաց խմբագրի մասին (2), այլ, ընդհակառակը, ասողներ եղան, որ կուսակցությունն է վարողը, և նրան է պատկանում փառքը և պատիվը: Միակողմանի տեսակետ է և հատուկ սոցիալիստներին: Ես կարծում եմ, որ հաջողության խոշոր մասը վերագրելու է խմբագրի անհատական ձեռներեցության: Ուստի ուղարկում եմ քեզ և խնդրում առանց քաշվելու տպել ինչպես կա, որպեսզի սոցիալիստներդ վերջապես հասկանաք, որ **անհատը** մեծ գործոն է պատմության և կյանքի:

Տրամադրությունս շատ վատ է: Կինս տարուց ավելի է՝ ծանր հիվանդ է: Վախենում եմ նյարդային քայքայումով վերջանա: Հոգիս խռովում է և բավականին ժամանակ խլելով՝ արգելք լինում պարապմունքներին, որովհետև մեն-մենակ եմք այս երկրում, ծանոթ չունենք, և ամեն ծանրություն վրաս է ընկած:

Ողջույն կնոջդ և քեզ:

Միշտ սիրով՝ **Ն. Ադոնց**

### 123. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՅԱՆԻՆ

Բրյուսել  
6 հուլիս, [1935 թ.]

Միրելի՛ Արտաշես,

Երկու նամակդ ստացել եմ իր ժամանակին (1): Շնորհակալ եմ հայտնաժ ցավակցությանդ համար: Ի՞նչ վերաբերում է աշխատակցության, հուսով եմ՝ կարող լինեմ մի բան ուղարկել (2):

Տարաբախտաբար, դեռ խելքս գլուխս չէ եկել, այնքա՛ն անսպասելի էր աղետը: Խեղճ կինս տկար էր, բայց մահվան երկյուղ չկար բնավ, ինչպես հավատացնում էին բոլոր բժիշկները: Հանկարծ ամեն ինչ փոխվեց. միայն 4 օր առաջ, քան մահը, բժիշկը հայտնեց վերահաս վտանգը: Թողեց այս անիծյալ աշխարհը՝ տանելով իր հետ իր բոլոր ձիրքերը գեղարվեստի ճյուղերում (3):

Առաջին անգամ է, որ տեսա աչքերովս և շոշափեցի մահը, այդ ահեղ հրեշը, և աշխարհը կորցրեց ինձ համար իր իմաստը:

Ցավում եմ, որ հարկավոր տրամադրությունը չունեմ գրելու մի քանի խնդիրների մասին, մասնավորապես Էջմիածնի և նրա նվիրակ Գարեգին Սրբազանի դեմ ուղղված հողվածներիդ մասին (4):

Ողջություն և կորով քեզ և տիկնոջդ՝

**Ն. Ադունց**

### 124. ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

31 avenue des Courses, 31  
Bruxelles

Միրելի՛ Հայր Ակինյան,

Ցավում եմ, որ չկրցա ծանոթանալ Եղիշեին նվիրված աշխատությանդ (1): Խնդրեմ ուղարկեք մի օրինակ: Դրկեք նաև Մեյեի նոր աշխատությունը կամ նոր հրատարակությունը «Քերականության»



(2): «Հանդէս ամսօրեայ»-ն այս տարվա սկզբէն բարի եղեք նաև ղրկելու:

Չգիտեմ՝ ով ում վերջին անգամ գրեց: Կարծեմ ես պատասխանեցի Ձեր մի նամակին գրված երկու տարի առաջ ծանր օրերին: Այնուհետև լուր չունեցա: Աշխարհքից կտրված վանականի, թե անպատականի մենավոր կյանք եմ վարում (3): Միակ ընկերս ծերությունն է (եթե չհաշվենք Սարուխանին, որ միշտ երիտասարդ է):

Հայաստանի հետ կապեր ունեք երևի<sup>օ</sup>: Ուրախ կլինեի գիտցածդ զիտնալ:

Ողջույն միաբանականից եղբայրներիդ:

**Ն. Ադոնց**

*29 սպրիլի, [1936] (4)*

**P. S.** Խնդրեմ հայտնել, թե Տաշյանի «Ցուցակ»-են (5) կարելի է օրինակ մի ունենալ, և ի՞նչ է արժեքը: Համալսարանը մի բան պատվիրելիս նախ արժեքն է հարցնում և ապա քննում, թե կարող է գնել, թե չէ: Հարմար պարագայի եմ սպասում, բացի Տաշյանի ցուցակից, ուրիշ գրքեր ևս պատվիրել վանքիդ հրատարակություններից:

**Ն. Ադոնց**

## 125. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

*1936, հոկտեմբեր*

*Բրյուսել*

Միտելի՛ Չոպանյան,

Ահա կատարում եմ խնդիրդ, պատվական խմբագիր (1): Ասացիք, որ գործը լուրջ է և վկայված (2), և ինձ պարտավորեցիք զբաղիլ մի հարցով, որ ներկայումս դուրս է հետաքրքրության շրջանէն: Գրքի վերնագիրն արդարև պարտիչ է: Ժամանակով Էջմիածնի միաբան և հայտնի բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը, ճեմարանի սաներեն

մեկից լսելով ուտի լեզվի **-պի** վերջավորությամբ բայաձևը, այն միտքն էր հայտնել, որ ուտիերենը խնամություն ունի ուրարտական կամ խաղը լեզվի հետ (3): Ողբացյալ Ն. Մառը հերքեց ուտի **պի**-ի և խաղդական **պի**- լծորդի ենթադրյալ նույնությունը՝ առանց ժխտելու, որ սեպագիր անձանոթ լեզուն կարող է և պետք է, որ կովկասյան լեզվախմբի հետ մերձավոր առնչություն ունենա: Մի ենթադրություն, որ գործնական արդյունք տալ չէր կարող, նախքան կովկասյան լեզվական առեղծվածը չլուծվեր: Խաղդագիտությունը այժմ բավականին հառաջացել է. իր դիվանն ունի, ուրույն բառամթերքը, քերականական ինչ-ինչ կանոններ երևան հանած: Կովկասյան առեղծվածը թեև մնում է տակավին իր նախկին վիճակի մեջ, բայց հայտնի է, որ այլևս հույս չկա բնավ կապելու խաղդերենը վրացերենի հետ, ինչ որ երազում էր խաղդագիտության հիմնադիրը՝ Ա. Մեսյը (4): Վրացերենը լավագույն ներկայացուցիչն է կովկասյան լեզվախմբի՝ այն մտքով, որ անցյալում հայտնի է, դարավոր գիր ու գրականություն ունի և ուրեմն համեմատության համար նպաստավոր պայմաններից գուրկ չէ: Սորա անհաջողությունը հուսադրիչ երևույթ չէ մյուս հարևան լեզուների հավակնության նկատմամբ, նրանց թվում՝ և ուտիերենի:

Հասկանալի է, թե ինչու «Խաղդերենի բանալին» մեզ մեծ հավատ չի ներշնչում: Գիրքը տեսնելուն պես ավելի ևս սաստկացավ մեր թերահավատությունը: Արտաքին տեսքն արդեն հուսահատիչ է: Խոսքս թղթի մասին չէ և ոչ տիպի, այլ գրության մեքենայի, որ հատուկ է ամեն մի գիտական աշխատության:

Սակայն պարոն Հ. Աճառյան իր հանձնարարական առաջաբանում մեծապես դրվատում է պ. Պայազատի գործը: «Նորակերտ նորանշան չնաշխարհիկ գործ» է անվանում և «ոչ վայրապար, այլ գուշակ կամփիմ լինել,- ասում է նա,- զի այս գործ լինելոց է գլուխ անկյան նորոգ բևեռագիտության»: Նույն առաջաբանը ավետում է, որ պ. Պայազատը գտել է ուտիերենի մայրենի լեզվի մեջ 49 բառ, որ հար և նման են խաղդերենին թե՛ հնչումով և թե՛ իմաստով, և որ այս պարագան մի կատարյալ «սքանչանք» է: Եվ որպեսզի իր վկայու-

թյունը անխտեմնություն չհամարվի, օրինակ է բերում **sidiistuni** բառը, որ խաղերեն է, և որին որպես թե համագոր է ուտիերեն **sidastune** բառը, և երկուսն էլ նշանակում են «**կառույց, շինեաց**»: Հայտարարությունը հանդուգն է և անհավատալի. այսպիսի մի երկար և դժվարահնչյուն բառ անփոփոխ մնալ յոթերորդ դարից մ. Ք., մինչև քսաներորդ դարը Ք. հ., իրոք, լեզվագիտական հրաշք է: Բնական է, որ ցանկանալինք ամենից առաջ ստուգել այս նմուշը:

Ահա ի՞նչ է ասում հեղինակը այս առթիվ. **sidustuni** բայը «կազմված է երկու բայարմատից և **tesun** օժանդակից՝ **sid, us, tesun**: Ներկա ուտիերեն լեզուն ունի դրանցից կազմված հետևյալ բայերը՝ **sid-besun**=քանդել, **sid-phesun**=քրքրել, **us besun**=փայտեղեն շինել, փայտ անել, **us-tesun**=փայտել, շենքը փայտով կառուցանել: Հետևաբար նշանակում է քանդվածը փայտով կառուցանել: **Sidust** բայը լեզուն մոռացության է տվել» (էջ 20):

Ռուսերեն բաժնում, նույն բառին անդրադառնալով, տալիս է հետևյալ մեկնությունը, որ թարգմանում ենք հարազատորեն՝ անտեսելով բնագրի լեզվական թերությունները. «Sidiistuni բայ է և ձևով անցյալ կատարյալ եզակի երրորդ դեմք: Այս բայը մոռացված է կենդանի լեզվում, բայց իր կազմից երևում է, որ բուն աղվաներեն բառ է, որովհետև **sid-besun** բայը, որ այժմ գործածական է կենդանի լեզվում, նշանակում է **փորել և անել**՝ շենքերի վերաբերմամբ, այսինքն՝ **կառուցանել**: Sidiistubi-ը կազմված է երեք բառից՝ **sid**=փոր(ումն), **iis**=գործ, **besun**=անել՝ կենդանի լեզվում, **as**=գործ, աշխատանք, **tu**=դերանուն երրորդ դեմք, **bi**-անցյալ կատարյալ **besun** բայի» (էջ 81):

Հասկանանք, թե ի՞նչ է ուզում ասել իր կրկնակի մեկնաբանությամբ պ. Պայազատը: Խաղական արձանագրությանց մեջ մի բառ կա, որ կարդացվում է **Si-di-i-is-tu-u-ni**, և որի ենթադրական իմաստն է՝ **շինեց, կարգի բերեց**: Պ[արոն] Պայազատ սխալմամբ, թե դիտմամբ գրում է հայերեն բաժնում՝ **sidustuni**, փոխանակ **sidiistuni**-ի, իսկ ռուսերենում ուղղում է իր սխալը: Առաջին դեպքում բառի մեջ

տեսնում է ուտիերեն **sid**, որ միայնակ ոչինչ չի նշանակում, բայց **si** օժանդակ բայի հետ՝ **sid=besun=քանդել** իմաստն ունի, և **us**, որ դարձյալ օժանդակ բայի հետ՝ **us-besun** կամ **us-tesun**, նշանակում է **փայտ** կամ **փայտեղեն** անել: Երկուսը միասին, ուրեմն **sid-us**, որ համագոր է համարում խալդական **sid-ust-uni**, և պետք է որ նշանակե **նրա հաշվով, քանդվածը փայտով կառուցանել**: Ավելի անհեթեթ բան դժվար է երևակայել: Սակայն հեղինակը նկատել է, որ քննելի բառը **sidust** չէ, այլ **sidiistuni**, այսինքն՝ երկրորդ վանկը՝ **-us-** չէ, այլ **-iis**, ուստի առանց հիշելու, որ սխալվել է, մի այլ գյուտ անում, իբրև թե այս **iis**-ը ուրիշ բան չէ, քան ուտիերեն **us**-ը՝ **գործ, աշխատանք**:

Հետևապես կատացվի **sid-iis=քանդ+գործ**, նույնքան անհեթեթ կազմություն, որչափ **քանդ-փայտ**: Հայերեն բաժնում չէր բացատրել բառի վերջին մասը՝ **-tuni**, այժմ լրացնում է պակասը՝ հայտարարելով, որ **-tu**-դերանուն է՝ երկրորդ դեմք: Իսկ **-ni** ի՞նչ է, եթե **tu**-դերանուն է. պատասխան չկա: Այնուհետև մեկնում է **sidiistu=bi** բայի վերջին վանկը՝ ասելով, որ **besun** ուտիերեն բայի անցյալ կատարյալն է. ուզում է ասել՝ կատարյալի ընդունելություն: **Sidiistubi=sid** (=քանդ), **-iis**(=գործ), **-tu**(=նա) **-bi**(=արած), նշանակում է վերջի-վերջո՝ «շինեց»: Սա բայի երրորդ դեմքն է, առաջին դեմքը կլինի՝ **sid-iist-zu-bi=շինեցի**, երկրորդ դեմքը՝ **sid-iist-un-bi=շինեցիր**: Այսպես՝ **tu**, որ երրորդ դեմքի հայտարար էր, մնում է նաև երկրորդ և առաջին դեմքերում՝ առանց պատճառելու հեղինակին որևէ մտահոգություն:

Օրինակը պերճախոս է և լավ վկա, թե ինչպես է դիտում, մտածում և դատում ուտիացի լեզվագետը: Որպեսզի ավելի հասկանալի լինին նորա թյուր մտքերը, պետք է գիտենալ հետևյալը: Ուտիերենում, ինչպես հայերենում, մանավանդ ժողովրդական լեզվում, սովորական է **անել=besun** բայի գործածությունը՝ **խաղ անել, վար անել, պատիվ անել**, անգամ օտար բառերի հետ՝ **քոմակ անել, հյուրմասք անել** և այլն: Առնենք **քոմակ անել=ուտիերեն komag besun** [ժողովուրդը արտասանում է «քոմագ», ուստի ուտիերենում ևս **komag**]: Ներկան

արտահայտելու համար առնվում է **komag+zu=ես+desa** (=ներկայի ընդունելությունը=հայերեն անող), այսինքն, թե արտահայտենք հայերեն՝ **քոմակ ես անող**, որ նշանակում է՝ **ես քոմակ եմ անում**: **Ղու քոմակ ես անում**=**komag+un**(=դու)+**besa**, **նա քոմակ է անում**-**komag e** (=նա) **besa**, և այսպես հոգնակին՝ տեղը դնելով **մենք, դուք, նոքա** դերանունները:

Նույն կերպ արտահայտվում է և անցյալ կատարյալը, միայն, իհարկե, առնվում է կատարյալի ընդունելությունը, որ **bi**, նույն **besum** բայի:

- Հետևաբար՝ **քոմակ արի**=**komag-zu-bi**,
- քոմակ արիր**=**komag-un-bi**,
- քոմակ արավ**=**komag-e-bi** և այլն:

Իսկ իսկական բայերը, այսինքն, որոնք խոնարհվում են առանց **besun**-ի նման օժանդակների, օրինակ՝ **նստել**=**artsesun**, կազմված են՝ ներկան ավելացնելով բայարմատին դերանվանական հոդերը: Այսպես՝

- Artsi-zu** (=նիստ+ես) = նստում եմ,
- artsi-n** (=նիստ+դու) = նստում ես,
- artsi-ne** (=նիստ+նա) = նստում է և այլն:

Խաղական սեպագիր արձանագրությանց մեջ հաճախ պատահում են **-ubi et uni** հանգող բանաձևեր, որոցից **-ubi** համարվում է առաջին դեմք և **uni**՝ երկրորդ դեմք՝ անցյալ կատարյալի: Այսպես՝

- |                             |                               |
|-----------------------------|-------------------------------|
| <b>sidiistu-bi</b> =շինեցի, | <b>sidiistu-ni</b> =շինեց,    |
| <b>hau-bi</b> =նվաճեցի,     | <b>hau-ni</b> =նվաճեց,        |
| <b>zadu-bi</b> =կառուցի,    | <b>zadu-ni</b> =կառուցեց,     |
| <b>teru-bi</b> =գետեղեցի,   | <b>teru-ni</b> =գետեղեց,      |
| <b>nahu-bi</b> =տարի,       | <b>nahi-ni</b> =տարավ և այլն: |

Խաղդերենում հայտնի չեն ո՛չ եզակի երկրորդ և ո՛չ հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը. երկրորդը վիճելի է: Չնայելով այս հանգամանքին՝ պ. Պայազատը հնարավոր է գտել համեմատության դնել և

այս անձանոթ դեմքերը ուտիերենի հետ: Նա համոզված է նախքան ապացուցանելը, որ ուտիերենը հին աղվաներենն է, և սա՝ հին խալդականը: Ուտիերենը նրա համար նոր խաղերեն է, իսկ խաղերենը՝ հին ուտիերեն, մեկը՝ կենդանի, մյուսը՝ մեռած լեզու:

Հիշելով ուտիերենի **komag-zu-bi** և այլն, **artsi-ne** բայերի վերջին – **bi** և **-ne**՝ փորձել է նույնացնել խալդական *u-bi* և *u-ni* վերջավորությունների հետ՝ առանց ուշ դնելու որևէ օրենքի: Տեսանք, որ **-bi** ընդունելություն է **besun** բայի, նշանակում է **արած** և կիրարկելի է բոլոր դեմքերի համար՝ եզակի և հոգնակի: Մինչդեռ խալդական **-bi** թե **ubi** նշան է եզակի առաջին դեմքի, և ծագումը տակավին հայտնի չէ: Կան ոմանք, որ կարծում են, որ երբեմն և երրորդ դեմքի նշանակություն ունի, բայց հավաստի չէ: Պ[արոն] Պայազատը կարծում է, որ խաղերեն **ubi** ոչ թե առաջին, այլ երկրորդ դեմքն է, որին համապատասխանում է ուտիերեն **e-bi**՝ **komag-e-bi** բայում: Ուստի և իրավունք է համարում վերականգնել խալդերենի առաջին և երկրորդ դեմքերը՝ հետևողությամբ ուտիերենի.

sidiis-zi-bi?,	komag-zu-bi,
sidiist-un-bi?,	komag-un-bi,
sidiist-u-bi,	komag-e-bi:

Այսպես էլ **zadubi**, **terubi** և այլ բայերը խոնարհել է ուտիերենի վրա և դեմ առ դեմ ուտիերեն ձևերի, այնպես որ անփորձ ընթերցողը կկարծե, թե խալդական բայի խոնարհումը իսկական է և սեպագրի համաձայն և ո՛չ ուտիացի Պայազատի երևակայության, թե ստեղծագործության արդյունք: Ամբողջ էջեր բռնած են այս անհիմաստ կամ, ինչպես ինքն է ասում, «ենթադրական» խոնարհումները:

Նույնը և **-uni** հանգի վերաբերմամբ: Այս անգամ օրինակ է ծառայել **artsi-zu**=նստում է: Սրա հետևողությամբ կերտել է՝

«sidiistu-zu»? = artsi-zu,
«sidiistu-un»? = artsi-n,
sidiistu-ni = artsi-ne:

Իհարկե այ. Պայագատի համար արժեք չունի, որ խաղերեն **sidiistu-ni** անցյալ կատարյալ է, իսկ **artsi-ne** ներկա: Նմանությունն էլ լոկ մի տառի մեջ է:

Ոչ միայն քերականական ձևերը, այլ ամենն առաջ բառերը, դրանց ստուգաբանությունը և համեմատությունը շատ ստոր են գիտական մակերևույթից: Ստուգաբանական փորձերը ժողովրդական կոչված մեկնություններից այն կողմ չեն անցնում: Ո՛չ **sidiistene** և ո՛չ **sidastene** բայ գոյություն չունի ուտիերենում, այլ պ[արոն] Պայագատի հնա[րա]գիտության արդյունք է: **Sid** ի՞նչ կնշանակե, ինքն էլ որոշակի չգիտե՞ք **քանդե՞լ**, թե՞ **փորե**, իսկ **as=գործ** հավանորեն թուրքերեն **is=գործ** բառն է, որ ուտիերենում դարձել է **ըը՛՛** ի ձայնի խոլ հնչման հետևանքով: Հարևան **ցախուր** բարբառում՝ **is gass=գործ անե**, որ **gass=besun** ուտիերենի: Ամեն պարագային, ենթադրելով անգամ, որ **as** բուն ուտիական **ինչք** է, *sid+as+te*=«**քանդելով շինել**» բացարձակ անհեթեթություն է, եթե չասենք ավելին:

Կասկածելի է նաև **arhiuruliani=ընտանիք** և ուտիերեն **arhiur-ulux**=«**ցեղնումեղը**» համեմատությունը: Հավանական է, որ վերջին տարրը՝ **-ulux**, թուրք՝ **ուլուխ=ընտանիք** բառն է, առաջինը՝ **arhiur**՝ թերևս արաբական **ohl**=ուտիական **-ur** հոգնակի նշանով:

Ուտիերենը, ինչպես կովկասյան մյուս լեզուները, հաշվելով նաև հայերենը, անհամար փոխառություններ ունի արաբ-պարս-թուրք լեզուներից: Կան նաև հայերեն շատ և երբեմն հին բառեր ուտիերենի մեջ, նաև վրացերեն և դրացի լեռնական լեզուներից: Մեծ զգուշություն է հարկավոր ուրեմն չփոթելու համար օտար բառերը բուն ուտիերենի հետ: Պ[արոն] Պայագատը այս մասին չի մտածում, այնքան որ պատրաստ է նույնիսկ **vartanli**, **yaghubli** և նման ակներև նոր թուրքական **lu** հանգը հին խաղերեն համարել (3): Խաղը. **Kirani**, ուտ. **Kirami**, որ **աղյուս** է նշանակում, հունարեն **keramos**, որից եվրոպական **céramique**: **Sirabo** խաղերեն բառը ուղղում է **zirabo**, որ համեմատի ուտիերեն **zorabu** կամ **zirobu**, որ որպես թե Ղարաբաղի [բարբառի] **zer=խոշոր, հսկայ**:

Այնինչ **zoraba** է պարս. **zorba**=ուժեղ և **zer**=ժողովրդական **զըռ** (էջ 51): Խալդ. **usmasini**, որ նշանակում է **բարձր** կամ թերևս **կարողությամբ**, ինչպես վերջերս մեկնեցին, պ. Պայազատ իր սեփական խիզախ կարծիքը ունի: **Xaldinini usmasini** պետք է կարդալ, նրա կարծիքով, **Xaldini ni us ma si ni**, ուրեմն հինգ բառ՝ **nus**=մատաղ, գոհ, **ma**=ուր, **si**=նա, **ni**=է, իմաստը՝ «**Խալդ (աստծուն) ես մատաղ, ուր որ նա լինի**»:

Այսպիսի անդամահատություններ առատորեն սփռված են գրքում, որոնց վրա կանգ առնել ժամավաճառություն է: Հայ գեղջուկ սրամտությունը իր ստուգաբանական գյուտերն ունի, օր.՝ **մինիստր ministre** բառը ռուսները առել են հայերից, **մինիստր** նշանակում է «**մի նստիք**», որովհետև մինիստրը իրավունք չունի նստել թագավորի առաջ: Ցավելով պիտի նկատենք, որ պ. Պայազատի ստուգաբանությունները այս կարգի գյուտեր են: **Vili** և **patara** բառերը մասնավորապես հետաքրքրական են, որովհետև այն հազվագույտ տարրերն են, որոնց նշանակությունը կասկածից դուրս է: Առաջինի մասին պ. Պայազատ նկատում է, որ բառը այժմյան կենդանի բարբառում գոյություն չունի, բայց Վարդաշեն գյուղում այդպիսի ազգանուն կա, որ այդպես կոչվել է ջրաբաշխական գործի հետ կապ ունենալու պատճառով, ինչպես հայերեն Ջրպետյան: Իսկ **patara** մնացել է ուտիերենում և նշանակում նախ՝ «**մաս, կտոր**» և ապա՝ «**առևտրի հավաքավայր**»: Այսպիսի մեկնություններ կարդալուց հետո այլևս հույս չի լինում լրջության որևէ նշույլ գտնել ուտիացի խաղաղատի աշխատության մեջ: Պատմական հայտարարությունները խաղերի և աղվանների անցյալի կամ նրանց չինական ծագման վերաբերյալ հեղինակի անձնական կնիքն են կրում և ավելի արժեք չունին, քան իր լեզվագիտական արկածախնդրությունները:

Ո՛չ ցանկություն և ո՛չ իրավունք ունինք պ. Պայազատին խորհուրդ թելադրելու: Կուզեինք միայն որևէ կերպ պիտանի լինել եթե ոչ իրեն, գեթ հայ գրին: Մեզ թվում է, որ խաղական հարցին լրջորեն մոտենալու համար անհրաժեշտ է ամենից առաջ աստրագետ լինել, ընդ-



հանուր գիտական պատրաստություն ունենալուց հետո ավելի ճիշտ՝ սեպագրագետ: Առանձնահատուկ գրականություն է, իր կարգ ու կանոն ունի արտաքին ձևի և մտքերի էության և արտահայտության եղանակի մեջ: Այս բանին տեղյակ գիտունը, երբ ենթադրությանց է դիմում, պահում է չափ ու սահմանը՝ համակերպվելով սեպագիր գրականության ոգուն և ոչ թե ջրից օդ ցատկելով: Այդպիսին երբեք թույլ չի տա մտածել, թե **alsusine** մակդիրը կարելի է հասկանալ՝ **al-su-si-ne**՝ **վերին գիշերվա-ն տեր**-ին իմաստով:

Մյուս կողմից, ուտի լեզուն որևէ բանալի համարելուց առաջ կարևոր է նախ և առաջ հիմնովին ուսումնասիրել լեզուն. բավական չէ ուտիացու գիտությունը, այլ հարկավոր է այդ գիտությունը անցնել լեզվագիտական հնոցով, որոշել օտարամուտ տարրերը և կազմել գուտ ուտիական բառամթերքը՝ իր քերականական ձևերով հանդերձ: Ոչ մի կասկած չունինք, որ պ. Պայազատը քաջ գիտե ուտի լեզուն, ինչպես որ մի հայ գյուղացի գիտե իր բարբառը վարպետորեն: Այս բնավ բավական չէ լեզվագիտական և մանավանդ ստուգաբանական դաշտում արշավներ կատարելու: Մի բան ևս հարկավոր է, որը, սակայն, դյուրությանը ձեռք չէ բերվում, և լավ է թողնել և անել, ինչ որ հնարավոր է: Ուտիերենի և ընդհանրապես լեռնականների լեզուների ուսումնասիրությունը անվիճելի է, եթե ոչ հեռավոր խալդագիտության, գոնե հայերենի ուսումնասիրության տեսակետից: Կարիք չկա ուտիերենը համեմատել հին աղվան անծանոթ լեզվի հետ, ինչպես անօգուտ է գրավաստակ լինել խալդերենին մոտեցնելու խժբժանքով: Ուտիերենը ազգակից է իր մերձավոր հարևաններին, օր.՝ Յախուրի, Ագուլի, Արչինի, Վայկուն (5): Շատ հավանական է, որ Արցախ, Ագուլիս, Հարձղավնի, Վայկուն աշխարհագրական անունները պահելու են երբեմն հին Ուտիքի շրջանում ապրող երեք ցեղերի հիշատակը: Արցախի և Յախուրի կապը մեզ շատ հավանական է թվում: Նաև Աղահեճ, որ անտարակույս Լահիճ անունով հայտնի ցեղն է: Եթե հիշածս ցեղերի լեզուն լուրջ ուսումնասիրության մյուս եղած լիներ, թերևս մի դիպող առիթ կունենայինք Ղարաբաղի բար-

բառի անհատական գծերի ծագումը լուսաբանել, որ և խրատական կլիներ և ուրիշ գավառաբարբառների լուսաբանության համար (6):

Անտարակույս, այ. Պայագատ ավելի արդյունավետ գործ կատարած կլիներ, եթե իր եռանդը և ուսումնականի ծարավը նվիրեր ամբողջովին ուտի լեզվի և հետամուտ լիներ հավաքելու և հրատարակելու բոլոր այն նյութերը, որոնք պետք են նույն լեզվի ուսումնասիրությունը գիտական հողին վերա դնելու համար: Գրի առնել զրույցներ, պատմություններ, հավաքել բառամթերք, դարձվածներ, քերականական ձևեր՝ առանց ջանք գործելու մեկնաբանել. ահա՛ մի աշխատանք, որի համար երախտապարտ կմնա գիտությունը, և որը այ. Պայագատի ձեռնհասության սահմաններումն է:

Պարիսի Ազգային գրադարանում կա մի ձեռագիր քերականություն ուտի լեզվի, որի հեղինակն է Կարապետ դպիր Ղահրամանյան-Ավթանդիլյան, և նա կատարել է իր աշխատությունը Հարություն արքեպիսկոպոս Սանահնեցու պատվերով: Պրուսայի առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս (7) հետաքրքրվել է այդ գործով և ոմն Ղազար քահանայի ձեռքով ընդօրինակված մի օրինակ ստացել: Ինչպես երևում է, այս օրինակից է արտագրված Պարիսի ձեռագիրը 1859 թվին: Գործը շատ համառոտ է, բայց հետաքրքրական: Ինչ որ զարմանալի է, **-պի** հանգը ձայնափոխված է **փի**-ով և ոչ **բի**-ով. հեղինակն իրեն անվանում է Տաշբուլաղցի: Պ[արոն] Պայագատը կարող է հայթայթել մի օրինակ այս գործից իր աշխատության համար:

**Ն. Ադոնց**

## 126. ՓԱՐԻԶԻ ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ

1937, հունվար

Բրյուսել

Ի ցավ սրտի, պիտի մերժեմ Ձեր խնդրանքը (1): Մտադիր ըլլալով քիչ ատենեն մասնավոր և ընդարձակ հողված մը նվիրել թե՛ պրոֆ. Ա. Մեյեի (2) և թե՛ անկից առաջ վախճանված պրոֆ. Ն. Մառի (3) կատարած հայագիտական գործին՝ չպիտի կրնամ մասնակցիլ այս ցույցին:

**Ն. Ադոնց**

## 127. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ Հայր Ակինյան,

Ստացա շնորհակալությամբ պատվական աշխատություններդ (1): Եղիշեն շա՛տ եք ձգձգել: Սպասենք վախճանին (2):

Ողջույններով՝ **Ն. Ադոնց**

*27 մարտի [1937]*

## 128. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԻԹԱՐՅԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

Կխնդրեմ որկել ինձ Խալաթյանցի Չենոբ Գլակ գործեն (1) մի օրինակ՝ իմ հասցեով:

31 avenue, des Courses, 31

**N. Adontz**

Հարգանքներով՝ **Ն. Ադոնց**

*[1937] (2)*

## 129. ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԳ. [ԱՔՅԱՆԻՆ]

Արժանապատի՛վ Հայր (1),

Շնորհակալությամբ ստացա պատվիրածս գիրքը (2) և որկեցի արժեքը փոստատան բարդ հաշիվներեն հետո: Չգիտեմ՝ որքան ճիշտ են հաշվել, եթե պակաս կամ ավել լինի, ներեցե՛ք:

Ինչ վերաբերում է «հետամնա» պարտքին, ես նորեն գրեցի պ[արոն] Ջավրյանին, որի խնդրանքով էի պատվիրած գրքերը և հանձնըված իրեն: Ինձ Ջավրյանը հայտնել է շատ առաջ, որ որպես թե այդ հաշիվը հարդարել է Հ[այր] Ակինյանի հետ (3): Ես էլ հանգիստ էի, որ մի անախորժ պատմություն բարի լուծում ունեցավ: Ցավով իմանում եմ, որ թյուրիմացություն կա: Խոսեցեք Հ[այր] Ակինյանի հետ:

Ողջույն միաբանակից եղբայրներին՝

**Ն. Ադոնց**

*18 մայիսի, 1937*

31 av. Des Courses, 31

Bruxelles

## 130. «ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Հանդէս Ամսօրեայ»-ն տոնում է իր գոյության հիսնամյա տարեդարձը (1): Շնորհավորում եմ բոլոր սրտով իր տոնը, գնահատում մեծապես իր արդյունավետ և ուղեշ հասակը: Թող տոնակատարությունը պատեհ առիթ լինի և մի լիաբուռն նվեր գա՝ ամրապնդելու դրանյութական հիմերը, որպեսզի շարունակե մնալ յուղառատ ճրագ հայ բանասիրության:

Հիմնադիրները ծերացան, գնացին (2): Եկան նրանց աշակերտներ (3) և թերթը պահեցին երիտասարդական աշխույժի մեջ: Հարգանք Հ[այր] Տաշյանի հիշատակին և հանձինս նրա բոլոր անցյալ և հանգած խմբագրապետներին և աշխատակիցներին: Ողջույն և

խրախույս ներկա բարեջան խմբագրին՝ Հ[այր] Ակինյանին, իր գրչագիրներին, ողջույն ամբողջ Միաբանության:

**Ն. Ադոնց**

Բրյուսել,  
30 սեպտ[եմբերի], 1937

**Հ. Գ.** Միաժամանակ տոնվում է և հիսնամյա գրական գործունեությունը պ[արոն] Առաքել Սարուխանյանի, որ անօրինակ սիրով և հավատարմությամբ փայփայել է «Հ[անդէս] ա[մսօրեայ]»-ն սկզբից ցայժմ (4): Հոբելյարը կարող է ասել իր անձի մասին. «Ես աշխարհումս մարդու վնաս չտվի, հայ գրին օգուտ բերի»: Նա պետք է բարի օրինակ ծառայե, թե ինչպես կարելի է ընտրել գրից հեռու մի ասպարեզ (5), բայց սիրել գիրը և իր նպաստը ձգել նրա շտեմարանը:

Սրտագին շնորհավորություններս՝

**Ն. Ադոնց**

### **131. ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

Արժանապատի՛վ Հ[այր] Ակինյան,

Նամակիս մեջ (1), եթե չեմ մոռացել հիշել, խնդրեմ վերստին ուղարկել ինձ Րաֆֆիի «Դավիթ Բեկը» և «Խամսայի մեղիությունները» (2):

Ողջույններով՝ **Ն. Ադոնց**

[1937] (3)

### 132. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՅԱՆԻՆ

Սիրելի՛ Սաֆրասոյան,

Շնորհակալությամբ ստացա նամակդ: Ուրախ եմ գալստյանդ համար (1): Ես սովորություն չունեմ օդափոխության գնալու: Այս տարի եկա այստեղ՝ ազատվելու հույսով մի անախորժ տկարությունե, որն է գլխապտույտ: Դժբախտաբար, քամիներն այնքան զորեղ էին, որ անզգուշությամբ առաջին օրն իսկ մրսեցի, և տակավին խելքս գլուխս չի եկել:

Առաջին հնարավորության կվերադառնամ, բայց չպիտի կարողանամ մասնակցել համագումարին, թեև զեկուցման պես մի բան էի ուրվագծել:

Կգամ, մի կուշտ կզրուցենք դեսից-դենից: Երևանից տեղեկություն ունե՞ք:

Հետաքրքրական էր ծանոթանալ Ֆրիդրիխին (2) և Գոցին (3), եթե սա ևս եկել է համագումարին:

Ողջույնիվ  
Ձերդ՝ Ն. Աղունց

[1938] (4)

### 133. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի՛ պ. Չոպանյան,

Տեսա Դուկասյանին (1), ներփակ կգտնեք երկու հարյուր ֆր[անկ]: Ինչ վերաբերում է Խոջայանին (2), խոսեցի, բայց անմիջական արդյունքի չհանգա: Թերևս անձամբ գովեք որպես տղային ճանաչող: Գուցե մի բան դուրս գա: Գանգատվում է, որ Բեռլին եղած

իր թոշակավորները շատ սուղ կնաստին և մխիթարական բան չեն խոստանում:

Մնամ հարգանքով՝ **Ն. Ադոնց**

*7 հունիսի, [պարեթիվը նշված չէ]*

### **134. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

*15 ապրիլի, 1940*

31 av. Des Crusses

Bruxelles

Սիրելի՛ Սրբազան,

Ուրախ եմ, որ վերջապես մի լուր ստացա քեզանից: Հարկավ թերթերից հետևում եմ, որքան հնարավոր է, տեղիդ անցքերին: Բայց անմիջական աղբյուրի ջուրն ավելի անուշ է: Ինչ ասել կուզի, որ խորապես վշտացած եմ անհաճո անցքերի առթիվ (1): Մեր հասարակությունը, երևում է, ի բնե կռվազան է և աղմուկ է որոնում և ստեղծում նաև այնտեղ, ուր պիտի տիրի խաղաղություն, և ուր երկպառակության տեղիք չկա: Անձիդ դեմ չէ կռիվը, իհարկե: Կրքերն արդեն լարված և միմյանց դեմ զինված էին: Դու գոհ ես, բայց վիատելու չէ: Կանչի՛ր մոտդ Վրացյանին (2), Դարբինյանին (3), եթե այնքան կրոնական են դարձել, որ կուզեն սեպիական աղոթարան ունենալ և չխառնվել մաքսավորների (4) հետ, թո՛ղ պահեն առանձին եկեղեցի, բայց պիտի հասկանան, որ [եկեղեցու] պետք չի կարող բաժանվել երկուսի: Չեմ կարծում, որ չըմբռնեն: Այնպիսի օրեր չեն, որ ուժեր վատնենք չնչին հարցերի շուրջը: Համառություն է կամ կուսակցական ինքնասիրության թյուր ըմբռնում: Մենք այսօր և վաղվան համար պետք ունենք Ամերիկայում մի և միակ եկեղեցու պետի՝ իբրև Էջմիածնի ներկայացուցչի: Պետք չէ սպասել, մինչև որ վերահաս հանգամանքները և ստիպողական պայմանները մղեն մտածելու այդ մասին: Հուսով եմ, որ Էջմիածնի հետ կապերդ պահում ես սերտո-

րեն: Ես գրել եմ այդտեղ, որոնց հարկ է (5) և բացատրել, որ անձիդ շուրջ հարուցած ցույցերը այլ կերպ կըմբռնվեն մեր երկրում (6), և այնտեղի պետերը կարող են նկատել որպես ցույց իրենց դեմ, մի երևույթ, որ ցանկալի չէ ներկա պայմաններում:

Իմ մասին առանձին ասելիք չունիմ: Յուրաքանչյուր մարդու կյանքում թույլ կա, երբ վճռական բեկում է առաջանում, ինչպես ասում են՝ «փուրը նստում է»: Իմ թույլն եկել է: Լուռումունջ, սենյակումս փակված խորհերի, հույզերի և ընթացիկ աշխատանքների մեջ մոլորված: Վհատություն է, անլույս հորիզոնները, որ տկարացնում են մարդու, ավելի քան հիվանդությունները: Ինչ վերաբերում է աշխատանքներիս, պատրաստել եմ Հայոց պատմության Ուրարտական շրջան (ֆրանսերեն)՝ մոտ 200 էջ (7): Մելքոնյան կոմիտեն ցանկություն հայտնեց «Հայրենիք»-ի մեջ երևցած պատմական հոդվածներս վերահրատարակելու: Առանձին տրամադրություն չունեի վերստին նայել, ուղղել սխալաշատ գրություններ, բայց ստիպված եմ անել: Առանձին հատորներ կկազմեն՝

1. Հայ-բյուզանդական դեմքեր, պատմականք,
2. Հայոց պատմության վերաբերյալ հոդվածներ,
3. Բանասիրականք:

Տարաբախտաբար, չկարողացա գնալ Պարիս՝ տեսնելու ի՞նչ վիճակի մեջ է գործը:

Մեր թուրքահայ եղբայրները այլ հասկացողություն ունեն պատմության և գրականության մասին: Տեսնենք:

Ցանկամ առայժմ հաջողություն և առողջություն: Տիրայրին (8) հարկավ տեսնում ես, ի՞նչ է անում: Բարև իմ կողմից:

Կարոտ օրհնությանդ,  
միշտ անձնվեր՝ **Ն. Ադոնց**



### 135. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

Բրյուսել  
15 ապրիլի, 1940

Սիրելի՛ Արտաշես,

Նամակդ ստացա շատ և շատ ուշ՝ կարծեմ փետրվարի վերջերը, ուստի և հնար չկար ցանկացածդ հողվածը դրկել մարտ ամսվա համար (1):

Հարկավ, խնդիրը միայն ժամանակը չէ: Անցյալ տարի Պարիս մի դասախոսություն արի «Սասունցի Դավիթ» վեպի մասին՝ տարաբախտաբար առանց գրի առնելու: Նույն խնդրին դառնալու համար պետք է նոր աշխատություն թափել, որի համար, ավա՛ղ, ո՛չ ընթացիկ զբաղմունքներս են ժամանակ թողնում, և ո՛չ էլ տրամադրություն կա: Խռովահույզ մթնոլորտն այնպես է ազդել, որ զգացի այն թուլությունը, որ գալիս է ծերությունից, թե վիատությունից: Ո՛չ անձնական, ո՛չ հայրենիքյան և ո՛չ ամենուրեքյան ոչ մի նշույլ չմնաց պայծառ և զվարթ լույսի, որ ողջագուրեր սառած էությունս նոր հույսերով: Վախում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի և կամ նույնչափ վիատ, ինչպես ես:

Ուրախ եմ, որ դու տակավին լի ես ավյունով, միշտ նույն հեծյալը, մտրակը ձեռքիդ և պատրաստ մեծ քարավանը մտնելու, ինչպես կասեր Ջիվանին: Սակայն, կարծում եմ, որ վատ չէր լինի, եթե սակավ մի պայքարող եռանդդ խնայեիր, մտրակդ ձգեիր և ավելի հաշտ և սրտացավ աչքով նայեիր մեր աղքատիկ հայրենի հողին, մեր խեղճ **սոխակեր** հայրենիքին (2): Գիտես, որ մեր ժողովուրդն ուրիշ սնունդ չունի, քան սոխը: Խոհեմություն չէ աննպատակ քննադատություններով սառեցնել տարաշխարհիկ հայությունը հույսի միակ աղոտ ճրագեն, նրա ապագայի միակ երաշխիքեն: Թո՛ղ որ նույնիսկ աշխարհահալած հայության բախտը կապված է դարձյալ նույն սոխ սննդին: Համադամ կերակուրներ առաջարկող չկա:

Այս կարգի մտածությունն է նաև, որ ստիպում է խորապես ցավել ամերիկահայ գժտությունների առթիվ (3): Գարեգին Սրբազանի ժա-

մանումը մի առիթ էր՝ վերջ դնելու անհիմաստ երկպառակության (4): Մի քանի քահանաների պատճառով վիրավորել Գարեգինի նման մի պատկառելի անձի, բացարձակապես աններելի է և անհասկանալի: Մոռանալու չէ մանավանդ, որ նրա հանդեպ ցուցադրված վարմունքը մեկնում են հեռու երկրում որպես մի ընդդիմադրական ցույց [այն] երկրի դեմ, որի հետ տակավին կապված է Սրբազանը: Իսկ ի՞նչ շահ ունենք ավելի խորացնելու վիճը, որ արդեն գոյություն ունի:

Նամակիս նյութից հեռացա ականա: Բայց երբ մարդու գլուխը լի է անհանգիստ և տագնապող մտքերով, շեղումը դառնում է հասկանալի: Եթե ամառը կարողացա, կգրեմ ասելիքս «Սասնա ծռերի» մասին և ուրախությամբ կդրկեմ (5): Ցավում եմ, որ ոչ մի հնարավորություն կա գլուխ հանելու այն հողվածները, որ ծրագրել են տարիներ ի վեր «Հայրենիք»-ի համար:

Մելքոնյան ֆոնդը ցանկություն է հայտնել հրատարակելու առանձին գրքով «Հայրենիք»-ում երևցած պատմական գրություններս: Ճշմարիտն ասած՝ ես ընդդիմացա, բայց վերջը հոժարություն տվի այն հույսով, որ այս առթիվ մի անգամ ևս աչքի կանցնեն այդ հողվածները և կսրբագրեն բազմաթիվ սխալները և թերևս թարմացնեն:

Վրացյանին բարև. թո՛ղ շատ չխոսի քիչ խոսելի նյութերի մասին, մանավանդ հրապարակավ:

Ողջույն կնոջդ և հաջողություն քեզ՝  
**Ն. Ադոնց**

## ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1893

**1. «ԱՐՉԱԳԱՆՔ» [ԼՐԱԳՐԻ] ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 13)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել գրական և քաղաքական «Արձագանք» շաբաթաթերթում (Թիֆլիս, 1893, 6 հունվարի, № 3, էջ 2): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը հայագետ, Լազարյան ճեմարանի հայոց լեզվի դասախոս Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանի (1852-1920) մասին է:

2. Նկատի ունի ավստրիացի հայագետ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Մյուլլերի «Kleine Mittheilungen» ուսումնասիրությունը» (տե՛ս «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes», Band V, heft 3, Wien, 1891):

3. Տե՛ս «Արձագանք», 1892, 11 դեկտեմբերի, № 144, էջ 3:

4. Խոսքը մանկավարժ, գրող Սամվել Գյուլգալյանի (1830-1912) մասին է:

5. Խ. Հովհաննիսյանը հարկ է համարել առանձին հոդվածով անդրադառնալ Ադոնցի այս բռնուցիկ նկատողությանը և հայտնել իր անհամաձայնությունը [տե՛ս **Խ. Հովհաննիսյան**, «Գերեզման» բառի ստուգաբանությունը (պատասխան պարոն Ադոնցիին), «Արձագանք», 1893, 29 հունվարի, № 12, էջ 12]:

6. Խ. Հովհաննիսյանին տարօրինակ է թվացել անձանոթ հոդվածագրի ազգանունը, և կասկած է առաջացել «Ադոնց», թե՞ «Ազոնց»:

1895

**2. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ**

(էջ 14)

Ինքնագիրը պահվում է Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի արխիվում (Կարապետ Եզյանի թղթեր, ֆ. 58, ցուցակ 2, № 10): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, Նիկողայոս Ադոնցի նամակներից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 11, էջ 80-81): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Կարապետ Եզյան (1834-1905) – Ռուսական կայսրության պետական գործիչ, Ն. Ադոնցի հովանավորը: Նիկողայոս Ադոնց - Կարապետ Եզյան հարաբերությունների մասին տե՛ս մեր հրապարակումը՝ «Էջմիածին» ամսագիր, 2012, № 11, էջ 53-57:

2. 1895 թվականի սկզբներին Ն. Ադոնցը, թողնելով Ս. Պետերբուրգի համալսարանի իրավագիտության բաժինը, մի որոշ ժամանակ հետո անցնում է Դորպատ՝

գերմաներեն լեզվի մեջ հմտանալու և այնուհետև, թերևս, տեղի համալսարանում ուսումը շարունակելու մտադրությամբ: Աշնանը, սակայն, նա կրկին վերադառնում է Ս. Պետերբուրգ և հետևում պատմաբանասիրական ֆակուլտետի պարապմունքներին:

3. Լեոնհարդ Կարլովիչ Մազինգը (ծն. 1845) սլավոնական լեզուների քաջ գիտակ էր և Դորպատի համալսարանում դասավանդում էր ռուսաց լեզու և գրականություն: 1895 թվականին նա պատրաստվում էր ուղևորվել Կովկաս՝ տեղական լեզուների հնչյունաբանությունը ուսումնասիրելու նպատակով:

4. Խոսքը սպագա հայագետ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի (Մագիստրոս) մասին է (1864-1939), որ Դորպատի համալսարանի շրջանավարտներից էր (1891):

5. Խոսքը բժշկություն ուսանող, ծնունդով ախալքալաքցի, 1896 թվականի վերջին համալսարանն ավարտած Լևոն Ստեփանի Օհանջանյանի (ծն. 1865) մասին է:

**1896**

**3. «ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

**(էջ 15)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Այդ ժամանակ՝ 1896 թվականին, «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիրն էր Գրիգորիս վրդ. Գալեմբեարյանը (1862-1917):

2. Նիկողայոս Արոնցը սովորում էր Ս. Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության և արևելյան լեզուների բաժիններում (1895-1899):

3. Իրականում Ն. Արոնցը բաժանորդագինն ուղարկել է 1897 թվականի հունվարի 2-ին (տե՛ս № 4):

**1897**

**4. «ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

**(էջ 16)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Այսինքն՝ 1897 թվականի փետրվարի 27-ը:

**5. «ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

**(էջ 16)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հասցեատերը հավանաբար Գրիգորիս վրդ. Գալենքեարյանն է:

1898

**6. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵԶԻԿՆՅԱՆԻՆ**  
(էջ 17)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյան (1867-1921) - Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանապետ (1898-1921), Ն. Աղոնցի հասցեատերերից: Հասցեատիրոջ անունը վերականգնել ենք՝ հիմք ընդունելով այն իրողությունը, որ այդ և հետագա տարիներին Ն. Աղոնցը Պիլեզիկճյանից էր ստանում ինչպես «Հանդէս ամսօրեայ»-ի համարները, այնպես էլ իրեն հույժ հետաքրքրող գրականությունը:

2. Նկատի ունի իր ավարտական «Հայկական Վարք-սրբոց ժողովածուներն ըստ Գրիգոր Ծերենցի վերջին՝ ժամապաշտական խմբագրության» շարադրանքը: Այս աշխատանքը Ս. Պետերբուրգի համալսարանի վարչությունը ներկայացնում է մըրցանակաբաշխության: Հանձնաժողովն այն գնահատել է «գերազանց», իսկ հեղինակին՝ պարգևատրել ոսկե մեդալով:

Ի դեպ, համալսարանի 1898 թվականի տարեկան հաշվետվության մեջ այս աշխատության մասին ասված է. «Նյութերի հարստությամբ,... լուսաբանությունների նորությամբ և դիպուկ նկատողություններով պ. Աղոնցի աշխատությունը ծանրակշիռ ավանդ է մասնագիտական գրականության մեջ և արժանի է համալսարանի միջոցներով տպագրվելու (տե՛ս **Պ. Հ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 84, ծան. 1): Հետաքրքիր է, որ Ն. Աղոնցի այդ աշխատությունը այդպես էլ այն ժամանակ լույս չտեսավ: Հետագայում, սակայն, փարիզյան տարագրության տարիներին նա ֆրանսերենով տպագրեց մի առանձին հատված («Note sur les synaxaires arméniens» տե՛ս «Revue de L'Orient Chrétien», Paris, 1924, t. 24, pp. 211-218):

3. 1898 թվականին՝ ամառային արձակուրդների շրջանում, Ն. Աղոնցը համալսարանի կողմից գործուղվել էր Վիեննա և Վենետիկ՝ տեղի հայերեն ձեռագրերին ծանոթանալու և ավարտական թեզի շարադրանքն ամփոփելու համար: Հենց այս ժամանակ է, որ նա ծանոթանում է Վիեննայի Մխիթարյան միաբանությանը և մտերմանում միաբանակիցներից շատերի, հատկապես Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյանի և Ներսես վրդ. Ակինյանի հետ:

## **7. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵԶԻԿՆՅԱՆԻՆ**

(էջ 17)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. N. Nilles – ավստրիացի պատմաբան, Վիեննայի Մխիթարյան միաբանության բարեկամներից: «Հանդես ամսօրեայ»-ում տպագրվել է նրա շնորհավորական բացիկը՝ Արսեն Այտընյան արքայապետի քահանայական ձեռնադրության հիսնամյա հոբելյանի առթիվ (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1895, էջ 354):

2. Խոսքը Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի (1066-1105) մասին է: Կազմել է «Տօնամակ» ժողովածուն ու կայունացրել տոնակարգը, կարևոր դեր կատարել «Յայսմաուրբ»-ի վերջնական խմբագրման գործում:

3. Արսեն Այտընյան (1825-1902) – Վիեննայի Մխիթարյան միաբանության արքայապետ (1886-1902), բանասեր, քերականագետ, «Հանդես ամսօրեայ»-ի հիմնադիր:

4. Հակոբոս Տաշյան (1866-1933) – պատմաբան, ձեռագրագետ, դրամագետ, «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիր (1890-1895):

5. Տե՛ս № 6, ծան. 2:

6. Ակնարկում է Հ. Դաղբաշյանի «Փափսոս Բուզանդացի և յուր Պատմության խարդախողը: Մովսես Խորենացու աղբյուրների ուսումնասիրություն» (Վիեննա, 1898), որը նախապես լույս էր տեսել «Հանդես ամսօրեայ»-ի 1897-1898 թվականների համարներում:

7. Այսինքն՝ 1899 թվականի փետրվարի 8-ից հետո:

8. «Նոր-Դար» – քաղաքական-գրական ամենօրյա թերթ (Թիֆլիս, 1894-1916): Ն. Ադունցն այստեղ է տպագրել իր առաջին թղթակցությունները:

9. Խոսքը Վարդան վրդ. Մեքրիսեղեկյանի (1874-1941) մասին է: Եղել է «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիրը (1899-1900):

10. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

## **8. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵԶԻԿՆՅԱՆԻՆ**

(էջ 18)

Ինքնագիրը գտնվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի իր ավարտական շարադրանքը (տե՛ս № 6, ծան. 2):

2. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:



## 9. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 19)

Բնագիրը պահվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թողոններ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 83-85): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը XII դարի առաջին կեսի մատենագիր, նշանավոր տոմարագետ Տեր Իսրայելի մասին է, որին էլ պատկանում է հայկական «Հայսմավորք»-ի նոր խմբագրությունը:

2. Գրիգոր Անավարզեցի (1240-1307) – Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Է (1293-1307), մատենագիր: 1293 թվականին նոր խմբագրության է ենթարկել Հայսմավորքը:

3. Գրիգոր Վկայասեր – տե՛ս № 7, ծան. 2:

4. Խոսքը նշանավոր մատենագետ Գարեգին վրդ. Չարբհանալյանի մասին է (1827-1901):

5. Նկատի ունի աշխարհագետ Բարսեղ վրդ. Սարգիսյանին (1852-1921):

6. Այնարկում է Ն. Մառի կնոջը՝ Ալեքսանդրա Ալեքսենա Ժուկովսկայա-Մառին (1863-1940):

7. Խոսքը վերաբերում է Ն. Մառի որդուն՝ ապագա իրանագետ Յուրի Մառին (1893-1935):

## 10. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 21)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թողոններ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 85-86): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Կարլ Կրումբախեր (1856-1909) – Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, բյուզանդագետ:

2. Խոսքը վերաբերում է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանող, ապագա նշանավոր իրավաբան ու պատմաբան Խաչիկ Սամվելյանին (1873-1940):

3. Հ. Հ. Մանանդյան (1873-1952) – Ենայի, Ս. Պետերբուրգի և Դորպատի համալսարանների շրջանավարտ, ապագա ականավոր պատմաբան:

4. «Esprit» (ֆր.) - սրամտություն:

5. Այսինքն՝ տրամադրության մարդ:

6. Կարապետ վրդ. Տեր-Սկրտչյան (1866-1915) – հայագետ, եկեղեցական գործիչ, Գևորգյան ճեմարանի տեսուչ (1899-1902):

7. Ս. Ֆ. Օլդենբուրգ (1863-1934) – հին և միջնադարյան հնդկական գրականության, սանսկրիտի խորագիտակ, Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր:

8. Նկատի ունի Կարապետ Եզյանին:

9. Նամակի ավարտին Ն. Մառը մակագրել է՝ «Отвечал 8 ноября, 99 г.»:

**1900**

### **11. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ**

(էջ 22)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 85-86): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը VI դարի բյուզանդացի նշանավոր պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու մասին է:

2. Նկատի ունի իր «Начальная история Армении» у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского» երկասիրությունը (տե՛ս «Византийский временник», т. VIII, вып. 1-2, 1901, стр. 64-105):

3. Խոսքը Հակոբ Մանանդյանի մասին է:

### **12. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ**

(էջ 23)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 87-88): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս № 11, ծան. 2:

2. Հմմտ. Մովսես Խորենացի, Ա, գլ. իբ:

### 13. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 25)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 88-89): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս **Ա. Մ. Գարսագաշյան**, Քննական պատմութիւն հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 262:

2. Ա. Գուռշմիլ (1831-1887) – գերմանացի նշանավոր արևելագետ, որը Իրանի և Օսթրիենի թագավորության I-II դարերի պատմությանը նվիրված աշխատություններում լայնորեն անդրադարձել է մասնաձևերում ծավալված իրադարձություններին:

3. Տե՛ս **Մովսես Խորենացի**, Բ, գլ. ձա, հմմտ. «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ», Վենետիկ, 1881, էջ 46:

4. Խոսքը ապագա նշանավոր հայագետ, Մյունխենի և Ստրասբուրգի համալսարանների շրջանավարտ Ս. Կանայանցի (1860-1937) մասին է:

5. Ավանդվում է իր հովանավոր - մեկենաս, ազգային անգուզական բարերար Ալեքսանդր Մանթաշյանին (1849-1911):

### 14. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 26)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 89-92): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Սեբեոսի (Անանուն) համապատասխան հատվածի՝ (տե՛ս **Սեբեոս**, Պատմութիւն, Երևան, 1979, էջ 62) իր առաջարկված մեկնաբանությունը:

2. Ավանդվում է Ս. Մալխասյանցի «Սեբեոսի պատմությունը և Ս. Խորենացին» գրքույկը (Թիֆլիս, 1899), որն էլ հենց առիթ է դարձել իր «Հայոց նախնական պատմությունը» Սեբեոսի երկում և դրա աղբյուրները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկասիրությունների հետ» աշխատության ստեղծման:

3. Մովսես Խորենացու վերաբերյալ Նիկողայոս Աղոնցի տեսակետների մանրամասն քննությունը տե՛ս մեր հոդվածում [«Մովսես Խորենացի և Նիկողայոս

Աղոնց», «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու (ՀՀ ԳԱ ակադեմիա, Պատմության ինստիտուտ), № 6, Երևան, 2005, էջ 307-316]:

4. Գ. Խալաթյանը Անանունի խնդրին անդրադարձել է «Անանունը որպես ուշ պարսկանոն» (տե՛ս «Армянский эпос в Истории Армении М. Хоренского», М., 1896, стр. 58-105) և «Մարաբա Մծուրնացի և Կեղծ Սերեոս» (Վենետիկ, 1898) գրվածքներում:

## 15. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 30)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թողոններ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 92-93): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ակնարկում է Ալեքսանդր Մանթաշյանին:

2. Saco-Anzug (գերմ.) – բաճկոն-տարառ:

3. 1893-1897 թվականների ընթացքում Հ. Մանանդյանը ուսանել է Եմայի համալսարանում, միաժամանակ հետևել Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարանների իրեն անհրաժեշտ մասնագիտական դասընթացներին:

4. Խոսքը Ա. Մանթաշյանի Թիֆլիսյան գրասենյակի գլխավոր հաշվապահ Գ. Փանդոյանցի մասին է, որի միջոցով էր կատարվում սաների (որդեգիրների) ֆինանսավորման գործընթացը:

5. Ակնարկում է Կարապետ Եգյանին:

## 16. ԿԱՐԱՊԵՏ ԵՉՅԱՆԻՆ

(էջ 31)

Ինքնագիրը պահվում է Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի արխիվում (Կարապետ Եգյանի թողոններ, ֆ. 58, ցուցակ 2, № 10): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 93-95): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խորապես ըմբռնելով Ն. Աղոնցի վիճակի ծանրությունը՝ Կ. Եգյանը նրա խնդրանքն անմիջապես ներկայացնում է Ա. Մանթաշյանին: Իր հերթին վերջինս էլ 1900 թվականի մայիսի 26-ին անհապաղ պատասխանում է Եգյանին:

**«Ամենահարգելի՛ Գերասիմ Արտեմիչ»**

Չեր նամակն ստանալով՝ իսկույն Ադոնցին ուղարկեցի 250 ռուբլի» (տե՛ս ՀՀ ազգային արխիվ, Կ. Եզյանի թղթոն, ֆ. 56, ց. 2, գ. 1056, ք. 23):

**17. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ**

(էջ 34)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոններ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. **Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 95-98): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս № 18, ծան. 3:

2. Խոսքը Ենայի համալսարանի պրոֆեսոր, հայտնի հայագետ Հ. Գելցերի (1847-1906) «Geistli ches und Weltliches aus dem türkisch-griechischen Orient. Selbsterlebtes und Selbstgeschenes, Leipzig, 1900» մենագրության մասին է:

3. Ակնարկը վերաբերում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի նշանավոր գրչագիր Ավետարանին (887 ք.):

4. Խոսքը իրավաբան Գրիգոր Գևորգի Եվանգուլյանցի մասին է: Բայց, թե Ադոնցն ինչ է ակնարկում, պարզ չէ:

5. Beilage (գերմ.) – խավարտ, ճաշալրաց (գարնիր):

6. Խոսքը «Արտավան Արշակունի» ուսումնասիրության մասին է, որ լույս տեսավ տարիներ անց «Հայրենիք» ամսագրում (1929, № 11, էջ 96-109):

7. Խոսքը նշանավոր արևելագետ Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս Սերգեյ Ֆեոդորովիչ Օլդենբուրգի (1863-1934) մասին է:

**18. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ**

(էջ 38)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի արխիվում (Կարապետ Եզյանի թղթոններ, ֆ. 58, ցուցակ 2, № 10): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. **Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 98-100): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Շարլ Դիլ (1859-1944) – ֆրանսիացի ականավոր բյուզանդագետ: Վիթխարի ազդեցություն է գործել Ն. Ադոնցի բյուզանդագիտական հետաքրքրությունների

ձևավորման վրա: Նրա «Հուստինիանոս I-ը և բյուզանդական քաղաքակրթությունը» ուսումնասիրությունը ուղեցույց է դարձել Ադոնցի համար:

2. «Pro Armenia» – ֆրանսիական հայանպաստ երկշաբաթաբերթ (Փարիզ, 1900-1914): Խմբագրական հանձնախմբի մեջ էին մտնում Պիեր Քիյարը (խմբագիր), Ժան Լոնգեն, Ժորժ Կլեմանսոն, Ֆրանսիս Պրեսանսեն, Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը և ուրիշներ:

3. Խոսքը գրող, թարգմանիչ, հրապարակախոս Սիմոն Գ. Հախումյանի (1859-1905) կողմից Փարիզում լույս տեսնող գրական, գիտական, գեղարվեստական և քաղաքական վեցամսյա «Ժամանակ» հանդեսի (1901-1902) մասին է:

### 19. ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ (էջ 41)

Ինքնագիրը պահվում է Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի արխիվում (Կարապետ Եզյանի թողոններ, ֆ. 58, ցուցակ 2, № 10): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 100-101): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Կ. Եզյանը ստիպված դարձյալ միջնորդել ու Ա. Մանթաշյանն էլ դարձյալ ընդառաջել է այդ միջնորդությանը և շարունակել ֆինանսավորել Ադոնցի արտասահմանյան ուսումնառությունը՝ ժամկետ սահմանելով մինչև 1902 թվականի հունիսը: Բացի այդ, ինչպես ակներև է № 20-ից, 1901 թվականին Ադոնցը Փարիզում հանդիպել է Ա. Մանթաշյանին և անձամբ բացատրել իր կացությունը: Բարերարը սիրով է ընդառաջել որդեգրին և հեռագրել իր թիֆլիսյան գրասենյակ՝ շարունակելու Ադոնցի թոշակավորումը:

### 1901 20. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ (էջ 42)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի ԳԱ Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թողոններ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 101-103): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը վերաբերում է Փարիզի ուսանողական քաղամասին:

2. Ա. Ա. Իսահ (1851-1924) – Ս. Պետերբուրգի համալսարանի քաղաքատնտեսության պրոֆեսոր:

3. Յու. Ս. Ղամբարով (Ղամբարյան, 1850-1926) – իրավաբան, Մոսկվայի և Ս. Պետերբուրգի համալսարանների պրոֆեսոր, ռուսական սոցիոլոգիական դպրոցի հիմնադիր, Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր (1919-1920):

4. Ալեկսարկուն է հասարակական գործիչ, բանասեր Մ. Հ. Թամամշյանին (1852-1908) և ճարտարապետ, հնահավաք Հ. Էքիզյանին (Էքիզեր, 1873-1930):

5. Խոսքը ազգային նշանավոր գործիչ, հրապարակախոս Մինաս Չերազի (1852-1929) մասին է:

6. Ալեկսարկուն է Գ. Տեր-Պողոսյանի «Նկատողություններ Փալատոսի Պատմության վերաբերյալ» հոդվածաշարը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1900, էջ 97-101, 158-165, 197-201, 239-243, 270-279, 357-362, տե՛ս նաև առանձին գրքով, Վիեննա, 1901):

7. Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, «Արարատ», 1899-1901, տե՛ս նաև առանձին գրքով (Վաղարշապատ, 1901):

8. Մերոպ վարդապետ Տեր-Մովսիսյանն իր առենախոսությունը («Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը») պաշտպանել է Ս. Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում 1902 թվականին:

9. Խոսքը Ն. Մառի կրտսեր որդու՝ Վլադիմիրի մասին է:

1902

## 21. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 45)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի ԳԱ Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 103): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Թվագրել ենք ըստ փոստային կնիքի:

2. Խոսքը Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության Էմինյան հրատարակության մասին է (Մոսկվա, 1853):

## 22. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 45)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի ԳԱ Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 103-108): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Թվագրվել է ըստ փոստային կնիքի:
2. Նկատի ունի Մովսես Խորենացու համապատասխան խոսքերը («Ռ՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն», գիրք Գ, գլ. կը):
3. Concierge-ku (ֆր.) – դռնապան:
4. Ակնարկում է «Հայկական Վարք-սրբոց ժողովածուներն ըստ Գրիգոր Ծերենցի վերջին՝ ժամապաշտական խմբագրության» իր համալսարանական ավարտական շարադրանքը (տե՛ս № 6, ծան. 2):
5. Գաբրուստ Տեր-Սկրտչյան (Միաբան, 1860-1918) – ականավոր հայագետ, թարգմանիչ և խմբագիր:
6. Կարապետ Կոստանյան (1853-1920) – նշանավոր հայագետ, մանկավարժ: Գևորգյան ճեմարանի (1894-1899, 1902-1905), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1891-1894) և Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1911-1920) տեսուչ:
7. Նիկողայոս Քարամյան – մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, «Արարատ» ամսագրի խմբագիր:
8. Խոսքը Հակոբ Մանանդյանի մասին է:
9. Լևոն Սարգսյան (1862-1927) – գրական, հասարակական գործիչ, մանկավարժ, խմբագիր, հրապարակախոս:
10. Խոսքն իր «Կասիա միանձնուհին և հայերը» հոդվածի («Հանդես ամսօրեայ», 1901, № 5-6, էջ 129-132) մասին է:

## 23. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

(էջ 52)

Ինքնագիրը գտնվում է Ռուսաստանի ԳԱ Ս. Պետերբուրգի արխիվում (Ն. Մառի թղթոցներ, ֆ. 800, ցուցակ 3, № 20): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 109-110): Արտատպվում է այս հրատարակությունից:



1. Խոսքը Բյուզանդիայի կայսրեր Լևոն V Հայկազնի (813-820) և Միքայել II Թվատի (820-829) մասին է:

2. Նկատի ունի իր «Начальная история Армении», у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского» («Византийский современник», т. VIII, вып. 1-2, СПб., 1901, стр. 64-105) հոդվածի առանձնատիպը:

#### **24. ԿԱՐԱՊԵՏ ԵՉՅԱՆԻՆ**

(էջ 53)

Ինքնագիրը պահվում է Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի արխիվում (Կարապետ Եզյանի թողուններ, ֆ. 58, ցուցակ 2, № 10): Հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Պ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 110-111): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ինչպես ցույց են տալիս իրադարձությունները, Արոնցին նման հնարավորություն ընձեռվել է, իսկ մագիստրոսական աշխատանքը նա պաշտպանել է 1909 թվականի ապրիլի 5-ին:

**1903**

#### **25. «ՀԱՆՂԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 55)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը իշխան Բարսեղ (Բորիս) Արղության - Երկայնաբազուկի մասին է: Եղել է Վիեննայի Մխիթարյանների համակիրներից ու բարեկամներից: Տարիների ընթացքում զգալի նվիրատվություններ է կատարել միաբանությանը:

2. Նկատի ունի իռլանդացի հայագետ, աշխարհագետ Հենրի Լինչի (1862-1913) «Armenia: Travels and Studies» (v. 1-2, London, 1901) աշխատությունը:

3. Խոսքը Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցական խորհրդի կանոնադրության մասին է: Տարիներ շարունակ Արոնը եղել է եկեղեցական խորհրդի անդամ, փոխնախագահ, ապա՝ նախագահ:

4. Նկատի ունի Վ. Թորգոմյանի «Ժիշկ դոկտ. Նահապետ Ռուսինյան» ուսումնասիրությունը (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1902, էջ 40-43, 69-73, 98-108, 139-145, 205-209, 249-252, 297-302, 321-326, 345-349, 390-398: 1903, էջ 23-26, 49-52, 82-87,

157-159, 169-173, 201-205, 305-309, 363-368): Ադոնցի կասկածը («կարծե՞ք») տեղին է, քանզի Վ. Թորգոմյանի սույն ուսումնասիրությունը առանձին գրքով լույս չի տեսել:

## **26. ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ**

(էջ 55)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Հ. Թումանյանի ֆոնդ 59, № 461): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, № 3, էջ 87-88): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1903 թվականի առաջին կեսին Ն. Ադոնցը բնակվում էր Թիֆլիսում: Մագիստրոսական թեզը գրելու համար նրան անհրաժեշտ էր նաև վրացերենի իմացություն, և նա այդ ժամանակ ուսումնասիրում էր այն թիֆլիսյան միջավայրում:

2. Խոսքն իր խմբագրությամբ Ս. Պետերբուրգում լույս տեսնող «Բանբեր գրականության և արվեստի» գրական-գեղարվեստական վեցամյա հանդեսի մասին է:

3. «Բանբերի» առաջին համարում (1903) լույս է տեսել Հ. Թումանյանի «Պանդուխտ եմ, բուրիկ» բանաստեղծությունը (էջ 131-132):

4. Խոսքը լրագրող, թղթակից Լ. Բ. Քալանթարյանի (1879-1964) մասին է:

5. «Բանբեր» հանդեսում լույս է տեսել Լևոն Շանթի (1869-1951) «Ես-ի մարդը» հինգ արարով դրաման (հատ. Բ, 1904, էջ 1-47):

6. Ա. Շիրվանզադեի որևէ երկ «Բանբեր» հանդեսում չի տպագրվել:

7. Նկատի ունի գրող, գրաքննադատ, գրականության պատմաբան, մանկավարժ Վ. Մ. Փափագյանին (1864-1920): «Բանբերի» Բ հատորում տպագրվել է նրա «Արդա՞ր, թե՞ մեղավոր» պատմվածքը (էջ 82-90):

8. «Բանբերի» Բ հատորում տպագրվել է Ա. Ահարոնյանի «Մահը» պատմվածքը (էջ 48-58):

## **27. «ՀԱՆՂԷՄ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ**

(էջ 56)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի գերմանացի նշանավոր հայագետ Յոզեֆ Կարստի (1871-1942) «Historische Grammatik des Kilikisch-armenischen» մեծարժեք աշխատությունը (Ստրասբուրգ, 1901):

2. Տե՛ս № 25, ծան. 1:

3. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

**1904**

**28. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵԶԻԿՃՅԱՆԻՆ**

(էջ 57)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի Մխիթարյան միաբան, հայագետ Գ. Մենևիշյանի (1864-1936) «Կենսագրական ակնարկ հիսնամյա հորեղբնի առթիվ Գերպ. Արսեն արքեպիսկոպոս Այտընյանի կենաց և գործունեության» մենագրությունը (Վիեննա, 1895):

2. Ակնարկում է Գ. Տեր-Պողոսյանի «Նկատողություններ Փավստոսի Պատմության վերաբերյալ» (հատ. Ա, Վիեննա, 1901) աշխատությունը:

**29. ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ**

**ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԻՆ**

(էջ 57)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (ֆոնդ 399, ցուցակ 1, գործ 93): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Աղոնցյան մատուցներ, «Հայկազյան հայագիտական հանդես», հատ. 13, Բեյրութ, 1993, էջ 108): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Սիամանթոն եղել է Սորբոնի համալսարանի գրականության բաժնի ազատ ունկնդիր (1897-1901), մեկամյա ընդմիջումից հետո շարունակել է հետևել նույն համալսարանի փիլիսոփայության և համաշխարհային գրականության դասընթացներին (1902-1903):

2. Սիամանթոն ծնվել է 1878 թվականին, հետևաբար 1904 թվականին նա 26 և ոչ թե 22 տարեկան էր:

3. Սիամանթոնի առաջին քերթվածը՝ «Աքտրված խաղաղություն» խորագրով, լույս է տեսել 1898 թվականին Մանչեստրում հրատարակվող «Վաղվան ձայնը» թերթում: Այնուհետև նա տպագրվել է «Անահիտ», «Ազատամարտ» և այլ պարբե-

րականներում: Հետաքրքիր է նշել, որ Ն. Ադոնցն իր խմբագրած «Բանբեր գրականության և արվեստի» վեցամսյա հանդեսի Ա և Բ հատորներում (Ս. Պետերբուրգ, 1903-1904) տպագրել էր Միամանթրյի «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքի մի շարք բանաստեղծություններ՝ «Աղոթք», «Չարչարանքի երագ», «Թաղում», «Գթություն», «Ծարավ» (հաստ. Ա, էջ 143-147), «Հոգիս», «Արյուն» (հաստ. Բ, էջ 115-116):

4. Թոքախտի (հյուծախտի) նախանշաններն ի հայտ էին եկել 1904 թվականի հունվարին:

5. Ակնարկում է Մինաս Չերազին, Ա. Չոպանյանին, Վ. Թեբեյանին և ուրիշների:

6. Միամանթոն բուժվում էր Շվեյցարիայի Լեյզեն առողջարանում:

7. Ն. Ադոնցի սույն գրության վրա մակագրված է՝ «Տալ տեղեկանք»:

### **30. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

(էջ 58)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ, I բաժին, 133, № 26): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 88-89): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհուրդը, որին անդամակցում էր ինքը:

2. Առաջին երկու համարներից հետո (1903-1904) «Բանբեր»-ը ընդմիշտ դադարեց: Նյութական ծանր վիճակն ու անհրաժեշտ աշխատակիցների բացակայությունը, ցավոք, թույլ չտվեցին շարունակել այս հույժ խնամված ու կարևոր հրատարակությունը:

### **31. «ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ» ՀԱՆԳԵՍԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ**

(էջ 60)

Բնագիրը հայտնի չէ: Հրատարակել է Ն. Ադոնցը (տե՛ս «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Բ, Ս. Պետերբուրգ, 1904): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Գ. Արիստակեսյան – ցավոք, ինքնությունը պարզել չկարողացանք:

2. Վարդգես Սուրենյանց (1860-1921) – մեծատաղանդ նկարիչ, թարգմանիչ, Ն. Ադոնցի մտերմագույն բարեկամը:

1905

**32. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ**

(էջ 61)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գ. Խալաթյանցի ֆոնդ, V բաժին, № 99): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, էջ 89-90): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը վերաբերում է արևմտահայ բանաստեղծ, դրամատուրգ և մանկավարժ Թովմաս Թերզյանին (1840-1909):

2. Նկատի ունի հետևյալ շարքը՝

Этнографический фонд Эмина при Лазаревском институте восточных языков, выпуск II: Исследования и статьи Н. О. Эмина по армянской мифологии, археологии, истории и истории литературы (за 1858-1884 гг.), М., 1889, выпуск III: Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859-1882 гг.), М., 1897, выпуск IV: «Սլրաիչ Էմինի երկասիրությունները հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840-1855 թթ.)», Մոսկվա, 1898:

3. Խոսքը Լազարյան ճեմարանի հրատարակած և Գ. Խալաթյանցի խմբագրած «Էմինյան ազգագրական ժողովածու» հանդեսի մասին է (1901-1905):

4. Տե՛ս **Գ. Խալաթյանց**, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, М., 1903: «Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան», մասն Ա և Բ (աշխատասիրութեամբ Գ. Խալաթյանցի), Մոսկվա, 1899: «Մովսես Խորենացու աղբյուրները: Խորենացին և Գրիգոր Նազիանզացին», Վաղարշապատ, 1898: «Ղազար Փարպեցի և գործք նորին», Մոսկվա, 1883:

5. Խոսքը մեզ հասած հայերեն ամենաին ամբողջական ձեռագրի մասին է, որի գրչության թվականն է ՅԼԶ (= 887 թ.):

6. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

**33. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ**

(էջ 62)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գ. Խալաթյանցի ֆոնդ, V բաժին, № 100): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, էջ 90-91): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս **Գ. Խալատյան**, Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского. Опыт критики источников, М., 1896:

2. Այդ ժամանակ Բառնարաս Պիլեզիկճյանը Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանապետն էր:

3. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

**1906**

### **34. ԳՐԻԳՈՐ ԽԱՎԱԹՅԱՆՑԻՆ**

(էջ 62)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գ. Խալատյանցի ֆոնդ, V բաժին, № 101): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, էջ 91): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ակնարկում է Մ. Էմինի աշխատասիրությամբ լույս տեսած «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական» (Մոսկվա, 1861) և «Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի» (Մոսկվա, 1860) երկասիրությունները:

2. Նկատի ունի ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլոբիեի (1807-1881) «Recherches sur la chronologie arménienne technique et historique, t. 1, Paris, 1859» աշխատությունը:

3. Նամակի առաջին էջի վերին մասում Գ. Խալատյանցը մակագրել է՝ «Գրքերն ուղարկված են»:

4. Խոսքն իր «Армения в эпоху Юстиниана» մագիստրոսական աշխատանքի մասին է:

5. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

### **35. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆՑԻՆ**

(էջ 63)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի ֆոնդ, թղթ. 237, վավ. 161, թ. 1): Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքն իր մագիստրոսական թեզի մասին է:

2. Նամակը գրված է փոստային քարտի վրա, հետևաբար եղել է բաց:

**1907**  
**36. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՁԻԿՃՅԱՆԻՆ**  
**(Էջ 63)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Այսինքն՝ Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի:
2. Այսինքն՝ 1906 թվականի դեկտեմբերի:
3. Խոսքը Հ. Աճառյանի «Յուզակ ձեռագրաց Թավրիզի» հոդվածում ներկայացվող ձեռագրացուցակի մասին է (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1906, էջ 377-383):
4. Ակնարկում է այն հանգամանքը, որ դեռևս 1850-ական թվականներին Արսեն վրո. Այտընյանը գծագրել էր մի քանի տեսակ հայերեն տպագրական տառեր, որոնցից պատրաստվեցին ինչպես պարզ, այնպես էլ զարդազիր տառեր:
5. Առարկայորեն դժվար է ստել, թե խոսքը Ն. Մառի ո՞ր աշխատության մասին է: Այդ շրջանում ամենանշանակալիցը Մառի «Սկրտութիւն հայոց, վրաց, ասի-խազաց և ալանաց ի Սրբոյն Գրիգորէ» ուսումնասիրությունն էր (Ս. Պետերբուրգ, 1905):
6. 1900-ական թվականներին «Հանդէս ամսօրեայ» պարբերականում ինչպես Ն. Ադոնցի, այնպես էլ վրաց հայագետ Ի. Ա. Ջավախովի որևէ գրախոսական լույս չի տեսել:
7. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով նամակի բովանդակությունը:

**37. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՁԻԿՃՅԱՆԻՆ**  
**(Էջ 65)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. «Արևելք» – ազգային, գրական և քաղաքական օրաթերթ (Կ. Պոլիս, 1884-1896, 1898-1912):
2. «Բիւզանդիոն» – ազգային, քաղաքական, գրական և գիտական օրաթերթ (Կ. Պոլիս, 1896-1918):
3. «Պետական դումա» – Ռուսական կայսրությունում ներկայացուցչական, օրենսդրախորհրդակցական մարմին (1906-1917):
4. Հնարավոր չեղավ պարզել, թե Ն. Ադոնցի այս խնդրանքը կատարվել է, թե ոչ: Մակայն փաստը ցուցում է նրա հասարակական գործուն խառնվածքի ու քաղաքական կյանքի նկատմամբ բուռն հետաքրքրությունների մասին:
5. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով նամակի բովանդակությունը:

### **38. ԲԱՌՆԱԲԱՍ ՎՐԳ. ՊԻԼԵՉԻԿՃՅԱՆԻՆ**

(էջ 66)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ցավոք, հնարավոր չեղավ պարզելու, թե ինչն էր պատճառը տպագրական տառերը Ս. Պետերբուրգ շտաբի կողմից: Հայտնի է, որ Վիեննայի Մխիթարյաններն էին եվրոպական հայագիտական բոլոր կենտրոններին մատակարարում այդ տառերից:

2. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

### **39. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆՅԱՆԻՆ**

(էջ 66)

Բնագիրը անհայտ է:

Հրատարակել է Վահան եպս. Տերյանը (տե՛ս **Վահան եպս. Տերյան**, Մեծանուն և վաստակաշատ պատմաբաններ Լեոյի և Ն. Արոնցի նորահայտ մամակները Կ. Պոլսի պատրիարք ամենապատիվ Մաղաքիա արքեպս. Օրմանյանին, «Էջմիածին», 1974, № 3, էջ 27): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը «Ատենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ» հրատարակության մասին է, որը պրակ առ պրակ լույս էր տեսնում Կ. Պոլսում՝ 1870, 1873, 1874, 1887 թվականներին և հետագա տարիներին ևս:

1908

### **40. ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՅԱՆԻՆ**

(էջ 67)

Ինքնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի Գալուստ Տեր-Մկրտչյանի ֆոնդում (թղթ. 24, վավ. № 4): Հրատարակել է Ա. Հ. Աղամյանը (տե՛ս **Ա. Հ. Աղամյան**, Զերովբե Պատկանյանի և Նիկողայոս Արոնցի անտիպ մամակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 112): Արտատպվում է այս հրատարակությունից:



1. Խոսքը վերաբերում է Կարապետ Տեր-Սկրտչյանի և Երվանդ Տեր-Սիմասյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճանաչութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» երկասիրության (Ս. Էջմիածին, 1908) մասին է:

2. Նկատի ունի V դարի առաջին կեսի եկեղեցական նշանավոր գործիչ, Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ Դիոսկորոսին (Դեոսկորոս):

3. Ծաթ - միջնադարյան հայ մատենագիրները այս անվան ներքո հասկացել են քաղքերոնիկ, ապա նաև կաթոլիկ հայերին: Ինչպես Գ. Տեր-Սկրտչյանը, այնպես էլ Ն. Արոնը ծաթերին նույնացրել է գնչուների (ցիգանների) հետ:

4. Ինչպես նշել է Պ. Հ. Հակոբյանը, իրոք, Գ. Տեր-Սկրտչյանը փորձել է պարզել ծաթերի առեղծվածը և սկսել գրել ուսումնասիրություն: Այդ խնդրի վերաբերյալ պահպանվել են մի քանի պատառիկներ, որոնք գտնվում են Գ. Տեր-Սկրտչյանի բողոքում (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Գ. Տեր-Սկրտչյանի ֆոնդ, № 18/43): Ծաթերի վերաբերյալ այս դիտողությունը հայտնաբերել և հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս **Գ. Տեր-Սկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 482-483):

5. Ծաթերի մասին Ն. Արոնցի ուսումնասիրությունը լույս է տեսել 1911 թվականին (տե՛ս **Н. Адонц**, О происхождении Армян - Цатов, «Журнал Министерство народного просвещения», 1911, т. 32, стр. 238-249, տե՛ս նաև սույնի հայերեն փարգմանությունը՝ «Հանդէս ամսօրեայ», 1912, № 5, էջ 257-271):

1909

#### 41. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

(էջ 68)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գ. Խալաթյանցի ֆոնդ, V բաժին, № 102): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 91-92): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Գ. Խալաթյանցի բողոքում պահպանվել է 1909 թվականի մարտի 28-ին Ն. Արոնցին ուղղված նրա նամակի սևագրությունը, որտեղ մասնավորապես նշում է. «Դեռ կգրուցենք Ձեզ հետ թեզի մասին մանրամասն, եթե կարողացա գալ Պետերբուրգ և ներկա լինել Ձեր գիտական տոնախմբությանը: Համենայն դեպս ցանկանում եմ շնորհավորել այդ առթիվ Ձեր հաջողությունները և ողջունել Ձեր գիտական կոչումը, որ Դուք ամենայն իրավունքով ձեռք եք բերել ներկա Ձեր

ծանրակշիռ հաջողության շնորհիվ (տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Գ. Խալաթյանցի ֆոնդ 69, V բաժին, № 2):

2. Նույն նամակից պարզվում է, որ Գ. Խալաթյանցը ևս ծրագիր է ունեցել ուսումնախիրելու նախարարական համակարգը, նախարարական տների ու աստիճանակարգության պրոբլեմը (նույն տեղում):

3. Ն. Մառը խրախուսում էր իր այն սաներին, որոնք առավելապես զբաղվում էին տեքստաբանական-քննադրագիտական, լայն առումով՝ դասական բանասիրության հարցերով:

#### **42. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ** (էջ 69)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գ. Խալաթյանցի ֆոնդ, V բաժին, № 103): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 91): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքն իր մագիստրոսական թեզի մասին է:

2. Այսինքն՝ հրապարակային պաշտպանությունը: Պաշտոնական ընդդիմախոսներն էին Ն. Յա. Մառը և Ի. Ա. Ջավախովը:

#### **43. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ** (էջ 69)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հավանաբար խոսքն իր «О происхождение Армян-Цатов» հոդվածի մասին է, որը լույս է տեսել 1911 թվականին:

2. Ակնարկում է «Յուշարձան: Գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոբելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911) եւ 25-ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ», ուսումնաբերթի (1887-1911)», ժողովածուն, որը լույս է տեսել Վիեննայում 1911 թվականին:

3. «Յուշարձան»-ում տպագրվել է Ն. Ադոնցի «Տորք աստված հին Հայոց» հոդվածը (էջ 389-394):

**1910**  
**44. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(էջ 70)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Տե՛ս № 43, ծան. 3:
2. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

**45. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(էջ 70)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը 1910 թվականի ամռան մասին է:

**46. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(էջ 71)**

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ս. Լխիցյան (1865-1947) – բանաստեղծ, ձեռագրագետ, խմբագիր: «Հանդէս ամսօրեայ»-ի աշխատակիցներից:
2. Մատնանշում է Եսայի Նչեցու «Քերականության» ձեռագիրը (տե՛ս № 47, ծան. 1):
3. 1910 թվականին Ն. Ադոնցը բնակվում էր նշված հասցեում, որը և հիմք է ծառայել նամակը թվագրել 1910 թվականով:

**1912**  
**47. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(էջ 71)**

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ակնարկում է «Մեկնութիւն քերականի, արարեալ Եսայեա վարդապետի» բնագիրը, որ գտնվում էր Վիեննայի Մխիթարյանների ձեռագրատանը: Այս գրական հուշարձանը Ադոնցը ուսումնասիրել է 1911 թվականի ամռանը, որի մասին հիշատակել է իր «Դիոնիսեայ Քերականի» ուսումնասիրությունում (տե՛ս էջ LIX):

2. Արիստակես (Արիս) Վարդանյան (Կառլոս Հովսեփի Շըլլզյան, 1887-1941) – բանասեր, լեզվաբան: Եղել է «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրապետ (1924-1929):

3. Այնուհանդերձ, Ն. Արոնցի խնդրած ընդօրինակությունը Մխիթարյաններն ուղարկել են նրան, որի մասին հայագետը հարկ է համարել հատուկ հիշատակել իր «Դիոնիսիոս Թրակացի» ուսումնասիրության Առաջաբանում. «Առաջին ցանկը վերաբերում է 1360 թվականին, որ պահվում է Վիեննայի Մխիթարյանների մոտ, և որը համարյա ժամանակակից է հեղինակին: Մենք այն օգտագործել ենք տեղում, իսկ հետագայում՝ ընդօրինակության միջոցով, որը հատուկ մեզ համար կատարել են Մխիթարյան հայրերը, որի համար նրանց հայտնում ենք մեր երախտագիտության զգացումները (տե՛ս «Դիոնիսիոս Թրակացի», էջ LIX):

#### **48. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

(էջ 72)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Իր «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին» ուսումնասիրության համար ատաղձներ հավաքելու նպատակով Ն. Արոնցը 1911 թվականի ամռանը այցելում է Վիեննա և պարապում տեղի Մխիթարյանների ձեռագրապահոցում: Այդ ժամանակ էլ նա խնդրել է Ներսես Ալիւնյանին իրեն տրամադրել քերականագիտական որոշ բնագրերի կրկնօրինակները:

2. Խոսքը Եսայի Նչեցու «Մեկնութիւն քերականին» բնագրի մասին է:

1913

#### **49. ԲԱԳՐԱՏ ՎՐԳ. ՎԱՐԳԱԶԱՐՅԱՆԻՆ**

(էջ 72)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, ցուցակ 2, գ. 685, ք. 46): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Հայկական հարցին աղերսվող Նիկողայոս Արոնցի նորահայտ նամակները, «Էջմիածին», 2010, № 11, էջ 106): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նամակն ուղղված է Մայր Աթոռի ղիվանապետ Բագրատ վարդապետ Վարդազարյանին (1869-1938): Բագրատ վարդապետն ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1912-1916 թվականներին եղել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, Մայր Աթոռի ղիվանապետ, Վանական խորհրդի անդամ: Տարբեր տարիներին զբաղեցրել է Հնդիրանական, Շամախու և Աստրախանի թեմական առաջնորդի պաշտոնները:

2. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն իր գահակալությունից անմիջապես հետո դիմել է ռուսական կառավարությանը (2 հոկտեմբերի, 1912) և անձամբ Նիկոլայ II-ին (24 դեկտեմբերի, 1912) Հայկական հարցը վերաբացելու խնդրանքով: Ստանալով ռուսական կառավարության դրական վերաբերմունքը՝ կայսրության տարբեր հայաշատ կենտրոններում, այդ թվում՝ Ս. Պետերբուրգում, ստեղծվել են Հայկական հարցի արծարծմանը աջակցող կոմիտեներ: Այստեղ խոսքը վերաբերում է 1912 թվականի նոյեմբերի կեսերին Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցությանը:

3. Ակնարկը վերաբերում է Գրիգոր Տիգրանյանի և Նիկողայոս Ադոնցի ուղևորությանը (դեկտեմբեր 1912 - հունվար 1913) Կ. Պոլիս (այդ ուղևորության մանրամասների և ձեռք բերած արդյունքների մասին տես՝ **Ն. Ադոնց**, Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 1996, էջ 25-49):

4. Այդ փաստաթուղթը, որ հայտնի է «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում. Հաշվետվություն Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի կողմից նրա երկու գործուղված անդամների Կոստանդնուպոլիս կատարած ուղևորության մասին» վերտառությամբ, այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (տես՝ Կաթողիկոսական ղիվան, թղթապանակ № 238, վավերագիր 95, ք. 1-17):

5. Միքայել Հովհաննեսի Պապաջանյան (1868-1929) – Ռուսաստանի IV Պետական դումայի (1912-1917), Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (1917) և Հայոց ազգային պատվիրակության (1919-1922) անդամ:

6. Պողոս (Պավել) Հովսեփի Ղուկասյան (1860 - ?) – նավթարդյունաբերող, «Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի» նախագահ, Ռուսաստանի պետական խորհրդի անդամ (1906-1917), ազգային բարերար:

7. Գրիգոր Թաղևոսի Տիգրանյան (1859-1930) – հասարակական-մշակութային գործիչ, Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի ղեկավարներից:

8. Ինչպես ցուցում է Մայր Աթոռի ղիվանապետ Բագրատ վրդ. Վարդազարյանի մակագրությունը, սույն նամակը ստացվել է 1913 թվականի մարտի 22-ին:

## 50. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

(Էջ 73)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (ֆոնդ 282, ց. 1, գ. 6): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 108-109): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Այսինքն՝ 1913 թվականի ապրիլի 9-ին:

2. Նկատի ունի Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի նախաձեռնությամբ ստեղծված Հայկական հարցի վերաբացմանը աջակցող խորհրդակցական ժողովը:

3. Մաքսիմ Կովալևսկի (1851-1916) – ռուս նշանավոր պատմաբան, ազգագրագետ, սոցիոլոգ: Ռուսաստանի I Պետական դումայի (1906-1907) և Պետական խորհրդի (1907) անդամ, Սահմանադիր-միապետական կուսակցության հիմնադիր և նախագահ:

4. Ալեքսանդր Գուչկով (1862-1936) – Ռուսաստանի III Պետական դումայի նախագահ (1907-1912), Օկտյաբրիստների կուսակցության պարագլուխ, Ժամանակավոր կառավարության ռազմածովային ուժերի նախարար (1917):

5. Պավել Միլյուկով (1859-1943) – պատմաբան, հրապարակախոս, Կադետական կուսակցության նախագահ, Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար (1917 թ. մարտ-մայիս):

6. 1913 թվականի երկրորդ կեսին նախատեսված էր Լոնդոնում հրավիրել Եվրոպայի հայասեր գործիչների կոնֆերանս՝ նվիրված Հայկական հարցին:

7. Խոսքը բժիշկ Հովհաննես Լորիս-Մելիքյանի մասին է: Ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Եղել է ՀՀ Դաշնակցության հիմնադիրներից, աշխատակցել է «Դրոշակ» հանդեսին: Եվրոպական երկրներում զբաղվել է Հայ դատի քարոզությամբ, հիմնադրել և խմբագրել է «Pro Armenia» ֆրանսերեն պարբերաթերթը:

8. Այնարևը վերաբերում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի՝ 1912 թվականի դեկտեմբերի 1-ի կոնդակով Հայ դատի պաշտպանության համար Եվրոպայում ստեղծված պատվիրակությանը, որի կազմում ընդգրկված էին Պողոս Նուպար փաշան, Հակոբ Արթին փաշան, Գևորգ արքեպ. Ութունյանը, Մինաս Չերազն ու Հարություն Մոստիչյանը:

9. Այսինքն՝ Պողոս Նուպար փաշային:

## 51. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

(էջ 75)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Գարեգին Լևոնյանի ֆոնդ 66, № 1207): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպանանկներից, էջ 92): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Առողջարանային քաղաք Չեխիայում՝ Պրագայից 120 կմ արևմուտք, այժմ՝ Կարլովի Վարի:

2. Նկատի ունի Վենետիկի Ս. Ղազար վանքը, որտեղ այդ ժամանակ Գ. Լևոնյանը տպագրում էր «Գեղարվեստ» հանդեսի 5-րդ համարը (1913 թ.):

3. Ըստ երևույթին, խոսքը քանդակագործ, արվեստագետ Ա. Տեր-Մարությանի (1871-1919) մասին է:

4. Ակնարկում է Վենետիկի Մխիթարյան վարդապետներին:

5. Նամակի առաջին էջի ձախ անկյունում դրոշմված է Կարլսբադի այն հյուրանոցի հասցեն, որտեղ իջևանել էր Ն. Ադոնցը՝ «Atlantic Palace, Karlsbad»:

## 52. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

(էջ 76)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Արշակ Չոպանյանի ֆոնդ, I բաժին, 133, № 27): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 93-94): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը Փարիզի ազգային գրադարանի մասին է (Bibliothèque Nationale):

2. Դիոնիսիոս Թրակացին Ք. ա. II դարի հույն քերական է: Նրա «Քերականական արվեստ» աշխատությունը, որը հունական դպրոցներում գործածվել է որպես դասագիրք, հայերեն է թարգմանվել V դարում: Թրակացու «Քերականական արվեստ» մեկնել են հայ մեկնիչներ Մովսես Քերթոլը, Դավիթ Մեկնիչը, Ստեփանոս Սյունեցին, Համան Արևելցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին և ուրիշներ: Աշխատության հայերեն թարգմանությունը հիմք է դարձել հայ քերականական ուսմունքի ստեղծման ու զարգացման համար:

3. Ֆրեդերիկ Մակլեր (1869-1938) – ֆրանսիացի հայագետ, հայագիտական շուրջ 100 աշխատությունների հեղինակ: Հիմնադրել ու խմբագրել է Փարիզում լույս տեսնող «Revue des Etudes Arméniennes» համդեսը:

4. Ֆ. Մակլերը Փարիզի ազգային գրադարանում գտնվող հայերեն և վրացերեն 323 ձեռագրերը նկարագրել է հետևյալ ցուցակում՝ «Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale» (Paris, 1908):

5. Նկատի ունի Փարիզի ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի նախորդ ցուցակը, որը 1739 թվականին կազմել էր հայագետ Գուլիելմուս Վիլֆրուան (1690-1777)՝ «Catalogus codicum manuseriptorum Bibliotheca Regiae», t. I, Paris, 1739:

6. Ակնարկում է իր «Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին» ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1915 թվականին և անմիջապես պաշտպանվեց որպես դոկտորական ստենոսխոսություն (տե՛ս **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915):

7. Շահան-Ջրպետ (Շահան Սարգսի Ջրպետյան, 1772-1837) – նշանավոր լեզվաբան, հիմնադրել է Սորբոնի համալսարանի հայոց լեզվի ամբիոնը:

8. Նկատի ունի հետևյալ հրատարակությունը՝ «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացոյ» (տե՛ս «Mémoire de la Societe de linguistique de Paris» Փարիզ, 1824, կա նաև առանձին գրքով՝ Փարիզ, 1830):

9. Խոսքը իրավաբան, հոգեբան, մանկավարժ Սիրական Թադևոսի Տիգրանյանի (1875-1947) մասին է: Հեղինակն է «Древнеармянская книга канонов» (Петроград, 1918) մենագրության, եղել է Երևանի համալսարանի առաջին դասախոսներից:

10. Ըստ երևույթին, խոսքը վերաբերում է Հայկական հարցին մվիրված ֆրանսերեն ինչ-որ հրատարակության:

11. Ակնարկում է հայ հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Պողոս Նուպար փաշային (1851-1930):

12. Խոսքը Ռուսաստանի արտաքին գործոց նախարար (1910-1916) Սերգեյ Դմիտրովիչ Սազոնովի (1861-1927) մասին է:

13. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն Բալկանյան պատերազմների ժամանակ (1912-1913) հայկական բարենորոգումների հարցը եվրոպական պետությունների առջև վերստին արծարծելու նպատակով Պողոս Նուպար փաշային նշանակում է Ազգային պատվիրակության նախագահ: Ն. Այդոցն այստեղ ակնարկում է այդ խնդրի շուրջ Պողոս Նուպարի և Սազոնովի փարիզյան ինչ-որ տեսակցության մասին:

14. Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ռուսաստանի ակտիվ միջամտությամբ Հայկական հարցը վերստին վերաբացվեց: Ռուսաստանը ձգտում էր դիվանագիտական քննարկման առարկա դարձնել հայկական վեց վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու, մեկ միասնական նահանգապետություն ստեղծելու հարցերը:



### 53. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

(էջ 78)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Արշակ Չոպանյանի ֆոնդ, I բաժին, 133, № 28): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 94-95): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ակնարկում է Հայկական հարցը արծարծելու ուղղությամբ Ս. Պետերբուրգում կազմակերպված խորհրդակցական մարմնի գործունեությունը:

2. Որքան մեզ հայտնի է, Ա. Չոպանյանի որևէ երկասիրություն այդ տարիներին ռուսերեն չի թարգմանվել՝ բացառությամբ հետագայում՝ 1916 թվականին, Վ. Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուում տեղ գտած բանաստեղծությունների:

3. Տե՛ս նախորդ՝ № 52 նամակը:

4. Ակնարկում է Ա. Չոպանյանի «Կյանք և երազ» ստեղծագործությունների ֆրանսերեն («La vie et le rêve.. Poèmes en prose contes, fantaisies», Paris, 1913) ժողովածուն, որը լույս է տեսել Էմիլ Վերհառնի առաջաբանով:

5. Խոսքը արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս և խմբագիր Ռ. Չարդարյանի (1874-1915) մասին է:

6. Այսինքն՝ Հայկական հարցի:

7. Քալանթար – հասարակական-քաղաքական գործիչ, հայտնի գյուղատնտես, «Մշակ» թերթի խմբագիր Ալեքսանդր Հայրապետի Քալանթար (1855-1913):

8. Խատիսյան – գրական-հասարակական գործիչ, «Չանգ» շաբաթաթերթի խմբագիր Կոստանդին Հ. Խատիսյան (1864-1913):

9. Չավարյան – հասարակական-քաղաքական գործիչ, Դաշնակցություն կուսակցության ղեկավարներից Սիմոն Չավարյան (1865-1913):

10. Առանձար (Միսաք Քերովբեի Գոյումճյան, 1877-1913) – նշանավոր գրող, նովելագիր, երգիծաբան, մանկավարժ:

### 54. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻՆ

(էջ 79)

Ինքնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 540, թ. 7): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի անտիպ հուշերը ուսուցչապետ Նիկողայոս Մատի մասին, «Ակադեմիկոս Նիկողայոս Մառ», ժողովածու, Երևան, 2005, էջ 144): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը Անիի եկեղեցիների հոգևոր սպասավոր Միքայել վարդապետի մասին է: Վերջինս խոր տարածաշրջաններ ուներ Անիի հնագիտական արշավախմբի, մասնավորապես նրա ղեկավար Ն. Մառի հետ:

2. Վարդանյան Վարդան (Վարդանով, 1853-1919) – Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդի նախագահ, հայտնի բժշկապետ և հասարակական գործիչ:

### **55. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ** (էջ 80)

Ինքնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Դժվար է հստակեցնել, թե Ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ի (1762-1796) որ հրովարտակի մասին է խոսքը: Եկատերինա II-ի՝ հայ իրականության հետ աղերսված հրովարտակներից հիշատակման են արժանի՝ 1768 թվականի հրովարտակը, որով վերահաստատվում էին Ս. Էջմիածնի իրավունքները Ռուսաստանում բնակվող հայերի նկատմամբ, 1770 թվականի մայիսի 22-ի հրովարտակը, որով շեղյալ էր համարվում Ռուսաստանում հայկական եկեղեցիների կառուցումն արգելակող 1740 թվականի հրամանագիրը, 1779 թվականի հրովարտակը՝ Նոր Նախիջևան քաղաքի հիմնադրման ու ինքնավարության մասին և այլն: Թերևս վերջինիս մասին է խոսքը:

2. Հայ կաթոլիկական միաբանություն, որը ստեղծվել է Լեռնալիբանանում 1705 թվականին:

3. Մեկ տող անընթեռնելի է:

4. Սրապիոն վարդապետի ինքնությունը պարզել չկարողացանք:

5. Թվագրել ենք մոտավորապես:

### **56. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ** (էջ 81)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Կարապետ Կոստանյանի ֆոնդ 19, № 600): Հրատարակել ենք մենք (տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնցի անտիպ մամակներից, էջ 95): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը բանասեր-բանահավաք, ազգագրագետ Գ. Ա. Սրվանձոյանցի (1840-1892) «Հնոց և նորոց» (Կ. Պոլիս, 1874) ժողովածուի մասին է:

2. Նկատի ունի քերական, տրամաբան, փիլիսոփա Միսեոն Ջուլայեցու (1595-1657) «Գիրք տրամաբանութեան» (Կ. Պոլիս, 1728) երկասիրությունը:

3. Այսինքն՝ Լազարյան ճեմարանի:

4. Ակնարկում է Գ. Խալաբյանցի «Очерк истории древней Армении» (Մ., 1910) երկասիրությունը:

5. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության ընձեռած տվյալները:

## **57. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԳ. ՎԱՐԳԱՆՅԱՆԻՆ**

(էջ 81)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Տե՛ս № 47, ծան. 1:

2. Ն. Ադոնցի՝ Կ. Պոլիս այցելելու (1912 թ. դեկտեմբեր - 1913 թ. հունվար) իրական հանգամանքների վերաբերյալ մանրամասն տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հատոր 2 (հրատարակախոսություն), Երևան, 2012, էջ 429-438:

3. Նկատի ունի Ներսես վարդապետ Ակինյանին:

4. Խոսքը «Ռուսաստանի հնագիտական ընկերության» (1846-1917) մասին է:

5. Ակնարկում է Վիեննայի Մխիթարյան միաբանության «Ազգային մատենադարան» մատենաշարով լույս տեսած գրքերը:

6. Նկատի ունի Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Աղեքսանդր Մատիկյանի (1886-1930) «Անանունը կամ Կեղծ Սերեոս. քննական ուսումնասիրություն» (Վիեննա, 1913) երկասիրությունը:

7. Խոսքն իր ««Начальная история Армении» у Себеоса...» աշխատության մասին է: Բոլոր դեպքերում Ն. Ադոնցը որևէ գրախոսություն չի գրել Ա. Մատիկյանի վերը նշված ուսումնասիրության վերաբերյալ:

8. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության ընձեռած տվյալները:

**1914**

## **58. ԽՈՐԵՆ ԵՊ. ՄՈՒՐԱՎԻԹԳՅԱՆԻՆ**

(էջ 83)

Բնագիր-մեքենագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում՝ ֆոնդ 48, ց. 1, թ. 49: Տպագրվում է առաջին անգամ:

1. Դուշի – այժմ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Կեչուտ գյուղը:

## **59. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ**

(էջ 84)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Կարապետ Կոստանյանի ֆոնդ 19, № 601): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 96): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս № 56, ծան. 1:

**1915**

## **60. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ**

(էջ 84)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Կարապետ Կոստանյանի ֆոնդ 19, № 602): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 96): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ակնարկում է 1915 թվականի սկզբներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող հայտնի իրադարձությունները:

2. Տե՛ս «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. I-III (М., 1833-1838):

3. Խոսքը հրապարակախոս, խմբագիր, պատմաբան Մ. Գ. Մսերյանի (1808-1873) «Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմեօնէ մինչև ցՅոհաննէս» (Մոսկվա, 1876) երկասիրության մասին է:

4. Սա Հ. Աճառյանի՝ հայերենի 40 բարբառներին ու ենթաբարբառներին նվիրված «Հայերեն գավառական բառարան» (Թիֆլիս, 1913) մեծածավալ ու մեծարժեք աշխատությունն է:

**1916**

## **61. ՏԻՐԱՅՐ ՎՐԳ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

(էջ 85)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանի ֆոնդում (թղթ. № 126, վավ. 116):

Հրատարակել է Ա. Հ. Ադամյանը (տե՛ս **Ա. Հ. Ադամյան**, նշվ. աշխ., էջ 113-114): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս «Ծրագիր Գեորգեան հոգևոր ճեմարանի դպրոցական բաժնի ստորին դասարանն ընդունվելու համար», Վաղարշապատ, 1916:

2. Տիրայր Տեր-Հովհաննիսյան (Տիգրան Հովսեփի Մելիք-Մուշկամբարյան, 1867-1956) - եկեղեցական նշանավոր գործիչ, հայագետ: Կարևոր դերակատարություն է ունեցել Ադոնցի ճակատագրում որպես ուսուցիչ ու հովանավոր: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ (1915-1921), հետագայում Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ (1921-1928):

3. Խոսքը մոսկվայաբնակ հայ մեծահարուստ Ալեքսանդր Ասլանի Թարասյանի (Տարասով) մասին է, որը 1917 թվականին 64.000 ռուբլի գումար է կտակել Գևորգյան ճեմարանի կարիքները հոգալու համար:

4. Նկատի ունի Գևորգ վրդ. Չորեքչյանին (1868-1954): Ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս (1945-1954): 1916 թվականին նա Սինոդի անդամ էր և Մայր Տաճարի լուսարարապետ:

5. Հովհաննես Զավրյան (Զավրիե, 1880-1945) – ազգային-հասարակական գործիչ, իրավաբան, երդվյալ հավատարմատար, Ն. Ադոնցի անձնական բարեկամը:

6. Նկատի ունի Գարեգին վրդ. Հովսեփյանին, որը 1916 թվականին Գևորգյան ճեմարանի տեսուչն էր:

## **62. ՏԻՐԱՅՐ ՎՐԴ. ՏԵՐ- ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

(էջ 87)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի Գարեգին Հովսեփյանի ֆոնդում (թղթ. № 134, վավ. 1): Տպագրվում է առաջին անգամ:

1. Տե՛ս № 61, ծան. 3:

2. Տիրայր Տեր-Հովհաննիսյանը տարիներ ի վեր զբաղվել է Ֆրիկի անձի և գրական ժառանգության ուսումնասիրությամբ, հրատարակել է մի շարք հոդվածներ և «Ֆրիկ. Դիվան» մեծածավալ աշխատությունը (Նյու Յորք, 1952, 765 էջ): Հետաքրքրությունից գորկ չէ այն փաստը, որ Ադոնցը ժամանակին հուշել է Տիրայրին «Ֆրիկ» բառի և ոչ թե անվան իր մեկնաբանությունը՝ «ժողովող, նկարիչ» (տե՛ս նույն տեղում, էջ 88):

3. Նկատի ունի Գարեգին եպ. Հովսեփյանին:

1917

**63. ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ**

(էջ 88)

Ինքնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Կարապետ Կոստանյանի ֆոնդ 19, № 603): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 96): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ենթադրելի է, որ Ն. Արոնցը ակնարկում է 1916 թվականի ամռանն իր կատարած ճանապարհորդությունը Վան, Մուշ, Կարին, որի ընթացքում մասնակցել է Վանի հնագիտական արշավախմբին:

1918

**64. ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ**

(էջ 88)

Մեքենագիր-բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (ֆոնդ 282, ցուցակ 1, գործ 45):

1. Հայ ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուպար փաշայի գլխավորությամբ, 1912 թվականից սկսյալ գործում էր Փարիզում (տե՛ս № 50, ծան. 8):

2. Այնուհետև բերվում է «Տաճկահայաստանի մասին» հրովարտակի ամբողջական տեքստը:

3. Հեռագիրն անտորագիր է, սակայն վստահելի սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այն ուղարկել է Ն. Արոնցը, որն այդ ժամանակ Հայոց ազգային խորհրդի լիազոր ներկայացուցիչն էր Պետրոգրադում:

**65. ՀԵՌԱԳԻՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 89)

Մեքենագիր փուստերեն բնագիրը գտնվում է Ռուսաստանի Ղազնության արտաքին քաղաքականության արխիվում (Архив внешней политики РФ, Референтура по Закавказью, ф. 148, оп. 3, п. 2, д. 6, л. 48): Բնագիրը հայտնաբերել է պատմաբան Ռեմ Ղազանչյանը, որը հետագայում այն տրամադրել է մեզ: Հեռագրի հայերեն թարգմանությունը առաջին անգամ լույս է

տեսել Ն. Ադոնցի «Հայկական հարց» ժողովածուում (Երևան, 1996, էջ 63): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նշված ժամանակաշրջանում (1918 թ. մարտ) Ն. Ադոնցը բնակվում էր Մոսկվայում, ուր նա տեղափոխվել էր քաղաքական իրադարձություններին մոտ լինելու, հայրթյանը հուզող խնդիրներին առավել օգտակար լինելու մտադրությամբ:

2. Հայոց ազգային խորհուրդը ստեղծվել է 1917 թվականի սեպտեմբերի 29-ին Թիֆլիսում գումարված Արևելահայերի ազգային խորհրդաժողովում:

3. Թուրքական բանակը Արդահանը գրավել էր դեռևս 1918 թվականի մարտի 3-4-ի մարտերի ժամանակ, իսկ Կարսը՝ ապրիլի 25-ին:

4. Հեռագրի վերջում Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ ֆոն Բուշեն Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանին տվել է հետևյալ գրավոր ցուցումը. «Խնդրում ենք տեղի կառավարությանը (իմա՝ թուրքական - Պ. Հ.) տեղեկացնել սույնի մասին և կանխել թուրքական կասկածելի ներխուժումը և այդ մատնանշել»:

1920

**66. ԼՈՆԴՈՆԻ «ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ**

(էջ 90)

Ռուսերեն ինքնագիրը պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Նիկողայոս Ադոնցի ֆոնդում (պահարան I, զգրոց Գ/Ա-7): Հայտնաբերել և հրատարակել ենք մենք (տե՛ս Ն. Ադոնց, Հայկական հարց, Երևան, «Հայագիտակ», 1996, էջ 116-118: Թարգմանությունը ռուսերենից՝ Վ. Ա. Դիլոյանի): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. «Թայմս» («The Times») – անկախ օրաթերթ, որը լույս է տեսնում Լոնդոնում 1785 թվականից առ այսօր:

2. Ցավոք, հնարավոր չէրավ պարզել, թե Ադոնցի սույն նամակը երբևիցե տպագրվել է «Թայմս»-ում, թե ոչ:

3. Նկատի ունի 1920 թվականի նոյեմբերյան տոնակատարությունները Լոնդոնում՝ ի նշանավորումն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի երկրորդ տարելիցի:

4. Այսինքն՝ Գերմանիան:

5. Ն. Ադոնցը չի կռահել, որ բոլշևիկների եզրափակիչ հարվածն ի վերջո 1921 թվականի փետրվարին ուղղվելու էր Վրաստանի դեմ:

6. Ակնարկում է հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշային, որի հայտարարությունը՝ ներկայացված Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագու-

մարին (1920 թ. սեպտեմբերի 1-7), ուներ ոչ միայն շեշտված հակահայկական միտում, այլև պատերազմի անսքող կոչ՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

7. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության ընձեռած տվյալները:

**67. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
(էջ 94)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ն. Մառը արտասահմանյան գործուղման է մեկնել 1920 թվականի սեպտեմբերի 12-ին, որը շարունակվել է մինչև 1921 թվականի հունիսը:

2. Ն. Մառը Վիեննայի Մխիթարյաններին է այցելել 1920 թվականի դեկտեմբերին:

3. Նկատի ունի 1920 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին քեմալականների հարձակումը դեպի Հայաստան և այստեղ նրանց կազմակերպած վայրագությունները, թուրք-ռուս համաձայնագիրը՝ Հայաստանը միմյանց միջև բաժանելու վերաբերյալ, և Հայաստանի խորհրդայնացումը:

4. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության տվյալները:

**1921**  
**68. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ (1)**  
(էջ 95)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հասցեատերը ենթադրական է:

2. 1920-1924 թվականների ընթացքում Ն. Արոնցի որևէ հոդված (թեկուզ և «մի փոքրիկ հոդված») վիեննական համդեսում չի տպագրվել: Մնում է ենթադրել, որ Արոնցի այդ անձանոթ ձեռագիր հոդվածը շարունակում է պահվել միաբանության դիվանում: Միգուցե հետագա պրպտումներն ի հայտ բերեն Արոնցի ինչպես այս, այնպես էլ այլ չհրատարակված աշխատություններ:

3. Ինչպես հայտնի է, Փավստոսի մասին Գ. Տեր-Պողոսյանի առաջին հոդվածաշարը «Հանդէս ամսօրեայ»-ում լույս էր տեսել դեռևս 1900 թվականին, իսկ առանձին գրքով՝ 1901 թվականին: Այստեղ խոսքը Հ. Ա. Մատիկյանի «Անանունը կամ Կեղծ-Սերբոս» մենագրության վերաբերյալ Գ. Տեր-Պողոսյանի գրախոսականի մասին է,



որը լույս էր տեսել «Նկատողություններ Փավստոսի Պատմության վերաբերյալ» խորագրի ներքո (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1914, էջ 183-206, 480-500, 623-633: 1916, էջ 149-170):

4. Գ. Տեր-Պողոսյանի սույն մատենախոսականը առանձին գրքով լույս է տեսել 1919 թվականին՝ որպես Բ հատորը «Նկատողություններ Փավստոսի Պատմության վերաբերյալ» ուսումնասիրության:

5. Նկատի ունի 1920-1921 թվականներին իր անընդհատ տեղավիժումները՝ նախ Ս. Պետերբուրգից Լոնդոն (ապրիլ, 1920), ապա՝ Լոնդոնից Փարիզ (աշուն, 1921):

6. Յո. Մարկվարտ (1864-1930) – գերմանացի հայագետ, Բեռլինի համալսարանի հայկական բանասիրության ամբիոնի վարիչ (1920-1930), «Հանդես ամսօրեայ»-ի թղթակիցներից:

7. Հ. Գեյցեր (1847-1906) – գերմանացի հայագետ: Հեղինակ է հայկական մատենագրությանը և միջնադարյան հայոց պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների: Աշխատակցել է «Հանդես ամսօրեայ»-ին:

8. Յո. Մարկվարտի տվյալ ուսումնասիրությունը լույս է տեսել նախ գերմաներենով հետևյալ խորագրի ներքո՝ «Untersuchungen zur Geschichte von Eran. 5. Zur Kritik des Faustus v. Byzanz», տե՛ս «Philologus», Band LV, Heft 2, Göttingen, 1896, S. 213-244: Սույնի համառոտությունը տպագրվել է «Հանդես ամսօրեայ»-ում՝ «Փավստոս Բուզանդ» խորագրի ներքո (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1896, էջ 346-347):

Հ. Գեյցերի հոդվածն է՝ «Die Anfänge der armenischen Kirche (Sonderabdruck aus den Berichten der Königlich Sächsischen Gesellschaft der Wissenschaften), տե՛ս «Philosophisch-historische Classe», Sitzung vom Mai, 1895, S. 109-174: «Հանդես ամսօրեայ»-ում լույս է տեսել այս հոդվածի միայն մի հատվածը՝ «Սկզբնավորություն հայկական եկեղեցվո» (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1897, էջ 56): Իսկ բուն ուսումնասիրությունը լույս է տեսել Վենետիկում առանձին գրքով (տե՛ս **Հ. Գեյցեր**, Փավստոս Բուզանդ կամ հայկական եկեղեցվո սկզբնավորություն: Թարգմ.՝ Հ. Թորոսյան, Վենետիկ, 1896):

9. Մեկ տող անընթեռնելի է:

10. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության ընձեռած տվյալները:

## 69. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ (1)

(էջ 95)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հասցեատերը ենթադրական է:

2. Խոսքը Գ. Տեր-Պողոսյանի «Նկատողություններ Փավստոսի Պատմության վերաբերյալ» մենագրության 2-րդ հատորի (Վիեննա, 1919) մասին է:

3. Նշված հասցեով Ն. Արոնցը Փարիզում բնակվել է միայն 1921-1922 թվականների ընթացքում:

## **70. ԳԱԲՐԻԵԼ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆԻՆ** (էջ 96)

Մեքենագիր բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (ֆոնդ 430, ց. 1, գ. 139, թ. 6): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Ն. Արոնց**, Երկեր, հատ. Զ. Հրապարակախոսություն, Երևան, 2012, էջ 15): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Գաբրիել Նորատունկյան (1852-1936) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, առևտրի ու հանրային շինությանց (1906-1912) և արտաքին գործոց (1912-1913) նախարար, 1920 թվականից՝ Հայկական ազգային պատվիրակության նախագահ:

2. Չավազանց կարևորելով Գ. Նորատունկյանի գրությունն առ Ն. Արոնց՝ անհրաժեշտ ենք համարում այն ներկայացնել ամբողջությամբ.

### **«Մեծարգո՛ տիար,**

Մեր ազգային դատին կապված ինչ-ինչ իրավաբանական խնդիրներ սերտելու և պատասխանելու համար, Ազգային պատվիրակությունս հարկ տեսավ իրեն գործակից առնել իրավագետ խորհրդականներու հանձնախումբ մը:

Ծանուցանելով Ձերդ ազնվությանը, թե անդամ նշանակված եք սույն հանձնախմբին, պատվիրակությունս մեծ հույս ունի, որ չեք զլանար Ձեր փորձված կարողության և արժանյանց նպաստը բերել այս առթիվ իր աշխատությանց:

Մնամ հատուկ հարգանք՝

նախագահ

**Գ. Նորատունկյան** (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական արխիվ, պրոֆ. Ն. Արոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Ե, Ա-8, թ. 22):

3. Ազգային պատվիրակության իրավագիտական հանձնախմբի կազմում, բացի Արոնցից, ներգրավված էին նաև Մ. Պապաջանյանը, Գ. Սնապյանը և Մ. Ս. Դավիթ-Բեկը: Այստեղ Արոնցը Հայաստանի սահմանների, բնակչության կազմի ու թվաքանակի վերաբերյալ կազմել է մի շարք հուշագրեր և տեղեկագրեր:

**1922**  
**71. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(Էջ 97)**

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը նշանավոր պատմաբան, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հովսեփ Գաթրըճյանի (1820-1882) «Տիեզերական պատմություն» (Վիեննա, հատ. Ա-Բ, 1849, 1852) աշխատության մասին է:

**72. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**  
**(Էջ 97)**

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հակոբ Քոչարյան (1865-1933) – մանկավարժ, հրապարակախոս, հանրային գործիչ: Եղել է Հայոց ազգային բյուրոյի և ՀՀ պատվիրակության քարտուղարը:
2. Մեկ տող անընթեռնելի է:
3. Նկատի ունի Հայաստանի գիտական ինստիտուտի «Բանբերը» (գիրք Ա և Բ, Էջմիածին, 1921, 1922), որը լույս էր տեսնում Ե. Տեր-Սիմոնյանի խմբագրությամբ:
4. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով մամակի հաղորդած տվյալները:

**1923**  
**73. ԱՐՇԱԿ ԱՎՖՐԱՍՅԱՆԻՆ**  
**(Էջ 98)**

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ, Պ-42, ցուցակ 1, գործ 872, ք. 6): Հրատարակել է Ալվարդ Ղազիյանը (տե՛ս **Ա. Ղազիյան**, Նիկողայոս և Հայկ Արոնցների մամակներն Արշակ Սաֆրաստյանին, «Բանբեր Հայաստանի արխիվների» 2003, № 2, էջ 52): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արշակ Սաֆրաստյան (1886-1958) – պատմաբան, լրագրող, ազգային-հասարակական գործիչ:
2. Մեկ տող անընթեռնելի է:
3. Անշուշտ, «այդ լուրը» անստույգ էր. 1923 թվականին Չանգեզուրում մման շարժում չի եղել:

1925

**74. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԳ. ՎԱՐԳԱՆՅԱՆԻՆ**

(էջ 99)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը «Անձանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ ըստ օտար աղբյուրների» հոդվածաշարի մասին է (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1925):

2. Այդ շրջանում (1924-1929) Արիստակես վրդ. Վարդանյանը եղել է «Հանդես»-ի խմբագրապետը:

3. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով մամակի հաղորդած տվյալները:

**75. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԳ. ՈՍԿՅԱՆԻՆ**

(էջ 99)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Համազասպ վրդ. Ոսկյան (1895-1968) – պատմաբան, ձեռագրագետ, մանկավարժ: Եղել է «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրապետ (1938-1946, 1963-1968):

2. Խոսքը հայագետ, խմբագիր Կարապետ Բասմաջյանի (1864-1942) մասին է:

3. Տե՛ս № 74, ծան. 1:

4. Եզնիկ Կողբացու վերաբերյալ Ադոնցը «Հանդես»-ում որևէ հոդված չի տպագրել: Հավանաբար ակնարկը վերաբերում է 1925 թվականին «Բազմավեպ»-ում լույս տեսած նրա «Քննական նշմարներ Եզնիկի մասին» ուսումնասիրությանը (տե՛ս «Բազմավեպ», 1925, էջ 196-200, 294-298, 366-371: 1926, էջ 69-72, 108-113):

5. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով մամակի հաղորդած տվյալները:

**76. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ**

(էջ 100)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 29): Տպագրվում է առաջին անգամ:

1926

77. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

(Էջ 100)

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 22-23): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արտաշես Չիլինկիրյան (Ռուբեն Գարբինյան, 1883-1968) – հասարակական, քաղաքական, կուսակցական նշանավոր գործիչ, ՀՀ արդարադատության նախարար, «Հայրենիք» օրաթերթի և ամսագրի խմբագիր:

2. «Հին հայոց աշխարհայացքը» խորագրի ներքո լույս է տեսել «Հայրենիք» ամսագրի 1926-1927 թվականների համարներում:

3. Լույս է տեսել «Հայրենիք» ամսագրում (1927, № 4, էջ 68-77, № 5, էջ 84-96):

4. Խոսքը Ադոնցի ««Դիզենիս Ակրիտաս» բյուզանդական դյուցազնավեպի պատմական հիմքը» ուսումնասիրության մասին է: Այն առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերեն (տե՛ս «Byzantinische Zeitschrift», Leipzig, 1929-1930, Bd. 29-30, SS. 198-227): Ն. Ադոնցի թողնում առկա է սույն ուսումնասիրության ռուսերեն ձեռագիր, անավարտ (46 էջ) մի տարբերակ (տե՛ս Համագալսիցի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, զգրոց Է, թղթածրար Ա-8):

5. Թարմատար-հավելադրություն (հավելադիր բառ, հնչյուն):

6. «Հայրենիք» ամսագիրը ՀՀ Դաշնակցության օրգանն էր:

7. Հայկ Ադոնց – Նիկողայոս Ադոնցի կրտսեր եղբայրը, գրականագետ, լրագրող, «Петроградская правда» թերթի (1920-1921) և «Жизнь искусства» ամսագրի (1921-1924) խմբագիր:

8. Խոսքը Ն. Ադոնցի մոր՝ Դանա Ադոնց - Ռոստոմբեկյանի մասին է, ով այդ ժամանակ մյուս որդիների, դստեր ու թոռների հետ բնակվում էր Բաքվում:

9. Անհրաժեշտ համարեցիմք ընթերցողին ներկայացնել պատմաբանի բեյրության թողնում առկա մոր՝ Դանա Ադոնց – Ռոստոմբեկյանի միակ մամակը կրտսեր որդուն՝ Լենինգրադում բնակվող Հայկ Ադոնցին՝ այն Նիկողայոս Ադոնցին փոխանցելու խնդրանքով:

**Սիրելի՛ որդի Հայկ,**

Նախ և առաջ մեզմից հարցնես, ամբողջ ընտանիքով Բագու ենք: Արտեմի երեխաներն ապրում են իրենց հին տեղը՝ Բիբի-Էյբաթում: Վայլեն ծառայում է և սովորում է համալսարանում (мед. факультет), մնացած երեխաները՝ Էդիկը, Նորան և Լիբան, առաջին երկուսը սովորում են, իսկ մյուսը տանն է (իմիջիպալոց Լիբան շատ ընդունակ է. առանց դպրոց գնալու կարողում է թե՛ ռուսերեն և թե՛ հայերեն):

Քույրդ՝ Մաշուն, ապրում է Հայկավանում (Арменикенд), նա ունի երեք աղջիկ երեխա: ...Բազու գալուց հետո Տիգրանը թղթեր է պատրաստել և գցել արհեստակցական միությունը, և մի գուլպի մեքենա (чулочная машина) ենք առել, իրեն էլ տվել սովորելու: Այժմ կոռպերատիվ արհեստակցական միության համար աշխատում է: Այսինքն՝ այնտեղից թել է ստանում և իրենց տանը գործում, հետո տանում, հանձնում է գուլպաները, որով և վարձատրվում է:

Ես էլ ապրում եմ Տիգրանի մոտ: Նա ունի երեք երեխա, որոնցից Վոլոդյան և Բագրատը սովորում են դպրոցում, իսկ Միշուկը դեռ փոքր է: Տիգրանն էլ այս տարի համալսարանի վերջին կուրսումն է և այժմ научный работник է Շահումյանի անվան ինստիտուտում:

Մնացած ազգականներից այստեղ են՝ Կոստյան, Արշակը, Առաքելը և Վարդանը: Բոլորը՝ ողջ և առողջ. աշխատում են:

Այժմ խոսենք քեզանից: Ինչո՞ւ մինչև այսօր ոչ մի նամակ չես գրում: Ամսական գոնե մեկ ատկրիտկա գրիր, գցիր: Ուրախ եղիր, ոչ մի բանի մասին մի մտածիր, միայն առողջությանդ վրա մտածիր: Գրիր տեսնեմ՝ ինչպե՞ս ես ապրում, ինչպե՞ս ես անցկացնում օրը, մանրամասն գրիր: Խոստացել էիր, որ գաս Բազու, ինչո՞ւ չեկար:

**Նիկոլայի գրած նամակներից մեկը գցիր քո նամակիդ մեջ և ուղարկիր, գրիր նրա հասցեն:**

Վերջացնում եմ նամակս մայրական սիրով: Մերոնք բոլորը բարևում են քեզ և սպասում են գալուդ:

Քո մայր՝ **Գանա Ադոնց**

**Հ. Գ.** Բիրուց շատ բարև:

Նույնը:

**Սիրելի՛ հորեղբայր Հայկ,**

Այս նամակը գրեցի ես տատիկի կողմից:

... Սպասում ենք նամակիդ, որպեսզի մի տեղեկություն իմանանք Նիկոլայ նյառայից:

Ցտեսություն, խորին հարգանքով՝

**Վլադիմիր Տիգրանի Ադոնց**

28 փետրվարի, 1929 թ.

ք. Բազու

(տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գգրոց Գ, թղթածրար Ե/Ա-8):

## 78. ՀԱՄԱՁԱՄՊ ՎՐԴ. ՈՍԿՅԱՆԻՆ

(էջ 102)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Համազասպ վրդ. Ոսկյանը «Հանդեսը» խմբագրել է 1924-1930 թվականների ընթացքում:

2. Ակնարկում է իր «Կորյունի մասին. պ. Ֆնտոլյանի նկատողությունների առթիվ» հոդվածը (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1927, էջ 273-284):

3. Հիշյալ հասցեում Ն. Արոնցը Փարիզում բնակվում էր՝ 1926 թվականի կեսերից սկսած (տե՛ս «Ֆրանսահայ տարեգիրք. 1927» Փարիզ, 1926, էջ 288):

## 79. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

(էջ 103)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 30): Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը վերաբերում է Փարիզի «Հայ գրական միությանը», որը վերջնականապես ձևավորվեց 1928 թվականին: Միությանն անդամակցել են Փարիզում բնակվող բոլոր ճանաչված հայ մտավորականները, իսկ նախագահ է ընտրվել Ն. Արոնցը:

## 80. ՀԱՄԱՁԱՄՊ ՎՐԴ. ՈՍԿՅԱՆԻՆ

(էջ 103)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Տե՛ս Ն. Արոնց, Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, Վիեննա, 1925, 56 էջ (Ազգային մատենադարան, ԴԺԱ):

2. Ն. Արոնցի ստորագրությունից հետո առկա է հետևյալ մակագրությունը՝ «Դրկվեցավ»:

1927

### 81. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 104)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 96ա, վավ. 1057): Հրատարակել է Ա. Հ. Աղամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 114-115): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի ազգային բարերար, իր անձնվեր բարեկամ, հայտնի նավթարդյունաբերող Աբրահամ Ղուկասյանին (1872-1969): Ի դեպ, Ա. Ղուկասյանին պատկանող «Navarre» հրատարակչությունն է լույս ընծայել Ադոնցի հետմահու հրատարակված «Histoire d'Arménie» (Փարիզ, 1946) և «Պատմական ուսումնասիրություններ» (Փարիզ, 1948) աշխատությունները:

2. Նկատի ունի 1913 թվականին Վաղարշապատում հրատարակված Ս. Էջմիածնի «Շողակաթ» հայագիտական ժողովածուն:

3. Խոսքը Փարիզի հայոց հոգևոր առաջնորդ Վռամշապուհ եպ. Քիպարյանի մասին է:

4. Այսինքն՝ Պետերբուրգ-Լենինգրադում:

### 82. ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԳՅԱՆԻՆ

(էջ 106)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Ստ. Մալխասյանցի ֆոնդում: Առաջին անգամ հրատարակել է Պ. Հ. Հակոբյանը (տե՛ս Պ. Հ. Հակոբյան, Ն. Ադոնցի դիտողությունները հայերենի ուղղագրության և տառերի վայելչության վերաբերյալ «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 157-168): Այնուհետև վերահրատարակվել է բազմիցս: Տպագրվում է ըստ Ն. Ադոնցի Երկերի Գ հատորում տեղ գտած առավել ամբողջական տարբերակի (հատ. Գ, էջ 411-424):

1. Հայերենի ուղղագրության նեֆորմը, որն իրականացվել է 1922 թվականին, տեղիք է տվել զգալի վիճաբանությունների: Խորհրդային Հայաստանի կառավարությունը Գիտության և արվեստի ինստիտուտին հանձնարարել է ստեղծել հատուկ հանձնաժողով՝ հայոց լեզվի ուղղագրության և տառերի ձևի բարեփոխման վերաբերյալ վերջնական նախագիծ պատրաստելու համար:



Հանձնաժողովը կազմել է համադրական աղյուսակ (տե՛ս «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», Երևան, 1927, էջ 94-96), որն ուղարկել է մի շարք նշանավոր հայագետների, այդ թվում՝ և Ն. Ադոնցին: Ն. Ադոնցի այս նամակը պատասխանն է իրեն ուղղված հանձնաժողովի գրության:

2. Ուղղագրության և տառերի բարեփոխման հանձնաժողովի կազմում էին Հ. Մանանդյանը (նախագահ), Հ. Աճառյանը, Լեոն, Ս. Մալխասյանը, Ա. Խաչատրյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Շիրվանզադեն և ուրիշներ:

3. Վոլսայուկ – արհեստական լեզու:

4. Այսինքն՝ Ս. Պետերբուրգի:

5. Նկատի ունի Գարեգին վրդ. Հովսեփյանի «Զարտեգ հայ հնագրության» ուսումնասիրությունը (հատ. Գ, Վաղարշապատ, 1913):

### **83. ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԴ. ՈՍԿՅԱՆԻՆ**

(էջ 124)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը հունգարահայ մանկավարժ, բանասեր, հասարակական գործիչ Խաչիկ Ղուկասյանի (Christóf Lukácsi) ուսումնասիրության (Vienna, 1859) մասին է:

2. Նկատի ունի Ն. Ալինյանի «Հինգ պանդուխտ տաղասացներ» երկասիրությունը (Վիեննա, 1921):

3. Մեկ տող անընթեռնելի է:

Ակնարկում է իր «Կորյունի մասին. պ. Ֆնտգլյանի նկատողությունների առթիվ» հոդվածը:

### **84. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

(էջ 125)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 96ա, վավ. 1058): Հրատարակել է Ա. Հ. Աղամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 115-116): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տեղին է այստեղ ներկայացնել Ն. Ադոնցին ուղղված նմանատիպ նամակներից մեկը, որի հեղինակն է պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը:

Տփղիս  
4.III.1927

**Պրոֆեսոր Ն. Ադոնցին**

Մեծարգո՝ պր. Նիկողայոս,

Անցյալ փետրվարին Էջմիածնում եղած ժամանակ Գարեգին Սրբազանից տեղեկացա, որ Դուք ձեռնարկել եք Փարիզում հայագիտական հանդեսի հրատարակություն:

Ողջունելով այդպիսի, իսկապես որ կարևոր ձեռնարկության միտքը՝ կցանկանայի իմանալ՝ արդյոք միմիայն գուտ գիտական բնույթ պիտի՞ ունենա այդ հանդեսը, թե՞ միաժամանակ նեղ կամ լայն մտքով հասկացած և՛ հասարակական-քաղաքական, և՛ գրական: Այդ հարցը ինձ զբաղեցնում է այն պարզ պատճառով, որ միմիայն դրանից է կախված իմ մասնակցության հնարավորությունը՝ համաձայն այն հրավերի, որ ես ստացա Հայր Գարեգինից:

Կհուսամ, որ Դուք չեք զլանա բարեհաճելու պատասխանել ինձ Տփղիս՝ հետևյալ հասցեով.

Tiflis (Caucase) Staats Universität, իմ անվան:

Հարգանքով՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ** (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, Նիկողայոս Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Բ, թղթածրար 2):

2. Նկատի ունի Մեսրոպ արքեպ. Տեր-Մովսիսյանին:

1928

**85. «ՀԱՆԳԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ**

(էջ 127)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Այդ շրջանում «Հանդես»-ի խմբագիրը Արիստակես վրդ. Վարդանյանն էր:

2. Խոսքը հայագետ, թարգմանիչ, լրագրող Հայկ Պերպերյանի (1887-1978) մասին է:

3. Նկատի ունի իր «Դարձյալ Կորյունի շուրջը» հոդվածը (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1928, էջ 76-94, 395-405):

4. 1920-ական թվականների կեսերին Վիեննայի Մխիթարյանների նախաձեռնությամբ փորձ է կատարվում ռուսերենից հայերեն թարգմանելու Ն. Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» ուսումնասիրությունը (Петроград, 1915): Թարգմանությունն իրականացրել է Գ. Ա. անվանատառերով մեկը: Ծանոթանալով կատարված աշխատանքին՝ Ադոնցը մնացել է խիստ դժգոհ և համաձայնություն չի

տվել այն հրատարակելու: Այդ թարգմանության բնագիրն այժմ գտնվում է ՀՀ ազգային արխիվում (Հ. Պերպերյանի ֆոնդ 508, ցուցակ 1, գործ 165, ք. 1-200):

5. Խոսքը վերաբերում է գրող, հրապարակախոս, Ազգային պատվիրակության խորհրդական Լևոն Բաշալյանին (1868-1943):

## 86. ԱՐՇԱԿ ՉՈՊԼՆՅԱՆԻՆ

(էջ 127)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդի 133, բաժին I, № 37): Տպագրվում է առաջին անգամ:

1. Չկարողացանք պարզել, թե Ա. Չոպանյանին հետաքրքրող միջնադարյան որ հայ հեղինակի և երկասիրության մասին է խոսքը:

2. Ադոնցը ոչ միայն ճիշտ է կռահել, որ «յագարփուշտ»-ը երկու բառ է, այլև սպառնիչ ու գիտականորեն տվել է «աքար» բառի բացատրությունը: Այսպես՝ Հայկազյան բառարանի հեղինակները «աքար» բառը ստուգաբանել են հետևյալ կերպ՝ «հա կամ թռչուն ինչ ուտելի» (տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 398): Մ. Դերվիշյանը բառը բխեցնում է սանսկրիտերեն «Krakara»-ից և բացատրում որպես «մի տեսակ թռչուն» (տե՛ս **M. Dervischjan**, *Das Altarmenische*, Wien, 1877, էջ 76), իսկ Հ. Աճառյանը՝ «վայրի թռչուն» (տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հատ. Ա, Երևան, 1971, էջ 369): Առավել սպառնիչ է է. Աղայանի բացատրությունը՝ «Անտառահավերի ցեղին պատկանող թռչուն, դահուճ, անտառակարավ» (տե՛ս **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. Ա, Երևան, 1976, էջ 149):

3. Պրոֆ. Ռ. Ս. Ղազարյանը («Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան», գիրք Բ, թռչուններ, Երևան, 1992, էջ 17) նշում է, որ *արարը* լատիներեն անվանվում է bonasa, իսկ ռուսերեն՝ рябчик:

4. Դեռևս Ղազար Փարպեցին էր նկատել, որ աքարը պարարտամարմին (զեր) թռչուն է՝ «զեղեգնարնակ թփամուտ մացառաղօղ պարարտամարմին զանուշահամ ազգ արարացն վայրենեաց» (տե՛ս **Ղազար Փարպեցի**, Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 10):

5. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 1928 թվականին Ն. Արոնցը Փարիզում բնակվում էր նշված հասցեով (տե՛ս № № 87 և 88), հավանական ենք համարում, որ այս նամակը ևս գրվել է 1928 թվականին, իսկ 1929 թվականին նա բնակվում էր միանգամայն այլ հասցեում (տե՛ս № 92):

## **87. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

(էջ 128)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 96ա, վավ. 1147): Հրատարակել է Ա. Հ. Ադամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 116-117): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Գարեգին Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» ուսումնասիրության առաջին մասը (Վաղարշապատ, 1928):

2. Այդ շրջանում Ադոնցը որևէ մատենախոսություն չի տպագրել Գ. Հովսեփյանի այս աշխատության վերաբերյալ: Սակայն երրորդ մասի համար (Նյու Յորք, 1942-1943) գրել է հատուկ «Քննական տեղեկագիր» (տե՛ս նույն տեղում, էջ ԺԱ-ԺԳ):

1929

## **88. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՅԱՆԻՆ**

(էջ 130)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ ՊԺ-412, ցուցակ 1, գործ 872, թ. 1): Հրատարակել է Ալվարդ Ղազիյանը (տե՛ս **Ա. Ղազիյան**, Նիկողայոս և Հայկ Ադոնցների մամուլներն Արշակ Սաֆրաստյանին, էջ 52-53): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ա. Ահարոնյանի 40-ամյա գրական գործունեությանը նվիրված հոբելյանական նիստը տեղի է ունեցել Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում 1930 թվականի մայիսի 10-ին:

## **89. «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 131)

Բնագիրն անհայտ է: Լույս է տեսել ազգային-քաղաքական և գրական «Յառաջ» օրաթերթում (1929, 30 ապրիլի, № 914, էջ 1): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Սգահանդեսը, որը տեղի է ունեցել 1929 թվականի ապրիլի 24-ին, նախագահել է Ն. Ադոնցը: Այստեղ արտասանած իր բանավոր խոսքը նա գրավոր ուղարկել է «Յառաջ»-ին, որը և այն տպագրել է:

## 90. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

(էջ 132)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 31): Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի հին և նոր շրջանի հայ բանաստեղծների ստեղծագործությունների՝ Ա. Չոպանյանի թարգմանած-աշխատասիրած ֆրանսերեն ժողովածուի՝ «La Ros raie d'Arménie» («Վարդենիք Հայաստանի») հերթական 3-րդ հատորը (Փարիզ, 1929):

2. Իրոք, մի քանի տարի անց Փարիզում լույս է տեսնում Ա. Չոպանյանի «Հայրեններու բուրաստան» հատորը՝ հարուստ ծանոթագրություններով ու հմուտ քննական ուսումնասիրությամբ (Փարիզ, 1940):

## 91. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 132)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. № 96, վավ. 1213): Հրատարակել է Ա. Հ. Աղամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 117-118): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը Օսմանյան կայսրության վեզիր, սուլթանի անձնական գանձարանի, առևտրի և հանրային գործերի նախարար Հովհաննես փաշա Սաքրզ(ը)յանի (1836-1912) մասին է:

2. Արմենակ բեյ Սաքրզյան (1871-1944) – Օսմանյան կայսրության ֆինանսների նախարարության Թարգմանական գրասենյակի պետ, խորհրդական: 1923 թվականից հետո տեղափոխվել է Ֆրանսիա: Հեղինակ է «Pages d'Art Arménien» (Paris, 1940) մեծարժեք աշխատության:

3. Տե՛ս № 87, ծան. 1:

4. Տե՛ս № 79, ծան. 1:

## 92. ՎԻԵՆՆԱՅԻ ՄՆԻԹՎՐՅԱՆ ՄԵՎԲԱՆՈՒԹՅԱՆԸ

(էջ 133)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Թեև նամակագիրը խորագրում հատուկ շեշտել է «**Հրատարակության խնդրանք**», սակայն այս նամակը «Հանդես ամսօրեայ»-ում չի տպագրվել, այլ մնացել է միաբանության դիվանում:

2. Այսինքն՝ 1929 թվականի ապրիլի 6-ին: Իրականում հանդիսությունը տեղի է ունեցել քիչ ավելի ուշ՝ 1930 թվականի մայիսի 10-ին, Սորբոնի մեծ դահլիճում:

3. Վիեննայի Մխիթարյանների ձեռնարկած միջոցառումներից է Ն. Ակինյանի «Ահարոնյան Ավետիս. 40-ամյա գրական հոբելյանին առթիվ» գնահատական - վերլուծությունը (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1930, էջ 362-364):

4. Խոսքը բարերար, ակնեղենի վաճառական Արմենակ Համբարձումյանի մասին է:

## 93. ԱՆՃԱՆՈՒ ՀԱՍՅԵԱՏԵՐ

(էջ 134)

Սևագիր պատառիկը պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (պահարան I, գրոց Բ, թրթածրար, Ա-8, թ. 7): Պատմաբանի միակ նամակն է, որ շարադրված է արևմտահայերենով:

1. Հասցեատերը հավանաբար Արշակ Չոպանյանն է:

2. Համաստեղ (Համբարձում Կելենյան, 1895-1966) – նշանավոր գրող, գյուղագիր: Հատկապես արժեքավոր է նրա «Սպիտակ ձիավոր», «Հայաստանի լեռներու սրնգահարը» և այլ ստեղծագործություններ:

3. 1929 թվականի փետրվարի 24-ին Փարիզի Հայ գրական ակումբի հեքթական հավաքույթը նվիրված է եղել Համաստեղի գրականությանը: Չեկուցումով հանդես է եկել Կարո Սասունին: Նիստն ամփոփել է ակումբի նախագահ Ն. Ադոնցը, որի խոսքը (տե՛ս «Յառաջ», 1929, 1 մարտի) համարյա նույնությամբ կրկնում է բերված պատառիկի բովանդակությունը:

**94. ՎԻԵՆԱՅԻ ՄՈՒԹԱՐՅԱՆ ՄԻՄՔԱՆՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**  
(էջ 135)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հասցեատերը միաբանության տպարանական գործի պատասխանատու Իզմատիոս վարդապետ Աքյանն է:

2. **Գ. Գալենթեարյան**, Կենսագրություն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆյան և ժամանակին հայ կաթողիկեայք (1720-1775), Վիեննա, 1908, նույնի՝ «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք», Վիեննա, 1915:

3. **Ա. Պալճյան**, Աբոռ Ս. Պետրոսի Առաքելապետի, Վիեննա, 1853:

4. **Ա. Պալճյան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետության ի հայս, Վիեննա, 1878:

5. **Ն. Ակինյան**, Չաքարիա եպիսկոպոս Գնունյանց և յոր տաղերը, Վիեննա, 1910:

6. **Ն. Ակինյան**, Կյուրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910:

7. **Ղ. Հովնանյան**, Միջնադարյան ազգային տաղաչափություն ռամկախառն: **Ն. Ակինյան**, Հովնաթանյան Նաղաշ և Հովնաթանյանք և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատությունք (այս երկուսը մեկ գրքի մեջ, տե՛ս «Ազգային մատենադարան», № 65, Վիեննա, 1911): Ի դեպ, Ն. Արոնցը շփոթել է. № 71-ը Երեմիա Քեոմուրճյանի «Ստամպոլոյ պատմութիւն» է:

8. Ժամանակի հայկական թերթերում («Ազդարար», «Յառաջ», «Ապագայ» և այլն) չափազանց մտահոգիչ լուրեր էին տպագրվել Ներսես վրդ. Ակինյանի առողջական վիճակի մասին, որոնք, սակայն, չէին համապատասխանում իրականությանը:

1930

**95. «ԱՊԱԳԱՅ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԻԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 136)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել քաղաքական և հասարակական «Ապագայ» օրաթերթում (1930, 29 հոկտեմբերի, № 100, էջ 3): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ն. Արոնցի այս շրջաբերական-մամակը տպագրվել է նույն շրջանում Փարիզում լույս տեսնող հայկական բոլոր պարբերականներում (տե՛ս «Յառաջ», 1930, 26 հոկտեմբերի, № 1404, էջ 3 և այլն):

## 96. «ԱՆԱՀԻՏ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

(էջ 137)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 32ա.): Տպագրվում է առաջին անգամ:

1. «Ներփակ գրությունը» Արոնցի շրջաբերական - նամակն է (տե՛ս № 95): Ինչ-ինչ պատճառներով այն «Անահիտ»-ի էջերում չի հրատարակվել, սակայն պահպանվել է Ա. Չոպանյանի արխիվում (տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 32 բ): Տպագրվում է առաջին անգամ:

## 97. ԱՐՏԱՇԵՄ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

(էջ 137)

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք», ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 23): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1930 թվականին Արոնքը հրատարակում է «Ինչպես պետք է գրել «Ամեն» և «Չեզոք» բառերը. ուղղագրական խնդիրներ» հոդվածը (տե՛ս «Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1930, 12 հուլիսի, № 5531, էջ 1, 3): Արոնցի այս հոդվածի վերաբերյալ ընդդիմախոսականով հանդես է գալիս Վենետիկի Մխիթարյանների միաբանության անդամ Արսեն վրդ. Ղազիկյանը (տե՛ս Ա. Ղազիկյան, Մեղք է գրել է «Չեզոք» և «Ամեն», «Բազմավեպ», 1930, № 9, էջ 357-367): Այստեղ խոսքը գնում է Արոնցի պատասխան հոդվածի մասին (տե՛ս «Հայրենիք», օրաթերթ, 1930, 5 դեկտեմբերի, № 5653, էջ 1, 2; 6 դեկտեմբերի, № 5654, էջ 1, 2; 7 դեկտեմբերի, № 5655, էջ 1, 3; 9 դեկտեմբերի, № 5656, էջ 1, 2; 10 դեկտեմբերի, № 5657, էջ 1, 2):

2. Տե՛ս Ա. Ղազիկյանի վերը հիշված հոդվածը:

3. Այսինքն՝ օրաթերթում:

## 98. «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

(էջ 138)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել «Յառաջ» օրաթերթում (1930, 27 նոյեմբերի, էջ 2-3): Արտատպվում է այս հրատարակությունից:



1. Տե՛ս «Յառաջ», 1930, 23 նոյեմբերի, № 1425, էջ 3:
2. Խոսքը «Յառաջ»-ի թղթակից, լրագրող Ստեփան Քոչարյանի (1894-1955) մասին է, որն իր թղթակցությունները տպագրում էր Ս. Բ. անվանատառերով:
3. Տե՛ս «Յառաջ», 1930, 21 նոյեմբերի, № 1423, էջ 3:
4. Օհան Կարո (Հովհաննես Կարապետյան, 1890-1934) – գրող, հրապարակախոս:
5. Ակնարկում է Մ. Պեշիկբաշյանի՝ Բերայի Մխիթարյան (1834-1839) և Պաղտայի Մուրադյան (1839-1845) վարժարանների սան լինելու հանգամանքը:
6. Լեստա – գետ, որի ջուրը խմելու դեպքում, ըստ հունական դիցաբանության, մարդ ամեն ինչ մոռացության է տալիս:
7. Տպագրելով Ն. Արոնցի սույն նամակը՝ «Յառաջ»-ի խմբագրությունը հարկ է համարել տալ հետևյալ բացատրությունը. «Անշուշտ, պ. Արոնցի այս կարծիքները ևս ունեն վիճելի կողմեր, բայց կմնան ոչ այնքան անհեթեթ, որքան էին ուրբաթ օրվա տեղեկատվությամբ»:

**1931**

### **99. ԱՐՏԱՇԵՄ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

**(էջ 140)**

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 21-22): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի իր «Նորից «Չեզոք» և «Ամեն» գրությանց մասին» հոդվածը:
2. «Յուսաբեր» – ազգային, քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ, ՀՀ Դաշնակցության պաշտոնական օրգան: Ն. Արոնցի թողոնում առկա է օրաթերթի խմբագիր Վ. Նավասարդյանի խնդրանքը՝ «Յուսաբեր»-ին թղթակցելու վերաբերյալ (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, Նիկողայոս Արոնցի ֆոնդ, պահարան I, գրքոց Բ, թղթածրար Ա/8):

### **100. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

**(էջ 141)**

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 33): Տպագրվում է առաջին անգամ:

1. Հավանաբար նկատի է ունեցել Նուպարյան գրադարանը:

## **101. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆՆԻՆ**

(էջ 142)

Բնագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի դիվանում (Թորգոմ պատրիարք Գուշակյանի ֆոնդ, A-17): Տպագրվում է առաջին անգամ:

1. Թորգոմ արքեպ. Գուշակյան (1874-1939) – հոգևոր-եկեղեցական նշանավոր գործիչ, բանասեր, Երուսաղեմի Հայոց պատրիարք (1931-1939): Պատրիարքական գահ է բարձրացել 1931 թվականի հունիսի 16-ին Միաբանական ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքով՝ 41-ից 34 քվե (մանրամասն տես՝ **Ա. Ալպոյաճյան**, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940, էջ 615):

2. Ակնարկվում է հանգուցյալ պատրիարք Եղիշե արքեպ. Դուրյանին (1921-1930):

3. Ակնարկում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի մահից հետո (8 մայիսի 1930 թ.) ստեղծված անորոշ վիճակը, երբ Հայաստանի խորհրդային իշխանությունների կողմից խոչընդոտներ էին ստեղծվել կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու: Այդ շրջանում (1930-1932) Հայոց եկեղեցու գործերը դեկավարում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Խորեն արքեպ. Մուրադբեգյանը:

4. Դեռևս 1928 թվականի օգոստոսին կաթողիկոսական կոնդակով Թորգոմ արքեպ. Գուշակյանը արտասահմանյան թեմերում նշանակվել էր Ս. Էջմիածնի նվիրակ և Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ:

5. Նկատի ունի իր նշանակվելը Բրյուսելի ազատ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ (տես՝ № 102, ծան. 1):

6. Ակնարկում է այն հանգամանքը, որ Թորգոմ պատրիարքը ցանկություն էր արտահայտել իրեն Երուսաղեմ հրավիրելու և այստեղ իր գիտահետազոտական աշխատանքները կազմակերպելու:

## **102. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆՆԻՆ**

(էջ 142)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 34): Տպագրվում է առաջին անգամ:

1. 1931 թվականի կեսերին Բրյուսելի համալսարանում ստեղծվել է Արևելագիտության ինստիտուտ: Նշանավոր բյուզանդագետ պրոֆ. Անրի Գրեուզարի նախաձեռնությամբ ինստիտուտում հիմնադրվել է նաև հայագիտության ամբիոն: Ն. Ադոնցի անունն այդ շրջանում շոշափվել է որպես նույն ամբիոնի վարիչի հնարավոր թեկնածու: Չոպանյանի բարեմադրությունը վերաբերում է այդ լուրերին:

2. Խոսքը նշանավոր պատմաբան, հասարակական գործիչ Առաքել Սարուխանի (Սարուխանյան, 1863-1949) մասին է: Գործուն մասնակցություն է ունեցել Բրյուսելի հայկական համայնքի կյանքին և նպաստել Ադոնցի՝ հայագիտության ամբիոնի վարիչ նշանակվելուն:

3. Ն. Ադոնցը Բրյուսելի ազատ համալսարանում 1931 թվականի նոյեմբերի 6-ին պաշտոնապես նշանակվել է Արևելագիտության ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ:

### **103. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

(էջ 143)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 35): Տպագրվում է առաջին անգամ:

### **104. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

(էջ 143)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 36): Տպագրվում է առաջին անգամ:

1. Անրի Գրեուզար (1881-1964) – բելգիացի ականավոր բյուզանդագետ, հայագետ: Ն. Ադոնցի հետ եղել է հեղինակակից, Բյուզանդական կայսրությունում հայերի խաղաղացած դերի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ:

2. Ն. Ադոնցն իր բյուզանդագիտական բոլոր ուսումնասիրություններում էլ շեշտել է այս հանգամանքը (մանրամասն տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հատ. Ե, Հայ-բյուզանդագիտական ուսումնասիրություններ, հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2012, էջ 5-19):

3. Վահան Մալեգյան (1871-1966) – գրող, իրավաբան, հրապարակախոս, հասարակական գործիչ: 1920-1930-ական թվականներին Փարիզում վարել է ՀԲԸՄ կենտրոնական վարչության վարիչ-պատվիրակի պաշտոնը:

## 105. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

(էջ 144)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը Ն. Ալիևյանի «Մովսես Խորենացի և Ղևոնդ Երեց» ուսումնասիրության մասին է (տե՛ս **Ն. Ալիևյան**, Մատենագրական հետազոտություններ, հատ. Գ, Վիեննա, 1930, էջ 127-291):

2. Բացի այդ դասախոսությունից՝ Ն. Աղոնցը հանդես է եկել նաև հատուկ գրախոսականով (տե՛ս **Ն. Աղոնց**, Ղևոնդ և Խորենացի. քննություն Հ[այր] Ալիևյանի տետրյան, «Հայրենիք», ամսագիր, 1933, № 8, էջ 79-90, № 9, էջ 120-126):

3. Ն. Աղոնցն ակնկալում է, որ Ն. Ալիևյանն իրեն կողարկի դեռևս հրատարակության ընթացքում գտնվող «Եղիշե վարդապետ և յուր Պատմություն Հայոց պատերազմի» մենագրության Ա հատորը, որը լույս տեսավ 1932 թվականին:

4. Տե՛ս № 94:

5. Ցավոք, հայտնի չէ, թե խոսքը ի՞նչ հոդվածի և ո՞ր ժողովածուի մասին է: Հավանական է, որ այդ ժողովածուն այդպես էլ լույս չի տեսել:

6. Ակնարկում է Հայր Արիստակես Վարդանյանին, որը, այդ ժամանակ հրատարակելով կրոնավարությունից, հեռացել էր Վիեննայի Մխիթարյան միաբանությունից և բնակություն հաստատել Փարիզում:

## 106. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

(էջ 145)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Արբախայր Գրիգոր արքեպ. Գովրիկյանը մահացել է 1931 թվականի հունվարի 20-ին 91 տարեկան հասակում, իսկ Աղեքսանդր վրդ. Մատիկյանը՝ 1930 թվականի նոյեմբերի 14-ին 45 տարեկան հասակում:

2. Նոր արբախայր է ընտրվել Հայր Մեսրոպ վարդապետ Հոպոզյանը:

3. Գաբրիել վրդ. Մենևիշյան (1864-1936) – բանասեր, հոգևոր գործիչ, «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիր (1896-1898):

4. Ցավոք, չկարողացանք պարզել, թե Գ. Մենևիշյանի սույն հոդվածը որտեղ է լույս տեսել:

5. Նամակը թվագրել ենք՝ հիմք ընդունելով բովանդակության ընձեռած տվյալները:

1932

**107. ԱՐՏԱՇԵՄ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

(էջ 146)

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 23-24): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տպագրում սխալմամբ՝ 1935 թվական:

**108. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ**

(էջ 147)

Բնագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի դիվանում (Թորգոմ պատրիարք Գուշակյանի ֆոնդ, A-17): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Արոնցի մամակագրությունից, «Էջմիածին», 2009, № 6, էջ 102-104): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Թորգոմ արքեպ. Գուշակյանի՝ Ն. Արոնցին ուղղված մամակներն պահվում են Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Նիկողայոս Արոնցի ֆոնդում: Այդ մամակները (թվով հինգ) հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Թորգոմ պատրիարք Գուշակյան և պրոֆեսոր Նիկողայոս Արոնց, «Հասկ-հայագիտական», տարեգիրք, նոր շրջան, հատ. Է-Ը, Անթիլիաս, 1995-1996, էջ 467-477):

2. Խոսքը Բեռլինի համալսարանի շրջանավարտ, բժիշկ Արմենակ Պարոնիկյանի մասին է: 1920-1930-ական թվականներին Ս. Պարոնիկյանը գործուն մասնակցություն է ունեցել գերմանահայ մշակութային կյանքին, անդամակցել դեռևս 1914 թվականին դոկտոր Յոհ. Լեփսիուսի նախաձեռնությամբ ստեղծված «Գերմանահայկական ընկերության» աշխատանքներին:

3. «Գերմանահայկական ընկերությունը» նախաձեռնել էր Բեռլինում հիմնադրել «Խրիմյան ճեմարան» անունը կրող ուսումնական հաստատություն, որի համար ընկերության անունից Ս. Պարոնիկյանը բանակցություններ է վարել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հետ՝ «իրենց տրամադրության տակ դնելու վարդապետ մը և աշակերտացուներ» (ավելի մանրամասն տե՛ս մեր հրապարակումը՝ «Թորգոմ պատրիարք...», էջ 469-470):

4. 1931 թվականի դեկտեմբերի 29-ի՝ Ն. Արոնցին ուղղված մամակում Թորգոմ պատրիարքը, անվստահություն հայտնելով Բեռլինում «Խրիմյան ճեմարան» հիմ-

նադրելու և Երուսաղեմից աշակերտներ տրամադրելու գաղափարին, միևնույն ժամանակ հակառակ տեսակետն է առաջադրել. «Ըստ մեզ՝ լավագույն պիտի ըլլար, որ «Գերման միությունը» (խոսքը «Գերմանա-հայկական ընկերության» մասին է - **Պ. Հ.**) բավականաճար՝ առայժմ մեզ տրամադրելով գերման ուսուցիչ մը, որ հոս վանքի մեջ գերմաներեն սովորեցնե մեր ընծայացուներուն, ամբողջ իր ծախքովը» (տե՛ս մեր հրապարակումը՝ «Թորգոմ պատրիարք...», էջ 469):

5. Ակնարկը վերաբերում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանին, որը պատրաստում էր եկեղեցու սպասավորներ: Վարժարանն ուներ երկու բաժանմունք՝ երկրորդական վարժարան (5 տարով) և ընծայարան (3 տարով):

6. Խոսքը 1846 թվականին իտալական Պաղոա քաղաքից Փարիզ տեղափոխված Սամուել Մուրադյան վարժարանի մասին է:

7. Ոսկան Մարտիկյան-թուրքական պետական գործիչ, Մահմուդ Շեքեր փաշայի վարչապետության օրոք (1913 հունվար - 1913 հունիս) Օսմանյան կայսրության փոստի և հեռագրատների նախարար:

8. Ն. Ադոնցը Կ. Պոլիս է այցելել 1912 թվականի դեկտեմբերի 28-ին և այնտեղ մնացել մինչև 1913 թվականի հունվարի կեսերը: Այցելության նպատակների մասին մանրամասն տե՛ս **Ն. Ադոնց**, Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, «Հայագիտակ», 1996, էջ 25-48:

9. «Հայկական նորաբաց ամբիոնը» - խոսքը վերաբերում է Բրյուսելի ազատ համալսարանում իր տնօրինությամբ բացված ամբիոնին:

10. Թորգոմ պատրիարքը, ընդառաջելով Ն. Ադոնցի առաջարկությանը, 47 անուն գիրք է նվիրել Արևելագիտության ինստիտուտի գրադարանին (գրքերի ցանկը տե՛ս մեր հրապարակումը՝ «Թորգոմ պատրիարք...», էջ 471):

### **109. ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ** (էջ 150)

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Կոստան Զարյանի ֆոնդ, №3): Հրատարակել է Վարդան Մատթևոսյանը (տե՛ս «Հասկ-հայագիտական», Բեյրութ-Անթիլիաս, 2001, էջ 517): Առանձին շտկումներով արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1920-ական թվականների կեսերին Պողոս Նուպար փաշայի նվիրատվությամբ Բրյուսելում ստեղծվել է «Նուպարյան սաներու հիմնարկություն» հիմնադրամը: Նպատակը Սփյուռքի շնորհաշատ երիտասարդների Բելգիայի համալսարաններում ձրիավարժ կրթություն տալն է եղել: 1932 թվականին Կոստան Զարյանը

դիմել է հիմնադրամին՝ կրթաթոշակներ հատկացնելու իր զավակներին՝ Արմենին և Վահեին: Բացի այդ՝ Չարյանը հատուկ նամակով խնդրել է Բրյուսելի ազատ համալսարանում արդեն պաշտոնավարող Նիկողայոս Ադոնցին՝ միջնորդելու, որպեսզի հարցը լուծվի դրականորեն:

2. Խոսքը բրյուսելաբնակ հայ ազգային-հասարակական գործիչ Մաքսուտ Միհրդատյանի (1874-1956) մասին է, որն այդ շրջանում պաշտոնավարում էր «Նուպարյան սաներու հիմարկություն»-ում:

3. Փարիզի «Յառաջ» օրաթերթն այդ շրջանում (1932 թ.) խմբագրում էր 48-ամյա Շավարշ Միսաբյանը, իսկ նրան օգնում էր 41-ամյա Հրանտ-Սամուելը: Անշուշտ, երկուսն էլ վաղուց դուրս էին եկել «լակոտական» տարիքից: Ադոնցյան մնան գնահատականները երևի տեղին կլինեք օգտագործել գրականության և արվեստի «Մենք» պարբերականի (1931-1932) խմբագրական մարմնի մեջ մտնող երեսնամյա երիտասարդ գրողների համար: «Մենք»-ի շուրջը համախմբված գրողները չափազանց բացասական, մերժողական դիրքորոշում էին որդեգրել ավագ սերնդի մտավորականության ներկայացուցիչների, այդ թվում և Ն. Ադոնցի նկատմամբ:

4. Խոսքը հայ նշանավոր գրող, հրապարակախոս Չապել Եսայանի (1878-1943) մասին է:

### **110. «ԶՎԱՐՔՆՈՑ» ԿԵՍԵՄՅԱ ՀԱՆՂԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ** (էջ 151)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել Փարիզում հրատարակվող գրականության և արվեստի «Զվարթնոց» կիսամյա հանդեսում (1931, № 4-5, էջ 105): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Այդ շրջանում «Զվարթնոց»-ի խմբագիր-հրատարակիչն էր, գրող, արվեստաբան Հրանտ Բալոյանը (1904-1967):

2. Նկատի ունի կնոջ՝ Օլգա Ադոնց-Հովնաթանյանի ծանր և երկարատև հիվանդությունը:

### **111. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ** (էջ 151)

Բնագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի դիվանում (Թորգոմ պատրիարք Գուշակյանի ֆոնդ, A-17): Տպագրվում է առաջին անգամ:

1. 1933 թվականի հունվարի 15-ի նամակով առ Ն. Ադոնց պատրիարքը հավաստում է, որ արդեն ստացել է Գրեգուարի նամակը. «Շնորհակալությամբ ստացած եմ

բրոֆ. Կրեկուարին գրաբար ինքնագիրը, գոր կը պահենք մեր ձեռագրաց պատկանյալ բաժնին մեջ» (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Թորգոմ պատրիարք..., էջ 472):

2. Նկատի ունի 1932 թվականի նոյեմբերի 12-ի կաթողիկոսական ընտրությունները, որոնց արդյունքում 60 ձայնով Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց կաթողիկոսական տեղապահ Խորեն Ա Մուրադբեգյանը (1932-1938):

3. Ս. Հակոբյանց վանքի միաբանության ներսում այդ շրջանում գոյություն ունեցող տրամադրությունների, տարածայնությունների ու մայրավանքի սնտեսական վիճակի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Ա. Ալպոյաճյան**, նշվ. աշխ., էջ 625-631:

Միաբանության երեք անդամների հեռանալը ինքը՝ պատրիարքը, բնութագրում է որպես «տեսակ մը sélection naturelle (բնական ընտրություն), որ հավանաբար մաքրագործող արդյունք միայն պիտի ունեցած ըլլա» (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Թորգոմ պատրիարք..., էջ 476):

1933

## 112. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

(էջ 153)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ, Պ-412, ցուցակ 1, գործ 872, թ. 3): Հրատարակել է Ալվարդ Ղազիյանը (տե՛ս **Ա. Ղազիյան**, նշվ. աշխ., էջ 54): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի «Հայրենիք» ամսագրի 1927 թվականի 4-րդ և 5-րդ համարները, որոնցում տպագրվել էր իր «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» հոդվածը (№ 4, էջ 68-77 և № 5, էջ 84-96):

2. Նշված հոդվածի առաջին մասը թարգմանաբար տպագրվել է «Մասիս» ամսագրում (տե՛ս **N. Adontz**, Political Currents in Old Armenia, «Masis», on organ of Armenian interests, 1929, vol. II, №1, nov., p. 3-9, № 2, gec., p. 29-33): Շարունակությունը լույս չի տեսել:

## 113. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

(էջ 153)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ, Պ-412, ցուցակ 1, գործ 872, թ. 2): Հրատարակել է Ալվարդ Ղազիյանը (տե՛ս **Ա. Ղազիյան**, նշվ. աշխ., էջ 53-54): Արտատպվում է այս հրատարակությունից:



#### **114. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ**

(էջ 154)

Բնագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի դիվանում (Թորգոմ պատրիարք Գուշակյանի ֆոնդ, A-17): Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի Թորգոմ արքեպ. Գուշակյանի «Եղիշե պատրիարք Դուրյան. իր քահանայության հիսնամյա հորեյանին առթիվ» աշխատությունը (Երուսաղեմ, 1932, 328 էջ): Չափազանց կարևոր է, որ այստեղ Գուշակյանը ընդարձակորեն մեջբերում է կատարել 1929 թվականին Փարիզում Դուրյան Սրբազանի հորեյանի առիթով հրավիրված հանդիսավոր նիստում Ն. Ադոնցի արտասանած անտիպ «գեղեցիկ ճառից» (նույն տեղում, էջ 318-319):

2. Մի քանի բառ ջնջված է:

#### **115. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ**

(էջ 155)

Բնագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի դիվանում (Թորգոմ պատրիարք Գուշակյանի ֆոնդ, A-17): Տպագրվում է առաջին անգամ:

1. Տե՛ս **Եղիշե արքեպ. Դուրյան**, Հայոց հին կրոնը կամ Հայկական դիցաբանություն, Երուսաղեմ, 1933:

2. Տե՛ս **Եղիշե արքեպ. Դուրյան**, Պատմություն հայ մատենագրության, Երուսաղեմ, 1933:

3. Նման հնարավորություն Ադոնցը չի ունեցել:

4. Նկատի ունի դաշնակցական ահաբեկիչների կողմից ԱՄՆ-ի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրյանի (1879-1933) չարանենգ սպանությունը 1933 թվականի դեկտեմբերի 24-ին Նյու Յորքի Ս. Խաչ հայկական եկեղեցում:

1934

#### **116. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

(էջ 155)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 96 ա., վավ. 1483): Հրատա-

րակել է Ա. Հ. Ադամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 118): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Բրյուսելի ազատ համալսարանը:

2. Գրիգոր Ղափանցյան (1886-1957) – ականավոր լեզվաբան: Ս. Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրացական լեզուների բաժնում սովորելու տարիներին (1908-1913) աշակերտել է նաև Ադոնցին, որի մասին թողել է ջերմ հիշողություններ:

3. Նկատի ունի հնագետ, պատմաբան Աշխարհբեկ Քալանթարին (Լորիս-Քալանթար, 1884-1942): Սովորել է Ս. Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետում, որտեղ աշակերտել է նաև Ադոնցին:

4. Խոսքը Մելքոնյան ֆոնդի հրատարակչության կողմից լույս ընծայած Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի Ա և Բ հատորների (Երևան, 1931, 1932) մասին է:

5. Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով, Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910:

6. Տե՛ս «Խոսքովիկ թարգմանիչ» (Ը դար), պատմական-մատենագրական ուսումնասիրություն, աշխատասիրությամբ Գարեգին վարդապետ Հովսեփյանի, Վաղարշապատ, 1899:

7. 1932 թվականին Արշակ Չոպանյանը այցելել է Խորհրդային Հայաստան և տպավորությունների ու հանդիպումների մասին թողել հիշատակարան (տե՛ս Ա. Չոպանյան, Տպավորություններ ու հիշատակներ Խորհրդային Հայաստանեն, «Անահիտ», 1932, № 3-6; 1933, № 3-4; 1934, № 5-6; 1935, № 1-2 և № 6): Ակնարկը վերաբերում է Չոպանյանի տպավորություններից մեկին:

## 117. ԹՈՐԳՈՄ ՊԵՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿՅԱՆԻՆ

(էջ 157)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի «Սիոն» ամսագրում (1934, № 12, էջ 382-388): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ արքեպ. Գուշակյանը 1931 թվականին հատուկ նամակով դիմել է Ն. Ադոնցին՝ խնդրելով կարծիք հայտնել Հ. Աճառյանի «Պատմություն հայերեն լեզվի» աշխատությունը «Սրբոց թարգմանչաց-Դուրյան» գրական մրցանակին ներկայացնելու վերաբերյալ: Կարծիքն ուղացնելու

հանգամանքը Ադոնցը բացատրում է կնոջ՝ Օլգա Ադոնց-Հովնաթանյանի երկարատև ու ծանր հիվանդությամբ:

2. 1934 թվականին հոկտեմբերի 28-ին Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրական հանձնաժողովը, նկատի ունենալով Աճառյանի երկասիրության ամուրանալի արժեքը, ինչպես նաև «բազմահմուտ քննիչ, մեծամուն բանասեր պրոֆ. Ն. Ադոնցի երաշխավորությունը», միաձայն որոշում է ընդունել 1934 թվականի համար «Սրբոց թարգմանչաց - Դուրյան» գրական մրցամակը (120 պաղեստինյան ոսկի լիրա) հատկացնել Հ. Աճառյանի աշխատությանը (տե՛ս «Միոն», 1934, նոյեմբեր, էջ 360):

3. Հայոց լեզվի հետագա ուսումնասիրությունը փայլուն կերպով ապացուցեց Ն. Ադոնցի այս հիանալի կոսիտումը: Հ. Աճառյանի կողմից փոխառություններ հռչակված շատ բառեր այժմ համարվում են բնիկ հայ բառեր, իսկ մի մասն էլ՝ ընդհանուր փոխառություններ:

4. Հ. Ա. Նիբերգի պահլավագիտական ուսումնասիրություններն ամփոփված են «Hilfsbuc des Pehlevi. Pehleviwörter und Glossar» ուսումնասիրությունում (Uppsala, 1931):

5. Ստեփանոս Սյունեցու այս հույժ կարևոր վկայությունը պահպանվել է նրա «Մեկնութիւն քերականին» երկում, որ հրատարակել է Ն. Ադոնցը:

6. Տե՛ս **Նորայր Բյուզանդացի**, Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունը, Տփղիս, 1900, էջ 16-35:

## **118. ՌՌԻԲԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

(էջ 163)

Բնագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնում (տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վավ. № 98): Հրատարակել է Ա. Հ. Ադամյանը (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 119): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ռուբեն Աբրահամյան (1881-1951) – հայագետ, հին պարսկերենի և համեմատական լեզվաբանության նշանավոր մասնագետ:

2. Նկատի ունի Ռ. Աբրահամյանի «Ֆերդոսին և իր Շահնամեն» (հատ. Ա, Թեհրան, 1934) մենագրությունը:

3. Ռ. Աբրահամյանը փորձել է Ն. Ադոնցի երաշխավորությամբ ուսուցչական պաշտոն ստանալ Երուսաղեմի Ժառանգավորաց դպրոցում:

4. Նկատի ունի Գարեգին արքեպ. Հովսեփյանին:

5. Այսինքն՝ Թորգոմ արքեպ. Գուշակյանին:

6. Հակոբ Թովչյան (1876-1951) – պատմաբան, լրագրող, մանկավարժ, Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության տնօրեն (1932-1945):

7. Տե՛ս № 104, ծան. 3:

### 119. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆ

(էջ 164)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի 1933-1934 թվականները:

2. Հայր Հակոբոս Տաշյանը մահացել է 1933 թվականի փետրվարի 3-ին:

3. Հակոբոս Տաշյանի գրական վաստակի մասին մանրամասն տե՛ս Ներսես վրդ. Ակինյանի «Տաշյան Հակոբոս վրդ. 1866-1933» հոդվածը («Հանդես ամսօրեայ», 1933, էջ 1-32):

4. Նկատի ունի Ներսես վրդ. Ակինյանի «Վարք Ս. Աբերկիոսի» հետազոտությունը (տե՛ս **Ն. Ակինյան**, Նյուրթեր հայ վկայաբանության ուսումնասիրության համար, Վիեննա, 1914):

5. Տե՛ս **Ն. Ադոնց**, Ղտնդ և Խորենացի. քննություն Հայր Ն. Ակինյանի տեսության, «Հայրենիք», 1933, № 8, էջ 79-90, № 9, էջ 120-126:

6. Տարեթիվը նշել ենք ըստ նամակի հաղորդած տեղեկությունների:

### 120. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ

(էջ 165)

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ, Պ-412, ցուցակ 1, գործ 872, ք. 4): Հրատարակել է Ալվարդ Ղազիյանը (Տե՛ս **Ա. Ղազիյան**, նշվ. աշխ., էջ 55): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Արշակ Չոպանյանը Խորհրդային Հայաստան է այցելել 1932 թվականին (տե՛ս № 116, ծան. 7): Ադոնցին չափազանց հետաքրքրել են սույն այցելության մանրամասները: Այդ կապակցությամբ Չոպանյանի գրած «մասնավոր նամակը» (12 հունվարի, 1933 թ.), որ պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի պրոֆ. Ն. Ադոնցի թողոմում (պահարան I, գրոց Գ/Ա-8): Խիստ ուշագրավ լինելով՝ հարկ համարեցինք ստորև ներկայացնել ընդարձակ մեջբերմամբ.

«Սիրելի՛ պ. Ադոնց,

Ամիս մը Խորհ[րդային] Հայաստանի մնալե հետո՝ երկու շաբաթ առաջ, դարձա Փարիզ: Չեր բարևները հաղորդեցի Մանանդյանին, Ղափանցյանին և Չեր մյուս եղբայրակիցներուն, որոնց անունները տված էիք: Ամենքն ալ փոխադարձաբար Չեզ սիրով կբարևեն:

Չեր քարթին մեջ կգրեիք, թե թերևս շատ մը փուշերու մեջ քանի մը վարդ պիտի գտնեմ հոն: Փուշերը կան, այո՛, և առաջուց գիտեի անոնց գոյությունը, բայց հավատացեք, որ վարդերը շատ են ու մերթ՝ հոյակապ, և գերակշիռ են ազգային տեսակետով իրերը նկատողին համար: Հոն կատարվող մեծ աշխատանքը, հակառակ ինչ-ինչ երևույթներու, մեր ազգի և մեր ազգային մշակույթի գոյության պահպանման ու զարգացման ապահովիչ ու նպաստիչ թանկագին ուժն է: Օր մը Դուք Հայաստան պետք է երթաք, որպեսզի Չեր խոշոր գործերն արտադրել ու հրատարակել կարենաք, ինչպես Աճառյանը, Մանանդյանը, Արեղյանը և այլք կընեն:

Ես իսկ այդ փորձությունն կունենայի, եթե չըլլային ֆրանսերեն կազմ մը կիսավարտ կամ ծրագրված գործերս, զոր Փարիզ միայն կրնամ լրացնել ու հրատարակել: Բայց, անշուշտ, մեր կյանքին վերջին տարիները հոն պետք է անցնենք»:

Ն. Ադոնցին չեն բավարարել Ա. Չոպանյանի այս տեղեկություններն ու առանձին նամակով դիմել է նրան՝ «ավելի մանրամասն գրելու» հայաստանյան իրականության մասին: Նույն թվականի ապրիլի 4-ի նամակով Չոպանյանը պատասխանում է. «Դուք կհարցնեք, թե գոհ են այնտեղ Չեր բարեկամներն ու ծանոթները: Կան որ դժգոհ են, կան որ գոհ են, կան ալ, որ շատ գոհ են (ինչպես օրինակի համար Աճառյան, Արեղյան, Մանանդյան)... Անհրաժեշտ չէ քոմունիստ ըլլալ, մեծ մասը հոն ոչ քոմունիստ են, բայց համակիր, բարեկամ, գործակցող, օգնող՝ ժողովրդավեր: Անշուշտ, թերություններ շատ կան հոն. ազատ երկրներ վարժվողին համար դժվար է, բայց հոն է Հայրենիքդ, հոն է, որ կկատարվի նոր մեծագույն գործը հայ ապագային համար» (տե՛ս նույն տեղում, պահարան I, գրոց Ե, Ա-8, թ. 82):

Տեղին է նշել, որ Ա. Չոպանյանը նույն կերպ է գնահատել մեծատաղանդ ամերիկահայ գրող Համաստեղի գրականության ապագան. «Համաստեղ Հայաստան երթալու է. այդ հայ հողի ծաղիկներով հորինված երանգապնակն ունեցող թանկագին արվեստասերը պետք չէ ձգել, որ Ամերիկայի գործարաններուն մուխին մեջ դժգունի. Հայաստանն է իր տեղը» (տե՛ս **Ա. Չոպանյան**, Համաստեղ և գյուղը հայ գրականության մեջ, Երկեր, Երևան, 1966, էջ 473):

2. Այդ շրջանում Ա. Քալանթարը հրատարակել է «Քարե դարը Հայաստանում» («Նորք», № 5-6, 1925), «Երկու սեպագիր արձանագրություն» (Երևան, 1927) և «Խաղերեն մի նոր սեպագիր արձանագրություն» (Երևան, 1931) ուսումնասիրությունները: Առարկայնորեն այստեղ դժվար է ասել, թե որի մասին է խոսքը: Նշենք, որ այս բոլորն էլ Ադոնցը օգտագործել է «Հայաստանի պատմությունը» ֆրանսերեն գիրքը շարադրելիս:

3. Խոսքը վերաբերում է անգլիացի եկեղեցական-հասարակական գործիչ, հայասեր Մալկոմ Մաքկոլին:

4. Նկատի ունի գրող, ազգային-հասարակական գործիչ Պետրոս Տոնապետյանին (1867-1949):

5. Օլգա Ադոնցի հիվանդության վերաբերյալ առաջին տեղեկությունները վերաբերում են 1933 թվականին: Նշանակում է սույն նամակը գրվել է 1934 թվականին:

**1935**

**121. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

**(էջ 166)**

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 24): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ակնարկում է այդ օրերում Սվյոտքի ներեկեղեցական կյանքում պատակաման ախտանշանների ի հայտ գալը:

2. Նկատի ունի Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանին (Տիգրան Մելիք-Մուշկամբարյան), տե՛ս № 61, ծան. 2:

**122. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

**(էջ 167)**

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 23): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Երկամսյա «Հայրենիք» ամսագիրը, որ ՀՀ Դաշնակցության օրգանն էր, հիմնադրվել է 1922 թվականին Բոստոնում:

2. Հիմնադիր խմբագիրն է եղել (1922-1968) Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինկիրյան):

**123. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**

**(էջ 168)**

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 25): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս № № 121, 122:

2. Ն. Ադոնցը միայն մի եզակի անգամ ևս կարողացավ աշխատակցել «Հայրենիք» ամսագրին (տե՛ս **Ն. Ադոնց**, Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը, «Հայրենիք», 1937, № 2, էջ 66-72):

3. Օլգա Ադոնց-Հովնաթանյանը մահացել է 1935 թվականի հունվարի 23-ին Բրյուսելում: 1930-ական թվականների առաջին կեսին գրած իր բազմաթիվ նամակներում Ադոնցը հաճախակի է շեշտում կնոջ ծանր հիվանդությունը, իսկ նրա մահը սոսկալի հարված էր, որից ընդհանրապես ուշքի չեկավ: Փարիզյան թերթերից մեկը, արձանագրելով Ադոնցի տիկնոջ մահը, շեշտել է. «Համեստ, առաքինի և խոստումնալից կանանց կարգին էր պատկանում ողբացյալ տիկին Ադոնցը՝ բարի, զգայուն, արժանավոր հայուհին: Նրա բարությունը անսահման էր: Նա օժտված էր աննման ձայնով ու երգելու բնական ձիրքով: Երգելու և նվագելու նրա երաժշտական ընդունակությունները, ինչպես և նկարելու ձիրքը, անտարակույս գալիս էին իբրև ժառանգություն Ս. Էջմիածինը նկարազարդող «Նաղաշ» ու բանաստեղծ Հովնաթանյանից, որի շառավիղն էր հանգուցյալը» («Յառաջ», 1935, 22 մարտի, № 2760, էջ 3):

4. Ակնարկում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրակ Գարեգին արքեպ. Հովսեփյանի՝ ԱՄՆ ժամանելու առթիվ Դաշնակցության մամուլի օրգաններում և մասնավորապես Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում տպագրված վարկաբեկիչ հոդվածները:

1936

#### 124. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ

(էջ 168)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը Ն. Ակինյանի «Եղիշե վարդապետ և յուր Պատմությունն Հայոց պատերազմին. քննական ուսումնասիրություն» մենագրության մասին է (հատ. 1-2, Վիեննա, 1932, 1936):

2. Նկատի ունի Ա. Մեյեի «Esquisse d'une Grammaire comparée de L'Arménien classique» աշխատության երկրորդ հրատարակությունը (Վիեննա, 1936):

3. Ն. Ադոնցը շատ ծանր էր տանում հայկական շրջանակներից կտրված լինելը: Ս. Վրացյանը հիշում է, որ նա հաճախ Բրյուսելից գալիս էր Փարիզ՝ «հայկական օդ շնչելու», շփվելու գրչակից ընկերների ու բարեկամների հետ, մասնակցելու համազգային որևէ միջոցառման (տե՛ս **Ս. Վրացյան**, Պրոֆ. Ն. Ադոնց. Հուշեր, «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ, 1998, № 1):

4. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով նամակի հաղորդած տվյալները:

5. Տե՛ս **Հ. Տաշյան**, Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

**125. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**  
(էջ 169)

Բնագիրն անհայտ է: Լույս է տեսել Փարիզի «Անահիտ» ամսագրում (1936, № 5, էջ 3-7): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ն. Ադոնցի սույն նամակը պատասխանն է Արշակ Չոպանյանի՝ պատմաբանին հղված հարցումի, որով խնդրել է կարծիք հայտնել Աբգար Պայազատի «Խալդերեն լեզվի բանալին» (Երևան, 1935) գրքի վերաբերյալ:

2. Ակնարկում է աշխատության գրաբարով գրված չափազանց դրական առաջաբանը, որը հեղինակել է Հ. Աճառյանը (էջ 5-8):

3. Տե՛ս **Գ. Տեր-Մկրտչյան**, Ուրարտյան բեռնագրերի լեզուն («Արարատ», 1893, № 11, էջ 923-934՝ «Միաբան» ստորագրությամբ):

4. Արշիբալա Մեյար (1845-1933) առաջիններից մեկն էր, որ զբաղվեց ուրարտական սեպագրերի վերծանությամբ:

5. Այժմ վերջնականապես ապացուցված է, որ ուտիերենը պատկանում է իբերակովկասյան լեզվաընտանիքի դադստանյան ճյուղի լեզգիական խմբին:

6. Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության ուղղությամբ հատկապես մեծ է Հ. Աճառյանի ավանդը (տե՛ս **Հ. Աճառյան**, Քննություն Ղարաբաղի բարբառի, Վարդշապատ, 1901):

7. Խոսքը ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Գ Կոստանդնուպոլսեցի Քերեստենճյանի մասին է, որը 1844-1858 թվականներին եղել է Բուրսայի հայոց հոգևոր թեմի առաջնորդը:

**1937**  
**126. ՓԱՐԻԶԻ ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ**  
(էջ 179)

Բնագիրը անհայտ է: Լույս է տեսել «Անահիտ» ամսագրում (1937, № 1-2, էջ 69-70): Արտատպվում է այդ հրատարակությունից:

1. Հասցեատերերը Նուպարյան մատենադարանի տեսուչ Լևոն Կյումուշկերտանն ու Արշակ Չոպանյանն են:

2. 1900-1901 թվականներին Ադոնցը Փարիզում հաճախել է Ա. Մեյեի համեմատական լեզվաբանության դասընթացներին: Ադոնցի փայլուն գիտելիքներն այս բնագավառում բացատրվում են Ա. Մեյեի հզոր ազդեցությամբ:



3. Այնուհանդերձ, Ն. Մառի նկատմամբ երախտագիտությունն Ադոնցն արտահայտել է իր հուշերում (տե՛ս Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գրոց Բ, թղթածրար Ա/Ա-7): Այդ հուշերը հրապարակել ենք մենք (տե՛ս «Ակադեմիկոս Մառ», ծննդյան 140 և մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Երևան, 2005, էջ 147-156):

**127. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

(էջ 179)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ակնարկում է Ն. Ակինյանի՝ 1935-1936 թվականների ընթացքում լույս տեսած հետևյալ աշխատությունները՝ «Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոս Հայոց յԷջմիածին և յոր ժամանակը (1577-1633)», «Նպաստ մը Հայոց եկեղեցու պատմութեան», «Միմե՛տոն դարի Լեհացոյ Ուղեգրութիւն»:

2. Ակինյանի՝ Եղիշեհին նվիրված ուսումնասիրության վերջին՝ երրորդ հատորը, լույս է տեսել Ն. Ադոնցի մահից հետո՝ 1952 թվականին:

**128. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**

(էջ 179)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Նկատի ունի Գ. Խալաթյանցի «Ձենոբ Գլակ. համեմատական ուսումնասիրություն» (Վիեննա, 1893) մեմագրությունը:

2. Հիմք ընդունելով այն, որ 1937 թնականին Ն. Ադոնցը Բրյուսելում բնակվել է նշված հասցեում, ապա այս բացիկը թվագրել ենք 1937 թվականով:

**129. ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԳ. ԵՐԵՅԱՆԻՆ**

(էջ 180)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Հասցեատերը Իգնատիոս վրդ. Աքյանն է (1888-1978), որ երկար տարիներ շարունակ վարել է Վիեննայի Մխիթարյանների գրատան տեսչությունը:

2. Տե՛ս № 128, ծան. 1:

3. Տե՛ս № 105, ծան. 4:

### **130. «ՀԱՆՂԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

(էջ 180)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Լույս է տեսել «Հանդես ամսօրեայ» պարբերականում (1937, № 9-10, էջ 451): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. «Հանդես ամսօրեայ»-ն հիմնադրվել է 1887 թվականին Վիեննայում՝ որպես Մխիթարյան միաբանության բարոյական, ուսումնական, արվեստագիտական, իսկ 1919 թվականից՝ հայագիտական ամսաթերթ:

2. Ամսաթերթը հիմնադրել է միաբանության արքեպիսկոպոս Արսեն արքեպ. Այառնյանը (1824-1902): Առաջին խմբագիրն է եղել Ղևոնդ վրդ. Հովնանյանը (1887-1889):

3. Հաջորդաբար «Հանդես ամսօրեայ»-ն խմբագրել են՝ Հակոբոս վրդ. Տաշյանը (1890-1895), Գրիգորիս ծ. վրդ. Գալեմքեարյանը (1895-1898), Վարդան վրդ. Մելքիսեդեկյանը (1898-1901), Թովմաս վրդ. Կետիկյանը (1901-1906), Հմայակ վրդ. Համբարյանը (1906-1909), Ներսես վրդ. Ալիմյանը (1909-1913, 1920-1963) և Աղեքսանդր վրդ. Մատիկյանը (1913-1920):

4. Եվ իրոք, «Հանդես ամսօրեայ»-ի հիմնադրումից սկսյալ Սարուխանը անընդմեջ աշխատակցել է ամսաթերթին: Այստեղ տպագրվել են նրա ավելի քան 50 ուսումնասիրություններ, «Ազգային մատենադարան» մատենաշարով լույս են տեսել նրա վեց մենագրություններ: Սարուխանի գրական գործունեության հիսնամյա հոբելյանի առիթով ամսաթերթի 1937 թվականի համարում տպագրվել է Սահակ վրդ. Կոզյանի խոսքը՝ «Առաքել Սարուխանի գրական գործունեությունը» (էջ 477-478), ինչպես նաև ստացված շնորհավորական հեռագրերն ու նամակները (էջ 489-496):

5. Ակնարկում է այն, որ Ա. Սարուխանը տարիներ շարունակ եղել է Ա. Մանթաշյանի գործակատարը և առևտրական ներկայացուցիչը մի քանի երկրներում, զբաղվել առևտրատնտեսական գործունեությամբ:

### **131. ՆԵՐՍԵՍ ՎՐԳ. ԱԿԻՆՅԱՆԻՆ**

(էջ 181)

Բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների դիվանում: Տպագրվում է առաջին անգամ:

1. Ինչպես սույն, այնպես էլ ուրիշ վկայություններ փաստում են Ն. Արոնցի՝ Ն. Ալիմյանին և մյուս Մխիթարյաններին հղված այլ նամակների գոյությունը,

որոնք, սակայն, մեզ հասու չեն: Հավանաբար Մխիթարյաններին ուղղված աղոնցյան ամբողջական մամուլամին չէ, որ դրվել է Ռ. Ադալյանի տրամադրության ներքո:

2. Ն. Ադոնցի հետաքրքրությունը Բաֆֆու այս ստեղծագործությունների նկատմամբ պատահական չէր: Մեծ գրողի ծննդյան հարյուրամյակին նվիրված հոբելյանական ժողովածուում լույս տեսան նրա «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմքը և գաղափարախոսական արժեքը» (տե՛ս «Բաֆֆի. կյանքը, գրականությունը, հիշողությունները», Փարիզ, 1937, էջ 112-148), իսկ «Հայրենիք» ամսագրում՝ «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» (1937, № 2, էջ 66-72) ուսումնասիրությունները:

3. Թվագրել ենք՝ հիմք ընդունելով մամուլի հաղորդած տվյալները:

**1938**

### **132. ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻՆ**

**(էջ 182)**

Բնագիրը պահվում է ՀՀ ազգային արխիվում (Արշակ Սաֆրաստյանի ֆոնդ, Պ-412, ցուցակ 1, գործ 872, ք. 5): Հրատարակել է Ալվարո Ղազիյանը (տե՛ս **Ա. Ղազիյան**, նշվ. աշխ., էջ 54): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1938 թվականի ամռանը Ա. Սաֆրաստյանը Լոնդոնից ժամանել էր Բրյուսել՝ մասնակցելու Արևելագետների միջազգային 4-րդ կոնֆերանսի աշխատանքներին:

2. Խոսքը գերմանացի նշանավոր հեթիթագետ, ասորագետ Յո. Ֆրիդրիխի (Jo. Friedrich, 1893-1972) մասին է:

3. Ա. Գոց (ճիշտ ձևը Գյոտցե՝ Götze) – գերմանացի ասորագետ:

4. Թվականը նշանակել ենք ըստ մամուլի հաղորդած տվյալների:

### **133. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ**

**(էջ 182)**

Բնագիրը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (Ա. Չոպանյանի ֆոնդ 133, բաժին I, № 38): Տպագրվում է առաջին անգամ:

1. Խոսքը վերաբերում է Աբրահամ Ղուկասյանին (տե՛ս № 81, ծան. 1):

2. Խոջայան – թեև ինքնությունը հնարավոր չեղավ պարզել, սակայն ակներն է, որ Չոպանյանը խնդրել է Ադոնցի միջամտությունը՝ նրան Աբրահամ Ղուկասյանի թոշակավորների կարգն ընդգրկելու:

1940

**134. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ**

(էջ 183)

Բնագիրը պահվում է Մեծի Տանը Կիլիկիո կաթողիկոսարանի դիվանում (Գարեգին Ա. Հովսեփյանի հավաքածու, ֆոնդ № 7, ցուցակ 1, գործ 336, թ. 31 ա, բ): Հրատարակել ենք մենք (տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան**, Նիկողայոս Ադոնցի նամակագրությունից, «Էջմիածին» ամսագիր, 2009, № 6, էջ 104-105): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի՝ 1939 թվականի ապրիլի 16-ին գումարված երեսփոխանական ժողովը թեմակալ առաջնորդ է ընտրել հայրապետական ներկայացուցիչ և նվիրակ Գարեգին արքեպ. Հովսեփյանին: Այս ընտրությանը Մամբրե եպս. Գալֆայանի գլխավորությամբ ընդդիմացել են թեմի որոշ հոգևորականներ: Գարեգին արքեպ. Հովսեփյանի՝ ընտրությանը դեմ են արտահայտվել նաև ԱՄՆ-ի ՀՅ Դաշնակցության ղեկավար մարմինները, որոնք փորձել են պառակտել տեղի Հայ առաքելական եկեղեցին և ընտրել կուսակցության շահերն արտահայտող նոր թեմակալ առաջնորդ: Սակայն այդ փորձերը հաջողության չեն հասել:

2. Սիմոն Վրացյանը (1882-1969) 1938 թվականից սկսյալ ղեկավարել է ԱՄՆ-ի ՀՅ Դաշնակցության օղակները և կարևոր դեր խաղացել եկեղեցական տագնապը բորբոքելու գործում:

3. Խոսքը Արտաշես Չիլինկիրյանի (Ռուբեն Գարբինյան) մասին է:

4. Հավանաբար ակնարկում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գծի հետևորդներին ու պաշտպաններին:

5. Տե՛ս № 135-րդ նամակը:

6. Նկատի ունի Խորհրդային Հայաստանը:

7. Ակնարկվում է իր «Քննական պատմություն հայոց» ֆրանսերեն բազմահատոր աշխատության առաջին՝ Ուրարտուի պատմությանը նվիրված գիրքը, որ հետամահու լույս տեսավ «Հայաստանի պատմություն: Աղյուսակները (X-VI դար Բ. ա.)» խորագրով (Փարիզ, 1946, տե՛ս նաև հայերեն թարգմանությունը, Երևան, 1972):

8. Խոսքը Տիրայր արքեպ. Տեր-Հովհաննիսյանի (Տիգրան Հովսեփի Մելիք-Մուշկամբարյան) մասին է:

### 135. ԱՐՏԱՇԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

(էջ 185)

Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Հրատարակել է Ա. Չիլինկիրյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, № 5, Բոստոն, 1963, էջ 25-26): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1939 թվականին, ինչպես մայր հայրենիքում, նույնպես Սփյուռքում մեծ հանդիսավորությամբ նշվեց «Սասնա ծռեր» հերոսավեպի 1000-ամյակը: Այդ առիթով Ն. Ադունցը հատուկ դասախոսություն է կարդացել փարիզահայ գրական հասարակության համար: Բացի այդ՝ հորելյանի առիթով «Հայրենիք» ամսագիրը նախապես նրան պատվիրել էր հատուկ հոդված, որը, սակայն, Ադունցը հնարավորություն չի ունեցել գրելու:

2. Կարծում ենք՝ այստեղ գործ ունենք այլաբանության հետ: «Սոխակեր հայրենիք» արտահայտությունը հավանաբար մատնանշում է խորհրդային համակարգը:

3. Այդ մասին տե՛ս № 134, ծան. 1:

4. 1937 թվականին Գարեգին արքեպ. Հովսեփյանի՝ որպես հայրապետական լիազոր-պատվիրակ ժամանելն ԱՄՆ հետապնդել է Հայոց եկեղեցու միասնականությունը պահպանելու, տարագիր հայությանը մայր հայրենիքի շուրջը համախմբելու, թեմի ներսում գոյություն ունեցող տարածայնությունները հարթելու նպատակ: Սակայն նրա այդ նշանակումը խիստ բացասաբար է ընդունվել ՀՅ Դաշնակցության տեղական ղեկավար մարմինների կողմից: «Հայրենիք» օրաթերթում տպագրվել են անպատշաճ և Սրբազանի անձը անարգող հոդվածներ: Հոդվածագիրները վիրավորել են նրա արժանապատվությունը, անվանել «Չեկայի լրտես», «Սովիեթի դրածո» և այլն [տե՛ս «Գարեգին Սրբազանը Քալիֆորնիո մեջ» («Հայրենիք», 1937, 30 մայիսի), «Էջմիածնի լիազորի շնորհները» (նույնը, 1937, 12 հունիսի), «Անհարկի առաքելություն մը» (նույնը, 1937, 1 հուլիսի), «Գարեգին արքեպիսկոպոսի նոր կոչումը» (նույնը, 1938, 25 հունվարի) և այլն]:

5. Որքան մեզ հայտնի է, Ն. Ադունցը «Սասնա ծռերի» մասին որևէ հոդված չի տպագրել:



# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ<sup>1</sup>

---

<sup>1</sup> Կազմել է Պետրոս Հովհաննիսյանը:





## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբեղյան Ա. Գ., հայագետ – 6  
Աբեղյան Մ. Խ., լեզվաբան, գրականագետ – 199, 253  
Ս. Աբերկիոս – 165, 252  
Աբովյան Խ. Ա., գրող – 135, 139  
Աբրահամյան Ա., լոնդոնահայ ազգային-հասարակական գործիչ – 130  
Աբրահամյան Ռ. Թ., լեզվաբան, իրանագետ – 163, 251  
Ագաթանգեղոս, պատմագիր – 106  
Ադայան Ռ. Պ., պատմաբան – 7, 259  
Ադամյան Ա. Հ. – 6, 208, 221, 232, 233, 236, 237, 250, 251  
Ադոնց Առաքել, Ն. Ադոնցի եղբայր – 230  
Ադոնց Արշակ, Ն. Ադոնցի ազգական – 230  
Ադոնց Արտեմ, Ն. Ադոնցի եղբայր – 229  
Ադոնց Բագրատ, Ն. Ադոնցի եղբորորդի – 230  
Ադոնց Էդիկ, Ն. Ադոնցի ազգական – 229  
Ադոնց Լիրա, Ն. Ադոնցի զարմուհի – 229  
Ադոնց Կոստյա, Ն. Ադոնցի զարմիկ – 230  
Ադոնց Հայկ, Ն. Ադոնցի եղբայր – 101, 227, 230, 231, 236  
Ադոնց Մաշո, Ն. Ադոնցի քույր – 230  
Ադոնց Նիկողայոս – **PASSIM**  
Ադոնց Վալյա, Ն. Ադոնցի զարմուհի – 229  
Ադոնց Վարդան, Ն. Ադոնցի զարմիկ – 230  
Ադոնց Վլադիմիր, Ն. Ադոնցի եղբորորդի – 230, 231  
Ադոնց Տիգրան, Ն. Ադոնցի եղբայր – 230  
Ադոնց-Հովնաթանյան Օ. Ի., Ն. Ադոնցի կին – 247, 251, 255  
Ադոնց-Ռոստոմբեկյան Գ., Ն. Ադոնցի մայր – 229  
Ալպոյաճյան Ա. Ա., պատմաբան – 242, 248  
Ահարոնյան Ա. Ա., գրող – 56, 103, 130, 131, 133, 138, 150, 202, 236, 238  
Ադայան Է. Բ., լեզվաբան – 235  
Աղեքսանդր վրդ. Մատիկյան, հայագետ – 82, 145, 219, 224, 244, 258  
Աղեքսանդր վրդ. Պաղճյան, աստվածաբան – 135, 239

Աճառյան Հ., լեզվաբան – 84, 155, 157, 158-160, 162, 170, 207, 220, 233, 235, 251, 253, 256

Աճեմյան Մ., Պետական դումայի պատգամավոր – 6

Ամասյան Ա., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Անանուն, պատմագիր – 79, 82, 195, 196, 219, 224

Առանձար (Մ. Ք. Գույումճյան), գրող – 78, 217

Ասողիկ, պատմիչ – 106

Արիստակես (Արիս) վրդ. Վարդանյան, խմբագիր – 71, 81, 95, 99, 145, 212, 219, 228, 234, 244

Արիստակեսյան Գ., բարերար – 59, 60, 204

Արդուքյան-Երկայնաբազուկ Բ., իշխան – 55, 56, 62, 201

Արսեն արքեպ. Այտընյան, աբբահայր – 18, 19, 57, 64, 192, 203, 207, 258

Արսեն վրդ. Ղազիկյան, մատենագետ, բանասեր – 137, 140, 141, 146, 240

Արտավազդ արքեպ. Սյուրմեյան, պատմաբան, հոգևոր-եկեղեցական գործիչ – 6

Արտավան Արշակունի, գորավար (VI դար) – 197

Բագրատ վրդ. Վարդագարյան, Մայր աթոռի դիվանապետ – 72, 212, 213

Բալույան Հ., գրող, խմբագիր – 247

Բաշայան Լ., գրող, Ազգային պատվիրակության խորհրդական – 127, 235

Բառնարաս վրդ. Պիլեզիկճյան, խմբագիր – 6, 17, 18, 57, 62-66, 191, 192, 203, 206-208

Բասմաջյան Կ., պատմաբան, խմբագիր – 99, 228

Բարսեղ վրդ. Սարգիսյան, հայագետ – 193

Բելք Վ., արևելագետ – 7

Բերբերյան Հ., տե՛ս Հ. Պերպերյան

Բրաուն Ֆ., արևելագետ – 7

Բրյուսով Վ., բանաստեղծ – 217

Ֆոն Բուշե, Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ – 223

Գ. Ա., թարգմանիչ – 234

Գաբրիել վրդ. Մենևիշյան, լեզվաբան, խմբագիր – 57, 146, 203, 244

Գաբուճյան Ա., հայագետ, աստվածաբան – 11

Գամառ-Քաթիպա, տե՛ս Ռ. Պատկանյան

Գարագաշ Հ. Ա., գրող, խմբագիր – 6

Գարագաշյան Ա. Մ., պատմաբան – 195  
 Գարեգին արքեպ. Խաչատուրյան, եկեղեցական գործիչ, բանասեր – 6  
 Գարեգին վրդ. (եպ., արքեպ., կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո) Հովսեփյան –  
 6, 86, 87, 104, 121, 125, 128, 132, 155, 163, 168, 183, 185, 186, 221,  
 232-233, 236, 237, 249, 250-251, 255, 260-261  
 Գարեգին եպ., այլ – 105  
 Գարեգին վրդ. Ջարբհանալյան, մատենագետ, թարգմանիչ – 193  
 Գարեգին քահանա Աբրահամյան – 83  
 Գարիտ Ժ., բյուզանդագետ – 9  
 Գելցեր Հ., հայագետ – 197, 225  
 Գյուլգաղյան Ս., մանկավարժ – 13, 14, 189  
 Գոց (Գյոտցե) Ա., ասորագետ – 182, 259  
 Գրեգուար (Կրեկուար), բյուզանդագետ – 143-144, 149, 151, 243, 247  
 Գրիգոր Լուսավորիչ – 142, 207  
 Գրիգոր Բ Վկայասեր, Ամենայն Հայոց կաթողիկոս – 18, 191, 192  
 Գրիգոր Է Անավարզեցի, Ամենայն Հայոց կաթողիկոս – 193  
 Գրիգոր Ծերենց, մատենագիր, մանկավարժ – 191, 200  
 Գրիգոր Մազիստրոս, մատենագիր, մեկնիչ – 156, 215, 250  
 Գրիգոր Նազիանզացի, աստվածաբան – 61, 205  
 Գրիգորիս ծ. վրդ. Գալեմբեարյան, մատենագետ, բանասեր – 135, 190, 191,  
 239, 258  
 Գրիգորիս արքեպ. Գովրիկյան, արքահայր – 145, 244  
 Գրիգորիս եպ. Պալաքյան, եկեղեցական գործիչ – 6  
 Գրիգորյան Կ. – 12  
 Գուչկով Ա., Պետական դումայի նախագահ – 74, 214  
 Գուտչմիդ Ա., արևելագետ – 195  
 Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (եպ., արքեպ., պատրիարք), Ամենայն  
 Հայոց կաթողիկոս – 178, 256  
 Գևորգ Ե Սուրենյանց, Ամենայն Հայոց կաթողիկոս – 6, 79, 213, 214, 216,  
 242  
 Գևորգ Ջ Չորեքչյան (վրդ., եպ., արքեպ.), Ամենայն Հայոց կաթողիկոս – 85,  
 86, 221  
 Գևորգ արքեպ. Ութունյան, ազգային պատվիրակության անդամ – 214  
 Գևորգյան, Ա. Ա. Տարասովի դուստր – 85

- Դաղբաշյան Հ., բառարանագիր, պատմաբան – 18, 192  
Դավիթ Բեկ, գորավար – 181, 255, 259  
Դավիթ Բեկ Մ. Ս., բանասեր, քարգմանիչ – 226  
Դավիթ Մեկնիչ, քերական – 215  
Դարբինյան Ռ. Ս., ազգային գործիչ, խմբագիր – 6, 183, 229, 254, 260, տե՛ս  
նաև Ռ. Չիլինկիրյան  
Դերվիշյան Մ., բառարանագիր – 235  
Դիլ Շ., բյուզանդագետ – 38-39, 197  
Դիլոյան Վ. Ա., պատմաբան – 223  
Դիոնիսիոս Թրակացի, քերական – 76, 77, 127, 212, 215, 234  
Դիոսկորոս (Դեոսկորոս), եպիսկոպոսապետ – 67, 209  
Դյուլորիե Է., հայագետ – 206
- Եգյան Կ. Հ. (Գ. Ա., Գերասիմ Արտեմիչ), պետական գործիչ, հայագետ – 6,  
14, 31, 38, 41, 53, 189, 194, 196-198, 201  
Եզնիկ Կողբացի, իմաստասեր – 99, 162, 228  
Եկատերինա II, կայսրուհի – 80, 218  
Եղիշե, պատմագիր – 144, 168, 179, 244, 255  
Եղիշե արքեպ. Դուրյան, պատրիարք – 6, 154, 242, 249  
Եսայան Զ. Մ., գրող – 150, 247  
Եսայի Նչեցի, քերական – 71-72, 211, 212  
Եվանգուլյանց Գր. Գ., իրավաբան – 197  
Երեմիա Քեոնուրճյան, պատմագիր – 239
- Չավարյան Ս. Մ., հասարակական-քաղաքական գործիչ – 78, 217  
Չավրյան (Չավրիև) Հ., երզվյալ հավատարմատար – 9, 85, 87, 90, 145, 180,  
221  
Չարդարյան Ռ., գրող – 78, 217  
Չարյան Ա., Կ. Չարյանի որդի – 247  
Չարյան Կ. Ք., գրող – 6, 103, 150, 246  
Չարյան Վ., Կ. Չարյանի որդի – 247  
Չաքարիա եպ. Գնունյանց, տաղերգու – 135, 239  
Չենոբ Գլակ, մատենագիր – 179, 257
- Էթիեմեզյան Ա. Հ., գործավար – 11

Էմին Մ. Հ., հայագետ – 61, 62, 205, 206  
 Էնվեր փաշա – 223  
 Էտկար Ս., բրիտանահայ հասարակական գործիչ – 130  
 Էքիզյան (Էքիզլեր) Հ., հնահավաք – 199

Թամամշյան Մ. Հ., մեծահարուստ – 199  
 Թարասյան (Տարասով) Ա. Ա., մեծահարուստ, բարերար – 85, 221  
 Թերզյան Թ., բանաստեղծ – 61, 205  
 Թեքեյան Վ., բանաստեղծ – 204  
 Թովմաս վրդ. Կետիկյան, բանասեր, խմբագիր – 258  
 Թորգոմ արքեպ. Գուշակյան, պատրիարք – 6, 142, 147, 151, 154, 155, 157, 242, 245, 246, 247, 249, 248, 250, 251  
 Թորգոմյան Վ., բժիշկ, հայագետ – 201, 202  
 Թորոսյան Հ., քարգմանիչ – 225  
 Թովսայան Ս., բրիտանահայ գործիչ – 130  
 Թովչյան Հ., պատմաբան, մանկավարժ – 163, 252  
 Թումանյան Հ., բանաստեղծ – 6, 55, 202  
 Թումանով Կ., պատմաբան – 7

Ժորես Ժ., հայասեր – 198  
 Ժուկովսկայա-Մառ Ա. Ա., Ն. Մառի կին – 193

Իգնատիոս վրդ. Աքյան, տպարանապետ – 180, 239, 257, 258  
 Իսահակյան Ա., բանաստեղծ – 6  
 Իսաս Ա. Ա., պրոֆեսոր – 199

Լեո, պատմաբան – 208, 233  
 Լեվի Մ., բանասեր – 7  
 Լեփսիոս Յո., արևելագետ, հայասեր – 245  
 Լինչ Հ., աշխարհագետ, հայասեր – 55, 166, 201  
 Լիսիցյան Ստ., ազգագրագետ, խմբագիր – 71, 211  
 Լոնգե Ժ., հայասեր – 198  
 Լորիս-Մելիքյան Հ., բժիշկ, ազգային գործիչ – 74, 214  
 Լոն Վ Հայկազն, կայսր – 9, 201  
 Լոնյան Գ. Ջ., գրականագետ – 6, 75, 215

Խալաթյանց Գ., պատմաբան – 6, 61, 62, 68, 69, 81, 84, 179, 196, 205, 206,  
 209, 210, 219, 257  
 Խաչատրյան Ա., պատմաբան – 233  
 Խատիսյան Ա. Հ., պետական գործիչ – 6  
 Խատիսյան Կ. Հ., հասարակական գործիչ, խմբագիր – 78, 217  
 Խոնդկարյան Ա., ազգային-հասարակական գործիչ, պատմաբան – 9  
 Խոջայան, ուսանող – 182, 260  
 Խոսրովիկ Թարգմանիչ, մատենագիր (VIII դար) – 156, 250  
 Խորեն Ա Մուրադբեգյան (եպ., արքեպ.), Ամենայն Հայոց կաթողիկոս – 6,  
 83, 219, 242, 248  
  
 Կանայանց Ս. Մ., հայագետ, մանկավարժ – 195  
 Կասիա Միանձնուհի, բանաստեղծուհի (IX դար) – 200  
 Կատարիներ կայսրուհի, տե՛ս Եկատերինա II  
 Կարապետ դպիր Ղահրամանյան-Ավթանդիլյան, քերականագետ – 178  
 Կարապետ վրդ. (եպ.) Տեր-Սկրտչյան, հայագետ, աստվածաբան – 194, 209  
 Կարապետյան Հ., տե՛ս Օհան Կարո  
 Կարիեր Ա., հայագետ – 39  
 Կարստ Յո., հայագետ – 56, 203  
 Կելենյան Հ., տե՛ս Համաստեղ  
 Կեղծ Սերեոս – 196, 219, 224  
 Կիրակոսյան, դպրոցի տեսուչ – 164  
 Կլեմանտ Ժ., պետական գործիչ, հայասեր – 198  
 Կյուլպենկյան Ն., բարերար – 130  
 Կյումուշկերտան Լ., մատենադարանապետ – 256  
 Կյուրիոն, վրաց եպիսկոպոս – 135, 239  
 Կոնիբեր Ֆ. Կ., հայագետ – 7  
 Կոստանյան(ց) Կ., հայագետ, մանկավարժ – 6, 81, 84, 88, 156, 200, 218,  
 220, 222, 250  
 Կովալևսկի Մ., պատմաբան – 74, 214  
 Կորյուն, մատենագիր – 162, 231, 233, 234, 251  
 Կրեկորի Ս. Մ., ազգային գործիչ – 130  
 Կրումբախեր Կ., բյուզանդագետ – 38, 193  
  
 Հախումյան Ս. Գ., գրող, հրապարակախոս – 41, 198

Հակոբ Արթին փաշա, ազգային պատվիրակության անդամ – 214  
 Հակոբյան Ա., բրիտանահայ ազգային գործիչ – 130  
 Հակոբյան Պ. Հ., գրականագետ – 6, 189, 191-201, 209, 232  
 Հակոբոս վրդ. Տաշյան, ձեռագրագետ, հայագետ – 18, 95, 145, 164, 169,  
 180, 192, 252, 256, 258  
 Համագասպ վրդ. Ոսկյան, պատմաբան, մանկավարժ, խմբագիր – 6, 99,  
 102, 103, 124, 145, 228, 231, 233  
 Համամ Արևելցի, մեկնիչ – 215  
 Համաստեղ, գրող – 135, 238, 253  
 Համբարձումյան Ա., վաճառական – 134, 238  
 Հայր Վարդան, տե՛ս Վարդան վրդ. Մեքիսեդեկյան  
 Հարություն արքեպ. Սանահնեցի – 178  
 Հարությունյան Ա. Ա., պատմաբան, մատենագետ – 11  
 Հմայակ վրդ. Համբարյան, խմբագիր – 258  
 Հյուբշման Հ., հայագետ – 160  
 Հովհաննես Դրասխանակերտցի, պատմագիր – 45, 199  
 Հովհաննես Երզնկացի, քերական, մեկնիչ – 215  
 Հովհաննես Թլկուրանցի, տաղերգու – 158  
 Հովհաննես Ը Կարբեցի, Ամենայն Հայոց կաթողիկոս – 220  
 Հովհաննես Պատմագիր, տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի  
 Հովհաննիսյան Խ. (Քուչուկ-Հովհաննիսյան), մանկավարժ – 13, 189  
 Հովհաննիսյան Մ., բանասեր – 12  
 Հովհաննիսյան Պ. Հ., պատմաբան – 202-206, 209, 210, 212-215, 217, 218,  
 220, 222, 243, 245, 248, 260  
 Հովսեփ վրդ. Գաթրըճյան, պատմաբան, աստվածաբան – 97, 227  
 Հրանտ-Սամուել, խմբագիր – 247  
 Հուստինիանոս I, կայսր – 8, 38, 39, 198  
  
 Ղազանչյան Ռ., պատմաբան – 11, 222  
 Ղազար քահանա, գրիչ (XIX դար) – 178  
 Ղազար Փարպեցի, պատմագիր – 61, 106, 205, 235  
 Ղազարյան Ռ. Ս., լեզվաբան – 235  
 Ղազիյան Ա., բանահավաք – 227, 236, 248, 252, 259  
 Ղամբարով (Ղամբարյան) Յու. Ս., իրավաբան, սոցիոլոգ – 199

Ղափանցյան Գ. Ա., լեզվաբան – 156, 233, 250, 253  
 Ղուկասյան Խ., հայագետ – 233, տե՛ս նաև Ch. Lukácsi  
 Ղուկասյան Ա., մեծահարուստ, բարերար – 9, 105, 125, 126, 182, 232, 25, 260  
 Ղուկասյան Պ., նախարարյունաբերող, բարերար – 73, 75, 213  
 Ղևոնդ Երեց, տե՛ս Ղևոնդ Վարդապետ  
 Ղևոնդ եպ. Դուրյան, հոգևոր-եկեղեցական գործիչ – 155, 249  
 Ղևոնդ Վարդապետ, պատմագիր – 106, 165, 244, 252  
 Ղևոնդ վրդ. Հովնանյան, բանասեր, խմբագիր – 239, 258  
 Ճըրըզյան Կառլոս, տե՛ս Արիստակես վրդ. Վարդանյան  
 Ճըրճըրյան Ս., բրիտանահայ ազգային գործիչ – 130  
 Մազինգ Լ. Կ., պրոֆեսոր – 14, 190  
 Մալեզյան Վ. Ֆ., գրող, հասարակական գործիչ – 6, 144, 164, 243  
 Մալխասյանց Ս. Ս., լեզվաբան, բառարանագիր – 195, 232, 233  
 Մալքոլմ Ժ. Ա., հայասեր – 130  
 Մակլեր Ֆ., հայագետ – 76, 216  
 Մահմուդ Շևքեթ փաշա, Օսմանյան կայսրության պետական գործիչ – 246  
 Մաղաքիա արքեպ. Օրմանյան, պատրիարք – 6, 66, 208  
 Մամբրե եպ. Գալֆայան, ամերիկահայ եկեղեցական գործիչ – 260  
 Մանանդյան Հ. Հ., պատմաբան – 106, 193, 194, 196, 200, 232, 233, 253  
 Մանթաշյան Ա. Հ., ազգային բարերար – 31-33, 39, 41, 195, 196, 198, 258  
 Մառ Ն. Յա., հայագետ – 6, 8, 34, 42, 45, 52, 64, 67, 68, 79, 94, 127, 170, 179, 193-200, 207, 210, 217, 218, 224, 257  
 Մառ Յու., Ն. Մառի որդի – 193  
 Մառ Վ., Ն. Մառի որդի – 193  
 Մատթեոս Ուռհայեցի, պատմագիր – 158  
 Մատթևոսյան Վ. Ջ., հայագետ – 246  
 Մարաբա Մծուրնացի, մատենագիր – 196  
 Մարկվարտ Յո., պատմաբան, հայագետ – 225  
 Մարտիկյան Ռ., Օսմանյան կայսրության պետական գործիչ – 149, 246  
 Մաթկոլ Մ., քահանա, հայասեր – 165, 253  
 Մելիքյան, ուսանող – 61  
 Մելիքսեթ-Բեկ Լ., հայագետ – 6, 233, 234



Մելքոնյան Գ. և Կ., բարերար եղբայրներ – 163, 164  
 Մեյն Ա., լեզվաբան, հայագետ – 39, 159, 168, 179, 255, 257  
 Մեսրոպ վրդ. Հոպոզյան, արքահայր – 244  
 Մեսրոպ վրդ. (եպ., արքեպ.) Տեր-Մովսիսյան (Մագիստրոս) – 6, 14, 63, 126, 156, 190, 199, 206, 234, 244  
 Մեսրոպ Մաշտոց – 103, 129, 145, 228, 231  
 Միաբան, տե՛ս Գ. Տեր-Սկրտչյան  
 Միլյուկով Պ., պատմաբան, պետական գործիչ – 74, 214  
 Միհրդատյան Մ., ազգային-հասարակական գործիչ – 150, 247  
 Միսաքյան Շ., հրապարակագիր, խմբագիր – 247  
 Միքայել II Թլվատ, կայսր – 201  
 Միքայել Կ., բրիտանահայ գործիչ – 130  
 Միքայել վրդ., Անիի հոգևոր հովիվ – 79, 218  
 Մլիխար, արքա – 57  
 Մյուլլեր Ֆ., հայագետ – 189  
 Մոստիչյան Հ., Ազգային պատվիրակության անդամ – 214  
 Մովսես Կաղանկատվացի – 62, 206  
 Մովսես Խորենացի – 14, 61, 106, 144, 165, 192, 194, 195, 199, 200, 205, 244, 252  
 Մովսես Քերթոզ, մեկնիչ – 215  
 Մսերյան Մ. Գ., հայագետ – 84, 220  
  
 Յարճանյան Ա., բանաստեղծ – 57, 58, տե՛ս նաև Սիամանթո  
  
 Նալբանդյան Մ., բանաստեղծ, հրապարակախոս – 136, 137, 139  
 Նաղաշ Հովնաթանյան, տաղերգու, նկարիչ – 135, 239, 255  
 Նավասարդյան Վ., խմբագիր, ազգային գործիչ – 7, 241  
 Ներսես վրդ. Ալինյան, պատմաբան, ձեռագրագետ – 6, 69-72, 80, 81, 94-97, 124, 135, 144, 145, 164, 168, 179-180, 191, 192, 210-212, 218, 224-227, 233, 238, 239, 244, 252, 255, 257, 258  
 Նիբերգ Հ. Ս., լեզվաբան – 159, 251  
 Նիկոլայ – 230, տե՛ս նաև Ն. Ադոնց  
 Նիկոլայ II, կայսր – 213  
 Նորայր Բյուզանդացի, հայագետ – 162, 251

Նորատունկյան Գ., Օսմանյան կայսրության պետական գործիչ – 6, 7, 96,  
226

Շահինյան Յ., բրիտանահայ գործիչ – 130

Շահումյան Ս. Գ., կուսակցական, պետական գործիչ – 230

Շանթ Լ. Ս., դրամատուրգ – 56, 202

Շիրվանզադե Ա. Ս., գրող – 56, 202, 233

Չերազ Մ. Գ., բանաստեղծ, հրապարակախոս – 199, 204, 214

Չիլինկիրյան Ա., ազգային գործիչ, խմբագիր – 6, 10, 100, 137, 140, 146,  
166-168, 185, 229, 240, 241, 245, 254, 260, 261, տես նաև Ռ.  
Դարբինյան

Չոպանյան Ա., գրող, ազգային գործիչ – 6, 9, 58, 73, 76, 78, 100, 103, 127,  
132, 141, 142, 143, 151, 156, 165, 169, 182, 204, 214, 215, 217, 228, 231,  
235, 237, 238, 240, 241, 242, 243, 250, 252, 253, 256, 259, 260

Պայազատ Ա., հեղինակ – 170, 171, 173-178, 256

Պապաջանյան Մ., Պետական դումայի պատգամավոր, ազգային գործիչ –  
73, 75, 213, 226

Պատկանյան Ռ., բանաստեղծ – 136

Պատկանյան Ք., պատմաբան – 158, 208

Պարոնիկյան Ա., բժիշկ, ազգային գործիչ – 147, 245

Պեկյան Ա., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Պենյան Է., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Պեշկեթաշյան Մ., բանաստեղծ – 138-140, 241

Ս. Պետրոս, առաքելապետ – 135, 239

Պերպերյան Հ. Ն., հայագետ, հասարակական գործիչ – 6, 127, 234, 235

Պըրժլինսկի, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր – 143

Պողոս Նուպար փաշա – 214, 216, 222, 246

Պոտիկյան Ա., ազգային գործիչ – 130

Պռոշյան Պ., գրող – 135

Պրեսանսե Ֆ., հայասեր – 198

Պրոկոպիոս Կեսարացի, պատմագիր (VI դար) – 38, 39, 194

Ջավախով Ի. Ա., պատմաբան – 65, 207, 210

Ջիվանի, գուսան – 185

Ջրաբետյան (Շահան Ջրաբետ) Հ. Ս., լեզվաբան – 77, 176, 216

Ռեդիկին, դասագրքի հեղինակ – 14

Ռուսինյան Ն., ազգային գործիչ – 55, 201

Ս. Ք., տե՛ս Ս. Քոչարյան

Սազոնով Ս. Դ., պետական գործիչ – 77, 216

Սահակ վրդ. Կոզյան, հոգևոր-եկեղեցական գործիչ – 258

Սամվելյան Խ., պատմաբան – 156, 193

Սամուել Մուրադ, մեծահարուստ, բարերար – 246

Սասունի Կ., պատմաբան, հասարակական գործիչ – 238

Սարգիս եպ. Սարաֆյան, եկեղեցական գործիչ – 135

Սարգսյան Լ. Դ., հասարակական գործիչ, խմբագիր – 200

Սարուխան(յան) Ա. Ջ., պատմաբան – 6, 142, 169, 181, 243, 258

Սաքրզ (Սաքրզլըյան) Հովհաննես փաշա – 132, 237

Սաքրզյան Արմենակ բեյ – 132, 237

Սաֆրաստյան Ա., պատմաբան, խմբագիր – 6, 98, 130, 153, 165, 182, 227,  
236, 248, 252, 259

Սեբեոս, պատմագիր – 106, 195, 219

Սեյս Ա., ուրարտագետ, արևելագետ – 7, 170, 256

Սիամանթո, բանաստեղծ – 203, 204

Սիմեոն Ա Երևանցի, Ամենայն Հայոց կաթողիկոս – 220

Սիմեոն դպիր Լեհացի, ուղեգրող – 256

Սիմեոն Ջողայեցի, քերական – 81, 219

Սնապյան Գ., ազգային գործիչ – 226

Սղերդցյան, ուսանող – 58, 59

Ստեփանոս Սյունեցի, քերական, մեկնիչ – 161, 215, 251

Ստեփանոս Օրբելյան, պատմագիր – 62, 158, 206

Սրապիոն վրդ. – 80, 218

Սրվանձտյանց Գ. Ա., բանահավաք, ազգագրագետ – 81, 218

Մուրենյանց Վ., նկարիչ – 60, 120, 122, 123, 204

Վահան եպ. Տերյան – 208

Վահան վրդ. Հովակիմյան – 7

Վահան Մամիկոնյան, գորավար (V դար) – 235

Վարդան վրդ. Մելքիսեդեկյան, խմբագիր – 18, 192, 258  
 Վարդանյան (Վարդանով), բժշկապետ – 80, 218  
 Վերհառն Է., բանաստեղծ – 217  
 Վիգեն արքեպ. Այբազյան, եկեղեցական գործիչ – 11  
 Վիլֆրուա Գ., հայագետ – 216  
 Վիրաբյան Ա. Ս., պատմաբան – 11  
 Վռամշապուհ եպ. Քիլարյան, եկեղեցական գործիչ – 105, 232  
 Վրացյան Ս., ազգային գործիչ, խմբագիր – 6, 183, 186, 255, 260  
  
 Տասնապետյան Հ., մանկավարժ, կուսակցական, հասարակական գործիչ – 11  
 Տարասով Ա. Ա., տե՛ս Ա. Ա. Թարասյան  
 Տեր Ավետիք, ազատագրական պայքարի գործիչ (XVIII դար) – 255, 259  
 Տեր Իսրայել, մատենագիր, տոմարագետ – 193  
 Տեր-Մարության (Տ. Մարության), քանդակագործ – 76, 215  
 Տեր-Սինասյան Ե., հայագետ – 209, 227  
 Տեր-Սկրտչյան Գ. (Միաբան), հայագետ – 6, 67, 68, 169, 200, 208, 209, 256  
 Տեր-Պետերյան Մ., հրապարակագիր – 6  
 Տեր-Պողոսյան Գ., հայագետ – 57, 95, 199, 203, 224, 225, 226  
 Տիգրանյան Գ. Թ., ազգային- հասարակական գործիչ – 73, 75, 213  
 Տիգրանյան Ա. Թ., իրավաբան, մանկավարժ – 77, 216  
 Տիլպեր Կ., բրիտանահայ ազգային գործիչ – 130  
 Տիմոթեոս Կուզ, եպիսկոպոսապետ, մատենագիր – 67, 68, 208  
 Տինճյան, բժիշկ, բրիտանահայ ազգային գործիչ – 130  
 Տիրայր վրդ. (եպ., արքեպ.) Տեր-Հովհաննիսյան (Տ. Հ. Մելիք-Մուշկամբարյան) – 6, 85, 87, 167, 184, 220, 221, 254, 260  
 Տոնապետյան Պ., գրող, ազգային գործիչ – 165, 254  
 Տոքք, դից. – 70, 210  
  
 Րաֆֆի, գրող – 130, 181, 259  
  
 Տիմասեն, բժիշկ – 32  
  
 Ունճյան Ա., լոնդոնահայ ազգային գործիչ – 130  
  
 Փամպուկյան Ե., պատմաբան, ազգային գործիչ – 11  
 Փանդոյանց Գ., ֆինանսիստ – 196

Փաշայան Լ., տե՛ս Լ. Բաշայան  
Փավստոս Բուզանդ(ացի), պատմագիր – 82, 95, 192, 195, 199, 203, 224-226  
Փափազյան Վ. Մ., գրող – 56, 202

Քալանթար Ա. Ա. (Ա. Լորիս-Քալանթար, Ա. Քալանթարյան), հայագետ,  
հնագետ – 156, 165, 250, 253

Քալանթար Ա. Հ., խմբագիր – 78, 217

Քալանթարյան Լ. Ք., լրագրող – 56, 202

Քաջագունի Հ., պետական գործիչ – 98

Քարամյան Ն., պատմաբան – 200

Քեհյայան Հ., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Քեշիշյան Մ., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Քըլճր Ն., լոնդոնահայ ազգային գործիչ – 130

Քիյար Պ., հայասեր, խմբագիր – 198

Քոչարյան Հ., Ազգային պատվիրակության քարտուղար – 97, 227

Քոչարյան Մ., լրագրող, թղթակից – 138, 241

Օլդենբուրգ Ս. Ֆ., գրականագետ, պրոֆեսոր – 194, 197

Օկունս Ն., պատմաբան – 7

Օհան Կարո, գրող, հրապարակախոս – 138, 241

Օհանջանյան Լ. Ս., բժիշկ – 14, 190

Օհանջանյան(ց) Հ., պետական գործիչ – 98

Ֆնտզյան Գ., հայագետ – 231, 233

Ֆետտեր Պ., հայագետ – 64

Ֆերդովսի, բանաստեղծ – 251

Ֆրանս Ա., հայասեր – 198

Ֆրիդրիխ Յո., հեթիթագետ – 182, 259

Ֆրիկ, տաղերգու – 87, 221

Абегян М. X. – 44

Агафангел – 28, 29, 47

Адонц Н. Г. – 15-17, 20, 22-24, 26, 29, 31, 37, 44, 51, 53, 56, 209, 216

Александра Алексеевна, см. А. А. Жуковская-Марр

Алишан Л. – 20

Аммиан Марцелин – 46

Аноним, историограф – 23  
Артаван Аршакуни – 37  
Аршак Аршакуни – 37  
Асогик, историограф – 46, 47, 51  
Ахумян С., редактор – 34

Гамбаров Ю., профессор – 43  
Гарагашян А. М., историк – 25  
Галуст, см. Г. Тер-Мкртчян  
Гевонд, историограф – 46, 47  
Гельцер Г., арменист – 35  
Г. А., Герасим Артемьевич, см. Г. А. Эзов  
Герман, племянник императора Юстиниана I – 38  
Григорий Анаварзеци – 19  
Григорий Мартирофил – 20  
Гукенгейм, профессор – 37  
Гутшмидт А., востоковед, арменист – 25  
Гюбшман Г., арменист – 34

Дионисий Фракийский – 216

Евангулов Г., юрист – 35  
Елисей, историограф – 47

Жуковская-Марр А. А. – 22-24, 26, 29, 31, 37, 44, 51, 52

Зарбаналян Г., арменист – 20

Иоан Католикос, историограф – 46, 47  
Исаев А. А., профессор – 43

Канаян С., арменист – 25  
Карамян Н., историк – 49  
Карапет вардапет, см. Тер-Мкртчян Карапет  
Кассия, поэтесса, монахиня – 51, 53  
Корюн, историограф – 31

Костанян К., арменист – 49  
Крумбахер К., византинист – 21, 22, 53  
Лазарь Парпский, историограф – 47  
Лангенштейн, методист – 14  
Лев V Армянин, император – 52  
Малхасян С., арменист – 27  
Манандян (Мананд) Я. А., историк – 21, 23, 30, 49  
Манташев А. И., маценат – 41, 42  
Мараба, историограф – 29  
Марр Н. Я. – 19, 21-23, 25, 26, 30, 31, 34, 35, 37, 42, 45, 52  
Марр Ю. Н. – 22-24, 26, 29, 31, 37, 44  
Моисей Каланкатвацци – 47  
Моисей Хоренский – 23-25, 28, 41, 194, 196, 201, 205, 206  
Ольденбург С. Ф., профессор – 22, 24, 38  
Пондоев Г., финансист – 30  
Прокопий Кесарийский – 22, 31, 38, 45  
Риккер, книгопродавец – 45  
Самуэлян Х., историк – 21  
Санатрук, царь, сын Соема – 25  
Саргисян Б., арменист – 20  
Саркисян Л., редактор – 50  
Себеос, историограф – 23, 27, 46, 47, 194, 201, 219  
Тамамшев М., общественный деятель – 43  
Тер-Израел, переписчик – 19  
Тер-Мкртчян Г., арменист – 49  
Тер-Мкртчян К., арменист – 21  
Тер-Мовсисян М., арменист – 44  
Тер-Погосян Г., арменист – 44  
Тигран II Великий, царь – 35

Тусен, методист – 14

Фауст Византийский, историограф – 24, 28, 38, 46, 47, 194, 201

Феодора Пафлагонская, императрица – 53

Феофан, византийский хронист – 46

Халатов (Халатянц) Гр. – 28

Харун-ар-Рашид, халиф – 34

Ходжаев, торговец – 34

Чераз М., поэт – 44

Шейк, профессор – 37

Щеголев, однокурсник Н. Адонца – 37

Эзов Г. А., арменист – 22, 30, 31, 51

Экизлер А., антиквар, маценат – 43

Эмин Н. О., арменист – 205

Юстиниан I, император – 37, 206

Adontz N. – 64, 134, 136, 165, 179, 248

Claudian, հռետոր – 46

Clemanceau G., հայասեր – 40

Continuatus Theophanes, մատենագիր – 53

Dervischjan M., բանասերագիր – 235

Diehl S., բյուզանդագետ – 38, 42

Dulauries E., հայագետ – 62

Erchert V., աշխարհագետ – 97

Faustus Byzanz, պատմագիր – 225

Friedrich Jo., արևելագետ – 259

Gelzer H., հայագետ – 95

Glottz G. D., պատմաբան – 159



Götze A., ստորագետ – 259  
Greguire A., բյուզանդագետ – 149  
Gutschmidt A., արևելագետ – 25  
Hambartzoumian A., վաճառական – 134  
Hermann E., պատմաբան – 159  
Idatus, հռետոր – 46  
Jaurés J., հայասեր – 40  
Justi F., արևելագետ – 25  
Kassia, բանաստեղծուհի – 53  
Krumbacher K., բյուզանդագետ – 32  
Lukácsi Ch., բանասեր, մանկավարժ – 124, 233  
Marquart Jo., պատմաբան, հայագետ – 95  
Marcel(linus) Comes, ժամանակագիր – 46  
Marr N., հայագետ – 45  
Meister R., պատմաբան – 159  
Nilles N., պատմաբան – 18, 19, 192  
Orosius, հռետոր – 46  
Pacatus, հռետոր – 46  
Prosper Aguit, մատենագիր – 46  
Quillard P., հայասեր – 40  
Themistus, հռետոր – 46

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Նիկողայոս Արոնցի նամականին – Պ. Հ. Հովհաննիսյան .....5**

### Նամակներ

1.	«Արձագանք» [լրագրի] խմբագրությանը .....	13
2.	Կարապետ Եզյանին .....	14
3.	«Հանդես [ամսօրեայ]»-ի խմբագրությանը .....	15
4.	«Հանդես [ամսօրեայ]»-ի խմբագրությանը .....	16
5.	«Հանդես [ամսօրեայ]»-ի խմբագրությանը .....	16
6.	Բառնաբաս վրդ. Պիլեզիկյանին .....	17
7.	Բառնաբաս վրդ. Պիլեզիկյանին .....	17
8.	Բառնաբաս վրդ. Պիլեզիկյանին .....	18
9.	Նիկողայոս Մառին .....	19
10.	Նիկողայոս Մառին .....	21
11.	Նիկողայոս Մառին .....	22
12.	Նիկողայոս Մառին .....	23
13.	Նիկողայոս Մառին .....	25
14.	Նիկողայոս Մառին .....	26
15.	Նիկողայոս Մառին .....	30
16.	Կարապետ Եզյանին .....	31
17.	Նիկողայոս Մառին .....	34
18.	Կարապետ Եզյանին .....	38
19.	Կարապետ Եզյանին .....	41
20.	Նիկողայոս Մառին .....	42
21.	Նիկողայոս Մառին .....	45
22.	Նիկողայոս Մառին .....	45
23.	Նիկողայոս Մառին .....	52
24.	Կարապետ Եզյանին .....	53
25.	«Հանդես [ամսօրեայ]»-ի խմբագրությանը .....	55

26. Հովհաննես Թումանյանին .....	55
27. «Հանդես [ամսօրեայ]-ի] խմբագրությանը.....	56
28. Բառնաբաս Պիլեզիկճյանին .....	57
29. Պետերբուրգի Հայկական եկեղեցիների գույքերի վարչության խորհրդին .....	57
30. Արշակ Չոպանյանին .....	58
31. «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի ընթերցողներին .....	60
32. Գրիգոր Խալաթյանցին .....	61
33. Գրիգոր Խալաթյանցին .....	62
34. Գրիգոր Խալաթյանցին .....	62
35. Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանին .....	63
36. Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյանին.....	63
37. Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյանին.....	65
38. Բառնաբաս վրդ. Պիլեզիկճյանին.....	66
39. Մաղաքիա արքեպ. Օրմանյանին.....	66
40. Գալուստ Տեր-Սկրտչյանին.....	67
41. Գրիգոր Խալաթյանցին .....	68
42. Գրիգոր Խալաթյանցին .....	69
43. Ներսես վրդ. Ակինյանին.....	69
44. Ներսես վրդ. Ակինյանին.....	70
45. Ներսես վրդ. Ակինյանին.....	70
46. Ներսես վրդ. Ակինյանին.....	71
47. Ներսես վրդ. Ակինյանին.....	71
48. Ներսես վրդ. Ակինյանին.....	72
49. Բագրատ վրդ. Վարդազարյանին.....	72
50. Արշակ Չոպանյանին .....	73
51. Գարեգին Լևոնյանին.....	75
52. Արշակ Չոպանյանին .....	76
53. Արշակ Չոպանյանին .....	78
54. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին.....	79

55. Ներսես վրդ. Ակինյանին.....	80
56. Կարապետ Կոստանյանին .....	81
57. Արիստակես վրդ. Վարդանյանին .....	81
58. Խորեն եպ. Սուրադբեգյանին.....	83
59. Կարապետ Կոստանյանին .....	84
60. Կարապետ Կոստանյանին .....	84
61. Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանին .....	85
62. Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանին .....	87
63. Կարապետ Կոստանյանին .....	88
64. Հեռագիր Հայ ազգային պատվիրակությանը.....	88
65. Հեռագիր գերմանական կառավարությանը.....	89
66. Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին.....	90
67. Ներսես վրդ. Ակինյանին.....	94
68. Ներսես վրդ. Ակինյանին.....	95
69. Ներսես վրդ. Ակինյանին.....	95
70. Գաբրիել Նորատունյանին.....	96
71. Ներսես վրդ. Ակինյանին.....	97
72. Ներսես վրդ. Ակինյանին.....	97
73. Արշակ Սաֆրաստյանին .....	98
74. Արիստակես վրդ. Վարդանյանին .....	99
75. Համազասպ վրդ. Ոսկյանին .....	99
76. Արշակ Չոպանյանին .....	100
77. Արտաշես Չիլինկիրյանին .....	100
78. Համազասպ վրդ. Ոսկյանին .....	102
79. Արշակ Չոպանյանին .....	103
80. Համազասպ վրդ. Ոսկյանին .....	103
81. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	104
82. Հակոբ Մանանդյանին .....	106
83. Համազասպ վրդ. Ոսկյանին .....	124
84. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	125
85. «Հանդէս ամսօրեայ»-ի խմբագրությանը .....	127

86. Արշակ Չոպանյանին .....	127
87. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	128
88. Արշակ Սաֆրաստյանին .....	130
89. «Յառաջ» օրաթերթի խմբագրությանը .....	131
90. Արշակ Չոպանյանին .....	132
91. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	132
92. Վիեննայի Մխիթարյան միաբանությանը.....	133
93. Անհայտ անձնավորությանը .....	134
94. [Վիեննայի Մխիթարյան] տպարանի վարչությանը .....	135
95. «Ապագայ» օրաթերթի խմբագրությանը.....	136
96. «Անահիտի» արգո խմբագրությանը .....	137
97. Արտաշես Չիլինկիրյանին .....	137
98. «Յառաջ» օրաթերթի խմբագրությանը .....	138
99. Արտաշես Չիլինկիրյանին .....	140
100. Արշակ Չոպանյանին .....	141
101. Թորգոմ արքեպ. Գուշակյանին .....	142
102. Արշակ Չոպանյանին .....	142
103. Արշակ Չոպանյանին .....	143
104. Արշակ Չոպանյանին .....	143
105. Ներսես վրդ. Ակինյանին.....	144
106. Ներսես վրդ. Ակինյանին.....	145
107. Արտաշես Չիլինկիրյանին .....	146
108. Թորգոմ արքեպ. Գուշակյանին .....	147
109. Կոստան Ջարյանին .....	150
110. «Զվարթնոց» պարբերաթերթի խմբագրությանը.....	151
111. Թորգոմ արքեպ. Գուշակյանին .....	151
112. Արշակ Սաֆրաստյանին .....	153
113. Արշակ Սաֆրաստյանին .....	153
114. Թորգոմ արքեպ. Գուշակյանին .....	154
115. Թորգոմ արքեպ. Գուշակյանին .....	155
116. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	155

117. Թորգոմ պատրիարք Գուշակյանին .....	157
118. Ռուբեն Աբրահամյանին .....	163
119. Ներսես վրդ. Ակինյանին.....	164
120. Արշակ Սաֆրաստյանին .....	165
121. Արտաշես Չիլինկիրյանին.....	166
122. Արտաշես Չիլինկիրյանին.....	167
123. Արտաշես Չիլինկիրյանին.....	168
124. Ներսես վրդ. Ակինյանին.....	168
125. Արշակ Չոպանյանին .....	169
126. Փարիզի Նուպարյան Մատենադարանի տնօրինությանը.....	179
127. Ներսես վրդ. Ակինյանին.....	179
128. Վիեննայի Մխիթարյան տպարանի վարչությանը.....	179
129. Իզմատիոս վրդ. [Աքյանին].....	180
130. «Հանդէս ամսօրեայ»-ի խմբագրությանը .....	180
131. Ներսես վրդ. Ակինյանին.....	181
132. Արշակ Սաֆրաստյանին .....	182
133. Արշակ Չոպանյանին .....	182
134. Գարեգին արքեպ. Հովսեփյանին .....	183
135. Արտաշես Չիլինկիրյանին.....	185
Ծանոթագրություններ .....	189
Անվանացանկ .....	263



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԳՈՆՑ

ԵՐԿԵՐ

Է

ՆԱՄԱԿԱՆԻ

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան  
Խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան  
Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալարյան  
Կազմի ձևավորող՝ Ա. Պատվականյան  
Հրատ. սրբագրող՝ Վ. Դերձյան

Լուսանկարները տրամադրվել է «Համագային հայ կրթական և  
մշակութային միության» արխիվի կողմից (Լիբանան, Բեյրութ)

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:  
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 18 + 5 ներդիր:  
Տպաքանակը՝ 500:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.yasu.am](http://www.publishing.yasu.am)